

ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՏՅԱՆ

ԽՈՋԱԼՈՒԻ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ԴՐԱ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՈՒՄ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HRANUSH KHARATYAN

KHOJALY "GENOCIDE" AND ITS MISSION IN KARABAKH CONFLICT

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ГРАНУШ ХАРАТЯН

«ГЕНОЦИД» ХОДЖАЛЫ И ЕГО МИССИЯ В КАРАБАХСКОМ КОНФЛИКТЕ

PUBLISHING HOUSE OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
YEREVAN 2021

ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ЕРЕВАН 2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՏՅԱՆ

ԽՈՋԱԼՈՒԻ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ԴՐԱ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՈՒՄ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2021

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Խ 310

Խառատյան Հրանուշ

Խ 310 **Խոջալուի «ցեղասպանությունը» և դրա առաքելությունը ղարաբաղյան կոնֆլիկտում** / Հ. Խառատյան; ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ: – Եր.: ՀԱԻ հրատ., 2021. – 224 էջ:

ԼՂԻՄ-ի Ասկերանի շրջանի Խոջալու ադրբեջանաբնակ բնակավայրի՝ 1992 թ. փետրվարի 25–26-ին գրավումը հայկական զինուժի կողմից Ադրբեջանում անվանում են «Խոջալուի ցեղասպանություն»: Այն ներկայացնելու համար Ադրբեջանը և Թուրքիան իրականացնում են մեծ ծավալի քարոզչական աշխատանք: Շուտով կլրանա Խոջալուի գրավման 30 տարին, բայց մինչև այսօր որևէ հետազոտություն այս նորահայտ «ցեղասպանության» շուրջ չկա:

Սույն աշխատանքը փորձ է մանրակրկիտ նյութերով ներկայացնելու Լեռնային Ղարաբաղի ռազմական ուժերի կողմից Խոջալուի գրավման, դրա նախապատրաստության, Ադրբեջանի իշխանությունների կողմից Խոջալուի պաշտպանության ծրագրերը և գրավման գործողությունները, գրավումից հետո տեղի ունեցած գործընթացները և Խոջալուի բնակչության ճակատագիրը: Գրքում մասնակի անդրադարձ կա նաև Խոջալուի գրավումը «ադրբեջանական ցեղասպանություն» ներկայացնելու նախապատրաստության և պատճառների մասին: Գիրքը հետաքրքիր կլինի ոչ միայն ղարաբաղյան կոնֆլիկտով և դրա պատմությամբ հետաքրքրվողներին, այլև ընթերցող լայն շրջաններին:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-886-17-6

© Խառատյան Հ., 2021
© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2021

■ ՆԱԽԱԲԱՆ

«Խոջալուի կոտորածներ», «Խոջալուի ցեղասպանություն», «Խոջալուի հնարովի ցեղասպանություն» բառերը շատերին են ծանոթ: 1992թ. մարտից սկսած դրանք բազմիցս կրկնվել են տարբեր մակարդակներով և ձևերով: Հրատարակվել են նյութեր, գրվել են գրքեր, հոդվածներ, արտահայտվել են կարծիքներ: Զեկուցումներ են եղել քաղաքագիտական, պատմագիտական, կոնֆլիկտաբանական գիտաժողովներում: Դրանք օգտագործվել են դիվանագիտական տեքստերում: Խնդիրը դիտարկվել է ղարաբաղյան, հայ-ադրբեջանական, հայ-թուրքական, տարածաշրջանային և նույնիսկ աշխարհաքաղաքական կոնֆլիկտների համատեքստերում: Բայց այդ «ցեղասպանության» ծրագրավորման, գործողությունների, ընթացքի և նույնիսկ հետևանքների մասին ոչ մի հետազոտություն, ոչ մի վերլուծություն չկա: Փաստն այն է, որ 1992թ. փետրվարի 26-ին Լեռնային Ղարաբաղի հայերի ռազմական կազմավորումը գրավել է Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվող Խոջալու ադրբեջանաբնակ բնակավայրը: Այդ պահին բնակավայրի բնակչության թիվը տարբեր գնահատականներով 2500–3500 էր: Բնակավայրը պաշտպանում էր, կրկին տարբեր գնահատականներով, 200–500 մարդ: Խոջալուն գրավելու գործողությանը հայկական կողմից մասնակցել է 480 մարդ: Գրավելու ռազմական գործողությունը տևել է երկու–երեք ժամ: Բնակավայրը գրավվել է կողմերից երկուսի համար էլ նվազագույն զոհերով: Խոջալուի բնակչությունը բնակավայրը լքել է նույն գիշերը: Խաղաղ բնակչությունը դուրս է եկել բնակավայրի ինքնապաշտպանների և ռազմական կազմավորումների հետ միասին: Հայկական կողմը նախապես հայտարարել է բնակչության համար նախատեսված հյուսիսային միջանցքի մասին, բայց բնակչության տարբեր խմբեր բնակավայրից դուրս գալուց հետո գնացել են նաև չնախատեսված արևմտյան և արևելյան ուղղություններով: Փետրվարի 26-ի առաջին կեսին Խոջալուի բնակչության ելքի համար հատկացված մարդասիրական միջանցք են ներթափանցել ադրբեջանական Ազգային Ժողովրդական Ճակատի զինված խմբավորումներ, և ճանապարհի առանձին հատվածներում եղել են լոկալ զինված բախումներ, որոնց պատճառով զոհեր են եղել նաև ճանապահով գնացող Խոջալուի խաղաղ բնակչությունից: Փետրվարի 26-ի կեսօրին Խոջալուի բնակչության անվտանգության նկատառումներով հայկական կողմը կասեցրել է բնակավայրը լքած մարդկանց հոսքը և միայն փետրվա-

րի 28-ից հետո խումբ-խումբ հանձնել է Աղդամից նրանց տանելու նպատակով եկած ադրբեջանական կողմին: Փետրվարի 26-ի երեկոյան պարզվել է, որ արևելյան ուղղությամբ գնացած խմբերի հետ ճանապարհների տարբեր վայրերում նույնպես տեղի են ունեցել զինված բախումներ, եղել են զոհեր: Որոշ մարդիկ մահացել են նաև ցրտահարությունների հետևանքով:

Խոջալուի պարտությունից 5 օր անց, մարտի 2-ին, Ադրբեջանում հապճեպ հայտարարվել է, որ հայերը կոտորել են Խոջալուի անզեն և անպաշտպան խաղաղ բնակչությանը և ցեղասպանություն են իրականացրել ադրբեջանական ժողովրդի նկատմամբ: Հայկական կողմն արագ մերժել է այդ հայտարարությունը: Հետագայում հրապարակի վրա մնացել են կողմերի հայտարարությունները և դրանցից բխող լրագրողական ու քաղաքական հանրայնացումները: Կողմերից ոչ մեկը պատշաճ հետազոտություն չի արել և չի վերլուծել «Խոջալուի դեպքերը»: Թեմայով շահագրգիռ երկու կողմերից ադրբեջանցիները չուզեցին/չկարողացան ապացուցել «Խոջալուի ցեղասպանությունը», հայերը պատշաճ չանդրադարձան «հնարովի ցեղասպանությանը»: «Երրորդ կողմի» վերլուծաբանները, իրենց հերթին հետազոտություն չանելով և հիմք ընդունելով հայտարարությունները, դիրքորոշումներ են արտահայտել «Խոջալուի ցեղասպանությանը» կամ «կոտորածներին» կողմ և դեմ դիրքերից:

«Խոջալուում և դրա շուրջ տեղի ունեցածը» և դրա «ցեղասպանական» մատուցման աղմուկը զգալի ներդրում են ունեցել ինչպես ղարաբաղյան կոնֆլիկտի և դրա քննարկումների հետագա զարգացումներում, այնպես էլ ազդել են առնվազն Այսրկովկասի ժողովուրդների կարծրատիպերի վրա: Քանի դեռ կան Խոջալուին առնչված կենդանի մարդիկ, դերակատարներ և հատկապես խոջալուցիներ՝ կարևոր է թվում փորձել հասկանալ, թե ի վերջո ինչ է եղել Խոջալուում և խոջալուցիների հետ:

2020թ. ամռանը մի խումբ ազգագրագետներով գնացինք ներկայումս Իվանյան կոչվող Խոջալու և «դրա շուրջը», անցանք Խոջալուի և խոջալուցիների հետ առնչված տարածքի ճանապարհներով, խոսեցինք հայկական կողմի դերակատարների և ուղղակի տարածքի բնակչության հետ, տեղում գրանցեցինք դեպքերի զարգացումների հետ կապ ունեցած մարդկանց պատմությունները և բնակչության մեջ շրջանառվող տեղեկությունները: Աշխատեցինք Ստեփանակերտի արխիվում՝ ուսումնասիրելով 1988–92թթ. Խոջալուի մասին նյութեր պարունակող փաստաթղթերը: Ցավոք, բուն խոջալուցիների հետ հանդիպումներ չեն եղել, այս մասով սահմանափակվել ենք գլխավորապես ադրբեջանական հրապարակումներով:

Սույն համեստ աշխատանքով փորձ է արվում քանդել Խոջալուի կծիկը՝ ինչ է եղել իրականում, ինչպե՞ս է եղել, որտե՞ղ և ինչո՞ւ են եղել զոհեր: Սա ըստ էության տեղանքի, դերակատարների, անմիջական մասնակիցների և նրանց գործողությունների միկրոմակարդակի հետազոտություն է:

Աշխատանքում առավելագույնս օգտագործված են հրատարակված ադրբեջանական աղբյուրները: Հայկական աղբյուրներից օգտագործվել են ինչպես հրատարկված, այնպես էլ արխիվային նոր նյութեր և գլխավորապես դաշտային աշխատանքների ժամանակ մեր իսկ կողմից գրանցված հարցազրույցների որոշ հատվածներ և հատկապես դիտարկումներ: Հայկական կողմի աղբյուրների մեծ մասը հրատարակվում է առաջին անգամ: Որոշ երևույթների և դեպքերի անդրադառնալիս առաջնությունը տրվել է «երրորդ կողմի» տեղեկություններին ու դիտարկումներին: Որոշ երևույթների վերաբերյալ այդպիսիք չգտնելով և գերադասելով միակողմանի տեղեկություններ չօգտագործել՝ դրանց պարզապես անդրադարձ չի արվել:

Նյութերը վերլուծելիս համոզվեցինք, որ 1923 թ-ից ԼՂԻՄ-ի կազմում գտնվող Խոջալու ադրբեջանական բնակավայրի խորհրդային շրջանի, բայց հատկապես դրա վերջին չորս տարիների՝ 1988 – 1991 թթ. պատմությունը, 1992 թ. Խոջալուի անկումը և հետո դրա շուրջ ձևավորված քաղաքական, տեղեկատվական, զգայական և քարոզչական գործողությունների համալիր ամբողջությունը մոդելավորում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի, ապա նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, դրա հայ բնակչության և Խորհրդային Ադրբեջանի, ապա՝ Ադրբեջանի Հանրապետության փոխհարաբերությունները: Աշխատանքի շարադրանքի մոտ մեկ քառորդը վերաբերում է այն իրավիճակին, որը նախապատրաստում էր թե՛ «Խոջալուի գործողությունները», թե՛ «Խոջալուի հանրայնացման» գործողությունները: Առանց այդ հատվածի հնարավոր չի լինի հասկանալ, թե ո՞վ/ովքե՞ր, ինչպե՞ս և ի՞նչ են արել Խոջալուի խաղաղ բնակչության հետ կամ նրանց դեմ:

■
ԽՈՋԱԼՈՒՆ ՄԻՆՉԵՎ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԸ

Խոջալու բնակավայրի անունը հիշատակվում է Ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի Շուշիի գավառի 1893 թ. բնակավայրերի ցանկում: Ուներ 34 ծուխ՝ 192 մարդ բնակչով, բոլորը՝ շիա թաթարներ [Բ-21, №1292]: «Кавказский календарь»-ի 1910 թ. տվյալներով 1908 թ-ին Ելիզավետպոլի նահանգի Շուշիի գավառի Խոջալու բնակավայրում ապրում էր 184 մարդ, հիմնականում՝ թաթարներ [Բ-22, 396], իսկ 1912 թ. հրատարակությունում հիշատակված է Խոջալու անունով հարևանությամբ գտնվող երկու բնակավայր, որոնցից մեկի բնակիչները 172 թաթարներ էին, մյուսում՝ 52 ռուսներ [Բ-23,217]:

1923 թ. հուլիսին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմանները ճշտող հանձնաժողովի որոշմամբ Շուշիի գավառի 94 գյուղերի շարքում Խոջալուն թողնվել է նոր ձևավորվող ԼՂԻՄ-ի կազմում [Բ-16, 102–103]:

1923 թ. ԼՂԻՄ-ի սահմանները ձևավորելիս ադրբեջանական իշխանությունները ջանացել են այն առավելագույնս փոքրացնել և առաջնորդվել էթնիկ կազմով: ԼՂԻՄ-ում ներառվել են հիմնականում հայաբնակ բնակավայրերը: Ադրբեջանի Կենտգործկոմի 1923 թ. հուլիսի 7-ի դեկրետը հենց այդպիսին էր՝ «Լեռնային Ղարաբաղի **հայկական մասից** կազմավորել ինքնավար մարզ, որպես Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության մաս, կենտրոնը՝ Խանքենդի վայրը» [Բ-27, 384–385]: Սա հակասում էր երկու տարի առաջվա՝ ՀԿ(բ)Կ Կավբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշմանը, որով նախատեսվում էր ամբողջ Լեռնային Ղարաբաղին տալ ինքնավարություն՝ «**Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում, նրան տրամադրելով լայն մարզային ինքնավարություն՝ ինքնավարության կազմում գտնվող Շուշի քաղաք կենտրոնով**: բ) Ադրբեջանի Կենտկոմին հանձնարարել որոշել ինքնավար մարզի սահմանները և ներկայացնել ՌԿԿ Կավբյուրոյի հաստատմանը: գ) ԿԿ Կավբյուրոյի Նախագահությանը <հանձնարարել> Հայաստանի Կենտկոմի և Ադրբեջանի Կենտկոմի հետ քննարկել Լեռնային Ղարաբաղի Արտակարգ Կոմիսարի թեկնածության հարցը, դ) Ադրբեջանի Կենտկոմին՝ որոշել Լեռնային Ղարաբաղի ինքնավարության ծավալը և ներկայացնել ԿԿ Կավբյուրոյի հաստատմանը» [Բ-19,649–650]: Այս որոշման երկրորդ կետը՝ «Հանձնարարել Ադրբեջանի Կենտկոմին որոշել ինքնավար մարզի սահմանները», Ադրբեջանի կենտկոմը լուծել է յուրովի՝ ինքնավարության սահմանները սահմանափակել է **Լեռնային Ղարաբաղի հայաբնակ մասով** («**из армянской части Нагорного**

Карабаха»): Մարզը կազմվել է Շուշիի գավառի 250 գյուղերից առանձնացված 94, Ձևանշիրի գավառի 219-ի գյուղերից առանձնացված 47, Կուբաթլուի գավառից առանձնացված 32 մեծ ու փոքր գյուղերից և Շուշի քաղաքից [Բ-16, 102–103], բոլորը միասին՝ 172 բնակավայր: Մեկ տարվա ընթացքում հարևան շրջանների հետ մարզի սահմանազատման և բնակավայրերի ենթակայության գործում որոշ փոփոխություններ են կատարվել, և 1924 թ. նոյեմբերի 26-ին հաստատվել է ԼՂԻՄ-ի տարածքը, ըստ որի Շուշիի և Ձևանշիրի գավառներից ԼՂԻՄ-ին նոր բնակավայրեր են անցել, միաժամանակ որոշ բնակավայրեր դուրս են հանվել: Արդյունքում Շուշիի գավառից ԼՂԻՄ-ի կազմում հաստատվել են 127 բնակավայրեր, Ձևանշիրի գավառից՝ 52-ը, Կուբաթլու/Կարյագինից՝ 31-ը [Բ-26,162], բոլորը միասին՝ 210 բնակավայր: Նոր ձևավորված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմաններից դուրս են մնացել Լեռնային Ղարաբաղի արևմտյան (Լաչին, Քելբաջար, Կուբաթլուի մեծ մասը), կենտրոնական՝ Ձաբրայիլի գավառը (Շահումյան, Խանլար, Դաշքեսան), հյուսիսային (Գետաբեկ, Շամխոր) և հարավային (Ֆիզուլի) շրջանները: Արդյունքում հայկական մարզը կտրվել է Հայաստանից և Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանին մնացած հայաբնակ այլ շրջաններից և դարձել անկլավ: Կավբյուրոյի որոշումը խախտվել էր նաև մարզի մայրաքաղաքի մասով՝ մշակութային և հասարակական կյանքի կենտրոն Շուշին փոխարինվել էր աննշան, ընդամենը 300 մարդ բնակչությամբ Խանքենդիով (հետագայում՝ Ստեփանակերտ):

Ինքնավար մարզը ձևավորվեց միայն Լեռնային Ղարաբաղի **հայկական**/**հայաբնակ** մասից, ԼՂԻՄ-ում թուրքաբնակ/ադրբեջանաբնակ բնակավայրերը քիչ էին և գլխավորապես սահմանամերձ: 1923 թ. նորաստեղծ ինքնավար մարզում միայն 7.700 թուրքեր/ադրբեջանցիներ կային:

Հետագայում ադրբեջանական իշխանությունները շատ ջանքեր են գործադրել ԼՂԻՄ-ի գերազանցապես հայկական ժողովրդագրական կազմը փոխելու համար, բայց տևական ժամանակ հայկական ինքնավար մարզը գայթակղիչ չէր մինչև 1937 թ. թուրքեր, այնուհետև ադրբեջանցիներ կոչվող ժողովրդի համար: Իշխանությունները փորձում էին հարցը լուծել արհեստական միջոցներով: Մի կողմից դուրս մղել հայերին, մյուս կողմից հարկադրական միջոցներով կամ գայթակղություններով մարզում բնակեցնել թուրք/ադրբեջանցիների: Միայն երեք տարում՝ 1923 թ. մինչև 1926 թ., նորաստեղծ ինքնավար մարզից հեռացել են նվազագույնը 38.900 հայեր՝ մարզի հայ բնակչության 26%-ը, ընդհանուր բնակչության 24,6%-ը: Առնվազն յուրաքանչյուր չորրորդը: Դրանք ԽՍՀՄ-ում տարատեսակ «հակա»-ների (հակասովետական, հակահեղափոխական, հակաբոլշևիկյան...) և ազգային կուսակցություններից (տվյալ դեպքում՝ Հայ Հեղափոխական Դաշնակցությունից) մաքրման տարիներ էին, և կասկածելիները եթե չէին ձերբակալվում, ապա հաճախ ուղղակի տեղափոխվում/փախչում էին: Կասկածելի էին բոլորը, որոնք 1918–20 թթ. հայ-թուրքական կռիվներին մաս-

նակցել էին, անկախ նրանից, թե ինչ դերում՝ պաշտպանվողի, թե հարձակվողի: Դրան զուգահեռ ամեն ինչ արվում էր նորաստեղծ հայկական մարզի զարգացումը դանդաղեցնելու համար: Բավական է ասել, որ 1939 թ. ԼՂԻՄ-ի գյուղական բնակչությունը ողջ ԽՍՀՄ-ում ամենաբարձր էր՝ գյուղաբնակ էր մարզի ընդհանուր բնակչության 89,6 %-ը (համեմատության համար Ադրբեջանում՝ 63,8 %, Հայաստանում՝ 71,4 %, Վրաստանում՝ 69,9 %) [Բ-111]:

1948 – 50 թթ. ԼՂԻՄ-ում բնակեցվել է Հայաստանից Ադրբեջան տեղափոխվող թրքալեզու բնակչություն: Այս տեղափոխությունը պայմանավորված էր Ադրբեջանի Կոմկուսի քարտուղար Միրջաֆար Բաղիրովի և Հայաստանի Կոմկուսի քարտուղար Գրիգոր Հարութինովի 1947 թ. դեկտեմբերի 3-ի համատեղ դիմումով Ստալինին: Դիմումում խնդրում էին Մինգեչաուրի ջրամբարի կառուցման կապակցությամբ Կուր-արաքսյան գոտու բամբակագործության զարգացման նպատակով որպես կոլխոզային աշխատուժ Հայաստանից 130.000 ադրբեջանցի բնակչություն տեղափոխել Ադրբեջան: Այս թիվը պայմանավորված էր 1939 թ. մարդահամարի նյութերով, որոնց համաձայն Հայաստանում ապրում էր 130.896 ադրբեջանցի: Բայց տեղափոխության խնդիրներով կազմված հանձնաժողովը պարզեց, որ 1948 թ. Հայաստանում ապրող ադրբեջանցիների թիվը իրականում 110 – 115 հազար մարդ է [Ա-9, Թ.3] և ԽՍՀՄ Մինիստրների Խորհուրդը որոշում է Հայաստանից կամավորության սկզբունքով Կուր-արաքսյան ցածրավայր տեղափոխել 100000 մարդ [Բ-9]: Տեղափոխությունը պիտի կատարվեր այն սկզբունքով, որ տեղափոխվելու ցանկություն ունեցող ադրբեջանցիներն իրենց հետ տանեին իրենց մասնավոր և կոլխոզային ողջ ունեցվածքը, իսկ տեղափոխության և Ադրբեջանում նրանց բնակեցման բոլոր ծախսերը՝ բնակարանային և այլն, հոգալու համար ԽՍՀՄ բյուջեից պիտի հատկացում կատարվեր Ադրբեջանի բյուջեին [Բ-10]: Վերաբնակեցումն սկսվել է 1948 թ., ԽՍՀՄ բյուջեից հատկացումը կատարվել է, բայց Ադրբեջանում նրանց փաստացի չէին «սպասում»՝ չկար բնակարան, աշխատանք, սոցիալական ենթակառույցներ: Արդյունքում մարդիկ ետ էին վերադառնում: Մարդիկ գնում էին՝ տանելով կոլխոզների և սեփական ողջ շարժական ունեցվածքը՝ տրակտոր, կոմբայն, բեռնատար մեքենաներ, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, ձիեր և այլն, վերադառնում էին դատարկաձեռն: Ըստ հայկական աղբյուրների՝ 1948 թ. մինչև 1953 թ. հունվարի 1-ը Հայաստանից Ադրբեջան է տեղափոխվել 44.168 մարդ: Նրանք իրենց հետ տարել են 14.365 խոշոր եղջերավոր անասուն, 46.919 ոչխար և այծ, 1028 ձի, 1314 ավանակ և այլ շարժական գույք: Հայաստան է վերադարձել 9000 մարդ [Բ-11]: 1952 թ. հունվարի 5-ին Ադրբեջանն առաջարկել էր Հայաստանին շարունակել նախագիծը 3800 ընտանիքի համար [Բ-9, Գ.179, ԹԹ.1], բայց Հայաստանը հրաժարվել էր և դիմել ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդին՝ խնդրելով դադարեցնել անհաջող նախագիծը [Բ-12]:

Ինչ վերաբերում է Ադրբեջան տեղափոխված ընտանիքներին, ապա նրանց հաճախ բնակեցնում էին ոչ թե նախատեսված Կուր-արաքսյան ցածրավայրում,

այլ ԼՂԻՄ-ին հարակից Բարդայի, Միր Բաշիրի և ԼՂԻՄ-ի հայաբնակ գյուղերում: Ընդ որում, չնայած ԽՍՀՄ բյուջեյի ֆինանսավորմանը, հարկադրում էին այդ մարդկանց կարիքները հոգալ կոլխոզների միջոցներից: Օրինակ, 1948 թ. վերաբնակների անասուններին կերով ապահովելու և բնակարաններ կառուցելու համար ԼՂԻՄ-ի Մարտունու շրջանի Գիշի գյուղի կոլխոզի միջոցներից հատկացվել են 14.850 ռուբլի և 1200 աշխօր [Բ-8]: Գիշի գյուղից զատ վերաբնակ ադրբեջանցիներ կային նաև Մարտունու շրջանի Խնուշինակ, Գյունե Ճարտար [Բ-8, Թ. 11] և այլ հայկական գյուղերում: Գյուղերից պահանջվում էր նաև նրանց համար ադրբեջանական դպրոցներ կառուցել, ադրբեջաներեն լեզվով ուսուցում կազմակերպել, նպաստել նրանց մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը (տե՛ս էջ 12-13-ի փաստաթուղթը):

Այդպես են համալրվել նաև Խոջալուի և հարևան Դաշբուլաղ, Կրկժան, Ջամիլլու և այլ հայկական գյուղերի էթնիկական կազմերը: 1948 թ. Հայաստանի ադրբեջանցիներից Խոջալու է բերվել 25 ընտանիք [Բ-81]: Հետազոտող Վալերի Ղազարյանի նյութերով «Շուշիում և Շուշիի շրջանում 1,2 հազար <ադրբեջանցի> են բնակեցրել՝ դնելով տասնյակ ադրբեջանական նոր բնակավայրերի հիմքը՝ Հասանաբաղ, Յալոբաքենդ, Ջավադլար, Խանլրքփեյ, Հանալը, Քայքենդ, Իմամկուլուլար, Լեսնոյե ևլն» [Բ-81]:

Հայաստանից վերաբնակների մեջ շատ կային ուսուցիչներ, հաշվապահներ, գյուղատնտեսներ, կուսակցական աշխատողներ: Նրանք հրաժարվում էին կոլխոզային գյուղատնտեսական աշխատանքներ կատարել, և հայկական գյուղերի ղեկավարությունը պետք է նրանց համար լրացուցիչ աշխատատեղեր ստեղծեր կոլխոզի, այլ կերպ ասած՝ բնակչության սեփական միջոցներով:

Սա ԼՂԻՄ-ի էթնո-ժողովրդագրական կազմը փոխելու օրինակներից մեկն է:

ԼՂԻՄ-ի ժողովրդագրական կազմը փոխելու արհեստական միջոցներից մյուսը ԼՂԻՄ-ի հայ բնակչության թիվը տարբեր ձևերով նվազեցնելն էր, այդ թվում՝ աշխատանքային արտագաղթի մղելով, հայ բնակչության դեպորտացիաներով, օգտագործելով նաև ԽՍՀՄ-ում ընթացիկ քաղաքական իրավիճակների հնարավորությունները: Օրինակ, օգտվելով ետպատերազմական ԽՍՀՄ-ում ամբողջ ժողովուրդներ քաղաքականապես մեղադրելու գործընթացից, Խորհրդային Ադրբեջանի Կոմկուսի առաջին քարտուղար Միրջաֆար Բաղիրովը 1949 թ. մարտի 7-ին, ըստ արխիվային նյութերին հղում անող ադրբեջանցի պատմաբան Ջ. Հասանլլի, նամակ է գրել Ստալինին՝ բողոքելով Խորհրդային Հայաստանի և հայերի՝ սահմանները վերանայելու «պահանջատիրության» դեմ [Բ-15]: Այդ նամակին հաջորդել են 1949 թ. ապրիլի 4-ին Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Կենտկոմի Քաղբյուրոյի թիվ 126 հույժ գաղտնի որոշումը «Հայաստանում և Ադրբեջանում ապրող դաշնակցականներին աքսորելու մասին» [Բ-17] և թիվ 127 հույժ գաղտնի որոշումը՝ «...

Հ.Հ.Հ. Պետական արխիվ, ՊՈԱԿ
Ցուցակ № 280
Գրանցման № 10
Գործ № 2
Գործ.մասնագ.№ 13

НАГОРНО-КАРАБАХСКИЙ ОБКОМ
КП АЗЕРБАЙДЖАНА

Фондообразователь Нагорно-Карабахский обком КП Азербайджана
Наименование

Отдел (сектор) селхоз отдел

Докладные записки, справки
и списки об устройстве переселенцев-
азербайджанцев из Армянской ССР в
Кафрунинский р-н НКАО
(заголовок дела)

Начато: 3 января 1949,
Окончено: 29 декабря 1949,
На 215 листах

ПАРТИЙНЫЙ АРХИВ НАГОРНО-КАРАБАХСКОГО
ОБКОМА КП АЗЕРБАЙДЖАНА

Фонд № 1 Дело № 437
Опись № 1 Коробка № 25

ՍՍՌՄ ԿԲՀՊ Լ.Հ. Մարզային Կոմիտեի Գյուղատնտեսության բաժնի վարիչ
ընկեր Ա. ՍՈՒԼԵՅՄԱՆՅԱՆԸ!

Զեկուցագիր

Ձեր հանձնարարությամբ գնացինք ստուգելու և ծանոթանալու Հայկական Ս-իր Լ.Հ.Ամարի մարտական շրջանի գյուղերի գյուղատնտեսական ապրանքների դրությունը հետևյալը՝

1 Հայկական ՍՍՌ-ի վեցերորդ շրջանի նախ գյուղերը գյուղից օգտագործ առաջին կիսամյակի Մարտունու շրջանի Գիրի, Իսուշիսակ, Գյուլագարակ գյուղերը նոր կոլտնտեսություն - վերակազմակերպված 136 տնտեսություն, որոնց մեկը, որպես սանդուղ Արդ ՍՍՌ ժողկոմատի հրահանգներով հաստատում ստեղծվում է 5 ռազմ - ապահովագրական հանձնաժողով, նրանց մասնակցում է 85 տնտեսություն գտնվում են Գիրի գյուղում, 24-ը՝ Իսուշիսակում, 17 ը՝ Գյուլագարակում, նրանց 9 տնտեսություն՝ շրջանի կենտրոնում և մի քանի կոլխոզներում - Խոզանավոր, Հայրապետ, Մոլորակ և այլն Ցանացրուցը նրանց մասնակցում են կամ աշխատում են իրենց հնարավորությամբ (սանդուղ, հարվածներ, վերանորոգում և այլն):

Այդքանը ուսումնասիրությունների ստանալ վերակազմակերպված գյուղատնտեսական կոլտնտեսություն 10 տնտեսություն, որոնց 4-ը գտնվում է Գիրի գյուղում 4-ը Գյուլագարակում, նրանց 2-ը Իսուշիսակում:

2 Գիրի գյուղում գտնվող 85 տնտեսություններից ունեն 287 շուն, որոնց աշխատանքի 104.— 31
Իսուշիսակում՝ 24 տնտեսություն ունեն 114 շուն, որոնց աշխատանքի 51.— 14
Գյուլագարակում՝ 17 տնտեսություն. 82 շուն, որոնց աշխատանքի 36: — 10

Այսպիսով գտնվում շրջանի կենտրոնում և ունեն մի քանի գյուղերում գտնվող տնտեսությունների շունը. Գիրի, Իսուշիսակ և Գյուլագարակ գյուղերում գտնվող 126 տնտեսություններ ունեն 483 շուն, որոնց աշխատանքի 191 հոգի:

3 Հիմնականում բոլոր տնտեսությունները ապահովված են ցանքատեսակներով, բայց Գիրում 2 տնտեսություն ապրում են մի ցանքատեսակով, Իսուշիսակում 2 տնտեսություն, Գյուլագարակում 2 տնտեսություն այլ ապրում են մյուսներ:
Բայց այդ, Գիրի գյուղում 10, Իսուշիսակում 4, Գյուլագարակում 5 տնտեսություններ ապրում են ոչ կանոնավոր, բացառությամբ ստանալ ելույթներ - հիմնականում ուսումնական ելքերում, որոնք ազդում պատճառներ չունեն և նրանց 5 տնտեսություն ապրում, հիմնականում քաղաք: Մենք շրջանցությունները հանդիպեցինք 5, որ նրանք գտնվում կոլտնտեսություններ չունեն հարկավոր Գյուլագարակում իր տարածքում լոգարանի հոգ տանելու, ինչպես կարող են գտնվում ավելի լավ, կանոնավոր, ամբողջական ցանքատեսակներով: Գյուլագարակում մեր կատարած Ստուգումից պարզվեց 5, որ իսուսակներ բաներ Մոլորակում կոմբայնները ուղարկվում 5 փոխարեն երեքը, գտնվում ու ապրում 5 մի փոխարեն մեկը, պատերը ու հատակը հոգ, պատուհանները բաց, գտնվում:

ԽՍՀՄ քաղաքացիություն ընդունած Թուրքիայի նախկին քաղաքացիներին...» Անդրկովկասից աքսորելու մասին [Բ-19]: Անդրկովկասում ԽՍՀՄ քաղաքացիություն ընդունած Թուրքիայի նախկին քաղաքացիների մեջ ամենաշատը 1915 թ. Ցեղասպանությունից փախստական հայերն էին: Կասկած չի կարող լինել, որ Մ. Բաղիրովի նամակը պայմանավորված էր նախապես այս որոշման կայացմանը մասնակցությամբ: Արդյունքում 1949 թ. հունիսի 14-ին միայն Ադրբեջանից Ալթայի երկրամաս և Տոմսկի մարզ են աքսորվել նվազագույնը 3500 հայեր, մեծ մասը՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից [Ա-29,34-60]:

Միրջաֆար Բաղիրովի գործը շարունակել է Հեյդար Ալիևը: Բավական է հղում անել հենց իրեն. «Երբ ես առաջին քարտուղար էի՝ շատ էի օգնում Լեռնային Ղարաբաղի զարգացմանը: Միաժամանակ ջանում էի այնտեղ փոխել ժողովրդագրությունը: Լեռնային Ղարաբաղը բարձրացնում էր այնտեղ բուհ ունենալու հարցը: Մեզ մոտ բոլորը դրան առարկում էին: Ես որոշեցի բացել: Բայց պայմանով, որ լինեն երեք բաժիններ՝ ադրբեջանական, ռուսական և հայկական: Բացեցինք: Հարակից տարածքների ադրբեջանցիներին ուղարկում էինք ոչ թե Բաքու, այլ այնտեղ: Այնտեղ կոշիկի խոշոր գործարան բացեցինք: Մարզի հարակից տարածքներից ադրբեջանցիներին այնտեղ էինք ուղարկում: Այս և նմանօրինակ միջոցներով ես ջանում էի, որ Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների թիվը մեծանա, հայերինը՝ նվազի: Ովքեր այն ժամանակ աշխատել են Լեռնային Ղարաբաղում, այդ մասին գիտեն» [Բ-38]:

1923 թ. մինչև ԽՍՀՄ վերջին մարդահամար՝ 1989 թ., մարզի ողջ բնակչությունը 157.800-ից հասել է 189.085 մարդու՝ աճելով ընդամենը 32.285-ով: Աճը միայն ադրբեջանական բնակչության հաշվին էր: Այդ ժամանակամիջոցում հայ բնակչությունը 149.600-ից հասել է մինչև 145.450-ի, նվազելով 4.450-ով, իսկ թուրք/ադրբեջանական բնակչությունը 7.700-ից հասել է 40.600-ի, այսինքն աճել է 32,900 մարդով՝ բնակչության ընդհանուր թվում 4.9 %-ից հասնելով 21.5 %: Ընդհանուր աճման դինամիկան եղել է 484 %: Նույնիսկ Երկրորդ աշխարհամարտից հետո հայերի թիվը նվազել է 20.431-ով՝ մոտ 4%, իսկ ադրբեջանցիների թիվն աճել է 3.942-ով կամ 4.5 %-ով: Հայերի մեջ իշխում էր այն համոզմունքը, որ պատերազմին Ադրբեջանի բնակչությունից զինկոմիսարիատները ճակատ ամենից ավելի տարել են հայերին և ազգային այլ փոքրամասնություններին: Իսկ ահա 1970 – 79 թթ. միջակայքում մարզի հայերի թիվն ավելացել է ընդամենը 2.008-ով, ադրբեջանցիներինը՝ 10.082, և մարզի ընդհանուր բնակչության մեջ հայերի թիվը նվազել է 4,7 %-ով, ադրբեջանցիների թիվն ավելացել է 4,8 %-ով: Այդ տարիներին հայերի մեծ արտագաղթ կար՝ նույնիսկ ԽՍՀՄ ձնհալի տարիները չազդեցին Ադրբեջանում հայերի նկատմամբ խտրական վերաբերմունքի վրա:

Հայերի և ադրբեջանցիների թվաքանակի շարժը 1923–1989 թթ. ԽՍՀՄ մարդահամարների փվյալներով

Բնակչությունը (հազար մարդ)		Այդ թվում			
Մարդահամարի տարեթիվը	Ընդամենը	Հայեր		Թուրք[1]/ ադրբեջանցիներ	
		Քանակ	%	Քանակ	%
1923	157.8	149,6	94,8	7,7	4,9
1926	125,390	111,694	89,1	12,592	10
1939	150,837	132,800	88,1	14,053	9,3
1959	130,406	110,053	84,4	17,995	13,8
1970	150,313	121,068	80,6	27,179	18,1
1979	162,181	123,076	75,9	37,264	22,9
1989	189,085	145,450	76,9	40,688	21,5

Մարզի ժողովրդագրական կազմը փոխելու ձևերից մեկը, ինչպես տեսանք Հեյդար Ալիևի ինքնաներկայացումից, ադրբեջանաբնակ բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացումը խթանելն էր՝ դրանք դարձնելով ռազմավարական նշանակության կենտրոններ: Դրանցից մեկը հենց Խոջալուն էր:

Հարևանությամբ գտնվող երկու Խոջալուների միջև հեռավորությունը մեկ կիլոմետր չի կազմում: «Խոջալու» կոչվող երկու բնակավայրերից նրանում, որում 52 հնաձիսական (մալական) ռուսներ էին ապրում, 30-ական թվականներից սկսում են նաև հայեր բնակվել: Տեղում ապրողների բանավոր խոսքում բնակավայրը կոչվում էր Ղարաղշլաղ: 60-ականներին այն դարձել էր մեծ Խոջալուի թաղամաս և հիմնականում հայաբնակ էր: Ղարաղշլաղի հայերը 60-ականներից սոցիալական պայմանների հետևանքով (դպրոց չկար, բնակարանաշինություն չկար, ճանապարհ չկար և այլն) աստիճանաբար տեղափոխվում էին այլ բնակավայրեր, այդ թվում՝ հիմնական Խոջալու գյուղ, թաղամասն աստիճանաբար մարդաթափվում էր: Տևական ժամանակ աննշան գյուղի համարում ունեցող Խոջալու բնակավայրի կշիռն սկսեց մեծանալ 1960-ական թվականներին՝ հենց որ գյուղի մերձակայքում գյուղատնտեսական աշխատանքներին օգնելու նպատակով կառուցվեց ուղղաթիռների թռիչքներին հարմարեցված տեղական նշանակության օդանավակայան: Գյուղի տեղը օդանավակայանի համար շատ հարմար էր, գտնվում էր Ադրբեջանի Աղդամ քաղաքը ԼՂԻՄ-ի մայրաքաղաք

[1] Մինչև 1937 թ. ԽՍՀՄ-ում Ադրբեջանի թրքալեզու բնակչությունը էթնանունների ցանկում «թուրք» էր կոչվում, և 1926 թ. մարդահամարում «թուրքեր» են նշված: Ադրբեջանական թուրքերին օսմանյան թուրքերից տարբերակելու համար մարդահամարը առանձին տող ունի՝ «օսմանյան թուրքեր»: Օսմանյան թուրքերն այդ մարդահամարով Ադրբեջանում 208 մարդ էին, որից 8-ը՝ Նախիջևանում: Ըստ մարդահամարի նյութերի՝ Լեռնային Ղարաբաղում օսմանյան թուրքեր չկային:

Ստեփանակերտին կապող հիմնական ճանապարհի վրա, ԼՂԻՄ-ի Ասկերան շրջկենտրոնից ընդամենը 2–3 կմ էր հեռու, Ստեփանակերտից՝ 9 կմ: Օդանավակայանը պաշտոնապես կոչվում էր Ստեփանակերտի օդանավակայան, բայց Խոջալու գյուղի մոտ գտնվելու պատճառով խոսակցական լեզվով ասվում էր «Խոջալուի օդանավակայան»: Աստիճանաբար օդանավակայանը հարմարեցվեց նաև ինքնաթիռների թռիչքների համար, և նրա կշիռը տեղական նշանակությունից ավելացավ: Ասկերանի շրջանում հիմնականում հայկական գյուղեր են, կոնկրետ Խոջալու բնակավայրին շատ մոտիկ հայկական գյուղերից են Նոր Նորագյուղը[2], Մեհտիշենը[3], Բալուջան[4], Խնձիրիստանը[5], Քոլատակը[6], Ղշլաղը[7], Ռևը[8], Սարդարաշենը (Ենգիջա)[9], Դաշբուլաղը[10], Հիլիսան (Իլիս)[11], Խնածախը[12] և այլն: Ադրբեջանաբնակ գյուղերն Ասկերանի շրջանում շատ քիչ էին: Դրանք փոքր, սակավամարդ անասնապահական գյուղեր էին՝ խորհրդային տարիներին հիմնված Հասանաբադը, Քյոսալարը: Խնածախի հարևան գյուղերից նախ-

---

2 Ներկայիս Նորագյուղը հիմնվել է 1965 թ., բնակիչները տեղափոխվել են հին Նորագյուղից, որը գտնվում էր ներկայիս գյուղից մոտ 6 կմ հեռավորության վրա, Գարգար Ասկերանի մոտ՝ Քյաթուկ սարի դիմաց, Ռև, Ղշլաղ և Սարդարաշեն հայկական գյուղերի հարևանությամբ, և չորս գյուղերը միասին խորհրդային տարիներին մեկ ընդհանուր սովխոզ էին: Հին Նորագյուղում, ըստ Մակար Բարխուդարյանի, 19-րդ դարավերջին ապրում էր 1075 մարդ՝ «բնակչաց մեծ մասն բնիկ, փոքր մասն՝ գաղթած Խոյի գավառից» (Բ-20, 245–246): 130 տարիների ընթացքում Նորագյուղը, ԼՂԻՄ-ի մյուս հայկական գյուղերի նման, շատ քիչ է աճել, ներկայումս գյուղի բնակչությունը կազմում է ընդամենը 1550 մարդ է:

3 1893 թ. ուներ 323 բնակիչ, բոլորը հայեր [Բ-21, 1281]: Ըստ Մ. Բարխուդարյանի բնակչության թիվը 19-րդ դարավերջին 341 ր [Բ-20, 240]:

4 1893 թ. ուներ 936 բնակիչ, բոլորը հայեր [Բ-21, 1311] Ըստ Մակար Բարխուդարյանի բնակչության թիվը 982 էր [Բ-20, 240]:

5 1893 թ. ուներ 759 բնակիչ, բոլորը հայեր [Բ-21,1312] (Մ. Բարխուդարյանը գյուղն անվանում է Խնձիրիստան, բնակչության թիվը 19-րդ դարավերջին 482 էր [Բ-20, 243]:

6 Ըստ Մ. Բարխուդարյանի Քոլատակ գյուղը 19-րդ դարավերջին ուներ 2097 բնակիչ՝ «բնակիչ բնիկ, մի քանի տուն գաղթած Մաղաուզից» [Բ-20,245]:

7 Ըստ Մ. Բարխուդարյանի Ղշլաղ գյուղը 19-րդ դարավերջին ուներ բնիկ 1096 բնակիչ [Բ-20, 245]:

8 Ըստ Մակար Բարխուդարյանի 19-րդ դարավերջին Ռև գյուղն ուներ 330 բնիկ հայ բնակիչ [Բ-20,245]:

9 1893 թ. ուներ 281 բնակիչ, բոլորը հայեր [Բ-21,1318]: Ըստ Մ. Բարխուդարյանի բնակչության թիվը 349 էր[Բ-20, 245]:

10 1893 թ. ուներ 1096 բնակիչ, բոլորը հայեր [Բ-21,1279]: Ըստ Մ. Բարխուդարյանի բնակչության թիվը 19-րդ դարավերջին 1124 էր [Բ-20,243]:

11 1893 թ. ուներ 282 բնակիչ, բոլորը հայեր [Բ-21, 1319]: Ըստ Մ. Բարխուդարյանի բնակչության թիվը 19-րդ դարավերջին 295 էր [Բ-20, 243]: Այս գյուղում 20-րդ դարի երկրորդ կեսից աստիճանաբար նաև ադրբեջանցիներ են հաստատվել, և 1990-ականների սկզբին Ասկերանի շրջանի հազվագյուտ խառը բնակչությամբ գյուղերից էր:

12 1893 թ. ուներ 555 բնակիչ, որից 27-ը թաթար, մյուսները հայեր [Բ-21,1323]: Ըստ Մ. Բարխուդարյանի բնակչության թիվը 19-րդ դարավերջին 663 էր՝ տեղափոխված Մեծ Սյունիքի Խանածախ գյուղից [Բ-20, 239]:

կինում հայկական Ջամիլլուն[13] աստիճանաբար ադրբեջանացել էր 20-րդ դարի երկրորդ կեսերին, Դաշբուլաղը դարձել էր խառը հայ-ադրբեջանական գյուղ, իսկ Դաշբուլաղի հայերի մի մասը առանձնացել և նոր գյուղ էր հիմնել՝ Հովսեփավանը: Խոջալուն աշխույժ ճանապարհի վրա էր, ուներ խաղողի այգիներ, մերձավորությամբ Ղարաբաղի միակ՝ Ստեփանակերտի օդանավակայանն էր: Այն միաժամանակ կենտրոնն էր շրջակա ադրբեջանական գյուղերի՝ Ջամուլլուի, Մալիբեյլուի և այլն, որոնք միասին ընդհանուր խորհրդային տնտեսություն՝ սովխոզ էին:

[13] 1893 թ. ուներ 58 բնակիչ, բոլորը հայեր [Բ-21, 1312]:

■
ԽՈՋԱԼՈՒՆ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ղարաբաղյան շարժման շրջանում Խոջալուն շատ հարմար, նույնիսկ ռազմավարական դիրք էր զբաղեցնում հայերի տեղաշարժերը և բեռնափոխադրումները, այդ թվում՝ օդային, վերահսկելու, անհրաժեշտության դեպքում ճանապարհները փակելու, Ասկերան շրջկենտրոնը Ստեփանակերտից՝ մայրաքաղաքից կտրելու, շրջակա հայկական գյուղերի բնակչությանն ահաբեկելու, ավելի ուշ՝ նաև շրջկենտրոնն ու մայրաքաղաքը հրետակոծելու համար:

ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի 1988 թ. մարտի 24-ի որոշումը, ըստ որի լրացուցիչ ֆինանսական միջոցներ էին հատկացվում Ադրբեջանին 1988–1995 թթ. ընթացքում Լեռնային Ղարաբաղի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համար (դպրոցների, բնակարանների, հիվանդանոցների, գործարանների, ճանապարհների շինարարության, մասնավորապես նաև Ղարաբաղը Հայաստանին կապող Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհի և Ստեփանակերտի օդանավակայանը վերակառուցելու համար), Լեռնային Ղարաբաղի հայերի կողմից իրավացիորեն գնահատվեց որպես քաղաքական լուծում պահանջող խնդիրը՝ Լեռնային Ղարաբաղի մարզը Ադրբեջանի տարածքից հանելու մասին մարզային խորհրդի որոշումը, սոցիալ-տնտեսական ծրագրով փոխարինելու միջոց: Նրանց փորձը նաև թույլ չէր տալիս հավատալ, որ Ադրբեջանի միջոցով մարզին հատկացվող ֆինանսական միջոցներն իսկապես ծախսվելու են մարզային խնդիրների լուծման համար: Հիրավի, այդ միջոցները լրացուցիչ հնարավորություն դարձան Ադրբեջանի համար ԽՍՀՄ բյուջեից ԼՂԻՄ-ի համար հատկացված գումարը ներդնելու ԼՂԻՄ-ի ադրբեջանական բնակավայրերը, այդ թվում Ասկերանի շրջանի Մեշալի, Դաշբուլաղ, Ջամիլլի, Քոսալար, և իհարկե, ռազմավարական նշանակություն ունեցող Խոջալուն ամրապնդելու [Բ-7, Թթ.83–85]: Ադրբեջանի Մինիստրների Խորհրդի փոխնախագահ Ե. Պրոտոկովիցի ստորագրած փաստաթղթով կոնկրետ Խոջալու գյուղի համար ծրագրավորվում է կառուցել դպրոց 694 աշակերտի հաշվով, ամբուլատորիա, 25 տեղանոց բաղնիք, ավանային խորհրդի շենք, ջրային ցանց, մանածագործական ֆաբրիկա [Բ-7, Թ. 85] (տես էջ 19-ի փաստաթուղթը):

1988 թ. նոյեմբերի 5-ին «Սովետական Ղարաբաղ» թերթը գրում է. «Շուշիում, Ջամիլլուում, Կրկժանում, ադրբեջանական այլ գյուղերում մեծ ծավալի շինարարական աշխատանքներ են տարվում: Դա անում են հանրապետական

85

4.

Село Гасанабад

Отвод участка и строительство школы на 80 мест.

Село Ходжалы

Отвод участка и строительство школы на 694 места;
-отвод участка и строительство врачебной амбулатории;
-отвод участка и строительство бани на 25 мест;
-отвод участка и строительство здания поселкового совета;
-строительство водопроводной сети ;
-отвод участка для строящейся ткацкой фабрики.

По Мартунинскому району

Село Амираллар

Проживают 963 человека (160 семей) азербайджанской национальности, 200 из которых без работы:
-создание филиала производства по линии Минлегпрома республики;
-отвод участка и строительство школы на 250 мест;
-газифицирование села;
-проведение работ по обеспечению села питьевой водой;
-открытие почтового отделения и сберкассы;
-создание самостоятельного сельсовета.

Село Карадаглы

Проживают 1040 человек (200 семей) азербайджанской национальности;
-газификация села;
-отвод участка и строительство детсада на 140 мест;
-строительство моста,соединяющего обе части селения;
-завершение работ по телефонизации;
-осуществление работ по обеспечению села питьевой водой;
-отвод участка и строительство врачебной амбулатории.

по Гадрудскому району

Село Туг

Проживают 923 человека(183 семей) азербайджанской национальности,140 из которых безработны:
-разделение совхоза на 2 части на основе существующих ранее колхоза им.Тельмана Мартунинского района и колхоза имени Октябрь Гадрудского района;

մարմինները Հատուկ Կառավարման Կոմիտեի իմացությամբ: Մինչդեռ կես տարի է, որ մարզում շինանյութերի բացակայության պատճառով մենք չենք կարողանում ֆիննական տներ կառուցել փախստականների համար: Ահա թե ինչպես են իրացվում ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման համար հատկացված <միջոցները>»:

1989 թ. ընթացքում Խոջալուն արագորեն կառուցվում և անընդհատ համալրվում էր նոր տեղափոխվածներով: Ադրբեջանում հաստատված 48 հազար թուրքմեսխեթցիներից [Բ-103] 1000-ից ավելի մարդ բնակեցվել է հենց Խոջալուում: Խոջալուում էր բնակեցվել նաև 1988 թ. նոյեմբերից Հայաստանից տեղափոխված/փախած ադրբեջանցիների որոշ մասը: Խոջալու ապրելու էին գալիս նաև Ադրբեջանի տարբեր շրջաններից՝ գայթակղվելով առաջարկվող արտոնություններից՝ բնակարանաշինության արտոնյալ վարկեր, երեխաներին՝ առանց քննությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելություն [Ա-15, 79]: 1990 թ. Խոջալուում ակտիվորեն կառուցվում էին բազմահարկ բազմաբնակարան շենքեր: 1989 թ. մարդահամարի տվյալներով 1851 բնակչություն ունեցող Խոջալուում 1991 թ. վերջերին արդեն ապրում էր 6.300 մարդ: 1991 թ. մասին Ղարաբաղում Մոսկվայից ԼՂԻՄ-ի ԽՍՀՄ ՆԳՄ քննչական խմբի շտաբի ղեկավար նշանակված Վ. Կրիվոպոսուկովը գրում է. «Աղյուսից սարքվող նոր տները աճում էին ինչպես սունկը անձրևից հետո: Նոր տները որքան մոտ էին օդանավակայանին՝ այնքան խոշոր ու բարձր էին... Կառույցների, աղյուսի լեռների, սղոցանյութերի, ցեմենտի պարկերի, այլ շինանյութերի առատության ծավալները առավել զարմանալի էին, քանի որ դրանք իսպառ բացակայում էին ոչ միայն հայկական բնակավայրերում, այլ նաև ԼՂԻՄ-ի մայրաքաղաք Ստեփանակերտում... Ադրբեջանական իշխանությունները ԼՂԻՄ-ին հատկացված միութենական սոցիալ-տնտեսական զարգացման միջոցները նպատակային օգտագործում էին այդ բնակավայրի կառուցման համար... Օդանավակայանի մոտի տարածքի կառույցներն արվում էին քաղաքաշինության նորմերի կոպիտ խախտումներով: Հաշվարկն այն էր, որ օդանավակայանի մերձավորությունը թռիչքներն ու վայրէջքները դարձնեն վտանգավոր և օդանավակայանի փակումը դառնա անխուսափելի... Այդ դեպքում Ղարաբաղի բնակչությունը լիովին կզրկվի արտաքին աշխարհի հետ կապող երակից և կդառնա ռեզերվացիա» [Ա-15, 79 – 80]:

ԼՂԻՄ-ի տարածքում 1988 թ-ից սկսած հակահայկական գործողություններում Խոջալուն չափազանց ակտիվ դեր էր խաղում: Հենց Խոջալուում ստեղծվեց այն իրավիճակը, որ ԼՂԻՄ-ում բացահայտ հարձակումներ սկսվեն ազգային պատկանելության հիմքի վրա: 1988 թ. սեպտեմբերի 18-ին, գյուղացիների երկրագործական աշխատանքներին օգնելուց հետո, ուսանողների մի խումբ ավտոբուսով վերադառնում էր Ստեփանակերտ: Խոջալուով անցնելիս ավտոբուսը և ուղևորները ենթարկվում են հարձակման՝ քարերով, բռունցքներով, դանակներով և նույնիսկ հրազենով: Շահրամանյան ազգանունով մի մարդ մա-

հանում է, քառասունից ավելը՝ վիրավորվում: Կռիվը դիտող միլիցիոներների առաջ շարունակվում է այնքան, մինչև Ստեփանակերտում, որի հրապարակում այդ պահին միտինգ էր, իմանում են դեպքի մասին և շտապում օգնության: Խոջալուի միլիցիան «հանկարծ» նկատում է ծեծուջարդը և կենդանանում՝ զսպում հարձակվողներին [Բ-73]:

Հաջորդ օրը տեղի են ունենում հայերի բռնություններ ադրբեջանցիների դեմ Ստեփանակերտում, և ադրբեջանցիների բռնություններ հայերի դեմ՝ Շուշիում [Բ-73]: 2000 ադրբեջանցիներ լքում են Ստեփանակերտը, 4000 հայեր՝ Շուշին: Քրեական երկարատև գործ է բացվում:

Բրիտանական ծագումով ամերիկացի վերլուծաբան Թոմաս դե Վաալը, որևէ աղբյուր չհիշատակելով, այլ կերպ է ներկայացնում դեպքերը: Ըստ նրա ներկայացրածի, Խոջալուի ամբոխը Խոջալուի մոտ հարձակվել է Ստեփանակերտ մթերք տանող խորհրդային զինվորների շարասյան և խաղաղ հայ բնակչության վրա: Դրանից հետո կացիններով և որսորդական հրացաններով զինված մի քանի հարյուր հայեր գնացել են Խոջալու վրեժ լուծելու: Ներքին գործերի մինիստրության Ներքին զորքերը փակել են նրանց ճանապարհը, բայց մի քանի մարդու հաջողվել է թափանցել Խոջալու, և այնտեղ կռիվ է սկսվել: Մոտ երկու տասնյակ մարդ վիրավորվել է, երկու զինվոր՝ հետո մահացել [Ա-37, 69]: Աղբյուրը չնշած այս պատմությունը մի շարք պատճառներով կասկածելի է: Պատճառներից գլխավորն այն է, որ 1988 թ. զինվորների շարասյան վրա դեռևս հարձակումներ չէին լինում, և լինելու դեպքում էլ տեղում անմիջապես պատասխան կստանային: Երկրորդ՝ այս պատմությամբ «պարզվում է», որ հայերի հարձակումից հետո Խոջալուի ներսում զինվորներ են մահացել: Սա տարօրինակ է, քանի որ դեպքի առթիվ դատական գործ է գնացել, և այս ամենն այնտեղ չի արտացոլվել: Անհնար բան: Կա նաև «Կոմսոմոլեց» թերթի թղթակից Նադեժդա Կրեմնևայի ակնարկը: Գրելով սումգայիթյան դատական գործի ընթացքի մասին և տարակուսելով, որ դատարանը կարծես թե լուրջ չի վերաբերվում այդ ծանր գործին, նա հիշատակում է նաև սեպտեմբերի 18-ի Խոջալուն՝ «Խոջալուի <դեպքից> 20 մարդ հիվանդանոցում է, մեկը մահացել է, 50 մեքենա դարձել են մետաղի ջարդոն...» [Բ-43]: Ինչպես տեսնում ենք, այստեղ զոհված զինվորների մասին որևէ ակնարկ չկա: Այս ամենից զատ «Խոջալուի դեպքի» մասին խոսվել է «Սումգայիթի դեպքերի» դատավարության ժամանակ Մոսկվայում: Թվարկվել են տուժած մարդիկ. «Շահրամանյան Հայրապետ Սուլեյմանի, 61 տարեկան, գլխուղեղի ծանր վնասվածք, գանգի ջարդվածք..., մահացել է հիվանդանոցում: Տոնյան Վալերի Դավիթի, 38 տարեկան, բանվոր, կրծքավանդակի հրազենային վերք՝ սրտի, թոքերի, ստամոքսի, բարակ աղիների վնասվածքներով: Բեգլարյան Ռավշան Մաքսիմի, 35 տարեկան, բանվոր, ձախ քունքի հրազենային վնասվածք: Սարգսյան Ալբերտ Արտեմի, 37 տարեկան, էլեկտրազոդող, որովայնի և աղիների հրազենային վնասվածք, կտրված միզափող: Գասպարյան Դա-

լինա Ծատուրի, 37 տարեկան, գանգի բաց կոտրվածք, ուղեղի ցնցում, դեմքի և մարմնի ջարդվածքներ: Արշակյան Գրիշա Հենրիկի, 26 տարեկան, աջ գոտկատեղի թափանցիկ հրազենային վնասվածք, աջ դաստակի հրազենային վնասվածք և այլն, և այլն, բոլորը միասին՝ 35 մարդ» [Ա-25,46]: Բոլոր վիրավորները՝ հայեր, հիմնականում՝ հրազենային վնասվածքներով: Ջինվորներ և Խոջալուի բնակիչներ չկան: Մնում է ենթադրել, որ ինչ-որ մեկը կամ կատակել է «դյուրահավատ» բրիտանացու հետ, կամ սխալ տեղեկություններ է տվել:

Քիչ հավանական է, որ սեպտեմբերի 18-ի «դեպքը» խոջալուցիների պարզ և հուզական հարձակում էր հայերի դեմ: Սեպտեմբերի 18-ի «Խոջալուի դեպքերը,— գրում է Լևոն Մելիք-Շահնազարյանը,— առիթ դարձան Ստեփանակերտ ներքին զորքեր մտցնելու համար: Հետո ողջ Լեռնային Ղարաբաղում և Աղդամի շրջանում հասարակական կարգը և քաղաքացիների անվտանգությունը պաշտպանելու նպատակով հատուկ դրություն և պարետային ժամ հաստատվեց» [Ա-21, գլուխ 8]: Հավանական է, որ Մոսկվան կամ Բաքուն հայերի արտահայտման հնարավորությունները և տեղաշարժերը սահմանափակելու համար որոշել էր Լեռնային Ղարաբաղում արագ հատուկ դրություն և պարետային ժամ մտցնել, ինչի համար առիթ էր պետք: «Խոջալուի դեպքը» այդ առիթը ստեղծեց, և սեպտեմբերի 21-ին Ա. Վոլսկին հայտարարեց «հատուկ դրություն և պարետային ժամ»՝ սահմանափակելով հավաքների հնարավորությունը: 1988 թ. հուլիսի 26-ից Վոլսկին ԽՍՀՄ Քաղբյուրոյի ներկայացուցիչն էր ԼՂԻՄ-ում: Ուշագրավ է, որ նույն օրը՝ սեպտեմբերի 21-ին, խորհրդային հիմնական պաշտոնական տեղեկատուն՝ TACC-ը, հաղորդում է, որ «Սումգայիթի դեպքերի հետ կապված քրեական գործերի քննությունը հիմնականում ավարտված է, ջարդերի, բռնությունների կազմակերպանն ու սպանություններին մասնակից **բոլոր անձինք** ենթարկվում են պատասխանատվության» [Բ-39]: Այս հաղորդագրությունը կեղծում էր իրականությունը: Հարց է, թե ո՞ւմ և ինչո՞ւ էր պետք սեպտեմբերի 21-ի հապճեպ հաղորդագրությունը, եթե դրանից 9 ամիս հետո, 1989 թ. հունիսի 7-ին, նույն Սուխարևը պիտի հայտարարեր «Սումգայիթի հարցով բոլոր գործերն ավարտված են: Երեք շաբաթ առաջ դատարան է ուղարկվել վերջին գործը, ընդհանուր առմամբ 94 մարդու <գործ>»: Այնպես որ, հիմա դատարանի հերթն է» [Բ-41]: Գլխավոր դատախազի ստախոսության մասին խոսում է Սումգայիթի գործով տուժածների պաշտպան Ռուբեն Սահակյանը. «Անցել է մեկ տարի ութ ամիս: Եթե հավատանք Սուխարևին, սումգայիթյան գործերն արդեն ավարտվել և փոխանցվել են դատարան: Բայց մենք գիտենք, որ սումգայիթյան գործերը դեռ շարունակվում են, հետևաբար Սուխարևը խաբել է պատգամավորներին և ողջ խորհրդային ժողովրդին» [Ա-25, 29]: Այլ կերպ ասած, Սուխարևի սեպտեմբերյան հաղորդումը պարզ սուտ էր, իսկ հունիսի 7-ի հաղորդագրությունը կարող էր ակնարկ լինել «զանգվածային ջարդեր» կազմակերպողներին: Ակնարկը նրանում էր, որ չնայած 1988 թ. փետրվարի 29-ին, Սումգայիթի միայն 41-րդ թա-

ղամասի հայ բնակչության վրա հարձակվողների թիվը նույն քննչական գործերով հասնում էր 400 մարդու [Ա-25, 15], քննության կողմից դատարան ուղարկվել է ընդամենը 94 մարդու գործ: Բայց խնդիրը նույնիսկ մարդկանց քանակը չէր, խնդիրը խմբակային գործը մասերի բաժանելով անհատների վրա տարածելն էր: Այդ ամիսներին խորհրդային մամուլի քիչ թե շատ անկախ լինելու հնարավորություն ունեցող լրատվամիջոցները հաճախ էին գրում, որ Սումգայիթի խմբակային գործը առանձին անձանց, թեկուզ 94 մարդու, «խուլիգանության» որակմամբ մասերի բաժանելու սկզբունքը ամբողջովին կեղծում է բուն երևույթի՝ ազգային պատկանելության հողի վրա կոլեկտիվ բռնության և կոլեկտիվ հանցանքի էությունը: Պարզ էր, որ «Խոջալուի գործը» պիտի քննվեր նույն տրամաբանությամբ:

Խոջալուցիներն անհամեմատ պակաս վտանգավոր գործ էին արել, և նրանք դրա համար չպիտի պատժվեին: Մինչ ընթանում էր քրեական գործի քննությունը, ԽՍՀՄ կարևոր քաղաքական թերթերից մեկը՝ «Իզվեստիան», «Լեռնային Ղարաբաղ. հանդարտության վերադարձ» հոդվածով մեղմորեն նախապատրաստում է միջադեպի դատական լուծումը՝ կանխավ հիանալով «Խորհրդային մարդասիրական իրավունքով» [Բ-40]: «Քննիչները պարզել են,—գրում է թերթի անանուն հոդվածագիրը,—որ Խոջալուի զանգվածային անկարգություններին գործնականում մասնակցել է նրա ողջ ադրբեջանական ազգության բնակչությունը: <Քննությունը> սահմանափակվել է հարձակման միայն առավել ակտիվ մասնակիցների բացահայտմամբ: Քաղաքականապես և իրավապես ճիշտ չի լինի այս իրադարձությունների բոլոր մասնակիցներին քրեական պատասխանատվության ենթարկել»: Ի վերջո քննությունը որոշում է բոլոր մասնակիցներով չզբաղվել, «քանի որ Ղարաբաղում նոր իրավիճակ է և նրանք այլևս հանրային սպառնալիք չեն», դատարան ուղարկել միայն երկուսի գործերը, իսկ բռնություններին մասնակցած քննությամբ հաստատված 8-ին ազատել՝ հաշվի առնելով, որ նրանք մեղանչել են, նրանց դրական են բնութագրում աշխատակիցները և համայնքը, իսկ նրանցից մեկը՝ Բ. Շիրինովը, 9 երեխաների հայր է: Ըստ էության շարունակվում էր սումգայիթյան դատա-իրավական պրակտիկան: Չնայած ԽՍՀՄ գլխավոր դատախազ Սուխարևի սեպտեմբերի 21-ի հայտարարությանը, սումգայիթյան գործը դեռ անշտապ քննության փուլում էր, և նույնիսկ չափազանց զուսպ արտահայտվող խորհրդային որոշ լրագրողներ էին իրենց մատչելի մամուլի էջերում տարակուսանք արտահայտում այն մասին, որ ըստ դատավարության ազգային խմբի բարբարոսական կոտորածը, պարզվում է, ընդամենը մասնավոր անձանց խուլիգանական արարք է, որի մանրամասների մեջ չարժե մտնել[14]: Նույն տրամաբանությամբ ինչո՞ւ չէր կարելի Խոջալուի մոտ

[14] Пральников А. «Московские новости», № 44, 30 октября, 1988; Кремнева Надежда, «Комсомолец», 17 октября, 1988; Армен Оганесян. «Комунист», № 258, 2 ноября 1998; Инесса Буркова, «Советский Карабах», 23 ноября 1988; Пральников А. «Московские новости», № 49, 4 декабря, 1988 և այլն:

ազգային հողի վրա տեղի ունեցած ոչ այնքան բարբարոսական ծեծը և նույնիսկ սպանությունը քրեորեն դատապարտելը ոչ մարդասիրական և ոչ նպատակահարմար համարել:

1989 թ. հունվարի 12-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությունը որոշում է ԼՂԻՄ-ում կառավարման նոր՝ անմիջականորեն իրեն ենթակա ձև մտցնել: Ստեղծվում է ԼՂԻՄ-ի Հատուկ Կառավարման Կոմիտե ԽՄԿԿ ԿԿ բաժնի վարիչ Ա. Վոլսկու գլխավորությամբ: Կոմիտեն գործել է մինչև 1989 թ. նոյեմբերի 28-ը, երբ ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի որոշմամբ այդ կոմիտեն լուծարվել է: Բայց մինչ այդ Վոլսկին թե հայերից, թե ադրբեջանցիներից հեղեղվում է բողոքների դիմումներով: Հայերի հիմնական բողոքները հարևան ադրբեջանական գյուղերից հաճախակի դարձած անասնագողության, «քարերի պատերազմի» (միջգյուղական ճանապարհներին և գյուղերում հայկական մեքենաների վրա նետվող քարեր), հայերից պատանդառություն, իրենցից հողազավթումների մասին էին, բայց կային նաև կրակոցների դեպքեր: Ադրբեջանցիները բողոքում էին գլխավորապես «քարերի պատերազմի» դեպքերից և տարբեր ձևերով պահանջում էին Ստեփանակերտ վերադարձնել այնտեղից տեղափոխված ադրբեջանցիներին: Թե հայերը, թե ադրբեջանցիները իրենց բողոքների դիմումները երբեմն ուղարկում էին նաև ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության մարմիններին, բայց ադրբեջանցիները սովորաբար դիմումների պատճեններն ուղարկում էին նաև Բաքու, որով ապահովում էին իրենց դիմումների նկատմամբ վերահսկողությունը: Արցախի պետական արխիվում շատ կան այդպիսի դիմումներ:

«Լեռնային Ղարաբաղի Հատուկ Կառավարման Կոմիտեի» ստեղծումից մեկ ամիս անց, 1989 թ. փետրվարի 25-ին, նորաստեղծ կոմիտեին դիմել է Ասկերանի շրջանի Խոջալուի բնակչությունը՝ խնդրելով իրենց հանել Ասկերանի շրջանային վարչա-տարածքային ենթակայությունից և դարձնել Շուշիի շրջանային վարչա-տարածքային ենթակայության գյուղ [Բ-4]:

1989 թ. առհասարակ հարուստ էր վարչական ենթակայությունը փոխելու խնդրանքներով՝ ԽՄԿԿ ԿԿ-ն բազմաթիվ նամակներ էր ստացել վարչական ենթակայության փոփոխության խնդրանքներով: Շահումյանի շրջանի հայ բնակչությունը խնդրել էր իրենց շրջանը հանձնել ԼՂԻՄ-ին, Շուշիի շրջանի ադրբեջանցի բնակչությունը խնդրել էր իրենց շրջանը հանել ԼՂԻՄ-ի կազմից, Հայաստանի ադրբեջանցիների մի խումբ խնդրել էր կամ Հայաստանի կազմում ադրբեջանցիների ինքնավարություն ստեղծել, կամ իրենց բնակության շրջանները հանձնել Ադրբեջանին և այլն [Բ-28]: Խոջալուի բնակչության դիմումն արտառոց բան չէր: Որպես այդ խնդրանքի հիմնավորում խոջալուցիները գրում են, որ ԼՂԻՄ-ի և դրա շուրջ ստեղծված իրավիճակից հետո շրջանի ղեկավարությունը իրենց գյուղին վերաբերվում է միակողմանի, չի արձագանքում գյուղա-

ցիների կարիքներին և ակնկալիքներին, Լեռնային Ղարաբաղի Հատուկ Կառավարման Կոմիտեն չի պատասխանում բողոքներին.

1. ԼՂԻՄ-ի և դրա շուրջ ստեղծված իրավիճակի պատճառով անհնար է սոցիալ-մշակութային խնդիրներով գնալ զանազան հիմնարկներ: Այդ կապակցությամբ դուրս հանել Խոջալուի գյուղական խորհուրդը Ասկերանի շրջանի վարչական բաժանումից և միացնել Շուշիի շրջանին, քանի որ Խոջալուն մինչև 1932 թ. գտնվում էր Շուշիի վարչա-տարածքային ենթակայության տակ:

– Շրջկենտրոնից փաստաթղթերն ստանում ենք մեզ անհասկանալի հայերեն լեզվով,
– ադրբեջաներեն լեզվով ռադիոհաղորդումներ չկան,
– ադրբեջաներեն լեզվով թերթեր չկան,
– խախտված են ադրբեջանցիների սահմանադրական իրավունքները, շրջանային ղեկավարության մեջ ադրբեջանցիներ չկան,
– խմելու ջուր չկա,
– Ստեփանակերտից վռնդված բանվորներն աշխատանք չունեն, բայց Ասկերանի շրջանային ղեկավարությունը թույլ չի տալիս մանվածքային գործարանի շինարարությունը սկսել,
– թույլ չի տալիս երիտասարդ ընտանիքների մասնավոր բնակարանաշինության համար հողահատկացումներ անել, և գյուղից երիտասարդները հեռանում են:

2. Խնդրել Շուշիի շրջգործկոմին իր կազմի մեջ առնել Խոջալուի վարչա-տարածքային գյուղական խորհուրդը:

3. Խնդրել ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման հանձնաժողովի նախագահ Ա.Ի. Վոլսկուն հաստատել Խոջալու գյուղի ընդհանուր ժողովի որոշումը:

4. Որոշումը ձևակերպել հինգ պատճեններով և ուղարկել՝
   ա/ Շուշիի շրջգործկոմ,
   բ/ Ասկերանի շրջգործկոմ,
   գ/ ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա.Ի. Վոլսկուն,
   դ/ Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն Խորհրդի նախագահություն,
   ե/ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահություն (տե՛ս էջ 26-ի փաստաթուղթը):

Իրականում Ասկերանի շրջանում, նույնիսկ ողջ ԼՂԻՄ-ում Խոջալուն այն հիմնական բնակավայրն էր, որում իրականացվում էին զարգացման ակտիվ ծրագրեր, արվում էին ներդրումներ և բնակչությունն էլ 2.5 անգամ ավելացել էր՝ ավելի քան չորս հազարով: Բայց այս խնդրանքի իրական իմաստը շատ պարզ էր: ԼՂԻՄ-ում հիմնական ադրբեջանաբնակ վարչական շրջանը Շուշին էր, որի վարչական ղեկավարության հետ շատ հեշտ էր առանց լրացուցիչ վե-

ВЫПИСКА

из протокола Ходжалинского сельского схода от 25 февраля 1988 года за №2

ПОСТАНОВЛЕНИЕ

В связи с обстановкой в НКАО и вокруг него общее собрание жителей села Ходжалы отмечает,что Аскеранский район и его руководство однобоко относится к селу,не отзываются на жалобы и запросы комиссия Особого управления в НКАО.В связи с вышеуказанными общее собрания жителей Постановляет:

1.В связи с обстановкой в НКАО нет никакой заботы со стороны районного руководства,невозможно поехать в разные учреждения по вопросам соцкультбыта.В связи с этим вывести Ходжалинский с/совет из подчинения Аскеранского районного административного деления и присоединить к Шушинскому району,так как и до 1932 года Ходжалы находилось в административно-территориальной подчинении Шуши.

а/Из района получаем все документы на армянском языке-не понятно что пишут,что хотят.

б/Нет радиопередачи на азербайджанском языке

в/Нет газеты на азербайджанском языке

г/ Нарушаются конституционные права нашего народа,нет ни одного азербайджанца в руководстве района.

д/Ходжалинцы с покон веков не имеют питьевую воду: пробурено суб артезианские скважины,но районные руководители не разрешают присоединять эти скважины через трансформатор в электросеть.

е/Выгнанные из разных учреждении города Степанакерта и района рабочие должны работать,но районные руководители Аскерана не разрешают строительства на нашей территории филиала ткацкой фабрики.

ж/Не разрешают выделять земельный участок под индивидуального жилищного строительства молодым семьям и поэтому молодежь уезжает из села.

2.Просить Шушинский райисполком принять Ходжалинский с/совет /административно-территории/ в состав Шушинского района.

3.Просить председателя комиссии Особого управления в НКАО тов. А.И.Вольского утвердить решение общего собрания с.Ходжалы.

4.Постановление оформить в пяти копиях и послать по нижеследующим инстанциям:

а/ В Шушинский райисполком

б/В Аскеранский райисполком

в/ Председателю комиссии Особого управления В НКАО тов.Вольскому

г/ В Президиум Верховного Совета Азерб.ССР.

-2-

д/ В Президиум Верховного Совета СССР

5/ Исполнение и контроль за этим решением возложить на председателя Ходжалинского сельского Совета народных депутатов тов. Намедова З.Х.

Председатель: /Намедов З./

Секретарь: /Гасанов Н./

Верно с подлинником

Секретарь: /Гасанов Н./

Արցախի Հանրապետության պետական արխիվ, Ֆոնդ 2, Ց.1, «О постановлении общего собрания жителей села Ходжалы Аскеранского района»

բահսկողության և հաշվետվության ընդհանուր ծրագրեր իրականացնել հայկական գյուղերի դեմ, ինչը բարդանում էր այն դեպքերում, երբ շրջանի ղեկավարությունը հայերից էր բաղկացած: Խոջալուի ասկերանական ենթակայությունը այդ դժվարություններից մեկն էր: Ասկերանի շրջանային իշխանություններին էին ենթարկվում Խոջալուի միլիցիայի բաժանմունքը, դպրոցները, արտադրությունները, շինարարության նպատակով հողահատկացման իրավունքը և այլն: Ասկերանի Ներքին գործերի բաժնի հաշվետվությունները ներառում էին Խոջալուի բնակչության կողմից կատարված օրինազանցությունները: Շուշիին ենթարկվեին՝ այդ վերահսկողությունը չէր լինի: Խոջալուն, ավելի քան ԼՂԻՄ-ում որևէ բնակավայր, սոցիալ-մշակութային խնդիրներ չուներ, զարգանում, մեծանում, բարեկարգվում և քաղաք էր դառնում: Բայց դրան զուգահեռ շրջակա հայկական գյուղերի համար դառնում էր նաև չարիք և «ճանապարհային պատժիչ միլիցիոներ»: ԼՂԻՄ-ի միակ՝ Խոջալուի մոտ գտնվող Ստեփանակերտի օդանավակայանը և Ասկերանից Ստեփանակետ ճանապարհը վերաճում էին հայերի դեմ թակարդի՝ մարդկանց առևանգումներ, ճանապարհների փակում, հարձակումներ: Հայերի մեծ մասը վախենում էր օդանավակայան մտնել, այնտեղ աշխատողները անթաքույց հակակրանքով էին վերաբերվում հայ ուղևորներին՝ զենքի անվան տակ բեռի և փաստաթղթերի ընդգծված կոշտ ստուգումներ, այդ թվում երիտասարդ կանանց և աղջիկների հագուստի տակ, թռիչքի թույլտվության ձգձգումներ, բացահայտ ծաղր: «Ցավալին» այն էր, որ տուժած բնակչությունը դիմում էր Ասկերանի վարչական մարմիններին և միլիցիային, իսկ այնտեղ մեծ մասը հայեր էին, որոնք գրանցում էին այդ ամենը: Երբեմն էլ Խոջալու էին գնում ստուգումների կամ մարդկանց կանչում էին պատասխանատվության: Շուշիի շրջանային ենթակայության պարագայում այդպիսի բան չէր լինի:

Խոջալուցիները կամ նրանց առաջնորդները, բայց ավելի ճիշտ կլինի ասել Ադրբեջանի իշխանությունները դժգոհ էին Հատուկ Կառավարման Կոմիտեից և դրա նախագահ Վոլսկուց, որն ընդգծված կողմնակալություն չէր ցուցադրում ադրբեջանցիների կամ հայերի նկատմամբ: Ադրբեջանի իշխանությունների պատկերացումներով այդ կոմիտեն ստեղծվել էր հենց ադրբեջանական կողմնակալության նպատակով, բայց կոմիտեն ուշադրություն էր դարձնում ոչ միայն ադրբեջանցիների, այլ նաև հայերի բողոքներին: Իսկ բողոքները շատ էին: Օրինակ, 1989 թ. սեպտեմբերի 9-ի գիշերը ատրճանակային փոխադարձ կրակոցներ էին եղել հայկական Խնածախ և ադրբեջանական Խոջալու գյուղերի բնակչության միջև, ընդ որում Խոջալուից հայերի դեմ կրակել են նաև միլիցիոներները [Բ-2]: Կոմիտեն արձագանքել էր հայերի բողոքին և ընթացք տվել գործին, չնայած Խոջալուի միլիցիոներները նրան «բացատրել են», որ ճիշտ է՝ իրենք անիմաստ են կրակել, բայց պատասխանել են հայկական Խնածախ գյուղից եկող կրակոցներին: Խոջալուի ակտիվիստներին գրգռում էր (կամ նրանց պատվիրվում էր գրգռվել), որ Ա. Վոլսկին չէր կասեցնում սեպտեմբերի 18-ի խո-

ջալուցիների հարձակման կապակցությամբ բացված և երկար քննվող քրեական գործը: Անցել էր մեկ տարի, մոտենում էր դատավարության ժամանակը: Խոջալուցիներին «պատվիրվում է» գործել:

1988 թ. սեպտեմբերի 27-ին խոջալուցիները հեռագրել էին Մոսկվա՝ Մ. Գորբաչովին, նաև Ա. Վոլսկուն, ներկայացնում «հայ ծայրահեղականներից» իրենց անպաշտպան վիճակը՝ իբր թե սեպտեմբերի 18-ին 1000 զինված հայ է եկել իրենց դեմ, իրենք նյութական վնասներ են կրել, իրենց կանայք ու երեխաներն անպաշտպան են, իրենք գործող ռազմական շտաբ են ուզում իրենց գյուղում, պահանջում են իրենց պաշտպանել հայերի ոտնձգություններից և այլն [Բ-1] (տե՛ս էջ 29-ի փաստաթուղթը):

Ադրբեջանում բոլոր միջոցներով տարածվում էր Ջիյա Բունիաթովի թեզն այն մասին, որ Սումգայիթում հայերի ջարդը հենց իրենք հայերն են կազմակերպել և արել [Ա-9]: Կարծեք թե նույն տրամաբանությունն էր գործում «Խոջալուի գործի» նկատմամբ:

Հոկտեմբերի 10-ին Խոջալուից երկու այլ հեռագիր է ուղարկվում Ա. Վոլսկուն և ԽՍՀՄ գլխավոր դատախազ Լ. Յա. Սուխարևին: Բողոքում են, որ սեպտեմբերի 18-ին հազարավոր (!!!! նախորդ հեռագրում հազար էին) հայեր Ստեփանակերտից հարձակվել են իրենց վրա, ջարդել փշրել են իրենց, իրենք միայն ինքնապաշտպանվել են, բայց իրենց պատիվն ու արժանապատվությունը ոտնահարված է, որովհետև գործի քննությամբ փորձում են անմեղ մարդկանց դատապարտել [Բ-1, Թ. 8,9] (տե՛ս էջ 30-ի և էջ 31-ի փաստաթղթերը):

Այս կարգի բացահայտ ստախոսությունը կեղծիք չէր, քանի որ բոլոր կողմերին, և առաջին հերթին պաշտոնական մարմիններին հիանալի հայտնի էր իրականությունը: Սրանով միայն փաստաթղթավորվում էին գործի բուն բնույթը շուռ տալու հիմքերը: Եթե երկրի իշխանության բարձրագույն մարմինները կարող էին այլափոխել սումգայիթյան իրականությունը, եթե երկրի գլխավոր դատախազը կարող էր խաբել՝ բարձրաձայն խոսելով Սումգայիթի «ավարտված քննության» մասին, եթե թուղթն էր ընկնելու գործերի հիմքում, ինչո՞ւ չհետևել այդ փրկարար օրինակներին:

Բայց սա էլ դեռ բոլորը չէր: 1989 թ. հոկտեմբերի 12-ին «վիրավորված արժանապատվությամբ» խոջալուցիները նամակով դիմում են ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի նախագահ Ն. Ռիժկովին՝ բողոքելով Հատուկ Կառավարման Կոմիտեի և Ա. Վոլսկու «հայասիրական խտրականության» դեմ. «Մենք՝ Ղարաբաղի տեղաբնիկ բնակչությունը վոնդված ենք քաղաքներից... մեր ճանապարհները փակ են... Ղարաբաղի Հատուկ Կառավարման Կոմիտեն օժանդակում է ադրբեջանական գյուղերի դատարկմանը... Բնակչությունը վրդովված է Վոլսկու օգնությամբ Ղարաբաղը հայացնելու դեմ... Եթե Արտակարգ Կառավարման Հանձնաժողովը չի կարողանում իր պարտականությունները կատարել, այն պետք է լուծարել, որպեսզի ԼՂԻՄ-ը կառավարվի Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից» [Բ-2] (տե՛ս էջ 32-ի փաստաթուղթը): Ակնհայտ է, որ Ադրբեջանի կառավարման

Ф.11-12

025 МИНИСТЕРСТВО СВЯЗИ СССР

ТЕЛЕГРАММА

ПРИЕМ:	ПЕРЕДАЧА:	Адрес:
го час. мин.	го час. мин.	
	№ связи	

АГДАМ АЗЕРБ 532 182 27/9 1231=

УВЕДОМЛЕНИЕ ТЕЛЕГРАФОМ НКАО ГОР СТЕПАНАКЕРТ ОБКОМ ПАРТИИ ПРЕДСТАВИТЕЛЮ ЦК КПСС И ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА СССР ТОВ ВОЛЬСКОМУ=

МОСКВА ГЕНЕРАЛЬНОМУ СЕКРЕТАРЮ ЦК КПСС ТОВ ГОРБАЧЕВУ
КАК ВАМ ИЗВЕСТНО 18-ГО ЧИСЛА СЕНТЯБРЯ СЕГО
ГОДА ТОЛПА ЛЮДЕЙ ЧИСЛЕННОСТЬЮ ТЫСЯЧА ЧЕЛОВЕК-АРМЯНЕ
НАПАЛИ НА СЕЛО ХОДЖАЛЫ ОНИ БЫЛИ ВООРУЖЕНЫ РАЗЛИЧНЫМИ
ВИДАМИ ОРУЖИЯ ЗАЖГЛИ ОДИН ДОМ И РАЗЛИЧНЫЕ СООРУЖЕНИЯ
ГРАЖДАН ПРИЧИНЕН МАТЕРИАЛЬНЫЙ МОРАЛЬНЫЙ ПОЛИТИЧЕСКИЙ
УЩЕРБ НАСЕЛЕНИЮ ПОСЛЕ ЭТИХ СОБЫТИЙ НАШИ ЖЕНЩИНЫ И ДЕТИ
ВСЕЛЯЛИСЬ В РАЗНЫЕ АЗЕРБАЙДЖАНСКИЕ РАЙОНЫ НАС МОЖНО
НАЗВАТЬ ПОЛЕСТИНСКИМИ БЕЖЕНЦАМИ И МЫ АЗЕРБАЙДЖАНЦЫ
ЖИВУЩИЕ В НКАО ТО ЕСТЬ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ССР БЕЖЕНЦЫ
СОВЕТСКОГО СОЮЗА ПРОСИМ ВАС ОБЕСПЕЧИТЬ НАМ СПОКОЙНУЮ
ЖИЗНЬ ЗАЩИТУ ОТ АРМЯНСКИХ ЭКСТРЕМИСТОВ МЫ ОЖИДАЕМ
ПОВТОРНОЕ ВООРУЖЕННОЕ НАПАДЕНИЕ ЧТОБЫ ЭТОГО НЕ ПОВТОРИЛОСЬ
ТРЕБУЕМ НАДЕЖНУЮ ОХРАНУ НАШЕГО СЕЛА И ДЕЙСТВУЮЩИЙ
ВОЕННЫЙ ШТАБ ПРИ СЕЛЬСОВЕТЕ НАРОД ТРЕБУЕТ ВСТРЕЧИ С ВАМИ
КОМЕНДАТУРА АСКЕРАНСКОГО РАЙОНА ДЕЙСТВУЕТ ПОД ДИКТОВКУ
РАЙОННЫХ РУКОВОДИТЕЛЕЙ ПОЭТОМУ К НАМ ОТНОСЯТСЯ
НЕДОБРОСОВЕСТНО НЕ ОБЕСПЕЧИВАЮТ НАДЕЖНОЙ ОХРАНОЙ
НАСЕЛЕННЫХ ПУНКТОВ СЕЛЬСОВЕТА ВЫ КАК ПРЕДСТАВИТЕЛЬ
ЦК КПСС ДОЛЖНЫ ОБЬЕКТИВНО ОЦЕНИТЬ ПОЛОЖЕНИЕ И ОПЕРАТИВНО
НЕМЕДЛЕННО ОКАЗАТЬ НАМ ПОМОЩЬ=ПРЕДСЕДАТЕЛЬ С/С МАМЕДОВ
ЭЛЬМАН ДЖАМАЛ ОГЛЫ СЕКРЕТАРЬ ПАРТКОМА ШУКУРОВ МУРАД
АЛИШ ОГЛЫ С ХОДЖАЛЫ АСКЕРАНСКОГО РАЙОНА НКАО АЗЕРБ ССР-

МИНИСТЕРСТВО СВЯЗИ СССР

ТЕЛЕГРАММА

Ходжалы Коллективное

ПРИЕМ: 25/10 го 15 ч 30 м

ПЕРЕДАЧА: го ч м

БЛ № 004

№ связи

Принял: Передал:

Адрес: Архив

26.10.88

АГДАМ АЗЕРБ 396 359 25/10 1408=

УВЕДОМЛЕНИЕ ТЕЛЕГРАФОМ СТЕПАНОКЕРТ ПРЕДСТАВИТЕЛЮ ЦК КПСС И ВЕРХОВНОГО СОВЕТА ПРИ ОБКОМА ПАРТИИ ТОВ ВОЛЬСКОМУ МОСКВА ГЕНЕРАЛЬНОМУ ПРОКУРОРУ СССР ТОВ СУХАРЕВУ

18-ГО СЕНТЯБРЯ ТЫСЯЧИ АРМЯН ТОЛПОЙ ФАКЕЛАМИ НАПАЛИ НА НАШЕ СЕЛЕНИЕ ХОДЖАЛЫ УСТРОИЛИ ПОГРОМ СОЖГЛИ ДОМА И ИМУЩЕСТВА ТЧК ЖЕНЩИНЫ И ДЕТИ ВЫНУЖДЕНЫБЫЛИ ВЫЕХАТЬ В ДРУГИЕ РАЙОНЫ. ВО ВРЕМЯ НАПАДЕНИЯ МЫ ЖИТЕЛИ ОКАЗАЛИ СОПРОТИВЛЕНИЕ С ЦЕЛЬЮ САМОЗАЩИТЫ ОБОРОНЯЛИСЬ. ГРУППА СЛЕДОВАТЕЛЕЙ ПРОККРАТУРЫ СССР НЕОБОСНОВАННО АРЕСТОВАЛИ СЕМЬ ЧЕЛОВЕК ЖИТЕЛЕЙ СЕЛЕНИЯ ВМЕНЯЮТ ОБВИНЕНИЕ КАК СОПРОТИВЛЕНИЕ ПРЕДСТАВИТЕЛЯМ ВЛАСТИ. МЫ ВОЗМУЩЕНЫ ПОДОБНЫМИ ДЕЙСТВИЯМИ РАБОТНИКОВ ПРОККРАЯРЫ ЯВЛЯЮТСЯ НЕПОНЯТНЫМИ , ОШИБОЧНЫМИ . ОСНОВНЫЕ ВИНОВНИКИ ОРГАНИЗАТОРЫ ПОГРОМА НЕ ПРИВЛЕЧЕНЫ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ.

ПРОСИМ РАЗОБРАТЬСЯ И ОСВОБОДИТЬ НЕОБОСНОВАННО ПРИВЛЕЧЕННЫХ К УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ , ПРЕКРАТИТЬ ПРЕСЛЕДОВАНИЕ НЕПОВИННЫХ ЛЮДЕЙ ВИНОВНЫХ НАКАЗАТЬ СТРОГОСТЬЮ ЗАКОНА.

В СЛУЧАЕ НЕПРИНЯТИЯ МЕР ПО ЗАКОНУ ВСЕ ЖИТЕЛИ ВЫНУЖДЕНЫ ПОКИНУТЬ СЕЛЕНИЕ И ОБРАТИТЬСЯ ПО ЭТОМУ ВОПРОСУ К ПОСОЛЬСТВУ ДРУГИХ СТРАН. ПОДПИСАНО 3 ТЫСЯЧИ ЖИТЕЛЕЙ СЕЛЕНИЯ ХОДЖАЛЫ АЗЕРБ ССР АЛИЕВ ЯГУБ САРЫ ОГЛЫ ШУКЮРОВ АФГАН АМИН ОГЛЫ ШУКЮРОВ АЛИШ ТАПДЫГ ОГЛЫ АБЫШОВ ИЛЬГАР ЧЕРКЕЗ ОГЛЫ САДЫКОВ БАЛАКИШИ АТАШ ОГЛЫ ШУКЮРОВ РИЗВАН АЛИШ ОГЛЫ АБЫШОВ ВЕЗИР ЧЕРКЕЗ ОГЛЫ ШУКЮРОВ РАСУЛ ГАСАН ОГЛЫ АЛЛАХВЕРДИЕВ НОВРУЗ САЛЕХ ОГЛЫ АБЫШОВ ДЖАВАНШИР ЧЕРКЕЗ ОГЛЫ МАМЕДОВ ВАГИФ ШУКЮР ОГЛЫ ШУКЮРОВ АКИФ РАСУЛ ОГЛЫ ГУСЕЙНОВ КАМИЛ ДАДАШ ОГЛЫ ШУКЮРОВА АНТИГА ИСФАНДИЯР КЫЗЫ ШУКЮРОВ ВАГИФ РАСУЛ ОГЛЫ АЗИЗОВ МОЙСУМ МУСЕИБ ОГЛЫ АЛЛАХВЕРДИЕВ МИРЗА САДАХ ОГЛЫ АЗИЗОВ ИНГЛАБ ЮСИБ ОГЛЫ БАХЫШЕВ МАМЕД МАГОМЕД ОГЛЫ АХМЕДОВ ЭЛЬДАР НАЙЫБ ОГЛЫ МАМЕДОВ ЭЛДАРШАМИЛ ОГЛЫ КУЛИЕВ ИЛХАМ ЯГУБ ОГЛЫ ГУЛИЕВ МАРКАЗ ХАНКИШИ ОГЛЫ САЛАХОВ ФАМИЛ МАМЕД ОГЛЫ ГУСЕЙНОВ САХИБ ГАМИШ ОГЛЫ ГАСАНОВ РАМИЛ ИБРАГИМ ОГЛЫ ИСМАИЛОВ ТЕЛМАН ИСА ОГЛЫ АСЛАНОВ ТОФИК ВАЛИ ОГЛЫ УСУБОВ ШАХМАР ШАХГУСЕЙИН ОГЛЫ МАМЕДОВ БАГАТУР МУЛУК ОГЛЫ РУСТАМОВ АШОТ ИДРИСОВИЧ ГАСАНАЛИЕВ КЯРИМ МАШ-ДИ ОГЛЫ АЛИЕВ АЙДЫН БАХЛУЛ ОГЛЫ ДЖАББАРОВ САДАЙ АЛИ ОГЛЫ ГАСАНОВ ЯДИГАР АЛЕСКЕР ОГЛЫ МУСТАФАЕВ МАМЕД РАХИМ ОГЛЫ НОГИЕВ ФИЗУЛИ ХАНЛАР ОГЛЫ ПАШАЕВ СЕВИНДИК БАХЛУЛ ОГЛЫ АЛИЕВ ФИРУДУН ИСА ОГЛЫ МУРАДОВ ЗУЛФИ ЛЯТИФ ОГЛЫ АЛЛАХВЕРДИЕВ ЗИЯДДИН САЛАХ ОГЛЫ ГАСАНОВ ГАСАН СЕЙИДАГА ОГЛЫ БАГИРОВ МИРЗА ГАСАН ОГЛЫ МАМЕДОВ КАМИЛ АМИР ОГЛЫ НКАО Р-Н АСКЕРАН СЕЛО ХОДЖАЛЫ-

МИНИСТЕРСТВО СВЯЗИ СССР

ТЕЛЕГРАММА

ПРИЕМ: 25/10 1935 г. ч. м.

ПЕРЕДАЧА: г. ч. м.

БЛ. № 18 07

№ связи

Принял:

Передал:

Адрес:

АГДАМ 394 373 25/10 1401=

НЕ/НАБОРОМ УВЕДОМЛЕНИЕ ТЕЛЕГРАФОМ СТЕПАНАКЕРТ ПРЕДСТАВИТЕЛЯ ЦК КПСС И ВЕРХОВНОГО СОВЕТА ССР Т ПРИ НКАО ТОВ ВОЛЬСКОМУ=

МОСКВА ГЕНЕРАЛЬНОМУ СЕКРЕТАРЮ ЦК КПСС ПРЕЗИДИУМУ ВЕРХОВНОГО СОВЕТА СССР ТОВ ГОРБАЧЕВУ М С МЫ ЖИТЕЛИ СЕЛЕНИЯ ХОДЖАЛЫ ПОЛНОСТЬЮ ПОДДЕРЖИВАЕМ ПОЛИТИКУ ПАРТИИ ПРАВИТЕЛЬСТВА В ОБЛАСТИ ДЕМОКРАТИИ, ПЕРЕСТРОЙКИ. ОДНАКО МНОГИЕ ЭКСТРЕМИСТСКИЕ НАСТРОЕННЫЕ ЛИЦА АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОСТИ ЗЛОУПОТРЕБЛЯЮТ ИДЕЯМ ДЕМОКРАТИЗАЦИИ СЕЮТ МЕЖНАЦИОНАЛЬНУЮ ВРАЖДУ, ОТКРЫТО ВЕДУТ АНТИГОСУДАРСТВЕННУЮ ПОЛИТИКУ 18-ГО СЕНТЯБРЯ ТЫСЯЧИ АРМЯН УССТРОИЛИ ПОГРОМЫ, ПОДЖОГИ В РЕЗУЛЬТАТЕ ЖИТЕЛИ СЕЛЕНИЯ ВЫНУЖДЕНЫ ПОКИНУТЬ СВОЙ РОДНОЙ КРАЙ . ВАШЕ РЕШЕНИЕ ПО НКАО ОСТАЕТСЯ НА БУМАГЕ НЕ ВЫПОЛНЯЕТСЯ. РАСПУШЕННЫЕ ОРГАНИЗАЦИИ ,, КРУНГ,, ,,КАРАБАХ ,, ФАКТИЧЕСКИ ДЕЙСТВУЮТ МЕШАЮТ НОРМАЛИЗАЦИИ ОБСТАНОВКИ. ПО СЕЙ ДЕНЬ НЕ ОДИН РУКОВОДИТЕЛЬ ЭТИХ ОРГАНИЗАЦИЙ НЕ ПРИВЛЕЧЕНЫ НИ К КАКОЙ ОТВЕТСТВЕННОСТИ , НАПРОТИВ РАБОТНИКИ ПРОКУРАТУРЫ СССР ПРИВЛЕКАЮТ НЕВИННЫХ ЛЮДЕЙ ОКАЗАВШИХ СОПРОТИВЛЕНИЕ РАЗЬЯРЕННЫМ ЭКСТРЕМИСТАМ ЗАЩИЩАЛИ ОТ НИХ ЖИЗНЬ , ЧЕСТЬ, ДОСТИНСТВО СВОИХ СЕМЕЙ. ПРОСИМ ЗАЩИТЫ , ПОМОЩИ НАШЕГО ПРАВИТЕЛЬСТВА ОСВОБОДИТЬ НЕПОВИННЫХ ЛЮДЕЙ В ПРОТИВНОМ СЛУЧАЕ ВЫНУЖДЕНЫ ПРОСИТЬ ПОЛИТИЧЕСКОЕ УБЕЖИЩЕ У ДРУГИХ СТРАН..

ОТ ЖИТЕЛЕЙ СЕЛЕНИЯ ХОДЖАЛЫ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ССР =

АЛИЕВ ЯГУБ САРЫ ОГЛЫ ШУКЮРОВ АФГАН АМИН ОГЛЫ ШУКЮРОВ АЛИШ ТАПДЫГ ОГЛЫ АБЫШОВ ИЛЬГАР ЧЕРКЕЗ ОГЛЫ САДЫКОВ БАЛАКИШИ АТАШ ОГЛЫ ШУКЮРОВ РИЗВАН АЛИШ ОГЛЫ АБЫШОВ ВЕЗИР ЧЕРКЕЗ ОГЛЫ ШУКЮРОВ РАСУЛ ГАСАН ОГЛЫ АЛЛАХВЕРДИЕВ НОВРУЗ САЛЕХ ОГЛЫ АБЫШОВ ДЖАВАНШИР ЧЕРКЕЗ ОГЛЫ МАМЕДОВ ВАГИФ ШУКЮР ОГЛЫ ШУКЮРОВ АКИФ РАСУЛ ОГЛЫ ГУСЕЙНОВ КАМИЛ ДАДАШ ОГЛЫ ШУКЮРОВА АНТИГА ИСФАНДИЯР КЫЗЫ ШУКЮРОВ ВАГИФ РАСУЛ ОГЛЫ АЗИЗОВ МОЙСУМ МУСЕИБ ОГЛЫ АЛЛАХВЕРДИЕВ МИРЗА САДАХ ОГЛЫ АЗИЗОВ ИНГЛАБ ЮСИБ ОГЛЫ БАХЫШЕВ МАМЕД МАГОМЕД ОГЛЫ АХМЕДОВ ЭЛЬДАР НАЙЫБ ОГЛЫ МАМЕДОВ ЭЛДАРШАМИЛ ОГЛЫ КУЛИЕВ ИЛХАМ ЯГУБ ОГЛЫ ГУЛИЕВ МАРКАЗ ХАНКИШИ ОГЛЫ САЛАХОВ ФАМИЛ МАМЕД ОГЛЫ ГУСЕЙНОВ САХИБ ГАМИШ ОГЛЫ ГАСАНОВ РАМИЛ ИБРАГИМ ОГЛЫ ИСМАИЛОВ ТЕЛМАН ИСА ОГЛЫ АСЛАНОВ ТОФИК ВАЛИ ОГЛЫ УСУБОВ ШАХМАР ШАХГУСЕЙИН ОГЛЫ МАМЕДОВ БАГАТУР МУЛУК ОГЛЫ РУСТАМОВ АШОТ ИДРИСОВИЧ ГАСАНАЛИЕВ КЯРИМ МАШ-ДИ ОГЛЫ АЛИЕВ АЙДЫН БАХЛУЛ ОГЛЫ ДЖАББАРОВ САДАЙ АЛИ ОГЛЫ ГАСАНОВ ЯДИГАР АЛЕСКЕР ОГЛЫ МУСТАФАЕВ МАМЕД РАХИМ ОГЛЫ НОГИЕВ ФИЗУЛИ ХАНЛАР ОГЛЫ ПАШАЕВ СЕВИНДИК БАХЛУЛ ОГЛЫ АЛИЕВ ФИРУДУН ИСА ОГЛЫ МУРАДОВ ЗУЛФИ ЛЯТИФ ОГЛЫ АЛЛАХВЕРДИЕВ ЗИЯДДИН САЛАХ ОГЛЫ ГАСАНОВ ГАСАН СЕЙИДАГА ОГЛЫ БАГИРОВ МИРЗА ГАСАН ОГЛЫ МАМЕДОВ КАМИЛ АМИР ОГЛЫ НКАО Р-Н АСКЕРАН СЕЛО ХОДЖАЛЫ-19000

Председателю Совета Министров СССР

тов.Рыжкову Н.И.

Комитет особого управления Нагорной № 2114-Кас 12 10 1989 г.

Учитывая свои тягостные условия жизни азербайджанское население, проживающие в "Нагорном Карабахе" вынуждено было обратиться за помощью к Азербайджанскому народу. (Бак.рабочий 16.08.89 г.) В обращении говорится:

1. Мы коренные жители Азербайджана были изгнаны из городов "Нагорного Карабаха";

Например, из г.Степанакерта были изгнаны 15 тыс. человек, которые до сих пор не могут вернуться в свои жилища.

2. Все населенные пункты "Нагорного Карабаха", где проживают азербайджанцы в настоящее время находятся в окружении, все дороги к ним закрыты, часто прекращается подача им электроэнергии, газа, воды и обеспечение продовольственными продуктами и медикментами.

3. При непосредственном содействии Комитета особого управления азербайджанские деревни опустощаются.

4. Население возмущено арменизацией Нагорного Карабаха с помощью А.Вольского.

Учитывая создавшиеся тяжелое положение они обращаются к населению Азербайджана оказать им срочную помощь.

Известно, что КОУ "Нагорного Карабаха" создан для обеспечения нормальной обстановки в области, осуществления равноправия всех наций, а фактически содействует изгнитию азербайджанцов из Нагорного Карабаха подвергая их голоду и холодам.

Просим Вас дать указания руководству КОУ НКАО создать нормальную обстановку для проживания азербайджанского населения Нагорного Карабаха и возвращения изгнанных азербайджанцев из г.Степанакерта и из других населенных пунктов области в свои радные дома.

Если КОУ не может выполнять свои обязанности, то его необходимо упразднить, чтобы НКАО управляла Азербайджанская ССР.

Сотрудники института АзГУ

Фамилия И.О.	Подпись	Фамилия И.О.	Подпись
Султанов Б.И.		Исмаилова Т.А	
Голадуть А-Р		Гусейнова С.А	
Гусейнов О.Ж		Простенко Б.Н.	
Гвазов Я.И		Агаев М.С	
Гуканов Ф.М.		Мамедов З.Я	
Ивлиев Ш.С.		Асрарова С.	
Ермеев Г.М		Асадуллаев И.Н	
Ибиева Н.А.		Мамедов Н.Я.	
		Рагимов Ф.Н	

Արցախի պետական արխիվ, Ֆ.2, Ց.1, Գ.69, Թ.1

մարմինները դժգոհ էին Հատուկ կառավարումից և հիմքեր էին նախապատրաստում «աշխատավորության խնդրանքով» դրանից հրաժարվելու:

Արդյունքում սեպտեմբերի 18-ի դեպքի մասին ԽՍՀՄ դատախազությունը չնայած «պարզում է» պարզը, այն է՝ «զանգվածային անկարգությանը» խառնված է եղել Խոջալուի ողջ ադրբեջանական բնակչությունը, տուժողը ճանապարհով անցնող անմեղ հայերն են, բայց... «քաղաքականապես և իրավաբանորեն սխալ կլինի քրեական պատասխանատվության ենթարկել բոլորին», բավական են երկու ակտիվիստներ, որոնք էլ, սակայն... անչափահաս զավակների ծնողներ են, զղջում եմ իրենց արածների համար, աշխատավորական կոլեկտիվները նրանց դրական են բնութագրում և այլն: Սա անշուշտ սպասելի էր:

Հետագայում այս պատմությունը լիովին առասպելական կերպարանք պիտի ստանա: 1992 թ. արդեն «բանավոր պատմությունը», ի դեմս Խոջալուի բնակչուհի Դուրդան Ալիևայի, պիտի «տեղեկացնի», որ «հայերն առաջին անգամ Խոջալուի վրա հարձակվել են 1988 թ. սեպտեմբերի 18-ին: Այդ ժամանակ Խոջալուում հարսանիք էր: Մտածելով, որ խոջալուցիները զբաղված են հանդիսությամբ, հայերը զինված հարձակում են կատարել քաղաքի վրա: Այն ժամանակ Խոջալուի տղամարդիկ արժանի հակահարված են տվել հայերին, և նրանք ստիպված էին նահանջել: Այն ժամանակից Խոջալուն շրջափակված էր: Այն ժամանակից էլ մեր դժբախտություններն սկսվեցին: Չորս տարի մենք ապրել ենք շրջափակման մեջ» [Բ-83]:

Պարզ է, իհարկե, որ ընտրողական և հանցավոր «դատական մարդասիրությունը», որը տևաբար ուղեկցել է «ղարաբաղյան կոնֆլիկտի» տարբեր դրվագներին, սովորական «դատավարությունների մարդասիրություն» չէր: Պատվիրված կոնֆլիկտները չէին կարող սովորական դատա-քննչական ընթացք ունենալ, և իշխանությունների պատվիրած հանցանքը գործողը չպիտի դատվեր: Մյուս կողմից, Խոջալուի բնակչությանը մասնակից դարձնելով հայերին պատժելու իր գործողություններին, իշխանությունները Խոջալուի բնակչության վրա դնում էին թե՛ հանցանքի բեռ, թե՛ անպատժելիության երաշխիքով վարժեցնում տարատեսակ հանցավոր միջադեպերի: Հասկանալի է, որ Խոջալուի՝ միմյանց դեռևս չինտեգրված, չմերձեցած բնակչությունը միակամ և միաբնույթ չէր, բայց նոր եկվորները՝ սունի թուրք մեսխեթցիները, օտար էին, չէին կարող և հավանաբար չէին խառնվում դեպքերի ընթացքին: Ինչպես հետագայում իրենք էին ասում՝ չեզոք էին: Բայց շրջակա հայ բնակչության նկատմամբ ագրեսիվ գործողությունները շարունակվում և «Խոջալուի բնակչության» անունից բողոքները դառնում էին կրկնվող ու շարունակական:

Ա. Վոլսկին ջանում էր կատարել իր առաքելությունը՝ զսպել մարզի հայերի ինքնորոշման իրավունքի իրացման քայլերը: ԽՍՀՄ-ում չտեսնված այս կարգի ինքնագլխությունը զսպելու և հնազանդեցնելու փորձը վարչական ճնշումները և բռնությունն էին: «Պերեստրոյկայի» կուրս հայտարարած երկրի իշխանությու-

նը չէր կարող միանգամից զորք բերել և զենքի ուժով ճնշել «խռովարարներին»: Փորձարկվում էին այլ միջոցներ: Հատուկ կառավարման շրջանում Լեռնային Ղարաբաղում ստեղծված ռազմական պարետատունը և ադրբեջանական միլիցիան ողջ մարզը համատեղ պատել էին հսկիչ անցակետերի ցանցով: Սրանց նպատակը հայերի տեղաշարժերը դժվարացնելը և խանգարելն էր: 1989 թ. օգոստոսի 22-ին «Սովետական Ղարաբաղ» թերթում պարետ, գեներալ Վ. Սաֆոնովի ստորագրությամբ հրատարկվել է ռազմական պարետատան յոթ ամսվա գործունեության արդյունքը. «Երկու ազգություններից տարբեր իրավախախտումների համար բերման է ենթարկվել 15 հազար 200 մարդ...»: «**Երկու ազգությունների» 15 հազար 200-ից 14 836-ը հայեր էին** [Ա-21, գլուխ 8] Գեներալն այդ մասին «համեստորեն» լռել էր: Բայց մարզը փոքր էր, բնակչությունն ամեն ինչ պարզ տեսնում էր, գիտեր և հասկանում էր, որ Կոմիտեն ստեղծվել է հայերի նկատմամբ վերահսկողությունը խստացնելու և հնազանդեցնելու նպատակով:

Մոսկվային ենթարկվող Հատուկ Կառավարման Կոմիտեն և դրա ղեկավար Ա. Վոլսկին, այնուամենայնիվ, փորձում էր որոշ օրինավորություն պահպանել և դրանով խանգարում էր թե՛ Ադրբեջանի, թե՛ հայերի մասնավոր ձգտումներին: Դրանից զատ Վոլսկու ներկայությունը Լեռնային Ղարաբաղում լրացուցիչ և լեգիտիմ վերահսկողություն էր ադրբեջանական կոշտ հակահայկական քաղաքականության իրացման ընթացքին, գործողությունների մասին տեղեկությունների անցանկալի արտահոսքի միջոց: Հարկավոր էր դրանից ազատվել: Հաջորդում է «աշխատավորության»՝ խոջալուցիների հերթական վրդովված բողոքը Ա. Վոլսկու դեմ: Նամակն ուղղվում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ Մ. Գորբաչովին, պատճենն՝ Ադրբեջանի Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ Է. Գաֆուրովային և ԼՂԻՄ-ի Հատուկ Կառավարման Կոմիտեի նախագահ Ա. Վոլսկուն: Նամակի վրա ամսաթիվ չկա, բայց այն գրվել է 1989 թ. օգոստոսի 31-ից հետո, քանի որ այնտեղ օգոստոսի 31-ը հիշատակվում է որպես «Խոջալուի խաղաղ բնակչության դեմ» տեղի ունեցած բռնությունների օր: Նամակագիրները «տեղեկացնում են», որ Վոլսկին չի արդարացրել խոջալուցիների վստահությունը: Խոջալուն մեկուսացված է Շուշիից և Աղդամից: Վոլսկու ղեկավարությամբ սեպտեմբերի 18-ին **հայերի բազմահազար** (!!! – Հ. Խ.) **ամբոխը հարձակվել է Խոջալուի վրա... հայ ծայրահեղականների գործողությունները քաղաքական վերլուծության չեն ենթարկվել**: Մինչև Վոլսկու նշանակումը ամեն ինչ հանդուրժելի էր, դրանից հետո տեղի են ունենում կողոպուտներ... Հայկական բոլոր գյուղերում շինարարական աշխատանքներ են տարվում, ադրբեջանական գյուղերում չեն տարվում... Վոլսկու նշանակումից հետո հայերի և ադրբեջանցիների ընդհարումները հաճախակիացել են... 1989 թ. օգոստոսի 31-ին Վոլսկու ցուցումով Շատալինի[15] վայրի դիվիզի-

[15] Գեներալ Յու. Վ. Շատալինը 1986թ-ից ղեկավարում էր ԽՍՀՄ ՆԳՄ Ներքին զորքերը: Մինչև 1991 թ. ղեկավարել է ԽՍՀՄ տարածքի ազգամիջյան կոնֆլիկտների զինված բախումները

Председателю Президиума Верховного Совета СССР тов.Горбачеву М.С.

Копия:Председателю Президиума Верховного Совета Азерб.ССР тов. Гафарова Э.М.

Копия:Председателю Комитета Особого Управления НКАО тов. Вольскому А.И.

Доводим до Вашего сведения о том,что избранный по Степанакертскому территориальному округу 218 Вольский А.И. не оправдал доверие Ходжалинских избирателей Аскеранского района.Несколько раз мы обращались к нему встретиться,но он вообще отказался на встречу. Наоборот занимается тиранией.Он не вернул выгнанных азербайджанцев в родные дома Степанакерта.Не отремонтировал,а даже нарочно провалил эту работу.Сотни и сотни Ходжалинцев остались без работы По его указанию военные ведут себя,как гестапо.

Ходжалинцы изолированы от Шуши и Агдама.До назначения Вольского А.И.всё было терпимо,а после этого нет житья азербайджанцам.На каждом углу происходить убийство и ограбление.17/IX 1989 г. в г.Степанакерта зажигалась четыре азербайджанские дома.Но раскрываются тяжкие преступления.Степанакерт фактически стал национальным городом.Нарушаются конституционные права азербайджанцев.

18/IX 1988 года под руководством Вольского многотысячная армянская толпа напала на Ходжалинцев,на который не был дан политический анализ действиям армянских экстремистов.Вдобавок этому 22-23-24 сентября 1988 года перед глазами военных сжигались и грабились азербайджанские дома и люди.А это было во время комендантского часа.

12 января 1989 года первый раз в истории страны было образовано особое управление в НКАО под председательством Вольского После этого во всех армянских населенных пунктах велась строительная работа,а в азербайджанских сёлах эти работы не велись.

С назначением Вольского столкновение между армянами и азербайджанцами участились,как будто это нарочно делается,чтобы два братских народа истребили друг-друга.

31 августа 1989 г.по указанию Вольского дикая дивизия Шаталина напала на мирных Ходжалинцев.Войска избивали дубинками и стреляли из автоматов мирных жителей.Сорок человек получили ранение,а четверо попали в Агдамскую больницу с перебитыми ребрами Троих Ходжалинцев незаконно взяли с собой,через сутки отпустили в обруганном виде.

Фактов много можно привести.Учитывая все эти факты избиратели-Ходжалинцы требуют отозвать депутата Вольского А.И.,как неоправдавшего народного доверия.Заверяем подписями:

1 Ахмедов Гасанов Шограт

Блохин С.В. Ветеран Великой Отеч. войны Бельченко

ան հարձակվել է Խոջալուի խաղաղ բնակչության վրա, ծեծել են մահակներով, կրակել ավտոմատներից... [Բ-6]: Առկա է 150 մարդու անուն և ստորագրություն (տե՛ս էջ 35-ի փաստաթուղթը):

Մինչ ադրբեջանական իշխանությունները ԽՍՀՄ վերին հարթակներում կլուծեին Հատուկ Կառավարման Կոմիտեն լուծարելու խնդիրը, ինչին հասան 1989 թ. նոյեմբերի 26-ի որոշումով, խոջալուցիները շարունակում են հայերի դեմ հարձակումները, քարանետումները ճանապարհով անցնող մեքենաների վրա [Բ-3], պայթեցնում են երկաթգծի ռելսերը [Բ-3, Թ. 38], մարդկանց առևտրով է զբաղվում՝ պատանդներ են վերցնում հայերից, ետ վաճառում նրանց և շարունակում բողոքներ ուղարկել բոլոր հնարավոր վարչա-քաղաքական մարմիններին:

ճնշելու գործողությունները, այդ թվում ԼՂԻՄ-ում, որտեղ 1990–91 թվականներին ԽՍՀՄ ՆԳՄ Ներքին զորքերից մոտ 1000 մարդ կար:

■
ԽՈՉԱԼՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ/ՕՄՕՆ-Ի ԾՐՉԱՆՈՒՄ

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նոյեմբերի 28-ի որոշմամբ Հատուկ Կառավարման Կոմիտեի փոխարեն Ադրբեջանը պիտի պարիտետային սկզբունքով ստեղծեր Ադրբեջանա-ղարաբաղյան հանրապետական կազմկոմիտե և վերականգներ 1989թ. հունվարի 12-ին կասեցված ԼՂԻՄ-ի պատգամավորների խորհրդի գործունեության իրավունքը: Այդ որոշումը կողմերից երկուսի համար էլ անիմաստ որոշում էր: «Պարիտետ» ասելով որոշումը նկատի ուներ, որ «Ղարաբաղի կողմից» պիտի ներառվեին հայեր և ադրբեջանցիներ, իսկ «ադրբեջանական կողմից»՝ Ադրբեջանի իշխանությունների նշանակած մարդիկ, բնականաբար՝ ադրբեջանցիներ: Այդ «պարիտետը» ազգային հարցի շուրջ խիստ սրված հակամարտության պայմաններում կանխատեսում էր հայկական կողմի դիրքորոշումների մշտական տապալում: Այդ որոշման 7-րդ կետով առաջարկվում էր «անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ձևավորված ազգային կազմը խախտող ժողովրդագրական փոփոխություններ թույլ չտալու նպատակով» (տե՛ս էջ 38-39-ի փաստաթուղթը):

Ադրբեջանական ԽՍՀ-ը ուղղակի արհամարհեց այդ որոշումը: Հանրապետական կազմկոմիտե ստեղծվեց, բայց այնտեղ ոչ պարիտետային, ոչ էլ որևէ այլ սկզբունքով ԼՂԻՄ-ի ներկայացուցիչներ չեղան, ԼՂԻՄ-ի պատգամավորների խորհրդի գործունեության իրավունքը չվերականգնվեց, ԼՂԻՄ-ի կառավարումն անցավ Ադրբեջանի Կոմկուսի քարտուղար, Կազմկոմիտեի ղեկավար Վ. Պոլյանիչկոյին: Նա ղեկավարում էր միլիցիայի, ՕՄՕՆ-ի[16] և ըստ էության մարզի ադրբեջանցիների ռազմական խմբավորումների միջոցով: Ադրբեջանական ՕՄՕՆ-ի բնութագիրը տեսնենք ոչ հայկական, ոչ ադրբեջանական, այլ այդ պահին Աղդամում, այսինքն ԼՂՀ-ի «հարակից տարածքում» ԽՍՀՄ զորամասում ծառայած ռուսական բանակի սպայի՝ Յուրի Գիրչենկոյի դիտարկումներով:

---

[16] ՕՄՕՆ – ռուսերեն՝ ОМОН, Отряд милиции особого назначения – Ոստիկանության հատուկ նշա նակության ջոկատ: Ստեղծվել է ԽՍՀՄ-ում 1988թ. հաճախակի տեղի ունեցող փողոցային ցույցերի ժամանակ առաջացող անկարգությունները ճնշելու նպատակով: Շատ արագ վերաճել է բռնության հատուկ տեսակի՝ իրավական բնույթ տալով պետական և իշխանության բռնություններին: Կոնկրետ ԼՂԻՄ-ում և հարակից հայկական բնակավայրերում նախ՝ ԽՍՀՄ, ապա Ադրբեջանի օմօնականները «փաստաթղթերի ստուգման» և «բնակչության գինաթափման» անուններով գործողություններով փաստացի իրականացնում էին բնակչության տեղահանում:

Комитет особого управления НКАО

ПОСТАНОВА ВЕРХОВНОЇ РАДИ СРСР
ПАСТАНОВА ВЯРХОЎНАГА САВЕТА СССР
СССР ОЛИЙ СОВЕТИНИНГ КАРОРИ
СССР ЖОҒАРҒЫ СОВЕТІНІҢ ҚАУЛЫСЫ
ՍՍՀՄ գերագույն սովետի որոշումը
СССР ЖОГОРКУ СОВЕТИНИН ТОКТОМУ
СССР ЕКАРЫ СОВЕТИНИН КАРАРЫ
NSV LIIDU ÜLEMNÕUKOGU OTSUS

Подлежит опубликованию в "Ведомостях", центральной и республиканской печати и областной печати Нагорно-Карабахской автономной области

ПОСТАНОВЛЕНИЕ
ВЕРХОВНОГО СОВЕТА СССР

Комитет особого управления НКАО № 2262 13 12 1988 г.

О МЕРАХ ПО НОРМАЛИЗАЦИИ ОБСТАНОВКИ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ

Исходя из необходимости стабилизации обстановки в Нагорном Карабахе и вокруг него, недопустимости дальнейшего насилия, в том числе всякого рода экономических санкций, Верховный Совет СССР п о с т а н о в л я е т:

I. Принять к сведению заявление Председателя Президиума Верховного Совета Азербайджанской ССР о том, что органами власти и управления республики будут приняты решительные и безотлагательные меры по снятию блокады с железных и автомобильных дорог на территории Азербайджанской ССР и обеспечена бесперебойная перевозка грузов.

2. Одобрить выводы и предложения Президиума Верховного Совета СССР по нормализации обстановки в Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР.

3. Создать на паритетных началах с НКАО республиканский оргкомитет и восстановить деятельность Совета народных депутатов НКАО 20-го созыва и его исполнительного комитета, приостановленную Указом Президиума Верховного Совета СССР от I2 января I989 года.

При восстановлении органов государственной власти и управления автономной области соблюдать представительство армянской и азербайджанской части населения пропорционально их численности.

4. Рекомендовать Верховному Совету Азербайджанской ССР в кратчайший срок принять законодательные меры, обеспечивающие повышение статуса реальной автономии, действенные гарантии армянского населения Нагорно-Карабахской автономной области, соблюдение законности,

2

защиту жизни и безопасности граждан, конституционное решение всех возникающих проблем.

С участием воссоздаваемых органов власти НКАО в двухмесячный срок разработать и принять новый закон о статусе НКАО, гарантирующий Нагорному Карабаху полноправное развитие во всех сферах государственного, хозяйственного и культурного строительства на основе самоуправления, самофинансирования, территориального хозрасчета, свободы экономических и культурных связей.

5. В условиях воссоздания органов власти и управления автономной области считать нецелесообразным дальнейшее сохранение Комитета особого управления НКАО.

Для контроля и оказания помощи в осуществлении мер по стабилизации обстановки в НКАО создать Союзную контрольно-наблюдательную комиссию, подчинив ее Верховному Совету СССР.

6. До нормализации общественно-политической ситуации, в целях защиты и гарантии безопасности населения сохранить в Нагорно-Карабахской автономной области соответствующий контингент внутренних войск МВД СССР с подчинением его Союзной контрольно-наблюдательной комиссии.

7. Президиуму Верховного Совета Азербайджанской ССР, Совету Министров республики и исполнительному комитету областного Совета народных депутатов НКАО принять необходимые меры с целью недопущения изменения демографической ситуации в области, нарушающего сложившийся национальный состав. Для решения всего комплекса проблем беженцев образовать специальную комиссию.

8. Рекомендовать Верховным Советам Армянской ССР и Азербайджанской ССР принять все меры для нормализации отношений между двумя народами, восстановления обстановки доверия и сотрудничества, налаживания нормальных экономических и культурных связей.

Председатель
Верховного Совета СССР М.ГОРБАЧЕВ.

Москва, Кремль.
28 ноября 1989 г.
№ 844-I.

Նա տեսել և նույնիսկ իր վրա զգացել է հայերի նկատմամբ այդ պատժիչ մարմնի ձևավորման և գործողությունների ընթացքը. «Զանգվածային հակահասարակական դրսևորումների վայրերում սահմանադրական կարգը վերականգնելու համար Ադրբեջանի կառավարության կողմից ստեղծվեց հանրապետական ՕՄՕՆ: Այդ կառույցը ենթարկվում էր ոչ թե ԽՍՀՄ ՆԳՄ-ին, այլ փաստաթղթերով Ադրբեջանի ՆԳՄ-ին: Բայց իրականում այդ ՕՄՕՆ-ը ղեկավարում էր նախկին, լուծարված Ադրբեջանական Ազգային Ճակատը: Այլ կերպ ասած՝ զինյալները: Միլիցիոների համազգեստ հագած, օրինականացված, բայց՝ զինյալները: Ստացվում էր հետևյալը: Եթե ոչ օրինական կազմավորումները չէին կարող կռվել, ապա հիմա կարող էր կռվել օրինական ՕՄՕՆ-ը: Լիակատար համոզվածությամբ կարող եմ ասել, որ այդ կառույցը ձևավորվում էր ումից պատահեր, այդ թվում նախկին քրեականներից: Ո՞ւմ դուր կգար Միլիցիայի հատուկ նշանակության այսպիսի ջոկատը... Դա արդեն ինչ-որ պարտիզանական ջոկատ չէր, այլ իր «աշխատանքի» համար ֆինանսապես վարձատրվող միլիցիայի ենթակառույց: «Աշխատանքը» հանդիսանում էր ԼՂԻՄ-ի տարածքում ադրբեջանական բնակչության պաշտպանությունը և նույն մարզի հայ բնակչության կողոպուտը: Կես դժբախտություն է, եթե միայն կողոպուտը լիներ, բայց տեղի էին ունենում խաղաղ բնակչության թալանով ուղեկցվող սպանություններ: Իսկ հետո ՕՄՕՆ-ը սկսեց կողոպտել նաև իր հարազատ ադրբեջանցիներին: Իսկ ինչո՞ւ ոչ, պատերազմն ամեն ինչ կսրբագրի...» [Բ-85, 3-րդ գլուխ]:

Ադրբեջանական ՕՄՕՆ-ը, առնվազն դրա կազմ մտնող մարդիկ ունեին նաև գաղափարական ընդհանրություն: «ՆԳՄ-ի հետ կապված ՕՄՕՆ-ի ենթակառույցները,—գրում է օմօնականների հետ շփված Թոմաս Հոլցը,—ունեին չեզոքության խախտման վտանգ: Մենթ-զինվորներից շատերը Իսկանդեր Գամիդովի պանթուրքական շարժման անդամներ էին: Բոզկուրտական համայնք: ...Ինձ ծանոթ միլիցիոներները Աղդամում հավաքվել էին Գաթիր Մամեդի շուրջը... Գաթիր Մամեդը զբաղվում էր զոհված ադրբեջանցիների դիակները հարազատներին վաճառելով... <երազում էին> մինչև վերջին հայը վռնդել Ղարաբաղից» [Ա-36, 149–152]:

Պոլյանիչկոյի ռեժիմի ստեղծումից անմիջապես հետո Կազմկոմիտեն սկսեց ուղղակիորեն գործել նոյեմբերի 28-ի 7-րդ կետի որոշման դեմ՝ արագորեն փոխել ժողովրդագրական առկա կազմը: Ադրբեջանում դեռևս մնացած հայկական բնակավայրերի նկատմամբ սկսվեցին դեպորտացիոն գործողություններ: Սկսվեց մարզի և հարակից հայկական բնակավայրերի հայաթափման գործընթացը՝ փաստացի խթանելով հայկական ինքնապաշտպանական ջոկատների հարկադրված ստեղծումը: Դրա թե՛ «հովանավորը», թե՛ փաստացի իրականացնողը հենց ադրբեջանական ՕՄՕՆ-ն էր: «1990 թ. հունվար... Բաքվում դա գուցե դեպորտացիա էր, բայց Աղդամում դա իսկական կոտորած էր: Մեկ գիշերվա ընթացքում Ադրբեջանի Ազգային Ճակատի ռազմիկները կոտորեցին քաղա-

քի բոլոր հայերին: Հաջորդ օրը ես իմ աչքերով եմ տեսել տասնյակ դիակներ, որոնց տեղափոխում էին քաղաքի Ներքին զորքերի զինվորները: Հետո մենք դա այդպես էլ անվանում էինք՝ «ծառերի կոտորած», այն իմաստով, որ չուրկաները չուրկաներին[17] կոտորում են» [Բ-85, 1-ին գլուխ]:

1990 թ. հունվարի 15-ին, ճիշտ այն ժամանակ, երբ Բաքվում թափ էին հավաքել հայկական կոտորածները, ԽՍՀՄ Քաղբյուրոյի կողմից «ԼՂԻՄ-ում և մի քանի այլ շրջաններում» մտցվեց արտակարգ դրություն՝ բնակչության տեղաշարժման սահմանափակումներով, զինաթափումով և անձնագրային ռեժիմի ստուգումներով: Կոտորածները Բաքվում էին, արտակարգ իրավիճակը մտցվում էր Լեռնային Ղարաբաղում: ԽՍՀՄ-ի Մինիստրների Խորհրդի այն ժամանակվա նախագահ Նիկոլայ Ռիժկովը հետագայում գրում է. «Մարդիկ զոհվում էին: Բաքուն համակվել էր արտասովոր դաժանությամբ... Սկսեցին լուրեր գալ մարդկանց նկատմամբ անհավատալի բռնությունների մասին: Իր իրերը գնացքով ուղարկելու նպատակով պահասենյակում տեղավորող մի հայի փակել էին պահասենյակում և կենդանի այրել: Հինգերորդ հարկի պատուհանից նախ կնոջ աչքի առաջ դուրս էին նետել ամուսնուն, ապա՝ կնոջը... Նիստը վարում էր Գորբաչովը: Նախագահության անդամներին տեղեկացրին, թե վերջին 2–3 շաբաթներին ինչ է տեղի ունենում հանրապետությունում (Ադրբեջանում–Հ.Խ.), հատկապես վերջին երկու օրերին: Կարծիք հայտնվեց, որ եթե արտակարգ միջոցներ չձեռնարկվեն, իրավիճակն ամբողջությամբ դուրս կգա իշխանությունների վերահսկողությունից, և այդ դեպքում Սումգայիթը սրա համեմատ փոքր միջադեպ կթվա: Ծրագրավորվում էր արտակարգ դրություն մտցնել Բաքվում և մի շարք շրջաններում: Դրա դեմ կտրուկ առարկում էր Ադրբեջանի Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ Գաֆուրովան…» [Ա-22, 13.01.2007]: Արդյունքում ԽՍՀՄ ԿԿ Քաղբյուրոն որոշում է «արտակարգ իրավիճակ հայտարարել ոչ թե Բաքվում, որտեղ առատորեն մարդկային արյուն էր հոսում, այլ Լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանի ու Հայաստանի որոշ շրջաններում» [Ա-22, 16.01. 2007]: Բաքվում մարդկանց արյունը շարունակում է հոսել՝ մինչև քաղաքում հայ չի մնում: Հայերի հարցը մինչև հունվարի 20-ը «լուծելուց հետո» Ադրբեջանի Ժողովրդական Ճակատը անցնում է «հակախորհրդային ակցիայի» և վերջապես խորհրդային զորքը գործում է: Հիմա արդեն մարդկանց կյանքի հարց չէր, իշխանության հարց էր: ԱԺՃ-ն պարտվում է: Գործողությունը ղեկավարած ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ.Յազովի հիշողություններով «Բաքու զորք մտցնելու հաջորդ օրը ես մտա Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների Խորհրդի նախագահ Այազ Մութալիբովի մոտ: Նստել էր իր առանձնասենյակում և լալիս էր: Արցունքների մեջ էր: Հարցնում եմ՝ «Չե՞ք հավատում, որ կարգ ու կանոն կհաստատենք»: «Ես ցավում եմ, որ այսքան մարդ զոհվեց»:

---

[17] «чурка» «чурку» режет. Ռուսերեն «чурка» բառի ուղիղ իմաստը «ծառի կոճղ» է, փոխաբերական իմաստով՝ հիմար, անտաշ մարդ: Ռուսերեն բարբառներում՝ ոչ ռուսներին ուղղված արհամարհական արտահայտություն:

«Իսկ ինչքա՞ն են զոհվել»: «Հարյուր մարդուց ավել»: Իսկապես այն բարձունքին, որտեղ նախկինում Կիրովի արձանն էր, 110 գերեզմանափոս էին փորել: Իսկ թաղեցին 49 մարդ... Այս դիպվածով ես կրկին համոզվեցի, որ քաղաքականության մեջ ոչ մի սուրբ բան չկա: Բանն այն է, որ 1.5 միլիոնանոց Բաքու զորք մտցնելու նախօրեին երկու շաբաթ, քանի դեռ շարունակվում էին հայկական ջարդերն ու ցույցերը, թաղման մասին մտածող չկար: Բնականաբար, բազմաթիվ չթաղվածներ կային, որոնց հետո որպես զոհեր ներկայացրին: Պարզ ու ցինիկաբար» [Ա-12,10]: Նույնքան «պարզ և ցինիկաբար» է Բաքվում երկու շաբաթ «հայկական ջարդերին» դիտորդի կարգավիճակով հետևած Դ. Յազովի հիշողությունը: Եվ ոչ մեկի, ոչ քաղաքական գործչի, ոչ պետական պաշտոնյայի, ոչ հետազոտողներին, ոչ փորձագետներին տարօրինակ չի թվում այն փաստը, որ Բաքվի հայկական ջարդերի շուրջ որևէ իրավական քննություն չի էլ սկսվել, պարզ է՝ նույնիսկ կեղծ դատական գործ չկա: Բաքվի կենդանի մնացած հայերը ցրվում են աշխարհով մեկ, և նույնիսկ զոհերի թվի մասին որևէ ստուգված գնահատական չկա:

«ԼՂԻՄ-ի և այլ շրջանների» ողջ բնակչությունը հստակ գիտեր, որ արտակարգ ռեժիմը ոչ թե բռնությունների կամ նույնիսկ կոտորածների ենթարկվող մարդկանց պաշտպանության համար է, այլ կոնկրետ հայերի դեմ՝ թույլ չտալ ինքնապաշտպանվել, շարունակել դեպորտացիաները, սահմանափակել տեղաշարժերի և միմյանց օգնելու հնարավորությունները, վախեցնել, կոտրել կամքը, զինաթափել և այլն: Ուշագրավ է հետևյալ հասարակ պատմությունը. «Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղից մի մարդ ծննդաբերող կնոջը տանում էր Ստեփանակերտի հիվանդանոց: Ճանապարհին գերի են վերցրել Խոջալուում, ամուսնուն ասել են կնոջդ կպահենք մինչև թուրք զալոժնիկ [պատանդ] բերեք՝ կնոջդ հետ փոխանակենք: Դե ծննդաբերում ա, իմանալով, որ ծննդաբերում ա, շտապ ա էլի, լյուբոյ [ցանկացած] պահանջ կատարելու ենք: Ռուսական բանակի ֆորմա ունեի, հագել եմ, գիշերը էդ մարդու հետ գնացել եմ, Ասկերանի ամրոցի մոտ ավտոմատով կանգնել: Արդեն լուսաբացին սկսել ա շարժը: Մի հատ ավտո եմ կանգնացրել, ներկայացել եմ որպես ռուս՝ ավտոմատով, ֆորմաս հագը, պասպորտ եմ ուզում: Թուրքն ասում ա «Ты знаешь, что я азербайджанец? [գիտե՞ս, որ ես ադրբեջանցի եմ]»: Ուրեմն, որ թուրք ա, չեն կանգնեցնում: Ասել եմ պասպորտդ տուր: Մեքենայում երկու տղամարդ էին, մի երեխա: Դրանց մեքենայից հանել ենք, կապվել եմ Խոջալու, փոխանակել ենք ծննդաբերող կնոջ հետ: Էդ կնոջը ազատագրել ենք, դեռ մի քիչ էինք գնացել, ԳԱԻ [ճանապարհային ոստիկանություն] պոստի մոտ ծննդաբերել ա: Չգիտեմ, երևի վախից թե ինչից թուրքերի մոտ ծննդաբերությունը չի եղել, բայց հենց ազատվել ա գերությունից՝ երեխան ծնվել ա»[18]: Հաճախ կրկնվող այս պատմությունը պատմողն իրականում ուզում էր ներկայացնել այն փաստը, որ ադրբեջանցին զարմացել էր իրեն կանգնեցնելու համար, քանի որ արտակարգ դրության պայմաններում նրանց չէին ստուգում:

---

[18] Պատմությունը Ասկերանի շրջանի Փիրջամալ/Վարդաձոր գյուղում գրանցել է Հ.Խառատյանը:

Թղթով՝ որոշումով իշխանությունները կեղծիք էին անում, հայտարարում էին, որ արտակարգ դրությունը որոշակի տարածքում սահմանադրական կարգ վերահաստատելու համար է, բայց գործողություններում անկեղծ էին՝ արտակարգ դրությունը հայերին պատժելու համար էր, պատժելու գործիքներից մեկը՝ կիսաքրեական ադրբեջանական ՕՄՕՆ-ը:

1990–91թթ. ԼՂԻՄ-ում «պատանդային պատերազմի» շրջան էր: Բաքվի հայկական ջարդերի անպատժելիությունը շատ խրախուսիչ էր ոչ միայն հակահայկական «գաղափարական» կողմնորոշումներ ունեցողների համար, այլ նաև քրեականների: Քանի որ Պոլյանիչկոյի գործող իշխանությունը ոչ միայն չէր խոչընդոտում հայերից տարվող պատանդառությանը, այլև խրախուսում և նույնիսկ օգնում էր, այն դարձել էր «փող աշխատելու» միջոց: Հաճախ պատանդ էին վերցնում հարազատներին վաճառելու նպատակով: Դեպքերը շատ էին, սահմանափակվենք մեկ կոնկրետ օրինակով, որն առնչվում է Խոջալուին: Պատմողները Փիրջամալ և Նախիջևանիկ գյուղերի բնակիչներ են, բայց ստորև բերվող հատվածը Նախիջևանիկ գյուղի մի տղամարդու և Փիրջամալ գյուղի ամուսիններից գրանցված նյութ է. «Աղդամից եկել դաշտում աշխատող 13 մարդու առևանգել և պատանդ էին տարել: Ինը Նախիջևանիկից էին, չորսը՝ Փիրջամալից, հիմի Վարդաձոր է կոչվում այս գյուղը: Մերոնք էլ գնացին երկու հոգի թուրք մեսխեթցիների պատանդ վերցրին, որ փոխանակենք: Երկու ախպեր էին, մեկ էլ էն մեկի երկու երեխան: Դրանց ճանապարհին կանգնեցրել էին մերոնք, մի երկու-երեք օր պահեցինք: Բայց դա չստացվեց: Իրանք նորից էլի պատանդ էին վերցրել հայերից՝ Խնձիրիստան գյուղից, մեկը բուժքույր էր, մեկը՝ իրա վարորդը: Մեր վերցրածներին իրանց հետ փոխանակեցինք: Պատանդ տարած մեր 13 տղաների համար 300 000 ռուբլի փող էին ուզել: Ստեղ հավաքեցինք, օգնեցին նաև շրջանի հայկական գյուղերից: Փողը տանում էինք ՈՒԱԶ մեքենայով, մի կես մեշոկից ավել փող: Վարորդն ու ես էինք փողը տանում իրանց ասած տեղը: Բայց իրանք չեկան փոխանակման վայր: Մենք կարողացանք կազմակերպել մի հատ թուրքի աղջիկ առևանգել Ավդալ Գյուլափլյուից: Խոջալուի միլիցիայի պետի աղջիկն էր, թանկ պատանդ էր: Մարդ ուղարկեցին, ասեցին փողն ու աղջկան բերեք՝ կփոխանակենք: Աղջիկը կլիներ 22–23 տարեկան: Էդ աղջկան մեր տանն էի պահում (Փիրջամալում–Հ.Խ): Կնոջս խնդրում էր, որ իրեն հետ չտանք, ասում էր՝ մեկ ա, հայրս կսպանի: Խնդրում էր՝ «թողեք ձեր մոտ մնամ, ինձ կսպանեն»: Դե բայց փոխանակեցինք, մի հոգին 13 հոգու հետ փոխանակեցին: Ես տարա փոխանակեցի, էն Գյոռոռոտ ենք ասում, մեր սահմանում՝ Աղդամից վերև, այնտեղ փոխանակեցինք: Նույն օրը էդ աղջկան իրենք սպանել էին»[19]:

«Պատանդային պատերազմը» շատ ծանր էր հայերի համար: Քանի որ «արտակարգ դրությունը» փաստացի հայտարարվել էր հենց հայերի դեմ, այն շատ

[19] Պատմությունը Ասկերանի շրջանի Նախիջևանիկ և Փիրջամալ/Վարդաձոր գյուղերում գրանցել են Հ.Խառատյանը, Շ.Մանուչարյանը, Հ.Ջոհրաբյանը:

էր կաշկանդում նրանց գործողությունները: Բռնվելու դեպքում նրանց սպասում էր ծանրագույն պայմաններով Շուշիի կամ Բաքվի բանտը: ՕՄՕՆ-ով հովանավորվող ադրբեջանցիները «քիչ էին բռնվում», բռնվելու դեպքում էլ ազատվում էին կամ ծանոթություններով, կամ փողով, կամ ադրբեջանցի լինելու փաստով: Այդպիսին էին Ադրբեջանում ԽՍՀՄ-ի հայտարարած արտակարգ իրավիճակը և այն վերահսկող Պոլյանիչկոյի օմօնական ռեժիմը: ԼՂԻՄ-ում ԽՍՀՄ-ի ՆԳՄ քննչական-օպերատիվ խմբի ղեկավար Վիկտոր Կրիվոպուսկովի տվյալներով, Պոլյանիչկոյի ռեժիմի կառավարման առաջին տարվա՝ 1990 թ. ընթացքում անձնագրային ռեժիմի ստուգում և բնակչության զինաթափման ծրագիր է իրականացվել 160 բնակավայրերում, որից 156-ը՝ միայն հայկական բնակավայրերում: Դրանք ուղեկցվել են բնակարանների գույքի ջարդոտումով, կողոպուտներով, անասնագողությամբ [Ա-15,21,124]: Նույն տարվա ընթացքում ազգամիջյան հանցագործությունների խնդիրներով ԼՂԻՄ-ում հարուցվել է 27 քրեական գործ, որից ադրբեջանցիների դեմ՝ միայն 2-ը: «Ադրբեջանցիների կողմից կատարված հանցագործությունները մնում էին անանուն, երբեք չէին բացահայտվում, իսկ շատ-շատերը նույնիսկ չէին գրանցվում», — գրում է Վ. Կրիվոպուսկովը [Ա-15, 20]: Այն, ինչին ձգտում էր Ադրբեջանը Ա. Վոլսկուց ազատվելով: ԼՂԻՄ-ի հայ միլիցիոներներից ավտոմատները վերցվել էին 1989 թ. աշնանից: Հայկական բնակավայրերի վրա բազմաթիվ հարձակումներ պարզապես չեն ձևակերպվել-գրանցվել, այդ թվում նաև այն պատճառով, որ հայերն արդեն անիմաստ էին համարում Ադրբեջանի կողմից նշանակված պաշտոնական մարմիններին դիմել: Որոշ գյուղերի բնակիչներ պատմում են երեք, չորս հարձակումների մասին, որոնք իրենց հերթին գյուղերի բնակչությանը դրդեցին ինքնապաշտպանական խմբեր ձևավորել: Նրանք պետք է ինքնապաշտպանվեին ոչ միայն ադրբեջանական «խաղաղ բնակչության» հարձակումներից, այլև հենց ադրբեջանական իշխանության մարմիններից:

■
ԽՈՋԱԼՈՒՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԾՐՁԱՆՈՒՄ

1990 թ. հունվարի 15-ից, «արտակարգ դրություն» հայտարարվելուց անմիջապես հետո, խոջալուցիների համար սկսվեցին «անպատիժ ազատության» ժամանակներ: Խոջալուն դարձավ հայերի դեմ ծրագրավորվող գործողությունների կիրառական ու փորձնական կենտրոն և ակտիվորեն ռազմականացվում էր: Ճիշտ է՝ հայերը դեռ կարողանում էին թռչել Խոջալուի օդանավակայանից, եթե իհարկե հաջողվում էր այնտեղ հասնել: Մինչև 1991 թ. ԼՂԻՄ-ի մայրաքաղաքի անունով «Ստեփանակերտի օդանավակայան» կոչվող օդանավակայանը Ադրբեջանի Գերագույն Խորհրդի որոշմամբ փետրվարի սկզբին վերանվանվել էր «Խոջալուի օդանավակայան»՝ ձևակերպվելով որպես «ԼՂԻՄ-ի բնակչության խնդրանքի» արձագանք [Ա-15, 80, 160, 183]: Օդանավակայանում տնօրինություն էր անում հայատյացությամբ հայտնի քրեական հանցագործ, ադրբեջանական միլիցիայի կապիտան Ալիֆ Հաջիևը: Նա նոր էր դուրս եկել Նիժնի Տագիլի բանտից, Ադրբեջանի ՆԳՄ խնդրանքով, և անմիջապես նշանակվել էր «Խոջալուի օդանավակայանի» ՕՄՕՆ-ի պետ [Ա-15, 184]: 1990 թ-ից օդանավակայանը ԽՍՀՄ Ներքին գործերի զորքերի վերահսկողությունից վերցվեց և տրվեց Պոլյանիչկոյի պատժիչ գործողություններն իրականացնող ադրբեջանական ՕՄՕՆ-ի վերահսկողությանը՝ հենց Հաջիևի գլխավորությամբ: Հայերի հանդեպ ահաբեկչությունը փաստացի պաշտոնականացվել էր, բայց հայտնի էր դարձել նաև, որ պաշտոնական ՕՄՕՆ-ից զատ Պոլյանիչկոն և ԼՂԻՄ-ում արտակարգ իրավիճակը հսկող գեներալ Վ. Սաֆոնովը հովանավորում էին կեղծ ՕՄՕՆ-ական ահաբեկչական զինված խմբերի, որոնք գիշերները հարձակվում էին հայկական գյուղերի, անասնաֆերմաների վրա, հայերին կողոպտում, սպանում էին ճանապարհներին [Ա-15, 117–118]:

Աղդամից և Խոջալուից հաճախ էին հարձակումներ լինում հարևան հայկական գյուղերի վրա: Խոջալուից հյուսիս մեկ կմ հեռավորությամբ հայկական Նորագյուղի վրա հերթական գիշերային հարձակման և «Կալաշնիկով» ավտոմատի կրակահերթից զոհված ֆերմայի պահակի այլանդակված դին տեսնելուց հետո, Մոսկվայից ուղարկված ՆԳՄ քննչական-օպերատիվ խմբի ղեկավար Վիկտոր Կրիվոպուսկովը գնում է հարևան Խանաբադ[20] հայկական գյուղ.

---

[20] Խանաբադ-Հայկական գյուղ Ասկերանից 3 կմ հյուսիս, Խոջալուից 5 կմ հյուսիս-արևելք, 1893 թ. ուներ 798 բնակիչ, բոլորը հայեր [Բ-21, №1309]: (Ըստ Մ. Բարխուդարյանի 19-րդ դարավերջին Խանաբադի բնակչությունը բնիկ էր, կազմում էր 800 մարդ [Բ-20, 246]:

«Խանաբադի շատ բնակիչներ էին պատանդ եղել, քիչ չէին նաև հարազատներ կորցրած ընտանիքները... Բնակիչների որսորդական հրացանները վաղուց էին հավաքել, միայն եղաններ ու կացիններ ունեին, հարձակումների դեպքում ոչ մի պաշտպանություն չկար», — գրում է նա [Ա-15, 83]: Այդպիսի մեկ դեպքի է «բախվել» նաև Յու. Գիրչենկոն 1990 թ. դեկտեմբերին. «Ղարաբաղում կարգի պահպանությունը դրված էր ադրբեջանական ՆԳՄ ՕՄՕՆ-ի, այդ կիսաքրեականների վրա... Այդ օմօնականները Լեռնային Ղարաբաղի բոլոր քաղաքներում կային: Պարբերաբար հայտնվում էին գյուղերում, դեպորտացիայի ենթարկում բնակչությանը, զբաղվում կողոպուտով և թալանով: Իսկ ինչո՞ւ ոչ: Նրանք օմօնական են, իշխանություն... Մի անգամ մեր զորամասի երկու ավագ լեյտենանտ՝ ճանապարհային ինժեներական դասակի հրամանատարն ու իր տեղակալը ԶԻԼ-131 <մեքենայով> գնում էին Ստեփանակերտ: Խոջալուի մոտ տեսնում են՝ ճանապարհի մայթեզրին «Մոսկվիչ» է կանգնած, իսկ դրա մոտ երեք օմօնական ծեծում են անզեն մարդու: Մեր տղաները կանգնում են և հարցնում, թե ի՞նչ է պատահել: Կոպիտ, սպաների նկատմամբ անհարգալի պատասխանում են՝ սա մեր հողն է, հոտած վազգեններն այստեղ տեղ չունեն, դուք ձեր ճամփով գնացեք: Ադրբեջանցիներն, ի դեպ, հայերին «վազգեն» են ասում Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգենի անունով: Իսկական սպաներն այդպիսի կոպտությունը չեն ներում: Երկուսն էլ մետր ութսուն բոյով ամուր տղաներ էին... արդյունքում քաջարի օմօնականները զինաթափվում են, մի փոքր ծեծվում, կապկպվում և տարվում Խոջալուի միլիցիայի բաժին» [Բ-85, գլուխ 4]:

Օմօնականն այդ տարիներին ամենազոր էր: Ադրբեջանական ՕՄՕՆ-ի գործողությունների մասին որոշ տեղեկություններ «արտագրենք» բացառապես «երրորդ կողմի»՝ ռուսական բանակի սպա Յուրի Գիրչենկոյի գրավոր նյութերից: Ինչպես ասվեց, 1990–1991 թթ. նա ծառայում էր Ադրբեջանի՝ ԼՂՀ-ին սահմանակից Աղդամ քաղաքում գտնվող նախկին ԽՍՀՄ-ի սակրավորների գումարտակում, և այս կամ այն կերպ առնչվում էր դեպքերի ընթացքին: Այդ նյութերը լայնորեն հայտնի են հայերին և ադրբեջանցիներին, դրանց մասին գրվել են բազմաթիվ տեղեկություններ, լրագրողական հոդվածներ, զգայական և սթափ մեկնաբանություններ: Բայց Գիրչենկոյի համար հայերն ու ադրբեջանցիները պարզապես «միմյանց դեմ կռվող աբորիգեններ» էին, կողմերից երկուսն էլ նրա համար նույն հարթությունում էին, էթնիկական համակրանք-հակակրանքից դուրս, ուստի կարևոր է հասկանալ, թե կոնկրետ ինչ է «նկատել» կողմերից որևէ մեկի հետ ուղղակի առնչություն չունեցած երրորդը: Գիրչենկոն գրում է շատ պարզ, հասարակ, նույնիսկ կարծեք առանց զգացմունքների և, անշուշտ, առանց գիտական կամ որևէ այլ վերլուծության կամ հավակնության: Պարզապես նկարագրում է: Գիրչենկոյին հայտնի տեղեկություններն այստեղ բերվում են առանց մեկնաբանությունների, որպես մաքուր նյութ, ինչպես ասվեց՝ միայն թարգմանվում և փաստացի արտագրվում են.

«1991թ. հունվար: Ադրբեջանական ՆԳՄ-ի ՕՄՕՆ-ը շարունակել է զբաղվել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքի հայ բնակչության դեպորտացիայով: Դա տեղի էր ունենում մոտավորապես այսպես. ՕՄՕՆ-ի ենթակառույցները մտնում էին հայկական գյուղեր, տեղի բնակչությանը լցնում էին մեքենաների մեջ և տանում էին Հայաստանի տարածք, ավելի ճիշտ՝ Հայաստանի սահման: Եթե ձեզ այդպես հանեն բնակարանից, նստեցնեն մեքենա և տանեն ինչ-որ մի դաշտ, ասելով, որ ետ ճանապարհ չկա, ի՞նչ կանեիք: Հավանաբար կփորձեիք տուն վերադառնալ: Իսկ եթե տուն չեն թողնում: Դուք բոլոր դեպքերում կփորձեիք վերադառնալ, և վերադառնալու համար կօգտագործեիք բոլոր մատչելի և անմատչելի միջոցները... Այդպես չէ՞: Ահա հայերն էլ վերադառնում էին... Հարմար պահ էին ընտրում, երբ օմօնականները գյուղը լքում էին, և վերադառնում էին... Բայց վերադառնալով հայտնաբերում էին, որ իրենց անձնական իրերն արդեն չկան, ՕՄՕՄ-ն ամեն ինչ տարել է: Այս դեպքում որո՞նք կլինեին ձեր հետագա քայլերը: Դուք կփորձեիք վերադարձնել ձեր հարազատ, աշխատանքով և քրտինքով վաստակած բարիքը: Բայց ինչպե՞ս դա անել: Դիմել իշխանությունների՞ն: Բայց հենց այդ նույն իշխանության ներկայացուցիչն է ի դեմս ՕՄՕՆ-ի աշխատակցի ձեզ դուրս արել: Դուրս է արել ապօրինի: Իսկ Օրենքը լռում է: ...Եվ ԽՍՀՄ կառավարությունը ձեր պրոբլեմներին որևէ ուշադրություն չի դարձնում: Իսկ ի՞նչ պրոբլեմ կա: Որևէ պրոբլեմ չկա: Կա միայն հզոր, միասնական ԽՍՀՄ, որում մարդիկ ապրում են լավ ու երջանիկ, հավատալով լուսավոր մոտիկ ապագային... Իսկ նրանք, ովքեր ուզում են ինչ-որ մասնավոր բաներով մթնոլորտը խտացնել՝ դավաճաններ և սադրիչներ են: Դու որևէ տեղ պաշտպանված չես... Ահա և ստիպված ես զենք վերցնել... Եվ Լեռնային Ղարաբաղի հայերը զենք էին ձեռք բերում...»:

«1991թ. փետրվարի 22: Գնդացրից կրակել են Ստեփանակերտի շրջանի պարետատան վրա: Այդ ժամանակ պարետատանն է եղել Մոսկվայից ինչ-որ մի «կարևոր թռչուն»: Երկու օր հետո նույն Ստեփանակերտում պայթել է երթուղային ավտոբուս: Տաք հետքերով քննություն է գնացել, պարզվել է, որ երկու ահաբեկչությանն էլ Ադրբեջանի ՕՄՕՆ-ի ջոկատը մասնակից է: Փետրվարի 28-ին ԽՍՀՄ Կառավարությունը Ներքին զորքերին հանձնարարել է բռնել Ադրբեջանի ՕՄՕՆ-ի ջոկատը և վերջ տալ դրանց անօրինություններին: Ահա երբ քամակը տապակած աքլոր է կտցում, մեր իմաստուն կառավարությունը շարժվում է: Իսկ երբ հասարակ ժողովուրդն է կործանվում, ըստ մեր կառավարության, հենց ինքն է մեղավոր... » [Բ-85, գլուխ 5]:

«1991թ. մարտ: ԽՍՀՄ ՆԳՄ Ներքին զորքերը հրահանգ են ստացել Ադրբեջանի ՕՄՕՆ-ը վնասազերծելու, բայց այդ հրահանգը մինչև վերջ իրականացնել չեն կարողացել: <...> Արդյունքում Ադրբեջանի ՕՄՕՆ-ը ուղղակի համարյա կրկնակի կրճատվել է, իսկ մնացած օմօնականները պետք է կարգը պահպանեին

միայն ադրբեջանաբնակ բնակավայրերում: Ընդգծում եմ – պետք է պահպանեին... Դրանով ամեն ինչ ավարտվեց: Իսկ հետո սկսվեցին տարատեսակ ահաբեկչական ակտեր, ավտոճանապարհների կրակոցներ, պատանդների առևանգումներ, բնակչության դեպորտացիա, ինչպես հայերի, այնպես էլ ադրբեջանցիների: Եվ շատ դժվար էր գլուխ հանել, թե ամեն կոնկրետ դեպքի հետևում ով է կանգնած՝ ադրբեջանի ՕՄՕՆ-ը, Ղարաբաղի Ազատագրական Բանակը, Ադրբեջանի Ժողովրդական Ճակատը, թե՞ Հայաստանի Ազգային Բանակը, կամ գուցե նույնիսկ ԽՍՀՄ ՆԳՄ-ն կամ ԿԳԲ-ն... մարտի 6-ին, առավոտյան ժամը չորսին պայթյուն եղավ Ասկերանի Ներքին զորքերի սպայական հանրակացարանի մոտ: Պայթուցիկը տանողը այն չէր հասցրել պետք եղած վայր, նրան կանգնեցրել էր պարեկը, և սա, փախչելով, «դժոխքի մեքենան» պարզապես մի կողմ էր շպրտել...» [Բ-85, գլուխ 5]:

«Մարտի 10-ին Խոջալուի մոտ ականի վրա պայթել է Ներքին զորքերի ԲՏՐ-ը: Երկու սպա և երեք զինվոր վիրավորվել են: Մարտի 16-ին ԼՂԻՄ-ի կողմից տանկից ու թնդանոթից գնդակոծում էին Ադրբեջանի տարածքը: Արկերը մեր զորամասի տեղակայմանը չէին հասնում, բայց դղրդյունն այնպիսին էր, որ մենք միմյանց հետ գոռալով էինք խոսում... Մարտի 17-ի լույս 18-ի գիշերը «Ալազան» համակարգի հրթիռներով կրակում էին Աղդամի վրա: «Ալազանը» բանակային զենք չէ, և սովորական պայմաններում ծառայում է խաղաղ նպատակների: «Ալազանը» հակակարկտային համակարգ է: Ամպերն է ցրում... Բայց մեկ է՝ վարպետներ գտնվեցին, որ կարողացան այս համակարգը նույնպես հարմարեցնել կրակելու նպատակին: Ավելի ուշ նույն վարպետները սովորեցին «Ալազանի» հրթիռներին մարտագլխիկներ հարմարեցնել: Բայց այս անգամ Աղդամի վրա հրթիռները թռչում էին առանց մահաբեր բեռան... Հրթիռներն ընկնում էին Աղդամում, ավերում տները և այն ամենը, ինչ այնտեղ կար... Իսկ այնտեղ քնած մարդիկ էլ կային... Մարտի 20-ին մեր հատուկ բաժնի ղեկավարը երկու զինվորների հետ ԳԱԶ-66 մեքենայով գնում էր Ստեփանակերտ: Մոտեցել են Խոջալուին, և մեքենան ընկել է կրակահերթի տակ: Տղաները մի քանի անգամ պատասխանել են կրակելով, կրակել են նաև Ներքին զորքերի զինվորները և փոխհրաձգությունը դադարել է: Ներքին զորքայինները պատմել են, որ արդեն երկրորդ օրն են այդպես պարբերաբար կրակում...

Մարտի 22-ին Աղդամում հարձակում եղավ Ներքին զորքերի պարեկի վրա: Զինվորներից մեկը սպանվեց, երկուսը վիրավորվեցին...

Մարտի 31-ին Աղդամում գտնվող Ներքին զորքերի գումարտակից մի ամբողջ դասակ գնաց ամրացնելու Յուխարը-Ասկիպար (ադրբեջանական գյուղ-Հ.Խ.) գյուղի մոտի դիրքը: Այդ դիրքը արդեն մի քանի օր հարձակումների էր ենթարկվում... այնտեղ զոհեր կային...» [Բ-85, գլուխ 6]:

«Ապրիլի 29-ին Անդրկովկասյան Ռազմական Օկրուգի հրամանատարության հրամանով մեր զորամասից մեկ մայոր և երկու լեյտենանտ, մեկը՝ սակրավորների ջոկատի հրամանատար, իր ջոկատի հետ գնացին ականազերծելու Չայքենդ գյուղը (հայկական գյուղ – Հ.Խ.) ...Ապրիլի 30-ին նրանք վերադարձան շփոթված, կլոր աչքերով... Պատմեցին... Երեկոյան Ներքին զորքերը գյուղը շրջապատել են, և մեր տղաները սկսել են ստուգել ճանապարհների ականները... Մի երկուսը «հանել են», բայց էլ չեն գտել և վերադարձել են ելման դիրք: Հետո ներքինզորքայինները սկսել են խուզարկել տները: Հավաքել են զենքերը՝ ինչ գտել են... Իսկ առավոտյան գյուղ է մտել ադրբեջանական ՕՄՕՆ-ը և սկսել ձեռ առնել տեղի բնակչությանը: Հենց այդպես էլ ինձ պատմում էին... Ծեծել են խաղաղ բնակչությանը... Կողոպտել են տները... Կրակել են... Դրանից հետո զինված հայերը, այո, զինված, արդեն հանել են թաքցված զենքը, պատանդ են վերցրել մի քանի ներքինզորքայինների: Որոշ ժամանակից երեք հայեր իրենց հետ վերցնելով պատանդներից մեկին՝ Ներքին զորքերի փոխգնդապետի, գնացել են բանակցելու գործողությունների ղեկավարի հետ: Իսկ գործողությունը ղեկավարում էր մի ամբողջ գեներալ-գնդապետ: Հայերը սկսել են պահանջել գյուղից դուրս հանել օմօնականներին... Հնարավոր է ամեն ինչ խաղաղ վերջանար, **եթե օմոնականները հենց այդտեղ չգնդակահարեին բոլոր երեք հայերին** (ընդգծումը իմն է – Հ.Խ.): Օմօնականները կրակել են ուղղակի կրակելու համար...Դրա համար էլ Ներքին զորքերի փոխգնդապետի ոտքն էլ է վիրավորվել: Շուտով գյուղից դուրս են հանել ներքինզորքայիններին և ՕՄՕՆ-ը: Հեռանալով, **օմօնականները իրենց հետ տարել են բնակիչներից հիսուն մարդու: Վերջում էլ ավտոմատներից և մի գնդացրից կրակի տակ են առել գյուղը** (ընդգծումը իմն է – Հ.Խ.): ...Ներքին զորքայիններից 14 զինվոր պատանդ են մնացել գյուղում... Ահա և անիծյալ ՕՄՕՆ-ը... Ահա քեզ Ներքին զորքերը... Ահա քեզ գեներալը... Լիակատար մարազմ...»:

«Մայիսի 14-ին Ստեփանակերտում պայթեցվեց երկու երթուղային ավտոբուս: Նույն օրը հրթիռների և հրետանու կիրառմամբ բազմաթիվ մարտեր եղան ԼՂԻՄ-ի ողջ տարածքում և Ադրբեջանի հարակից շրջաններում: Բուն Աղդամում հողն ուղղակի շաչում էր... Մայիսի 15-ին ԼՂԻՄ-ում կանգնեցվեց տրանսպորտի շարժը: Ներքին զորքերն ուղղակի կանգնեցնում էին մարզի սահմաններին մոտեցող բոլոր մեքենաները և առաջ չէին թողնում...» [Բ-85, գլուխ 7]:

«Մայիսի 31-ին Ասկերանի շրջանի Կըլըչբաղ գյուղում (հայկական գյուղ – Հ.Խ.) Ադրբեջանի ՆԳՄ ՕՄՕՆ-ի օգնությամբ Ներքին զորքերը զինամթերքի պահեստ գտան և վնասազերծեցին»:

«Հուլիսի 1-ին գիշերային կրակահերթի ենթարկվեց Մարտունու շրջանի Կարադաղլը գյուղը (ադրբեջանական գյուղ – Հ.Խ.): Հուլիսի 2-ին զինյալները գրավեցին Կարադաղլըն և գնդակահարում էին տեղի բնակչությանը» [Բ-85, գլուխ 8]:

«Հուլիսի 6-ին մարտեր էին գնում Մանաշիդ և Բուզլուխ բնակավայրերում (հայկական գյուղեր – Հ. Խ.): Ես հիշատակում եմ միայն այն բախումները, որոնց մասին մեր ամենօրյա քննարկումներին մեզ ասում էր զորամասի հրամանատարը: Կարծում եմ, այդ բոլոր անհասկանալի իրադարձություններն անհամեմատ շատ էին: Բայց ինչի մասին հաստատ չգիտեմ՝ դրա մասին չեմ խոսում: Հուլիսի 9-ին մարտ է եղել Էրքեջ գյուղում (հայկական գյուղ-Հ. Խ.): Դրանից հետո այնտեղ մարտեր շատ են եղել... Հուլիսի 10-ին փոխհրաձգություն է եղել Մարտակերտի շրջանի Խաչինչայ գյուղի մոտ (հայկական գյուղ – Հ. Խ.): Հուլիսի 10-ի լույս 11-ի գիշերը կրակել են Ուզուն-Դարայի (ադրբեջանական Աղդամ քաղաքի մոտ – Հ. Խ.) հրետանային պահեստի վրա: Ընդ որում կրակել են վաղուց փորձարկված սխեմայով՝ մաքոքային մեթոդով: Մեկուկես տարվա դասը կարդաշներն (կարդաշ՝ ադրբեջաներեն «եղբայր» բառից – Հ. Խ.) ըստ երևույթին չեն յուրացրել: Հենց որ նրանք սկսել են կրակել, հրետնային պահեստի տարածքից անմիջապես պատասխանել են երեք թնդանոթներ... Կարդաշները կորցրել են երեք մեքենա, ջիգիթներից հինգը սպանվել են... Հուլիսի 11-ին փոխհրաձգություն է եղել Կիչան գյուղում (հայկական գյուղ – Հ. Խ.):

Այս փաստերը ներկայացնող Յու. Գիրչենկոն հավանաբար չգիտեր, որ ապրիլի 16-ին Բաքվում Այազ Մութալիբովը Ադրբեջանի ԿԳԲ, ՆԳՄ և դատախազության ղեկավարների ներկայությամբ քննարկմանն առաջարկել էր Շահումյանի շրջանի, Գետաշենի և Մարտունաշենի հայկական գյուղերի բնակչությունը դեպորտացիայի ենթարկել: Գործողություններն արագ են ծավալվում: Սկսվում է տխրահռչակ «Կոլցո» օպերացիան: Ապրիլի 19-ին Գետաշենից և Մարտունաշենից հանվում են ԽՍՀՄ Ներքին զորքերը: Ադրբեջանական ՕՄՕՆ-ը սկսում է կրակ տեղալ Գետաշենի և Մարտունաշենի բնակչության վրա: Շահումյանի, Գետաշենի, Մարտունաշենի բնակչության կողմից ԽՍՀՄ իշխանության մարմիններին օգնության կանչող հեռագրերը որևէ արձագանք չեն ստանում: ԽՍՀՄ իշխանությունները «թաքնվում են» Ադրբեջանական ՕՄՕՆ-ի տարածած փաստաթղթի ետևում, իբրև Մարտունաշենի և Գետաշենի բնակիչներն իրենց խնդրել են ժամանակ տալ գյուղերից անխոչընդոտ դուրս գալու համար: Հենց այդպես է ասել ԽՍՀՄ ԿԳԲ-ի պետ Վ. Կրյուչկովը Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ հեռախոսազրույցի ժամանակ: «Մայիսի 3-ին Մարտունաշենն ամբողջովին այրվում էր: Ջոհվել է 12 մարդ, 20 մարդ անհետ կորել է, 7-ը պատանդ են վերցվել... Գետաշենից ռադիոհաղորդագրություն է տարածվում. «SOS! SOS! SOS! Մենք, Ադրբեջանի Գետաշեն և Մարտունաշեն հայկական գյուղերի բնակիչներս, աղաչում ենք՝ փրկեք մեր կյանքը: Խորհրդային բանակը մեզ՝ խորհրդային քաղաքացիներիս, ոչնչացնում է: Մեզ վրա գետնից և երկնքից կրակում են թնդանոթներից, գնդացիրներից և ավտոմատներից: Տանկերով ճզմում են մեր տներում ու բակերում, կանանց, երեխաներին, ծերերին ադրբեջանական օմօնականները պատանդ են զավթում, ջարդում են

ոտքերը, ձեռքերը, ողերը, գանգամաշկը հանում են, մերկ պտտեցնում են փողոցներում, խոցոտում են դանակներով: Երեք տարի մենք դիմացել ենք, բայց բանակի դեմ անզոր ենք, տղամարդիկ չեն կարող որսորդական հրացաններով մեզ պաշտպանել: Մեզ ստիպում են Ադրբեջանի իշխանությունն ընդունել կամ լքել հարազատ գյուղերը, բայց նույնիսկ չեն թողնում փախչել, կրակում են: Մեր տները կողոպտված են և այրվում են, ծածկի տեղ չունենք: Աշխարհի մարդիկ, փրկեք: Գոնե երեխաներին փրկեք: Մենք կկործանվենք արտաքին աշխարհից տանկերով շրջափակված: SOS! SOS!» [Ա-12, 12]: Մայիսի 4-ին ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովը ԿԳԲ-ի նախագահ Վ. Կրյուչկովի միջոցով Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին տեղեկացնում է, որ «Գետաշենի և Մարտունաշենի բնակչության դեպորտացիայի հարցը հանված է: Ոչ ոք իրավունք չունի այդ գյուղերի բնակիչներին հարկադրել լքել իրենց բնակավայրերը»: Բայց Գորբաչովը Գորբաչով չէր լինի, եթե «տեղյակ լիներ» կյանքի իրողություններին կամ «չսխալվեր»: Գյուղերի բնակիչներին արագորեն և անհավատալի բռնություններով դուրս են քշում, Գետաշենում մինչև վերջին րոպեն վիրավորներին բուժող բժիշկներին գյուղի բնակիչների մի խմբի հետ ձերբակալում և տանում են Գյանջա վերանվանված Կիրովաբադի բանտ, մյուսներին՝ Ստեփանակերտ [Բ-65]:

Սա իրավիճակի ընդամենը մի ոչ ամբողջական հատված է «երրորդ կողմի» աչքերով: Հիշատակված բոլոր փաստերը անհամեմատ ավելի մանրամասն առկա են հայկական աղբյուրներում: Այդ գործողությունները հետազոտող Նոնա Շահնազարյանին 2013 թ. Մարտունու շրջանում պատմել են. «Մինչև «Կոլցո» գործողությունը ադրբեջանական ՕՄՕՆ-ը և իրենց ահաբեկիչները գալիս զավթում էին մեր ֆերմաները, սպանում էին պահակներին, անասունը տանում էին: Դաշտերում աշխատող մեր մարդկանց պատանդ էին տանում, հետո էլ մեզ էին «վաճառում»: Հետո էլ հենց գորբաչովյան խորհրդային զինված ուժերով ադրբեջանցիները սկսեցին «Կոլցո» գործողությունը և մեր ժողովրդին ոչխարների նման քշեցին իրենց բանտերը: Այդ մարդկանց նկատմամբ կատարվել են երկրի վրայի ստորագույն դաժանությունները... Դրանց մասին հիմա ոչ ոք չի խոսում... Հարցրեք այդ մարդկանց, թե իրենց հետ ինչ են արել... ամենասարսափելի սեռական... չեմ կարող ասել ինչ... Ամենասարսափելի ծեծը, նվաստացումը... Այդ ամենը՝ ռուսական զորքերի օգնությամբ: Այդ ամենից հետո մեր մարդկանց փոխարեն մեզ են վաճառել հենց ռուսների միջնորդությամբ»:

Հայտնի է, թե ինչպես ավարտվեց «Կոլցո» օպերացիան՝ հարյուր հազարավոր հայեր, հարյուրավոր զոհեր տալով, բռնությամբ դուրս մղվեցին իրենց բնակավայրերից, զրկվեցին սեփականությունից [Ա-40; Բ-88]: Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը մամուլի միջոցով հայտարարություն արեց. «Հայաստանի ղեկավարությունը դիմում է պառլամենտներին, բոլոր երկրների բարձրագույն ղեկավարներին, ինչպես նաև բարի կամքի բոլոր մարդկանց՝ օգտագործել իրենց բոլոր հնարավորություններ-

ը ԽՍՀՄ ղեկավարության վրա ազդելու, որպեսզի թույլ չտրվի Լեռնային Ղարաբաղի հայերի ցեղասպանությունը»:

Այդ շրջանում, մինչև 1991թ. նոյեմբերի 20-ը, Ադրբեջանի Հանրապետության գերագույն դատախազը միաժամանակ խորհրդարանի պատգամավոր Իսմեթ Գահիրովն էր՝ 1988թ. սումգայիթյան հայկական ջարդերի ժամանակ Սումգայիթ քաղաքի դատախազը: ԼՂԻՄ-ում դատախազ էր նշանակվել Սումգայիթում նրան հաջորդած Ի. Պլավսկին: Իսմեթ Գահիրովը Ղարաբաղի հայերի ինքնորոշման իրավունքի հայտը ընդունել էր, ինչպես նրա կինն է ասում, որպես «Ադրբեջանին և իր սեփական արժանապատվությանը նետված ձեռնոց... անձամբ էր զբաղվում ռազմական գործողություններով, ղեկավարում էր դրանք... Կարճ ժամանակամիջոցում հայ զինյալներից ազատեցին («ազատեցին»՝ տվյալ դեպքում նշանակում է հայերից մաքրեցին – Հ. Խ.) 24 գյուղեր, այդ թվում այնպիսի հենակետեր, ինչպիսիք Չայքենդն ու Մարտունաշենն էին... ոչ մի սպառնալիք չէր կարող նրան ետ կանգնեցնել Ղարաբաղը անջատողական կեղտից մաքրելու ձգտումից» [Բ-110]: Պարզ է, որ Ադրբեջանի Հանրապետությունում չեզոք դատա-իրավական գործընթացների նկատմամբ որևէ հույս հայերը չէին կարող ունենալ: Գլխավոր դատախազն անձամբ էր անօրինական գործողություններով Ադրբեջանը մաքրում «անջատողական կեղտից»՝ հայերից:

Բայց վերադառնանք Խոջալու: 1991թ. հուլիսի կեսերից Խոջալուն Ասկերանի և Մարտակերտի շրջանների հայկական բնակավայրերի բնակչության առաջ ուղղակի փակեց Ստեփանակերտ գնալու ճանապարհը:

■
ԽՈՋԱԼՈՒԻ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1988 թ-ից Խոջալուի բնակչության համար ձևակերպվել էր նրանց բնակավայրի բնակչության գլխավոր առաքելությունը՝ ամեն կերպ խոչընդոտել հայերի տեղաշարժերը, բեռնափոխադրումները, պատանդներ առևանգել ճանապարհից և շրջակա հայկական գյուղերից, կողոպտել, իսկ 1991 թ. կեսերից՝ նաև պարբերաբար գնդակոծել շրջակա հայկական գյուղերը:

Մայիսից բռնությունները խիստ ակտիվացել էին նաև Խոջալուի շրջակայքի հայկական գյուղերի նկատմամբ: «Մայիսի 15. Մարտակերտի շրջանի Կարմիրավան գյուղում ձերբակալվել է 16 մարդ, Սեյսյուլանում՝ 11, այդ թվում գյուղխորհրդի նախագահը, սովխոզի նախագահը, բուժակը: Գետավանում ձերբակալվել է 13 մարդ, Թալիշում՝ 2... Կիրով գյուղից տարվել են 30 տղամարդ, Կսագյուղից՝ 22, Մեծ Շենից՝ 52-ը... Ժամը 12.50 Ստեփանակերտ (Խոջալուի օդանավակայան¬Հ.Խ.) բոլոր թռիչքները դադարեցված են: ժամը 13.00. Ասկերանի շրջանի Արցախաշեն և Բադարա գյուղերի բնակիչները դեպորտացվել են, տներն՝ ավերվել: Ասկերանի շրջանի Քյաթուկ գյուղ են մտել 3 տանկ և 9-ը ապրանքատար մեքենա: Զինվորները ներխուժել են դպրոցի շենք, ջարդել սեյֆը, 750 ռուբլի վերցրել, կրակել են մանր անասունների վրա... Մայիս 16. Սպիտակաշենի տները հրկիզվել են, Արփագյադուկում բնակիչ չի մնացել: Զորսը սպանված է, մեկին տարել են...» [Ա-12, 13]: Իրավիճակը բնութագրում են նաև 1991 թ. հուլիսին Ղարաբաղ այցելելու թույլտվություն ստացած Անդրեյ Սախարովի հիշատակի կոնգրեսի պատվիրակները: Ի թիվս իրենց տեսած այլևայլ բռնությունների, նրանք իրենց Զեկույցում վավերացրել են. «Հուլիսի 16-ին մեզ հետ Երևանից Ստեփանակերտ թռած ուղևորների նկատմամբ Խոջալուի օդանավակայանում ՕՄՕՆ-ի աշխատակիցները կոպիտ են վարվել: Մեր աչքի առաջ Ստեփանակերտի 5 բնակիչների ձերբակալեցին: Մենք փորձեցինք բողոքել, մեզ սպառնացին... Խոջալուի օդանավակայանում ազգությամբ հայ ուղևորներին անընդհատ վիրավորում են, նվաստացնում և ծեծում: Երիտասարդ կանանց և աղջիկներին ադրբեջանական ՕՄՕՆ-ի աշխատակիցների ներկայությամբ ստիպում են ամբողջովին մերկանալ, խլում են դրամը, թանկարժեք իրերը»: Ձերբակալված հինգից չորսը կանայք էին՝ Իրինա Այվյան, Համեստ Հակոբյան, Նինա Մելքոնյան, Փիրուզա Բաղդասարյան [Բ-35]:

Խոջալուի և դրա շրջակայքի ՕՄՕՆ-ի տեղակայման վայրերում օմօնականները մեծ թիվ էին կազմում, Խոջալու բնակավայրում՝ 200 մարդ, օդանա-

վակայանում՝ 150 մարդ, Մալիբեյլի գյուղում՝ 200 մարդ, Լեսնոյե բնակավայրում՝ 70 մարդ, Շուշի քաղաքում՝ 350 մարդ, Աղդամ քաղաքում՝ 350 մարդ...Նրանց տրամադրության տակ հարուստ զինամթերք կար՝ 5500 ավտոմատ, 210 թնդանոթ, 4350 ատրճանակ, զրահատեխնիկա՝ տարբեր տեսակի ԲՏՐ-ներ՝ 26 հատ, ԲՐԴՄ-1, ԲՐԴՄ-2 – 6 միավոր, 18 միավոր Տ-54 տանկ և նույնիսկ առանց տարբերանշանների ուղղաթիռներ [Ա-19, գլուխ 13; Բ-44]:

1991թ. կեսերից Խոջալուի մոտով անցնող ճանապարհը հայերի և շրջակայքի հայկական գյուղերի բնակչության համար արդեն մահվան ճանապարհ էր: Ստեփանակերտի հետ կապն ընդհատվել էր: Մարդիկ ստիպված Ասկերանից սկսած լեռներով անցնող արահետը մի փոքր լայնացրել էին և Ստեփանակերտ տանող քիչ թե շատ տանելի ճանապարհ սարքել: Այն վտանգավոր էր, դժվար, երկար, բայց ստեղծված պայմաններում կյանքի ճանապարհ էր և հենց այդպես էլ անվանում էին՝ «կյանքի ճանապարհ»: Ըստ ԼՂԻՄ-ի խորհրդարանի պատգամավոր Մաքսիմ Միրզոյանի, «ադրբեջանական իշխանությունները Խոջալուում տեղակայել էին 400 մարդու հասնող օմօնական կազմավորումներ, իսկ նորաստեղծ քաղաքի ՆԳ քաղաքային բաժանմունքը՝ միլիցիան, ուներ 100 աշխատակից, չխոսելով արդեն Ադրբեջանի Ժողովրդական Ճակատի ներկայացուցիչների մասին: Մինչև Խոջալուի գրավվելը <խոջալուցիների կողմից> սպանվել են 20 հայեր, առևանգվել 16-ը, հարևան հայկական գյուղերից տարվել են հազարավոր անասուններ: 1991թ. նոյեմբերից Ստեփանակետն ու Խոջալուի մերձակա հայկական գյուղերը շարունակաբար հրետակոծվել են «Գրադից», «Ալազանից», 72 միլիմետրանոց «Հաուբիցից»: Խոջալուն փակել էր Ստեփանակերտի հետ Ասկերանի և Մարտակերտի կապը» [Բ-75]:

1991թ. նոյեմբերի 26-ին Ադրբեջանը 279-XII օրենքով լուծարում է ԼՂԻՄ-ը: Ասկերանի շրջանը վերանվանվում է Խոջալուի շրջան, շրջկենտրոնը՝ Խոջալու քաղաք [Բ-101]: Ասկերան քաղաքը վերառրակավորվում է Խոջալուի շրջանային ենթակայության Ասկերան ավանի:

Որքան էլ Խոջալուն ամրացված չէր, ադրբեջանական իշխանություններն այն շարունակում էին ամրացնել: 1991թ. փետրվարի 19-ին Ադրբեջանի մինիստրների խորհրդի թիվ 8Ր որոշմամբ ԼՂԻՄ-ի մի շարք բնակավայրերի սոցիալ-տնտեսական հարցերի լուծման և կոնկրետ Խոջալուի համար նախատեսվում են երկաթգծի շինարարության արագ ավարտ, ճանապարհային և բնակարանային շինարարություն [Ա-31, 54–56] (տե՛ս էջ 55-57 փաստաթուղթը):

1991թ. աշնանից Խոջալուից, Կրկժանից, բայց հատկապես Շուշիից «Գրադով» ինտենսիվ հրետակոծվում էր Ստեփանակերտը: Սրան զուգահեռ Խոջալուից հրետակոծվում էին նաև Ասկերանը, Շահումյանը և Խոջալուի մոտակայքի հայկական գյուղերը: Ասկերանը պարբերաբար հրետակոծվում էր նաև Աղդամից: 1992թ. հունվարին դրանք դարձել էին շատ հաճախակի: Հունվարի 13-ից սկսած Ստեփանակերտի հրետակոծությունը Խոջալուից դարձել էր մշտական:

АЗӘРБАЈҸАН РЕСПУБЛИКАСЫ

Назирләр Кабинети

Кабинет Министров

АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ

СӘРӘНЧАМ
РАСПОРЯЖЕНИЕ № 8р

19 февраля 1991 г. Баку

дальнейшего улучшения жилищных, социально-культурных ус-
ловий ряда населенных пунктов НКАО Азербайджанской

ить разработанную заинтересованными министерствами и
программу строительства жилых домов, объектов социально-
бытового, коммунального, производственного, сельскохо-
назначения, инженерных коммуникаций на 1991 год согласно
№ 1-18

Госагропрому Азербайджанской Республики, Министерству
зования Азербайджанской Республики, Министерству здра-
Азербайджанской Республики, Министерству культуры Азер-
Республики, Министерству бытового обслуживания Азербайд-
Республики, Министерству связи Азербайджанской Республики,
жилищно-коммунального хозяйства Азербайджанской Респуб-
ству легкой промышленности Азербайджанской
Министерству местной промышленности Азербайджанской Рес-
стерству автомобильного транспорта Азербайджанской Рес-
стерству торговли Азербайджанской Республики, Госком-
Азербайджанской Республики, Управлению Азербайджанской же-
, ПО "Азерпромстрой", ПО "Азерсельстрой", ПО "Азеравто-
ерго", ПО "Азнефть", ПО "Каспморнефтегаз", ССО "Азерб-
ЗО "Азсельхозводопроводстрой", тресту "Азэнергострой",
осуществить комплекс организационно-технических меропри-
временному обеспечению объектов строительства проектно
ентацией, решить вопросы финансирования, выделения в
материально-технических ресурсов, оборудования, подго-
ционного персонала и обеспечить безусловное выполне-
ной программы.

ю Азербайджанской железной дороги и ПО "Азерпромс-

- 2 -

строй" принять меры по усилению темпов работ на сооружении железнодорожной станции в г. Ходжалы имея в виду обеспечить ее ввод в действие в апреле 1991 года.

3. Поручить объединениям "Азеравтодор", "Агродорстрой", "Азербайджантрансдорстрой" принять все необходимые меры по своевременному выполнению работ по строительству и ремонту автомобильных дорог в НКАО Азербайджанской Республики согласно приложению N 13.

ПО "Азеравтодор" в связи с резким увеличением обьемов дорожного строительства рассмотреть вопрос создания дорожно-строительного управления в г. Ходжалы.

4. Госплану Азербайджанской Республики, Госснабу Азербайджанской Республики и Минфину Азербайджанской Республики обеспечить выделение в полном объеме финансовых и материально-технических ресурсов для выполнения программы строительства на 1991 год по НКАО Азербайджанской Республики..

5. Минпромстройматериалов Азербайджанской Республики, Госснабу Азербайджанской Республики, Карадагскому цементному заводу обеспечить первоочередное комплектование обьектов, сооружаемых в Нагорном Карабахе, совместно с подрядными организациями составить графики поставки строительных материалов и установить ежедневный контроль за их выполнением, обратить особое внимание на качество отгружаемых материалов. Управлению Азжелдороги и Минавтотранспорта республики обеспечить своевременную и ритмичную транспортировку всех грузов, предназначенных строителям и предприятиям стройиндустрии.

6. Азериттифаку, Минторгу Азербайджанской республики, Минпромстройматериалов Азербайджанской Республики, Минместпрому Азербайджанской Республики проработать четкую систему обеспечения жителей населенных пунктов автономной области строительными материалами и изделиями для строительства индивидуальных жилых домов.

Азербайджанскому республиканскому банку Сбербанка СССР обеспечить выделение ссуд на индивидуальное жилищное строительство по обращениям жителей указанных населенных пунктов.

7. Госстрою Азербайджанской Республики установить контроль за разработкой проектно-сметной документации на строительство объектов, генеральных планов застройки населенных пунктов с учетом их перспективного развития.

8. Республиканскому Оргкомитету по НКАО, Госагропрому Азербайджанской Республики и Госстрою Азербайджанской Республики обеспечить своевременный отвод земельных участков под строительство обьектов, сооружаемых в населенных пунктах автономной области.

9. МВД Азербайджанской Республики и Республиканскому Оргкомитету по НКАО в целях обеспечения безопасности продвижения по автомобильным дорогам области совместно с Военной комендатурой района чрезвычайного положения обеспечить постоянное патрулирование автодорог и выделение сопровождения организованных автоколонн, осуществля-



- 3 -

их перевозку строительных материалов и изделий.

10. Для оперативного руководства ходом строительства в указанных селенных пунктах НКАО Азербайджанской Республики, координации ра- т между исполнителями, решения вопросов материально-технического бжения создать оперативный штаб из руководителей министерств, ве- ств и объединений республики в составе согласно приложению N 19.

Протокол сектор 2

Премьер-министр Г.Гасанов

Ձենք շատ ունեին և անընդհատ համալրվում էին: Խոջալուի օդանավակայանը շարունակում էր զենքի նոր պաշարներ ընդունել: Դա անզեն աչքով տեսանելի էր կողքի հայկական Նորագյուղից: Նորագյուղից երկու եղբայրներ պատմում են. «1991թ. արդեն շատ դժվար էր, Խոջալուից հաճախ էին կրակում: Մեր գյուղը Խոջալուից մեկ կիլոմետր է հեռու: Մեր աչքի առաջ Խոջալուում ինքնաթիռներ են նստում, զենք են կուտակում, շինարարություն է գնում, շենքեր են սարքում, զորամաս ունեին: Իրանք պատանդ էին վերցնում մարդկանց, կողքի գյուղերի անասուններն էին գողանում: Իսկ մենք մի տասը հատ ինքնաշեն հրացաններ ենք ընդամենը սարքել: Հետո չորս հատ ուսումնական ավտոմատ էինք ճարել, մի քիչ կարգի էինք բերել: Կոլտնտեսությունը պողպատի ձուլարան ուներ, այնտեղ սկսեցինք նռնակ սարքել: Վերջում որ արդեն լրիվ թնդանում էր՝ թնդանոթ էլ ենք սարքել: Գիշերները գյուղի բոլոր ճանապարհներին հերթապահում էինք: Տղամարդկանց ցուցակ էինք կազմել, հերթապահությունը կազմակերպում էինք: Այդպես էր նաև մեր կողքի Հովսեփավան գյուղում: Մի անգամ կանգնած զրուցում էինք՝ թուրքերի կողմից կրակեցին տրակտորի ակը ծակեցին: էտ սովորական երևույթ էր: Հովսեփավանում որ շինարարություն էր գնում, աներձագս էլ էր էտ խմբում, առաջին զոհերից ա եղել, 1991թ. մարտի 16-ին ա զոհվել: Մենք էլ էինք երբեմն կրակում, ուզում էինք իրենք իմանան, որ զենք ունենք: Դե իրենց զենքը շատ շատ էր, իրենք «Ալազան» էին օգտագործում: 1991թ. վերջին նույնիսկ ընդհարում եղավ, իրանք էստեղից էին կրակում, մենք էստեղից էինք կրակում: Մենք, Հովսեփավանը, Մեհտիշենը, Բերքաձորը՝ բոլորս ամեն օր վտանգի տակ էինք: Բերքաձորում էլ խառն էին ապրում հայերն ու թուրքերը»[21]:

[21] Եղբայրների պատմությունը ձայնագրել է Հ.Խառատյանը:



Azərbaycan Respublikası
MÜDAFİƏ NAZİRLİYİ

Азербайджанская Республика
МИНИСТЕРСТВО ОБОРОНЫ

Азербайджан проспекти, 30 — г. Баку, проспект Азербайджана, 30

«13» января 1992 г.

АППАРАТ ПРЕЗИДЕНТА
АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ
Отдел писем и приема граждан

Копия: Прокурору г.ХОДЖАЛЫ
тов.Атакишиеву

№ 7-А-1968
от 26.12.91 г.

«Сообщаю о проделанной работе по письму прокурора г.Ходжалы тов.Атакишиева:

31.12.91 г. – Ходжалинскому территориальному батальону выделено:
– зенитных крупнокалиберных пулемета ДШК 12,7 мм – 2 ед.
– автоматы АКМ – 5 ед.
– подствольный гранатомет ГП-25 – 1 ед.
– патроны 12,7 – 4 ящика.

Получатель: глава Исполнительной власти г.Ходжалы МАМЕДОВ З.

10.01.92 г. – Ходжалинскому батальону выделено:
– автоматы АКМ – 30 ед.
– патроны 12,7 мм – 2 ящика
– патроны 5,45 мм – 1 ящик.

Получатель: МАМЕДОВ З.

Приложение: возврат вх. № А-1968 от 26.XII-91г. на 1л.

НАЧАЛЬНИК УПРАВЛЕНИЯ ВООРУЖЕНИЯ
ПОЛКОВНИК АЛИЕВ Т.А.

Խոջալուն, այո, զենք ուներ, ի տարբերություն շրջակա հայկական գյուղերի բնակչության: Զենք ուներ և շարունակում էր նորերն ստանալ: 1991թ. դեկտեմբերի 26-ին և 1992թ. հունվարի 10-ին արդեն քաղաք կոչվող Խոջալուն զենքի նոր համալրում է ստանում [Ա-31, 77] (տես սույն էջի փաստաթուղթը):

1992թ. հունվարի 28-ին Ադրբեջանի Մինիստրների խորհրդի որոշմամբ միայն Խոջալու քաղաքն ավելի շատ գումար՝ 5 միլիոն ռուբլի է ստանում զենք-զինամթերք ձեռք բերելու համար, քան օրինակ Կուբաթլուի և Քելբաջարի շրջանները միասին: Միայն Շուշիի և «Գերանբոյի» վերանվանված Շահումյանի շրջաններն են ավելի մեծ գումար ստանում՝ 6 միլիոն ռուբլի [Ա-31, 78–79] (տես էջ 60-61-ի փաստաթուղթը): Դա հասկանալի էր՝ Շուշի քաղաքը գիշեր-ցերեկ «Գրադի» համազարկերի տակ էր պահում Ստեփանակերտ քաղաքը՝ պարբերաբար գնդակոծելով նաև Խոջալուի շրջակայքի հայկական գյուղերը, դե իսկ

Շահումյանի շրջանը պարզ է՝ տեղահանված հայկական բնակավայրերում բնակեցվում էին նորաբնակ ադրբեջանցիներ, զենքը խիստ անհրաժեշտ էր թե՛ դեպորտացված հայերի հնարավոր հարձակումներից պաշտպանվելու, թե՛ նոր ռազմական կազմավորումներ ձևավորելու համար: Իսկ Խոջալուն Աղդամը ԼՂԻՄ-ի հետ կապող ռազմավարական ճանապարհի ամենալուրջ ռազմական հենակետն էր: Ակնհայտ է, որ Խոջալուի ռազմավարական նշանակությունը խիստ մեծացել էր: Մի փոքրիկ քաղաք՝ 6500 մարդ բնակչությամբ, հավասարվել էր Շուշիի և Շահումյանի շրջաններին: Տարօրինակ է, որ Խոջալուն հայերի կողմից գրավելուց հետո ադրբեջանական մամուլում և նույնիսկ ակադեմիական գրիֆով գրքերում պիտի գրվի «**Հայերը հարձակվել են անզեն և անպաշտպան Խոջալուի բնակչության վրա**»:

1991թ. աշնանից Ադրբեջանը արդեն սեփական բանակ էր ձևավորում, բայց հիմնական շարժիչ ուժը դեռևս Ադրբեջանի Ժողովրդական Ճակատի զինյալները՝ ռազմական կազմավորումներն էին և օմօնականները: Շուշիից, Ստեփանակերտին հարող Կրկժանից, Խոջալուից նախ վերափոխված հակակարկտային «Ալազանից», ավելի ուշ՝ նաև «Գրադից» ամենօյա ռեժիմով գնդակոծվում էր մայրաքաղաքը՝ Ստեփանակերտը:

«1992թ. սկզբին ադրբեջանցիները առավելություններ ունեին,—գրում է ԽՍՀՄ բանակի սպա Միխայիլ Ժիրոխովը: Ստեփանակերտը Շուշիի առաջ փռված էր՝ ինչպես ափի մեջ, և հրետակոծության համար հեշտ թիրախ էր: Բայց «Գրադ» կայանքներից կրակոցները իրականացվում էին առանց ռազմավարական օջախները վերացնելու կոնկրետ ծրագրի: Ավելին, հրետակոծությունն իրականացվում էր առանց համաձայնեցնելու՝ երբ և ինչպես կրակել: Ահա, օրինակ, ադրբեջանցի սպա Ազա Քերիմովի վկայությունը. «Ցանկացած մեկը կարող էր առավոտյան արթնանալ և գիշերային գինարբուքից հետո ուշքի չեկած նստել «Գրադի» վրա և աննպատակ, առանց կոորդինատների կրակել Ստեփանակերտի վրա: Այդպիսի գնդակոծությունից բնականաբար զոհերը հաշվվում էին տասնյակներով, եթե ոչ հարյուրներով: Շատ բնակիչներ ապրում էին պանելային բազմահարկերում, որոնք ադրբեջանական հրետանու համար հեշտ թիրախ էին... Գիշերները քաղաքի բնակիչները անց էին կացնում իրենց տների նկուղներում: Սկզբում լուսավորությունը գազով էր, բայց երբ գազի մատակարարումն սպառվեց, սկսեցին ապրել մոմերի <լույսի> տակ: Առավոտյան մարդիկ դուրս էին գալիս քաղաքից մի քանի կիլոմետր հեռու գտնվող աղբյուրից ջուր բերելու: Մթերքը և դեղորայքը սպառվելու վրա էին» [Ա-12, 5]:

1992թ. հունվարի 21–25-ին Ստեփանակերտում գտնված ռուս իրավապաշտպան Անժելիկա Չեչինայի նկարագրածով «նախկինի նման չկա ոչ էլեկտրականություն, ոչ ջուր: Ջուրն այնքան դժվար է ձեռք բերվում, որ ամոթ է թեյ խմել: Մթերային կտրոններով ոչինչ ձեռք չես բերի: Քաղաքում արդեն կան սովից ուռելու դեպքեր: Ստեփանակերտը հիշեցնում է շրջափակված Լենինգրադի կինո-ժամանակագրությունը» [Բ-57]:

Сов. секретно

АЗӘРБАЈҸАН РЕСПУБЛИКАСЫ
Назирләр Кабинети
Кабинет Министров
АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ

СӘРӘНҸАМ
РАСПОРЯЖЕНИЕ № 32-8рс

г. Баку
«28» января 1992 г.

Об освоении денежных средств выделенных Министерству обороны Азербайджанской Республики

С целью оснащения Вооруженных сил Азербайджана Кабинетом Министров Азербайджанской Республики Министерству обороны из бюджета было выделено 145 млн. рублей. Кроме того, для создания внебюджетного фонда был открыт специальный банковский счет, на который министерствами, ведомствами, предприятиями, общественными организациями и добровольными взносами граждан было внесено 113 млн. рублей.

Однако, из имеющихся в распоряжении Министерства обороны 258 млн. рублей, им по состоянию на 25 января 1992 года было освоено лишь 11.6 процентов. Что привело к необеспечению национальных сил самообороны военной техникой, оружием, боеприпасами и т.д.

Все это вызывает большое недовольство в частях и подразделениях самообороны, в районных военизированных формированиях, среди местного населения, которые зачастую вынуждены приобретать у перекупщиков боеприпасы и оружие за счет личных сбережений.

Прокуратура Азерб. ССР
первый отдел
Вход. № 107с
16.07.92

- 2 -

1. Потребовать от т. Мехтиева Т.И. принять незамедлительные меры по устранению имеющихся недостатков, подбору квалифицированных кадров, укомплектованию аппарата министерства и резко активизировать работу по приобретению необходимой техники, вооружения, боеприпасов и снаряжения.

2. Поручить Министерству финансов, Министерству обороны Азербайджанской Республики и Азербайджанскому республиканскому банку Госбанка передать исполнительным органам власти районов республики, находящихся в зоне боевых действий часть неиспользованных Министерством обороны средств, с правом их обналичивания и использования, под личную ответственность Глав исполнительной власти, на приобретение вооружения и боеприпасов дислоцированным в районах воинских формирований, в следующих обьемах:

Агджабединский район	2 млн. руб.
Физулинский район	2 млн. руб.
Джебраильский район	2 млн. руб.
Лачинский район	3 млн. руб.
Геранбойский район	6 млн. руб.
Тер-терский район	5 млн. руб.
Кубатлинский район	2 млн. руб.
Кельбаджарский район	2 млн. руб.
Шушинский район	6 млн. руб.
г. Ходжалы	5 млн. руб.

3. Контроль за исполнением настоящего распоряжения возложить на отделы оборонной промышленности и экономический.

Премьер-министр
Азербайджанской Республики Г. Гасанов

Փաստաթուղթը պատճենված է Татьяна Чаладзе, Карабахский геноцид... գրքից, էջ 78–79

Հրետակոծությունն ուժեղացավ հատկապես 1992թ. հունվարից, երբ Ադրբեջանի Ժողովրդական Ճակատի Աղդամի ռազմիկները՝ «ջիգիթները գրավելով Աղդամից յոթ կմ հեռավորությամբ Ոզունդարա կոչվող վայրի խորհրդային բանակի զինապահեստները, զավթեցին 200.000 տոննա ռազմամթերք, այդ թվում 200 վագոն ռեակտիվ հրթիռներ, սկսեցին օգտագործել Ստեփանակերտի դեմ» [Բ-84, 5]: Հունվարի 13-ին նախ փոքրիկ Շահումյան քաղաքի դեմ օգտագործելով «փորձարկեցին» հսկայական ուժով մեծ տարածություններ ոչնչացնող «Գրադ» բազմակի արձակման հրթիռային կայանքը՝ ամբողջովին ավերելով այն, այնուհետև դրանցով Ստեփանակերտն էին ավերում:

Ստեփանակերտում այդ ժամանակ դեռևս գտնվող նախկին ԽՍՀՄ, 1992–92թթ. արդեն պայմանականորեն ԱՊՀ-ինը համարվող փաստացի ռուսական 366-րդ մոտոհրաձգային գունդը նույնպես տուժում էր այդ գնդակոծություններից, զոհեր կային նաև այդ գնդի ծառայողներից, բայց որևէ փորձ չի արվել Ստեփանակերտի խաղաղ բնակչությանը ամիսներով գնդակոծող օջախները ճնշելու [Բ-73]:

1992թ. հունվարի 31-ին Աղդամից ԼՂՀ ներթափանցած Ադրբեջանի Ժողովրդական Ճակատի ռազմական կազմավորումները Ասկերանի ուղղությամբ ծանր տեխնիկայով, ըստ Գիրչենկոյի՝ 6 տանկով և 4 БТР-ով շարժվելով գրավել էին այն տարիներին զենք չունեցող հայկական Ֆարուխ և Խրամորթ գյուղերը: Խրամորթն ամբողջովին թալանվել էր, բնակիչներից 6-ը՝ զոհվել: Փետրվարի 4-ին, սակայն, ստիպված էին նահանջել՝ հայերին առաջին անգամ որպես ռազմավար թողնելով տանկեր և զրահատեխնիկա: Միաժամանակ հայերին հաջողվեց գրավել Կրկժանում և Ստեփանակերտից Ասկերան տանող ճանապարհի ադրբեջանական Մալիբեյլու, Ջամիլլու գյուղերում գտնվող օմօնականների ռազմական պահեստները և մասամբ համալրել իրենց զենքի աղքատիկ պաշարը: Հայերը գտնում էին, որ ավերակների վերածված Ստեփանակերտը փրկելու միակ տարբերակը այն գնդակոծող Շուշին և Խոջալուն գրավելն է: Խոջալուի գրավումը Ասկերանի հայկական գյուղերին հնարավորություն կտար նաև ազատվելու երեք տարի շարունակվող ահաբեկչությունից և վերականգնել Ստեփանակերտի հետ կապող ճանապարհը: Այդ մասին խոսվում էր բարձրաձայն, և ադրբեջանական կողմը ոչ միայն հասկանում էր, որ Շուշին ու Խոջալուն գրավելը հայերի համար կյանքի, նաև՝ օրերի հարց է: Այլ խնդիր է, թե ընտրությունն առաջինը որի վրա կանգ կառնի՝ Շուշիի՞, թե՞ Խոջալուի:

Խոջալուի բնակչությունը նույնպես գիտեր, որ հայերը պատրաստվում են գրավել իրենց բնակավայրը: Հունվարից անջատված էր էլեկտրաէներգիայի մատակարարումը: Մինչև փետրվարի 13-ը ինքնաթիռները Խոջալուից դեռ թռչում էին, և ով կարող էր, այսինքն ով փող ուներ՝ ընտանիքներով լքում է Խոջալուն: Ով կարող էր՝ տանում էր նաև իր անասունները: Ոմանք քաղաքը լքում էին նաև ավտոմեքենաներով, նույնիսկ հետիոտն՝ Ասկերանի մոտով դեպի Աղ-

դամ: Ճիշտ է՝ բառի բուն իմաստով արգելում/խանգարում էին դուրս գալ թուրք-մեսխեթցիներին: Նրանք Խոջալուի յուրահատուկ պատանդն էին: «...Մենք երկար, կես տարի փորձում էինք գնալ, մտածում էինք՝ սա մեր հողը չի, մեր կռիվը չի, մենք չեզոք մարդիկ ենք... <իրենք> գնում էին, մեզ մոտ չէին թողնում ուղղաթիռներին... ավտոմատներով էին, մոտ չէին թողնում... վերջում, երբ <գրավելուց հետո> Խոջալուից արդեն դուրս եկանք, նրանց երեխաների երևի 10 տոկոսն էր մնացել, գնացել էին: Մենք, մեր բոլորիս (թուրք-մեսխեթցիների – Հ.Խ.) երեխաները մեզ հետ էին մնացել...», — պատմել են թուրք-մեսխեթցիները քաղաքը գրավվելուց հետո [Բ-95]:

Կրիվոպուսկովի նկարագրած 1990 թ. ծաղկող բնակավայրը մարում էր: 1991 թ. վերջից Ադրբեջանը հռչակվել էր անկախ հանրապետություն: Իշխանության համար պայքարով զբաղված ուժերը վեր էին ածվել հակամարտող կողմերի և ժամանակ չունեին Խոջալուով զբաղվելու: Բնակավայրը թողնվել էր ինքն իրեն: Չնայած 1992 թ. Խոջալու դեռևս ռազմամթերք էին ուղարկում, բայց կենտրոնական իշխանություններից միշտ կառչած բնակավայրի տեղական իշխանությունը ինքնապաշտպանվելու լուծում չէր գտնում: Աղդամում տևական ժամանակ բռնություններով և թալանով զբաղվող զինված կիսաքրեական կազմավորումները պայքարում էին միմյանց դեմ: Հայերն ուժեղացրել էին ճանապարհների վերահսկողությունը և Աղդամի հետ աշխույժ կապն ընդհատվել էր: Երկու տարի առաջ հանրապետության իշխանության ուշադրության կենտրոնում գտնված և շռայլորեն ֆինանսավորվող բնակավայրի բնակչությունը լիովին բարոյալքվել էր: Մարդիկ իրենց թակարդում էին զգում: Հունվարին Խոջալուում հայտնված Թոմաս Հոլցը ավելի ուշ գրում է. «Խոջալուն ադրբեջանական անկլավ էր ավելի մեծ հայկական անկլավում: Քաղաք հիշեցնող ոչինչ չկար: Աղբանոց էր... Ինձ մի թնդանոթ ցույց տվեց <օդանավակայանի պաշտպանության պետ Ալիֆ Հաջիևը>: Ասաց, որ այդպիսիներից 20 հատ էլ ունի և որ հայերից է զավթել... Ալիֆն ասաց, որ վերջին շաբաթվա ընթացքում <հայերը Խոջալուի վրա> «Ալազանից» 40 հրթիռ են արձակել, չնայած կարծեք թե վնասվել էին միայն մի քանի տների տանիքներ, ջրի խողովակներ և հողի վրա փոսեր էին առաջացել» [Ա-36, 84 – 84]:

Փետրվարի կեսերին Խոջալու բնակավայրում մնացել էր, տարբեր գնահատականներով, մոտ 2500 – 3500 մարդ, այդ թվում՝ օմօնականները, արդեն ձևավորված Ադրբեջանի ազգային բանակի զինվորները, միլիցիան, քաղաքի տղամարդկանց ինքնապաշտպանական խմբերը: Տեղեկություններից մեկի համաձայն Խոջալուում կար 3 միավոր զրահատեխնիկա, «Ալազան», նաև բազմակի հրթիռանետման «Գրադ» սարքավորում [Բ-100]: Մոսկվայի «Մեմորիալ» իրավապաշտպան կազմակերպության տվյալները[22] մի փոքր այլ են՝ «Խոջա-

[22] «Մեմորիալ» կազմակերպության դիտորդները մեկ ամիս՝ 1992թ. մարտի 7-ից մինչև ապրիլի

լուն գրավելու պահին ադրբեջանական ուժերի տնօրինության տակ կար 2 հատ ռազմական բազմակի հրթիռանետ БМ-21 «Град», 4 հատ մոդիֆիկացված հրթիռային «Ալազան» սարքավորում, 1 հարյուր միլիմետրանոց տրամաչափի թնդանոթ, 3 միավոր զրահատեխնիկա: Ողջ տեխնիկան տեղակայված էր Խոջալուի բնակելի թաղամասերում, որտեղից ավերիչ գնդակոծություններ էին անում հայկական բնակավայրերի վրա [Բ-56, Բ-88]:

Փետրվարի սկզբից հայերն արդեն բարձրաձայն խոսում էին Խոջալուն գրավելու մասին և դժվարացրել էին Աղդամից այնտեղ հասնելու հնարավորությունները: Փաստացի շրջափակել էին Խոջալուն՝ կտրելով այնտեղ ռազմամթերք և սննդամթերք տանելու հնարավորությունը:

Ադրբեջանի իշխանությունները հիանալի տեղյակ էին դրան: 1992 թ. փետրվարի 20-ին Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի հետ խորհրդակցությունում քննարկվել է Շուշին ու Խոջալուն պաշտպանելու հարցը: Որոշվել է հատուկ ուշադրություն դարձնել այնտեղ զենքի նոր խմբաքանակ ուղարկելուն [Ա-31, 163] (տե՛ս էջ 65-ի փաստաթուղթը):

Փետրվարի 21-ին Ադրբեջանի Ազգային անվտանգության խորհրդի նիստում նախագահի՝ Այազ Մութալիբովի մասնակցությամբ քննարկվել է Խոջալուն պաշտպանելու անհետաձգելի միջոցների հարցը: 3-րդ կետով որոշվել է ապահովել ուղղաթիռներով վիրավորներին տեղափոխելու խնդիրը [Ա-30, 166]: Խաղաղ բնակչության էվակուացիայի հարցը չի քննարկվել:

Փետրվարի 23-ին ադրբեջանցիները ռազմական իրավիճակի ամփոփման մեջ գրում են այն մասին, որ «Խոջալու քաղաքը ինտենսիվորեն հրետակոծվում է Խանքենդի (Ստեփանակերտ – Հ.Խ.) քաղաքի և Ասկերանի շրջանի կողմից զենքի բոլոր տեսակներով: Կան զոհեր և վիրավորներ, շատ տներ են քանդվել: Խանքենդիի կողմից Խոջալուի վրա շարժվում են 20 տանկ և БТР» [Ա-31,152]: Ստեփանակերտում այդքան ծանր զինտեխնիկա չկար, Խոջալուի բնակչությունը քաղաքը լքելուց հետո երբեք չի հիշատակել այն գրավելուց առաջ հրետակոծելու մասին: Գուցե այս «անմեղ սուտը» ամփոփագիրը գրողներին անհրաժեշտ է թվացել ստիպել Ադրբեջանի բարձրագույն ղեկավարությանը Խոջալուի պաշտպանությանն ավելի լուրջ վերաբերվելու: Միաժամանակ հայտնի է, որ այդ օրերին Խոջալուից հրետակոծվում էին թե՛ Ստեփանակերտը, թե՛ Խոջալուի մոտ գտնվող հայկական բնակավայրերը: Ջուգահեռ տեղեկությունների լավ օրինակ է Խոջալուից մեկ կմ հեռավորությամբ գտնվող հայկական Նորա-

---

5-ը նյութեր են հավաքել Լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանում՝ ճակատի երկու կողմերում, պաշտոնական անձանց հետ զրուցել են Ստեփանակերտում, Բաքվում, Աղդամում, տեղեկություններ են հավաքել Ադրբեջանի դատախազությունում և ոստիկանությունում, հարցումներ են արել Բաքվի և Ստեփանակերտի, Աղդամի ռազմական սանիտարական գնացքի բժիշկների մեջ, զրուցել են պատանդների և գերիների, ռազմական կազմավորումների, այդ թվում Խոջալուի գրոհին մասնակցած անդամների հետ, տեսագրություններ են արել Խոջալուի, Ասկերանի և Աղդամի տեղանքում:



Вх. № 57
2 · 03 1992 г.

ПРОТОКОЛ

заседания Совета Национальной Безопасности
от 20 февраля 1992 года

На заседании, состоявшемся у Президента Азербайджанской Республики Муталибова А.Н., обсуждалась оперативная обстановка в Карабахе и приграничных с Арменией районах, ход реализации намеченных мероприятий по обеспечению безопасности г.г.Шуша, Ходжалы и других населенных пунктов. Особое внимание уделялось подготовке и направлению в зону конфликта необходимого вооружения и боеприпасов, принятию мер по перекрытию Государственной границы, предотвращению вторжения в воздушное пространство республики вертолетов без опознавательных знаков.

Информации по затронутым вопросам представили:

Керимов Т.М., Мусаев Ш.Х., Гусейнов И.П.

В ходе заседания были даны следующие поручения:

1. Продолжить контакты с армянской стороной по организации обмена заложниками (из с.Карадаглы) и доставке в г.Агдам тел погибших во время боевых действий в районе с.Дашалты.

Ответственный: Керимов Т.М.

2. Координировать ход боевых действий в зоне конфликта и предотвращать проведение несогласованных операций.
Постоянно контролировать вопрос обеспечения вооружения формирований необходимым вооружением и боевой техникой.

Ответственные: Мусаев Ш.Х.,
Керимов Т.М.

3. В течение суток (21 февраля с.г.) обеспечить эвакуацию мирного населения из с.Умуллу и поместить их в г.Гянджа.

Ответственный: Керимов Т.М.

Дс 3
2 марта 2

Секретный экземпляр в 24 экземпляр.

Փաստաթուղթը պատրաստված է Татьяна Чаладзе, Карабахский геноцид: обреченный Ходжалы. Документальная хроника, Баку, 2009 գրքից, էջ 163

գյուղում ապրող 30-ամյա տղամարդու օրագրի այդ օրերին վերաբերող հատվածը: Նա օրագիր սկսել է գրել ղարաբաղյան շարժման հենց սկզբից: Մինչև իր զոհվելը գրել է, առկա են 13 տետրեր: Խոջալուի գրավման հատվածը 11-րդ տետրում է:





Փետրվարի 19, չորեքշաբթի: Երեկ 14.30-ին երկու ՄԻ-24Ա ուղղաթիռներ ռմբակոծեցին Նորագյուղ, Մեհտիշեն, Հասանաբադ գյուղերը: Կան սպանվածներ և վիրավորներ: Հարևան Բալուջա գյուղը ռմբակոծվել է «Հաուբիցից»: Երեկոյան ուղղաթիռները ռմբակոծել են շրջկենտրոն Մարտունի քաղաքը: ...Ժամը 15-ին գյուղում տեղի ունեցած ժողովում որոշվել է երեխաներին, կանանց տեղափոխել մոտակա գյուղերը՝ Խնձիրիստան, Քոլատակ, Ղշլաղ, Ռև, Սարդարաշեն, Դաշբուլաղ, Հիլիսա:





Փետրվարի 22, շաբաթ: Մոտ ժամը 16.40 «Գրադի» համազարկ տրվեց Ասկերանի և Խնաբադի վրա: Ասկերանում կա 2 սպանված, 1 վիրավոր: Համազարկերը կրկնվեցին ժամը 18.40 Ասկերանի և Նախիջևանիկի վրա:

Փետրվարի 22-ին, ժամը 21.20-ին Աղդամից «Գրադ» կիրառվեց Նորագյուղի վրա: Սպանվել է 60-ամյա Ալիշ Մարտիրոսյանը, վիրավորվել են 65-ն անց Արուսյակ Ասրյանը և 26-ամյա Աշոտ Ստեփանյանը: Մեծ վնասվածք է հասցվել 5 տան:



Փետրվարի 23, կիրակի: Մոտ ժ.12.10-ին «Գրադ» օգտագործվեց Աղդամից Նորագյուղի ուղղությամբ: Մոտ 10 հրթիռներ ընկան գյուղից 2–3 կմ արևելք: Մոտ ժամը 22-ին համազարկ տրվեց Ասկերանի վրա: Կեսգիշերին կրկնվեց Նորագյուղի վրա, դարձյալ վրիպեցին, հրթիռներն ընկան դեպի արևմուտք:



Փետրվարի 23-ին Խոջալուից էին հրետակոծում: Խոջալուի ուղղությամբ «20 տանկ» չէր շարժվում: Առհասարակ որևէ տանկ չէր շարժվում: Նույնիսկ փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը Խոջալուն գրավելիս հայերն օգտագործել են

միայն երկու տանկ և մեկ БТР: Հայերն ընդամենը 1 տանկ էին ռազմավար վերցրել Աղդամի կողմից հարձակումը ետ մղելիս: Այս կեղծիքով ադրբեջանական ռազմական ամփոփումը թերևս նախապատրաստում էր նաև Խոջալուի պաշտպանության կանխատեսելի տապալումը բացատրելի դարձնելու պատուհանը:

Աղդամի շրջանի և Խոջալու քաղաքի օպերատիվ վիճակի մասին Ադրբեջանի պաշտպանության բանակի Շուշիի շրջանի պետ Բ. Աբբասովի՝ նույնպես կասկածելի հաղորդումն ավելի պիտի զգաստացներ Ադրբեջանի իշխանություններին՝ իբր Խոջալուն շրջակա հայկական բնակավայրերից հրետակոծվում էր փետրվարի 17-ից զենքի բոլոր տեսակներով. հրանոթ, БМВ, БТR և այլ ռազմական զենքերով, կիրառվում են նաև «Ալազան», «Հաուբից» հրթիռանետեր, վիրավորվել է 4, մահացել 1 մարդ, բնակչության զգալի մասը (значительная часть) փախել է: Խոջալուցիները ուղղաթիռ են ուզում, վախենում են, որ դրսից օգնություն չեն ստանա: Խոջալուում մնացել է 3.500 մարդ, այդ թվում կանայք և երեխաներ: Օդանավակայանի թռիչքուղին կարող է ծանր ինքնաթիռներ սպասարկել [Ա-31, 154] (տե՛ս էջ 72-ի փաստաթուղթը):

Որքան էլ «տեղեկություններն» ուռճացված էին՝ ակնհայտ է, որ Ադրբեջանում գիտեին՝ հայերը պատրաստվում են գրավել Խոջալուն: Գիտեին, որ Խոջալուի խաղաղ բնակչությունը փաստացի փախչում է ինչպես կարող է: Խոջալուի անկումից հետո «Խոջալուի դեպքերը» քննող հանձնաժողովի ղեկավար Ռամիզ Ֆատալիևը շատ ուշ պիտի ասի. «Մինչև Խոջալու մնացել էր 4 օր: Փետրվարի 22-ին նախագահի, վարչապետի, ԿԱԳԵԲԵ-ի և այլոց ներկայությամբ տեղի է ունեցել Ազգային Անվտանգության Խորհրդի նիստ... Խորհրդակցության ժամանակ որոշվել է մարդկանց Խոջալուից չհանել: Համարվում էր, որ եթե մենք մեր բնակչությունն էվակուացնում ենք, հենց դրանով ինքնին հայերին հրավիրում ենք գրավել բնակավայրը: Այսինքն մենք ինքներս հայերին հարձակման մղեցինք: **Նույնիսկ անվտանգության խորհրդի անդամները գիտեին, որ հայերը չեն կարող ցեղասպանության նման գործողություններ կատարել** (ընդգծումը իմն է – Հ.Խ): Նրանք մտածում էին, որ եթե ժողովուրդն այնտեղից գնա՝ մենք ինքներս հանձնում ենք Խոջալուն...» [Բ-104][23]:

1992 թ. փետրվարի 23-ին Խոջալուին օգնության հասնելու համար Աղդամի շտաբում կազմվել է ադրբեջանական ծրագիր: Ինչպես հետագայում «Խոջալուի դեպքերը» քննող հանձնաժողովին ներկայացրել է այդ ծրագիրը կազմելուն օգնելու նպատակով Բաքվից Աղդամ գործուղված Ինթիգամ Աբդուլաևը, փետրվարի 12-ին երկաթուղով Աղդամ պիտի ուղարկվեր ծանր տեխնիկա, բայց այն Աղդամի փոխարեն ուղարկվել է Շուշի: Փետրվարի 16-ին Աղդամ է գնացել Ներքին գործերի փոխնախարար, Ղարաբաղյան գոտու շտաբի նորանշանակ ղեկավար, միլիցիայի գնդապետ Թահիր Ալիևը, բայց որևէ ծրագիր չկազմած՝

[23] Ռամիզ Ֆաթալիևը 1990 թ. ընտրվել էր Ադրբեջանի Միլլի Մեջլիսի պատգամավոր, 1992 թ. գլխավորել է Խոջալուի ողբերգությունը քննող հանձնաժողովը:

С п р а в к а

об оперативной обстановке в Агдамском
районе и гор.Ходжалы.

В связи полной депортацией населения сел Киркиджахан,Мешали, [illegible],Уэльбейли,Гушчулар,Карадаглы и др.,а также вынужденным [illegible] значительной части населения г.Ходжалы,Умуддю,Сыргавенд и др [illegible] число беженцев в г.Агдаме. В настоящее время число бежен [illegible] 17 тыс.человек.

Начиная с 17 февраля с.г. армянскими бандформированиями [illegible] обстреливается г.Ходжалы со стороны окружающих его армян- [illegible] пунктов Мехтикенд,Дашбулаг,Норагюх,Аскеран,Мирзаджан и [illegible]. Обстрел ведется из крупнокалиберных пулеметов,БМП,БТР [illegible] видов боевого оружия. Применяются также ракетные снаряды [illegible],"ГРАД" и т.д. В результате интенсивных обстрелов 18-20 [illegible] ранены 4 человека, погиб 1 человек. Раненных и убитого несмот [illegible] неоднократное обращение Ходжалинцев пока еще не представилося [illegible] 19 февраля с.г. около 18[20] ворвались в штаб УВД по Карабаху с требованием выделить хотя бы один вертолет для доставки в [illegible] имеющиеся у них оружия и боеприпасов. Некоторые из них [illegible] огонь в воздух в знак протеста,объясняя это тем,что руководство неоднократно обманывали их в решении данного вопроса. [illegible] вмешательства сотрудника Шушинского РО МНБ обслуживающего г.Ходжалы удалось локализовать обстановку и избежать вооруженного конфликта.

В последующие дни,т.е.20 и 21 числа руководством также не [illegible] решить вопрос о выделении жителям г.Ходжалы вертолета. [illegible] из них 21.02.92 г. выступали с высказываниями "наказать" [illegible] находящихся в Агдамскому аэропорту уполномоченного Президента [illegible] Карабаху т.Мамедова М.С. Получив сигнал оперработник Шушинского [illegible] обслуживающий г.Ходжалы выехал в аэропорт,где провел разъясни [illegible] беседу с жителями г.Ходжалы,чем удалось предотвратить [illegible] нежелательное последствие.

В настоящее время группа лиц из числа жителей г.Ходжалы [illegible] через лесной массив добраться в город Ходжалы.

Из Ходжалы продолжают поступать тревожных сообщения о том, [illegible] в ближайшее время не поступит помощь,то армянские банд- [illegible] захватит также и г.Ходжалы,где в настоящее время [illegible] около 3,5 тыс.человек в том числе старики,дети и женщины.

Следует отметить,что наиболее уязвимым участком является [illegible] Ходжалы,охраняемый силами 18 сотрудников милиции. Взлетно- [illegible] полоса аэропорта позволяет посадке туда больше грузных [illegible] и пассажирских самолетов,что имеет огромное стратегичес- [illegible] значение.

[illegible] уполномоченный Шушинского РО МНБ
[illegible] Республики

Б.Аббасов

"[illegible]" февраля 1992 года

Փաստաթուղթը պատճենված է Татьяна Чаладзе, Карабахский геноцид: обреченный Ходжалы. Документальная хроника, Баку, 2009 գրքից, էջ 154

հենց նույն օրը գնացել է Կուբաթլու: Նա Աղդամում այլևս չի երևացել: Գյանջայից/Կիրովաբադից ուղարկված հինգ Զ-72 տանկերը զավթել են Ադրբեջանի Ժողովրդական Ճակատի տեղական զինված խմբավորումները: Երեք Զ-72 տանկեր տրվել են տարածքային ինքնապաշտպանության գնդին, բայց դրանք հայտնվել են Ժողովրդական Ճակատից պատգամավոր Ղասըմ Քերիմովի վերահսկողության տակ և այլևս չեն վերադարձվել [Բ-70, 47,50]: Այս տեղեկությունները պարունակող փաստաթղթերը, որոնք հրապարակվել են www.erevangala500.com կայքում, հնարավորություն են տալիս բազմաթիվ մանրամասներ հասկանալ Աղդամի՝ Խոջալուի ապաշրջափակումը տապալած քաղաքական, վարչական և ռազմական ուժերը ներկայացնող խմբերի և անձանց հարաբերությունների մասին, ովքեր այս կամ այն ձևով ու չափով ազդել են Խոջալուում և դրա բնակչության շուրջ տեղի ունեցած զարգացումների վրա:

Փետրվարի 23-ին Աղդամում հրավիրվել է բոլոր ռազմական կամ զինված խմբավորումների ղեկավարների խորհուրդ, բայց նրանք չեն եկել: Այնուամենայնիվ այդ օրը կազմվել է Խոջալուի պաշտպանության մի նախագիծ, որը պիտի ստորագրեր Ղարաբաղի գոտու հրամանատար Թահիր Ալիևը, որին այդպես էլ չեն կարողացել հանդիպել [Բ-70, 47 – 48]:

Տեսնելով, որ չեն կարողանում համաձայնեցնել ծրագիրը, փետրվարի 24-ին արագորեն հավաքել են 36 մարդ՝ Եվլախի գնդից և Խոջալուից դուրս եկած երիտասարդներից, և նրանց հետ համաձայնեցրել, որ նույն գիշերը նրանք Ալիաղալի-Սարդարաշեն-Նորագյուղ-Խոջալու ճանապարհով պիտի զինամթերք և սնունդ հասցնեն Խոջալու: Այս ծրագիրը նույնպես տապալվել է՝ տղաները հարբած են եղել: Կամ՝ նրանց միտումնավոր հարբեցրել են:

Փետրվարի 24-ի երեկոյան ժամը 10-ին հաջողվել է հավաքել Խոջալուի ապաշրջափակման ծրագրով պատասխանատու դաշտային խմբավորումների հրամանատարներին և նրանց հետ համաձայնեցնել գործողությունները: Որոշել են հավաքվել փետրվարի 25-ի առավոտյան ժամը 10-ին, հարձակումն սկսել փետրվարի 25-ին, ժամը 14:00-ին: Բայց դաշտային հրամանատարներն առավոտյան չեն եկել:

1992 թ. փետրվարի 23-ին Խոջալուի պաշտպանության համար Աղդամում կազմված ծրագրի նախագծի համաձայն փետրվարի 25-ին պետք է իրագործվեին հետևյալ գործողությունները.

– Խուդի Խուդիևի գլխավորած մոտոհրաձգային գունդը ժամը 14.00-ին պիտի հասներ Ասկերան, գրավեր հայկական դիրքերը (գրված է՝ հայկական բանդկազմավորումներ) և կազմակերպեր Խոջալուի պաշտպանությունը,
– Ալլահվերդի Բաղիրովի գլխավորած տարածքային պաշտպանության դասակը պիտի շարժվեր Աղդամ-Ղասըմլի[24] (Աղդամի շրջանի ադրբե-

[24] Ադրբեջանի Աղդամի շրջանի ադրբեջանաբնակ գյուղ է, 1893 թ. փոքր գյուղակ էր, կոչվում էր Կասըմ-բեգլի, մեկն էր Շելլի համայնքի 6 գյուղական բնակավայրերից, ուներ 126 բնակիչ, բոլորը՝ շիա թաթարներ [Բ-21, №1331]:

ջանական գյուղ – Հ.Խ.) – Նախիջևանիկ[25] (Ասկերանի շրջանի հայկական գյուղ – Հ.Խ.) ուղղությամբ, գրավեր հակառակորդի դիրքերը, կազմակերպեր գրոհ Նախիջևանիկի վրա և ապա գրավեր Փիրջամալ[26] (Ասկերանի շրջանի հայկական գյուղ Նախիջևանիկից 1.5 – 2 կմ հեռավորության վրա – Հ.Խ.) գյուղը և դրանք պահեր (ծրագրում ոչ մի խոսք չկա, թե ինչ պիտի արվեր հայկական գյուղերի բնակչության հետ՝ նրանց դուրս մղել, թողնել գյուղում, կոտորել և այլն),

– Յաղուբ Ռզաևի գլխավորած տարածքային պաշտպանության դասակը պիտի շարժվեր Աղդամ-Խանաբադ (Ասկերանի շրջանի հայկական գյուղ Խոջալուից մի փոքր հյուսիս-արևելք – Հ.Խ.) ուղղությամբ, գրավեր այն, ապա հասներ Ներքին Կըլըչբաղ[27] (Ասկերանի շրջանի հայկական գյուղ – Հ.Խ.) բնակավայր,

– ՕՄՕՆ-ի ղեկավար Ռովշան Ջավադովը մեկ այլ գնդի ղեկավարի (Հաթամով Թելման, փաստացի՝ Ֆաիկ Բաքշալիև) հետ պիտի շարժվեր Աղդամից Խոջալու ճանապարհների ճյուղավորման (развилка) ուղղությամբ, հասներ Խոջալու և անհրաժեշտության դեպքում ուժեղացներ Խոջալուի պաշտպանությունը Խանքենդիի (Ստեփանակերտ) ուղղությունից,

– Մալիբեյլու[28] (ադրբեջանաբնակ գյուղ Խոջալուի հարևանությամբ – Հ.Խ.) բնակավայրի տարածքային պաշտպանության խումբը պիտի շարժվեր Աղդամ-Քյաթուկ[29] (հայկական գյուղ Ասկերանից 4 կմ հարավ – Հ.Խ.) ուղղությամբ, գրավեր <հայերի> կրակակետը և պահեր այն,

– Տարածքային պաշտպանության խմբերը Ներքին գործերի պարեկա-

---

[25] ԼՂԻՄ-ի Ասկերանի շրջանի հայկական գյուղ է: Ասկերանից 6 կմ, Խոջալուից մոտ 8 կմ հարավ-արևելք գտնվող Նախիջևանիկը 1893 թ. ուներ 1120 բնակիչ, բոլորը հայեր [Բ-21, №1295]: Ըստ Մ.Բարխուդարյանի՝ 19-րդ դարավերջին Նախիջևանիկի բնակչությունը բնիկ էր, կազմում էր 1139 մարդ [Բ-20, 226]:

[26] ԼՂԻՄ-ի Ասկերանի շրջանի հայկական գյուղ, Նախիջևանիկ գյուղից 2 կմ հարավ: 1893 թ. ուներ 831 բնակիչ, բոլորը հայեր [Բ-21, №1299]: Ըստ Մ.Բարխուդարյանի՝ 19-րդ դարավերջին Փիր-Ճամալ գյուղի բնակչության թիվը 833 էր, հիմնականում բնիկներ էին, բայց կային նաև Ջրաբերդից և Հին Քյաթուկից տեղափոխվածներ [Բ-20, 226]:

[27] ԼՂԻՄ-ի Ասկերանի շրջանի հայկական գյուղ: Ներքին Կըլչբաղը 1893 թ. ուներ 463 բնակիչ, բոլորը հայեր: Հինգ այլ հայկական գյուղերի հետ կազմում էին Խանաբադի համայնքը [Բ-21, №1307]: Ըստ Մ.Բարխուդարյանի՝ 19-րդ դարավերջին Ղլիջբաղի բնակչությունը բնիկ էր, կազմում էր 494 մարդ [Բ-20, 246]:

[28] ԼՂԻՄ-ի Ասկերանի շրջանի ադրբեջանական գյուղ: 1893 թ. ուներ 832 բնակիչ, բոլորը շիա թաթարներ, Խոջալու և Կոըշչիլար թաթարական գյուղերի հետ կազմում էին Մալիբեգլիի համայնքը [Բ-21, №1291]:

[29] ԼՂԻՄ-ի Ասկերանի շրջանի հայկական գյուղ: Ասկերանից հարավ 4 կմ հեռավորությամբ, Նախիջևանիկ գյուղից մոտ 2 կմ արևմուտք, Խոջալուից մոտ 3 կմ հարավ-արևելք գտնվող Քյաթուկ գյուղը 1893 թ. ուներ 341 բնակիչ, բոլորը հայեր, երկու այլ հայկական գյուղերի հետ կազմում էին Նախիջևանիկի համայնքը [Բ-21, №1294]: 1921 թ. տվյալներով Քյաթուկի բնակչության թիվը 612 էր, բոլորը՝ հայեր (Население АзССР 1921 года): Գյուղն այժմ անմարդաբնակ է:

պահակային ծառայության գնդի կազմում պիտի ապահովեին Խոջալուի պաշտպանությունը և ակտիվ գործողություններ սկսեին Նորագյուղի (հայկական գյուղ Խոջալուից հյուսիս մեկ կմ հեռավորությամբ – Հ.Խ.) ուղղությամբ,

– Աղդամի տարածքային պաշտպանության խումբը պիտի պաշտպաներ Աղդամի շրջանը և պատրաստ պահեր 1 ԲՏՐ և 1 Ձ-72 տանկ [Բ-70, 48]:

Այս ծրագիրը չի իրականացվել, բայց սա է եղել հիմնական, եթե ոչ միակը մինչև ամսի 25-ը (ծրագիրը չի ստորագրել Ղարաբաղի ռազմական ուժերի ղեկավար Թահիր Ալիևը, որին չեն գտել, ամսի 25-ին չեն ներկայացել խմբերի ղեկավարները և այլն): Հարցաքննվողը պատմել է, որ Աղդամի ռազմական խմբավորումներից յուրաքանչյուրն ունեցել է սեփական ցանկությունները՝ Գաթիր Մամեդովն ուզեցել է գրավել Խանաբադն ու այն կողոպտել, Ալլահվերդի Բաղիրովն ուզեցել է գնալ Նախիջևանիկ գյուղի դեմ և այլն [Բ-70, 53]: Խմբերը չէին միավորվել ընդհանուր նպատակի շուրջ: Թերևս այդ պատճառով փետրվարի 25-ի գիշերվա ժամը 2-ին համաձայնության են եկել, որ Խոջալուի պաշտպանության հիմնական գործողությունը պիտի կենտրոնացնեն Շելլի[30]-Խոջալու ուղղությամբ: Այդպես էլ փետրվարի 25-ին չկարողանալով կազմակերպել Խոջալուի պաշտպանությունը, երեկոյան ժամը 8-ին տեղեկանալով, որ Խոջալուի մոտ հայկական կողմից տեխնիկայի կուտակում կա, Աղդամի շտաբում փետրվարի 25-ի գիշերը ժամը 11.30-ին **որոշել են Աղդամից երկու «Գրադից» հրետակոծել Խոջալուի օդանավակայանը ու հայկական Նոր Նորագյուղը** [Բ-70, 53]:

Հիանալի իմանալով, որ գրավվելուց հետո Խոջալուի բնակչությունը գնալու է դեպի Աղդամ՝ սպասել են Խոջալուի բնակչությանը. («**…было известно, что население Ходжалы должно было выйти из окружения и идти в сторону Агдама. Обговорили возможные варианты встречи населения Ходжалы**) [Բ-70, 49]: Հասկանալի է՝ տեղյակ էին հայերի կողմից Խոջալուի բնակչությանը այդ ճանապարհով մարդասիրական միջանցք տրամադրելուն և բնակչությանն այդ մասին տեղեկացնելուն:

Թե՛ ադրբեջանցիների մեծ մասի, թե՛ հայերի համար անակնկալ է եղել, որ Խոջալուի գրավվելուց հետո բնակչության մի մասը Աղդամի ուղիղ ճանապարհից շեղվել է, մտել անտառներ, մի մասն էլ գնացել է հայկական Նախիջևանիկ գյուղ տանող ճանապարհով, որտեղ բախումներ են եղել իրենց գյուղը պաշտպանող հայկական ինքնապաշտպանական խմբի հետ:

Փետրվարի 27-ին Աղդամ են եկել երեք ՄԻ-24 ռազմական ուղղաթիռներ, որոնց ուղեկցությամբ չորս ՄԻ-8 քաղաքացիական ուղղաթիռներ զբաղվել են Նախիջևանիկի ուղղությամբ դիակների հավաքմամբ [Բ-70, 50]:

---

[30] Շելլին Ադրբեջանի Աղդամի շրջանի ադրբեջանական գյուղ է: 1893 թ. ուներ 337 բնակիչ, բոլորը շիա թաթաներ [Բ-21,№1279]:

■
ԽՈՋԱԼՈՒԻ ԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԿԱՉՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԱԿԱՆԱՏԵՍՆԵՐԻ ՊԱՏՄԱԾՈՎ

Տղամարդ Ստեփանակերտից: Խոջալուն գրավելու օրերին եղել է կենտրոնական ինքնապաշտպանության ուժերի հետախուզական դիվերսիոն վաշտում, որը գործում էր Արկադի Տեր-Թադևոսյանի հրամանատարության ներքո. «Մենք լուրջ էինք պատրաստվել Խոջալուի գրավմանը: Մեր խնդիրը եղել է Խոջալուի կրակակետերի իսպառ ոչնչացումը, քանի որ անընդհատ «Գրադով» կրակի տակ էր պահվում Ստեփանակերտը, մեր խաղաղ բնակչությունը: Այնտեղ մեծ զինուժ էր կուտակված, խաղաղ բնակչությունից ավելի շատ էին: Դա ոչ թե Խոջալուի տղամարդ բնակչությունն էր, այլ դրսից եկած օմօնականներ՝ միլիցիոներական խմբեր, ռազմական խմբեր: Քանի որ գիտեին մեր հարձակման նախապատրաստությունների մասին, խաղաղ բնակչությունից արտահոսք կար: Գնում էին ով ինչպես կարող էր: Մի մասը՝ փող ունեցողները, գնացել էին ինքնաթիռներով, մյուսները՝ մեքենաներով, նույնիսկ հետիոտն: Մնացել էին զինվածները և կարիքավորները՝ անտեր ժողովուրդը: Փետրվարի կեսերից մեր՝ հայերի կողմից էլ էին կրակում, ուզում էին վախեցնել, որ խաղաղ բնակչությունը դուրս գա, գնան: Հետո թռուցիկներ բաժանեցինք, առաջարկում էինք դուրս գալ: Թռուցիկի տեքստի վրա ես էլ եմ աշխատել, հետո թարգմանեցինք ռուսերեն և թուրքերեն: Մարտական ամբողջ օպերացիան ղեկավարել է Արկադի Տեր-Թադևոսյանը: Մեր ծրագրով գրոհել ենք երեք ուղղությամբ՝ Ստեփանակերտի ուղղությունը, որը ղեկավարել է Ասկոլկան՝ մեր ազգային հերոս Աշոտ Ղուլյանը[31], մյուս ուղղությունը Նորագյուղի կողմից էր, երրորդը պիտի նախ գրավեր օդանավակայանը: Չորրորդ խմբի վրա դրված էր Խոջալուից Աղդամ ճանապարհի վերահսկողությունը: Միշտ մտածում էին, որ թուրքերը Աղդամից կարող է օգնության գան Խոջալուին: Այդ խմբի վրա էր դրված նաև մարդասիրական միջանցքի՝ Խոջալուից փախչողների վերահսկողությունը:

Ես, ճիշտ է, կռիվը սկսվելուց հետո շուտ վիրավորվել եմ, բայց մեր դեմ հզոր պաշտպանություն է եղել: Մեր պես կռվող տղերք իրանց մոտ էլ կան, բավականին լուրջ դիմադրության ենք մենք հանդիպել: Կոնկրետ մեր վաշտն ըստ ծրագրի ռեզերվային էր, մեզ պիտի ուղարկեին այնտեղ, որտեղ մարտի

---

[31] Այլ տեղեկություններով Աշոտ Ղուլյանը ղեկավարել է Քյաթուկի կողմի գրոհը:

ընթացքում խնդիրներ կծագեին, ձախողումներ կլինեին: Բոլոր այն ազդանշանները, որ պիտի գործեր մինչև հարձակումը, մինչև հետևակի Խոջալու մտնելը, պլանավորել է Արկադի Տեր-Թադևոսյանը: Ըստ ծրագրի պետք է աշխատեր 152 միլիմետրանոց «Հաուբից» Խոջալուի վրա, որպես ազդանշան մերոնք երեք արկ պիտի խփեին, բայց դա չստացվեց, հրանոթը ուղղակի չաշխատեց: Որպես երկրորդ ազդանշան պետք է պայթեցվեր սելիտրայով բարձած վագոն, բայց դա էլ չաշխատեց: Հիմա պատճառը չեմ հիշում, թե ինչու չաշխատեց: Քանի որ ազդանշանները չաշխատեցին, առաջին ուղղությունը, որը պետք է լիներ Նորագյուղի կողմից, չմտավ: Նույնը՝ օդանավակայանի խումբը: Բնականաբար անհանգստություն կար, որ երկու խմբերն էլ ուշացնում են հարձակումը: Գործի մեջ մտավ մեր խումբը: Մեհտիշենի կողմից ճեղքեցինք թշնամու պաշտպանությունը, որը բավականին լուրջ էր, ու մտանք: Ձախից մի գնդացիր էր անընդհատ աշխատում: Ես, Սասուն Միքայելյանը և Սևանի Սուրիկը գնացինք այդ կողմը: Ձեռիս եղած նռնակներից նետում եմ երկու հատ, գնդացիրը լռում է: Որ արդեն հարյուր տոկոս համոզված եմ, որ կրակակետը չկա, գնդացիրը չկա, գնում եմ այդ կողմը և հենց այդ պահին գնդացիրն աշխատում է: Ես ծանր վիրավորվում եմ: Հետո ինձ պատմեցին, որ իմ վիրավորվելուց հետո մեր խումբը ճեղքել է պաշտպանությունը և մտել Խոջալու: Անմիջապես սկսել են տները վառել, հոգեբանական բան, խուճապ է առաջանում կովողների մոտ»[32]:

Նորագյուղից երկու եղբայրներ. «Հունվարից արդեն գիտեինք, որ մերոնք պատրաստվում են Խոջալուն վերցնել: Մեր գյուղից էլ պիտի մտնեինք: Մեզ արդեն ավտոմատ տվեցին, Խոջալուն մտնելուց կարող ա մի 25 հատ ավտոմատ կար: Սկզբից փետրվարի մի ամսաթիվ ասեցին, որ իբր այդ օրը պիտի գրոհը սկսվի, հետո փոխվեց: Ամսի 25-ին ասացին՝ հենց այսօր: Մենք կոնկրետ գրոհի օրն ենք իմացել, բայց վաղօրոք պատրաստ էինք: Էտ օրը 28 հոգի էինք: 2–3 մարդ Սարդարաշենից էին, մեր կողքի գյուղն ա, Խնձիրիստանից էլ մի քանի հոգի կային, բայց հիմնականում մեր գյուղի ջոկատն էր: Գրոհի մի ուղղությունը մերը պիտի լիներ, մյուսը Մեհտիշենի ուղղությունն էր: Էնտեղ պլանավորել էին, որ ամունալ բան խառնած պոյեզ պիտի մտնեին պայթեցնեին: Բայց հիմա չեմ հիշում ստացվել ա, թե չի ստացվել: Հետո կար Ասկերանի ուղղությունը, բայց դա պաշտպանական բան էր: Էդ կորիդորի պահն ա: Ամսի 25-ին, ժամը մոտավորապես 10.30, երևի մի 5 հոգով, մի հատ էլ ռացիա կար, շատ անհաջող ծանր ռացիա էր, իմ մոտ էր, վերցրեցինք գնացինք գյուղի մեր դիրքերի մոտ: Արդեն մի հատ «Ալազան» կար, գնացինք դրա մոտ: Ժամը 12-ին Մեհտիշենի կողմից մեր տանկը ռմբակոծությունը սկսել ա: Հետո մի հատ էլ ԲՄՊ եկել էր մեր գյուղի վերևի մասը: Մենք խրամատավորվել էինք և 2–3 ժամ կրակում էինք: Իրանք էլ էին կրակում: Մի անգամ որ ԲՄՊ-ն կրակեց, թուրքերը թողին փախան: Դրանից

[32] Ստեփանակերտում զրուցել և նրա պատմածը գրանցել է Հ.Խառատյանը:

հետո մենք ելանք, առաջ էինք գնում, էլ կրակոց, բան չկար: Մտանք Խոջալու՝ մարդ չկար: Փողոցներից մեկում մի թուրք ա պատահել, մի քաղաքացիական տղա էր, փախել ա պատերի արանքներով: Լուսադեմին մենք որ մեր առաջադրանքը կատարել էինք, իրանց էտ նորակառույց շենքերի կողմից կրակոցներ դեռ լսվում էին: Բայց դե մերոնք արդեն գրավել էին, մենք մեր առաջադրանքը կատարել էինք և գյուղ վերադարձանք: Հաջորդ օրը թուրքերը Աղդամից մի ՈՒԱԶ մեքենայով եկել էին Ասկերան, երևի 10–15 հոգով, սկսել են կրակել, բայց շուտ պարտվեցին: Մենք էլ գնացել էինք իբր օգնելու: Մենք մտածել ենք, որ կարող ա Խոջալուն վերցնենք՝ ամբողջ Աղդամը հարձակվի, բայց տենց բան չի եղել: Շատ բան մոռացել եմ ճիշտն ասած, բայց իմ կրտսեր եղբայրը այդ օրերի մասին իր օրագրում գրում էր: Կարող է այնտեղ որոշ մանրամասնություններ լինեն:

Նայում ենք վերոհիշյալ օրագրի համապատասխան օրերի՝ փետրվարի 25–27-ի գրառումները.

Փետրվարի 25. «Առավոտյան մոտ ժամը 8.30 Ջանհասանից (ադրբեջանական գյուղ Ասկերանի շրջանում–Հ.Խ.) «Գրադի» կամ «Ալազանի» համազարկ օգտագործվեց Բալուջայի վրա (հայկական գյուղ Ասկերանի շրջանում–Հ.Խ): Ստեփանակերտի կամ Շուշիի մոտ ուժգին պայթյունների ձայներ են լսվում:

Մոտ ժամը 1-ին հայտնի դարձավ, որ հիմնական հարվածի ուղղությունը դարձյալ Խոջալուի վրա է:

Երեկոյան պատրաստվածությունը ուժեղանում է: Ժամանում են խմբեր: Եղանակը բարենպաստ է, պարզ գիշեր է, գետինը սառած, տեղ-տեղ ձյուն: <Ժամը> 20.30 Նորագյուղի խմբի մի մասը ռացիայով շարժվեց հարավարևելյան ծայրամասը: Նորագյուղ է ժամանում «Ալազան» խփող «Կռազը»: Ժամանեց առաջին ԲՄՊ-ն:

Ուղիղ կեսգիշերին սկսվեց Խոջալուի ռմբակոծումը և գնդակոծումը ԲՄՊ-ներից, «Հաուբիցից», «Ալազանի» 2 կայաններից, գուցե նաև տանկից»:

Փետրվարի 26. «0 ժամից սկսված է Խոջալուի զանգվածային ռմբակոծումը, չնայած ոչ արտակարգ ուժգին: Բոլորի համար, այդ թվում և խոջալուեցիների համար պարզ է, որ Խոջալուի վերջը սկսված է: Խոջալուից մի քանի անգամ ԱԳՍ-ից կրակեցին Նորագյուղի դիրքերի վրա և միայն այդքանը: Երևի մի ժամ անց ռացիայով լսվեց, որ մերոնք մտել են Խոջալու: Խոջալուի արևելյան ծայրամասում մի տուն հրդեհվեց, ուրեմն մերոնք առաջինը մտել են Մեհտիշենի կողմից:

Եվս 1 ժամ անց հրդեհները Խոջալուի այդ մասում շատանում են: Շուտով մի խումբ (հայերից) մտնում են Խոջալուի խաչմերուկի կողմից, բայց ոչ ճակատային՝ նրանց դիրքերի վրա, այլ մի 100 մետր դեպի հարավ, արտեզյան ջրի աշտարակից:

Նորագյուղից «Ալազանը» անհաջող էր խփում: Խոջալուի ամենաշատ դիրքերը Նորագյուղի դիմացն են՝ խաչմերուկի մոտ գտնվող նորակառույց և կիսա-

կառույց տների մոտ: Սակայն և «Ալազանը», և ԲՄՊ-ն այդ դիրքերի վրա համարյա չխփեցին, հիմնականում գյուղի կողքի մոտ էին հրթիռները մի քանի անգամ ավել ընկնում: Ինչևէ, այդքանից հետո, երբ արդեն հայերից մի խումբ խաչմերուկի կողմից մտել էր նորակառույց թաղամասի հարավային կողմից, Նորագյուղից 3 խմբեր (Նորագյուղը Խնձիրիստանի և Սարդարաշենի հետ, ՍՏ-րի մի մասը, ևս մի խումբ Հայաստանից) շարժվեցին գետի ափով կաթի ընդունման կետի մոտով ասֆալտե ճանապարհով դեպի «խաչմերուկ»: Արդեն ջրի աշտարակի մոտ գտնվող խրամատները անցնելիս նորակառույց թաղամասի 2 կետերից ադրբեջանցիների գնդացիրները կրակ բացեցին անցնող տղաների վրա, մի խնձիրիստանցի ծանր վիրավորվեց, ևս մի հոգի մահացու վիրավորվեց, դիրքերից 2 կողմերից իրար վրա կրակում էին 30 մետր հեռավորությունից, և էտ 60 մետր հեռավորությունից մի գնդացիրը շուտ լռեց: Ռացիայով կապվելով գյուղի հետ, ԲՄՊ-ին հաջողվեց աշտարակի մոտ խփել բետոնի բլոկի մոտի դիմադրության վրա: Մեր նռնակների 1 կրակոցը վրիպել էր: ԲՄՊ-ի 4 կրակոցից հետո, չնայած մի քանի տասնյակ մետր հեռու էր ընկել, այդ գնդացիրը ևս լռեց: Մերոնք սկսեցին մտնել նորակառույց թաղամաս՝ կրակելով տանիքների վրա և 3–4 տներից մեկը վառելով: Մեհտիշենի կողմից շատ ավելի մեծ արագությամբ հրդեհների թիվը շատանում էր: Այդտեղից «Արաբո» ջոկատն է նաև մտել, որևէ դիմադրության չհանդիպեց: Մոտ ժամը 5-ին Աղդամից «Գրադով» խփեցին Նորագյուղի վրա, բայց վրիպեցին: Առավոտյան ժամը 7-ին, յոթ անց կես, երբ նոր լուսացել էր, Նորագյուղից մտած խմբերը առաջադրանքը համարյա կատարել էին՝ հասնելով «խաչմերուկից» Խոջալուի ծայրամասի տները: Մեհտիշենի կողմից և օդանավակայանի կողմից միացած խմբերը կատարել են առաջադրանքը՝ մաքրելով իրենց բաժին գյուղերը: Մնացել էր 86 կմ-ի մոտակայքի նորակառույց թաղամասը, որտեղից կրակահերթեր էին լսվում: Սակայն պարզ էր, որ բնակչությունը և գյուղի պաշտոնյաների մեծամասնությունը փախել էին գետի ափերով դեպի Աղդամ:

Լուրջ վտանգ այդ թաղամասից չկար, և հոգնած մարտիկները վերադարձան դեպի «խաչմերուկ» և Նորագյուղ (Նորագյուղի կողմից մտածները): Միաժամանակ հրացանավոր և անզեն մարդիկ էին մտնում Խոջալու: Սկսվեց Խոջալուի թալանը:

Խոջալուցիներից, շատ մոտավոր հաշվումներով, 20–30 սպանված կար: Մերոնք 5 զոհ տվեցին: Պլանը լավ էր մշակված: Մերոնք գրոհել են գիշերը, լուսանալու վրա պետք է մաքրված լիներ Խոջալուն, որովհետև ուղղաթիռների վտանգ կար, անհաջող էր հրետանային նախազգուշացումը, որոնց հետևանքով գոնե խաչմերուկի այդ դիրքերը չոչնչացրինք, մերոնց դերը ավելի շատ հոգեբանական ազդեցությունն էր ադրբեջանցիների վրա: Ինչևէ, ևս մեկ անգամ հայերը ապացուցեցին, որ լավ կռվող են:

Գյուղում մարդկանց տրամադրությունը բարձր է: Խոջալու մտան 28 նորագյուղցիներ, որոնցից վիրավոր կամ սպանված չեղավ:



Մոտ ժամը 14.30-ին հայտնեցին, որ Ասկերանի դրությունը լուրջ է: Նորագյուղից մեկնեցին 12 մարտիկներ, որոնցից 10-ը մտել էին Խոջալու: Խոջալու մտած մոտ 30 <անընթեռնելի բառ> մարտիկներ ևս Ասկերանի դիրքերը մեկնեցին: 4 անգամ «Գրադով» համազարկ տրվեց, երբ նորագյուղցիներն Ասկերանում էին: Աղդամի կողմից առաջ էին շարժվել նաև տներից փախածներին Աղդամ հասնելու հնարավորություն տալու համար: Վտանգը Ասկերանի համար շատ մեծ չէր, մութն ընկել էր, և նրանք արդեն չէին կարող այլևս շատ առաջ շարժվել: Ասկերանի մոտ շատ փախած խոջալուցիներ սպանվեցին, մոտ 60-ը գերի վերցվեցին:

Երեկոյան մոտ 21-ին Սեյիդշենից ժամանած խումբը Ասկերան–Աղդամ ճանապարհի 4-րդ պահակակետում փոխարինեց նորագյուղցիներին: Ադրբեջան-

ցիների ձեռքին է մնում Կարկարի աջ ափին գտնվող (Նախիջևանիկի հողում) Լաչին Ղույ բարձունքը:

Ասկերանում առնվազն մեկ հոգի սպանվել է: Մերոնք մեկ БТР թողել փախել էին, հանդիպելով ադրբեջանական տանկի»:

«Փետրվարի 27, հինգշաբթի: Կեսօրին Աղդամի կողմից երեք ուղղությամբ գնդակոծեցին Ասկերանի արևելյան դիրքերը: Դարձյալ սպանված կար ասկերանցիներից: Սակայն դարձյալ վիճակը շատ լուրջ չէ: Կարելի է եզրակացնել, <որ> Խոջալուի գրավումը ավարտվել է հաջողությամբ, և ադրբեջանցիները դրա փոխարեն կարողացան լուրջ հարված հասցնել Ասկերանի-Նախիջևանիկի դիրքերին»:

Խոջալուի գրավումը գլխավորած հրամանատար *Արկադի Տեր-Թադևոսյանը* գրել է. «Որոշված էր համաժամանակյա գրոհ սկսել չորս կողմից՝ Նորագյուղ, Մեհտիշեն, Քյաթուկ գյուղերի և օդանավակայանի կողմից: Մինչև գործողությունը սկսելը Խոջալուի գառնիզոնը և հայկական ջոկատների բոլոր հրամանատարները զգուշացված էին քաղաքացիական բնակչությանը հատկացված միջանցքի մասին: Միջանցքն անցնում էր քաղաքի արևելյան մասով՝ Կարկար գետի հոսանքով դեպի Աղդամ: Խոջալուի գործողությանը մասնակցում էին 487 հայ մարտիկներ: Հայկական ջոկատներն առաջին անգամ էին գործածում զրահատեխնիկա՝ երկու միավոր БРДМ (бронированная разведывательно-дозорная машина – հետախուզական-պարեկային զրահապատ մեքենա – Հ.Խ.), ինչպես նաև մեկ հակատանկային «Ռապիրա» թնդանոթ: Հետախուզության տվյալներով Խոջալուն պաշտպանում էր հակառակորդի 200 զինվոր: Գրոհը սկսվեց 22.00-ին, ռազմական գործողությունները տևեցին մոտ մեկուկես օր: Առավել համառ դիմադրություն կար հակառակորդի կողմից ուժեղ դիմադրակետի վերածված ինը հարկանի շենքի շրջանում: Դիմադրությունը ճնշելու համար օգտագործվեցին երկու հրթիռային «Ալազան», որոնցից մեկը գրավվել էր հենց Խոջալուում, և մերձակա բարձունքներում նախապես տեղադրված ծանր տրամաչափի երկու թնդանոթ: Խոջալուի գործողության ընթացքում մենք ունեցել ենք 8 մարդու կորուստ, իսկ հակառակորդն ունեցել է 23 սպանված» [Բ-98, 569]:

Խոջալուի գրավման անհրաժեշտության մասին խոսելով, այդ ժամանակ Ղարաբաղի պաշտպանության բանակի շտաբի ղեկավարի տեղակալ *Սամվել Բաբայանը* մեզ հետ ունեցած զրույցի ընթացքում ներկայացրել է նաև որոշ մանրամասներ. «Երբ որոշեցինք, որ Խոջալուն արդեն պիտի վերցնենք, մի քանի անգամ ծրագիրը կազմել ենք: Արդեն օրն էլ էր որոշած, բայց իմացանք, որ տեղեկությունն արտահոսել է, Մոսկվայում օրը գիտեն: Գրոհի օրը փոխեցինք, հետաձգեցինք, հետո ծրագիրը վերամշակեցինք: Շատ տեխնիկա չունեինք, ինչ էլ ունեինք՝ հիմնականում ռազմական ավար էր, հենց իրենցից՝ ադրբեջանցինե-

րից էինք վերցրել: Ինքնապաշտպանական խմբերից բանակ նոր-նոր էինք ուզում սարքել, այսինքն արդեն կառուցվածքն ունեինք, բայց շատ դժվար էր այդ խմբերին մեկ ընդհանուր ենթակայության բերել: Դա ամիսներ տևեց: Բայց Խոջալուի ժամանակ համերաշխ էինք: Գիտեինք, որ Խոջալուն շատ զինված է, կովող մարդիկ էլ շատ ունեին: Մինչև գրոհն սկսելը ԲՄՊ-ից մի քանի անգամ Խոջալուի վրա կրակել էինք՝ նախապատրաստում էինք, որ դուրս գան: Մի քանի անգամ կոչ ենք արել խաղաղ բնակչությանը՝ դուրս գան Խոջալուից, կրակի տակ չընկնեն[33]: Հիմա թուրքերն էնքան ստեր են գրել՝ իբր մինչև ատամները զինված էինք, իբր 40 տանկ ենք տարել Խոջալու[34], մեզ հետ ռուսական բանակից մարդ է եղել[35]: Բացարձակ սուտ է, եղել ենք միայն հայերով: Մեր թույլ տեղը զենքի պակասն էր, կրկնում եմ՝ զրահատեխնիկա համարյա չունեինք: Չգիտեինք Աղդամի կողմից թուրքերին օգնության կգան, չեն գա, այդ պատճառով մի հատ ԲՏՐ մի խմբի հետ կանգնեցրել էինք Ասկերանի ամրոցի մոտ, այն հատվածում, որտեղից ճանապարհը շեղվում է Քյաթուկի կողմը: Սրա նպատակն այն էր, որ Աղդամից թուրքերի գալու դեպքում մի փոքր դիմադրեն՝ կանգնեցնեն, մինչև օգնության հասնենք: Նույն նպատակով Աղդամից դեպի Ասկերան-Խոջալու գնացող բոլոր ճանապարհների հայկական գյուղերի ինքնապաշտպանական տղաներին ասել էինք, որ փետրվարի 25-ի գիշերը իրենց դիրքերում հատկապես ուշադիր լինեն՝ գուցե Աղդամից ոչ թե ուղիղ դեպի Ասկերան գային, այլ գյուղական ճանապարհներով՝ Աղդամի Շելլի թուրքական գյուղի կողմից, Ուղտասարի կողմով՝ Նախի-

---

33 Իսկապես, Խոջալուի բնակիչ Սալման Աբասովը մարտի 7-ին Ազերինֆոյի թղթակից Ս.Միրզոևին հայտնել է. «Կատարված ողբերգությունից մի քանի օր առաջ հայերը ռացիայով բազմիցս մեզ հայտնել են, որ քաղաքը գրավելու են և պահանջել են, որ մենք այն թողնենք: Ավելին, երբ դեռ հնարավոր էր քաղաքից դուրս հանել կանանց, երեխաներին և ծերերին, մեզ հակառակն էին համոզում: Խոստանում էին, որ շուտով Ասկերանը գրավելու և Խոջալուն ապաշրջափակելու գործողություն է լինելու: Չեղավ... Ինչո՞ւ խաբեցին, ինչո՞ւ զոհվեցին մեր երեխաները, ո՞վ է դրա պատասխանը տալու...» [Ա-30, 28-29]:

34 Ծանր տեխնիկայի մասին ուռճացված պատմություններ իսկապես կան: Օրինակ՝ «Գիշերվան մոտ, քաղաքի վրա կրակը չդադարեցնելով, Խոջալուի դեմ շարժվեց ռազմական զրահատեխնիկա: Քաղաքի պաշտպաններն արեցին ամեն հնարավոր բան, որ ետ նետեն մինչև ատամները զինված թշնամուն, բայց ուժերն անհավասար էին... » («Бакинский рабочий», 28 փետրվարի, 1992թ.): Խոջալուի բնակիչ Բայրամ Մամեդ օղլը Կասումովը իբր թե պատմել է լրագրող Թ. Նուրիևին, որ «բոլոր կողմերից Խոջալու է մտել ավելի քան 100 տանկ, ԲՏՐ և ԲՄՊ» [Ա-30, 31]:

35 Խոջալուի անկումից հետո ադրբեջանական լրատվամիջոցներում շատ է գրվել հայերի հետ միասին Խոջալուի գրավմանը Ստեփանակերտում գտնվող ռուսական 366-րդ մոտոհրաձգային գնդի մասնակցության մասին, «որը ամենաչարամիտ դերն է խաղացել Խոջալուն գրավելիս», բայց ոչ մի ապացույց, բացի միմյանց հակասող «վկաների» ցուցմունքներից, այդպես էլ չի հայտնաբերվել (Майор К.Литвинов, Старший лейтенант В.Денисов. «Красная звезда», 28 февраля 1992 г.; Рамиз Дейгун. «Халг ордусу», 10 апреля 1992 г.; С. Мирзоев, корр. Азеринформа. Обвиняют солдаты. 366-й полк покидает Ханкенди, следы преступления остаются («Ходжалу. Хроника геноцида». изд. Азернешр, Баку – 1993, էջ 55-57); С. Мамедов. На главный вопрос генерал так и не ответил..., («Ходжалу. Хроника геноцида». Էջ 58-59;), Полковник М. Сеидов, Ходжалы – жертва руководителей всех степеней.«Халг ордусу», 14 апреля 1992 г.; И. Шукюров. «Красная звезда» признала: 366-й МСП участвовоал в штурме Ходжалы. «Бакинский рабочий», 12 марта 1992 г. և այլն:



ջևանիկով, Քյաթուկով: Բայց Աղդամից թուրքական զորքեր չեկան, Խոջալուն գրավեցինք: Բնակչությունը գյուղից դուրս է եկել գիշերը ժամը երեքի-չորսի կողմերը: Բոլորը գիտեին, որ պետք է Ասկերանով Աղդամ գնային: Ասկերանում Քյաթուկ թեքվող ճանապարհի վրա հրաձգություն է սկսվել: Փախստականների հետ դուրս էին եկել նաև Խոջալուն պաշտպանող զինված խմբերը իրենց զենքերի հետ միասին: Իրականում Խոջալուի բոլոր տղամարդ բնակիչները զինված էին, և հենց իրենց զենքով էլ դուրս էին եկել և գնում էին Աղդամի կողմը: Մի մոմենտ մի շկվալնի կրակ ա էղել էդ գետի ափով գնացող թուրքերի կողմից, պատկերացրու չէիր կարում գլուխդ բարձրացնեիր, բարձրացնես՝ մեռնում ես: Եղբայրս էլ է այնտեղ եղել, շատ ծանր վիրավորվել էր: Մի հատ շկվալ էր գալիս, մի 500–700 հոգի սենց ավտոմատները դրած դոռացնում են դեպի մեզ: Էդ որ



արանք ենք տվել, որ դուրս գան, հենց էդ ճանապարհին: Սրան ինչ ասես, ինչի՞ են սկսել կրակել, այն էլ հենց խաղաղ բնակչության միջից: Պարզ է՝ մերոնք պատասխանել են: Զանգում են ինձ՝ թե ասել եք չկրակեք, բա ինչ անենք, իրենք են կրակում: Երկու կողմից կրակում են, դե հո նշան չեն բռնում՝ կոնկրետ ում վրա են կրակում: Ավտոմատի կրակահերթ է: Մեր կողմից միայն տղամարդիկ են, նրանց կողմից ով ասես կա՝ կին, երեխա, վիրավոր, պառավ: Նույնիսկ կնոջ հագուստով տղամարդիկ են եղել[36]: Ո՞ւմ մտքով կանցներ, որ դրանք իրենց ժո-

[36] Խոջալուից խաղաղ բնակչության հետ դուրս եկած կնոջ հագուստով զինյալների փաստը շատերն են պատմում՝ Նորագյուղում, Փիրջամալում, Ասկերան-Աղդամ ճանապարհին խոջալուցիների ելքի անվտանգությունը վերահսկող հայկական ջոկատների մարտիկները: Այդ ճանապարհին Խոջալուից կնոջ հագուստով դուրս եկած զինյալներից մեկը հագուստի տակ թաքցրած ավտոմատով սպանել էր իր համադասարանցի հայ տղայի:



ղովրդին էդպիսի վտանգի կենթարկեն: Թե մտածում էին, որ հայերը կանանց ու երեխաներին տեսնելով չեն պատասխանելու: Պարզ է՝ էդ ժողովուրդը դես ու դեն է փախչում: Մի մասը այնտեղից թեքվում է Քյաթուկ տանող անտառ: Որ արդեն տեսնում են մենք էլ ենք կրակում, իրենց մի մասը անտառ են մտնում, էն մի մասը շարունակում է ուղիղ ճանապարհով գնալ: Էդ անտառում շատ են մահացել, սառել են, դե հետները վիրավորներ էլ կային: Չեմ բացառում, որ վիրավորներին հենց իրենցից էլ սպանած լինեն: Անտառում մենք մարդ չունեինք, անտառում զինված խմբեր չունեինք, մերոնք իրենց գյուղերի դիրքերում էին կանգնած: Մի մասն էլ կամրջով գետն անցել և գնացել է Նախիջևանիկի ուղղությամբ: Քանի որ ճանապարհ էինք տվել գետի ուղղությամբ ուղիղ դեպի Աղդամ, մենք այդ թևը պահում էինք: Բոլորս էլ գիտեինք և վստահ էինք, որ



միայն էդ ճանապարհով են գնալու: Մենք ուրիշ ոչ մի ճանապարհի վրա խոջալուցիների անցնելու վերահսկողություն չէինք դրել, չէինք կարող կանխատեսել, որ ճանապարհից կշեղվեն: Հետո Ադրբեջանում գրեցին, որ փախչողների մեջ մարդիկ են եղել, որ դրանց հատուկ շեղել են ճանապարհից, ասել են, իբր Նախիջևանիկ գյուղը թուրքերը գրավել են, գնանք էդ ուղղությամբ: Չգիտեմ, գուցե և իսկապես էդպիսի բան է եղել: Բայց ես մտածում եմ, որ շեղվողները մեր՝ Ղարաբաղի ճանապարհները չիմացող մեսխեթցի թուրքերն են եղել: Դրանց բերել էին 1989 թ., արդեն մեր կողմերում ընդհարումներ էին, օմօնականներ էին, նոր եկած էդ մարդիկ հայերի հետ շփումներ չեն ունեցել, մեր ճանապարհներին ծանոթ չէին, գուցե իսկապես շփոթել են ճանապարհը, ինչ ասեմ: Բայց, օրինակ, մի տեղ կարդացի, որ անտառներով գնացող խմբերից մեկի մեջ է եղել նաև

օդանավակայանի օմօնի ղեկավարը՝ Ալիֆ Հաջիևը: Մի սրիկա հանցագործ անձնավորություն: Ով ով, բաց Ալիֆ Հաջիևը ճանապարհ շփոթող չէր, ծնունդով տեղացի՝ Ջամիլլու գյուղից էր, հին միլիցիոներ և օմօնական էր վերջապես: Նա շատ լավ գիտեր տեղանքը, գիտեր, որ մարդասիրական միջանցքը Ասկերանի մոտով Աղդամ գնացող ճանապարհին զուգահեռ գետի աջ ափով է: Եթե ինքն ու իր նմաններն էլ են անտառների միջով անցել՝ մտածում եմ, թե գուցե հատուկ ծրագի՞ր են ունեցել այդ ճանապարհով գնալու»[37]:

Ի տարբերություն հայերի պնդումների, թե Խոջալուի գրավմանը միայն հայերն են մասնակցել, շատ ադրբեջանցիներ խոսում և գրում են Ստեփանակերտում գտնված 366-րդ մոտո-հրաձգային գնդի ներգրավվածության մասին: Աղդամում գտնվող ռուս սակրավորների գումարտակի մայոր Յուրի Գիրչենկոն նույնպես գրում է, որ Խոջալուի գրոհին մասնակցել է նաև Ստեփանակերտում գտնվող 366-րդ մոտո-հրաձգային գնդի ազգությամբ հայ սպաների և զինվորների մի խումբ, ինչին գումարտակի հրամանատարությունը տեղյակ չի եղել: Ըստ Գիրչենկոյի՝ նրանք մասնակցել են բնակավայրի գրոհին, բայց Խոջալու չեն մտել:

---

[37] Սամվել Բաբայանի հետ զրուցել է Հ.Խառատյանը:

■
ԽՈՋԱԼՈՒԻ ԳՐԱՎՈՒՄԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՑՐՎԵԼԸ

Խոջալուն շուտ է հանձնվել, փողոցային կռիվներ չեն եղել: Երկու ժամ տևած հրետակոծության դադարից հետո բնակչությունը լքել է բնակավայրը: Լևոն Մելիք-Շահնազարյանը գրում է. «Փետրվարի 26-ի մոտավորապես ժամը 01.15-ին ես վերադարձա շտաբ, դրեցի մեր տեխնիկական հետախուզության ականջակալները, որպեսզի լսեմ ադրբեջանցի ռադիստների բանակցությունները: 10–15 րոպեից հաջողվեց որսալ Խոջալուի պաշտպանության ղեկավար Ալիֆ Հաջիևի ռադիոհաղորդագրությունը: Նա հայհոյում էր Մութալիբովին, բաքվեցիներին, աղդամցիներին և շուշեցիներին: Ասաց, որ խաղաղ բնակիչների հետևից <իրենք էլ> Խոջալուն լքում են հայերի թողած միջանցքով» [Բ-89]:

Բնակչությունը դուրս է եկել անկարգ և անկազմակերպ, ընտանիքներով, ով ինչպես և որտեղով կարողացել է: Արտահոսքը տևել է, հավանաբար, երկուերեք ժամ, ժամը 2-ից մինչև ժամը 4–5-ը: Խոջալուի պաշտպանները չեն կարողացել կազմակերպել բնակչության ելքը և անցումը դեպի Աղդամ, չնայած բոլոր առաջնորդները գիտեին Աղդամի ուղղությամբ գնալու համար տրամադրված միջանցքի մասին: Գիրչենկոն գրում է. «Մինչև գնդակոծումն սկսելը հայերը բարձրախոսներով հայտարարել են, որ Խոջալուի բնակչության համար Աղդամ գնալու միջանցք է հատկացվել և զգուշացրել են, որ <**այդ միջանցքով**> **թույլ կտան գնալ միայն անզեն մարդկաց**» (ընդգծումը իմն է – Հ. Խ.) [Բ-84, 8]: Բայց հայերն իրենք չեն կարողացել կազմակերպել և վերահսկել զինաթափելու գործը: Արդյունքում Խոջալուից դուրս եկած բնակչության մեջ զինվածները շատ էին:

Բնակավայրից առաջին դուրս եկողները հիմնականում եղել են քաղաքի պաշտպանները՝ օմօնականները, միլիցիոներները, Ազգային Ժողովրդական Ճակատի մարտիկները՝ իրենց ընտանիքներով, հարազատներով և նրանց միացած խաղաղ բնակչության այլ խմբերով: Բնակավայրի խաղաղ բնակչության մի մասը թողնվել է իր հայեցողությանը: Բնակավայրից դուրս եկած բնակչությունն անմիջապես ցրվել է բնակավայրից դուրս տանող բոլոր ճանապարհներով, բացի հարավային՝ Ստեփանակերտ տանող ճանապարհը: Հիմնական հոսքն, անշուշտ, եղել է հյուսիսային՝ Ասկերան-Աղդամի ուղղությամբ: Մի մասը հետևել է ինքնապաշտպանությունը ղեկավարող Ալիֆ Հաջիևին և քաղաքագլուխ Էլմար Մամեդովին: Սա, հավանաբար, քանակով երկրորդ մեծ խումբն է եղել: Այս խումբը, հակառակ Լևոն Մելիք Շահնազարյանի լսած՝ Ալիֆ Հաջիևի ռադիոհաղորդագրությանը, թե իրենք գնալու են հայերի թողած միջանցքով,

Ասկերանի ուղղությամբ չի շարժվել: Հենց Խոջալուի մոտից արևելյան ուղղությամբ անմիջապես անցել են Կար-Կար գետը և մտել անտառ: Այս խմբի հետ գնացածների պատմություններով դատելով, մարդիկ խմբերի բաժանվելով ու անտառում մոլորվելով՝ մթության մեջ սկսել են փնտրել Աղդամ տանող ճանապարհը: Շատերը մինչև լուսաբաց հասել են Շելլի գյուղ տանող ճանապարհ, որն այդ պայմաններում Աղդամ տանող լավագույն ելքն էր: Մյուսները հասել են հայկական գյուղեր՝ Քյաթուկ, Փիրջամալ (Վարդաձոր), Արանզամին, Դահիրազ: Եղել են նաև մարդիկ, որ առհասարակ մոլորվել են անտառում և ցրտահարվել: Պակաս չեն ցրվել նաև Խոջալուի արևմտյան կողմում՝ հասնելով հայկական Նորագյուղ, Մեհտիշեն՝ ներկայիս Լուսաձոր, Դահիրավ, Սարդարաշեն, Հովսեփավան, Ներքին Կըլչբաղ, Խանաբադ գյուղերը (տե՛ս քարտեզ 1, էջ 203):

Եղել են նաև մարդիկ, որոնք դուրս գալիս հանձնվել են (կամ՝ գերի են վերցվել) Խոջալուն գրավող հայկական զինված ջոկատներին:

Արևմտյան ուղղությամբ ցրվածների խմբերը բաղկացած էին գլխավորապես խաղաղ բնակչությունից: Հայկական գյուղերի բնակիչները, ուր հասել են խոջալուցի 20–30 հոգանոց խմբերը, նրանց տարել են Ասկերան և հանձնել ոստիկանատուն, որն զբաղվում էր չծրագրավորված գործով՝ ինչ անել չնախատեսված գերիների/պատանդների հետ, որտեղ տեղավորել նրանց: Բոլորի համար դեպքերի այդ ընթացքն անակնկալ էր, քանի որ վստահ էին, որ քաղաքի բնակչությունը միանգամից Ասկերանով շարժվելու է Աղդամի ուղղությամբ:

Հասկանալի է՝ մարդկանց զգալի մասը տներից խուճապահար փախել է տան հագուստով, նրանք չեն հասցրել տաք հագուստ վերցնել, երբեմն նույնիսկ ոտաբոբիկ են եղել, մանկահասակ, նույնիսկ նորածին երեխաների հետ: Հաղթողները մնացել էին շվարած՝ ի՞նչ անել վախեցած, սոված, մրսած կանանց, երեխաների, տարեցների հետ այն դեպքում, երբ իրենք էլ ուտելիք չունեին, հոսանք չունեին, ապրում էին ցուրտ և հաճախակի հրետակոծվող տներում: Անմիջապես ցույց տալ Աղդամի ճանապա՞ռիը՝ գնացեք, դուք մեզ պետք չեք, մենք էլ ձեզ պետք չենք: Բայց Աղդամի ճանապարհը փետրվարի 26-ին շատ անապահով էր: Աղդամից գալիս էին զինված խմբեր և ողջ օրը, ինչպես կտեսնենք ստորև, տեղի են ունեցել համեմատաբար մեծ կամ փոքր մարտական ընդհարումներ: Աղդամի ճանապարհը ցույց տալը կարող էր նրանց կռիվների թիրախ դարձնել:

Մինչ Ասկերանում փորձում էին հասկանալ և կողմնորոշվել՝ ինչ անել «այդ մարդկանց հետ», արևելյան ուղղությամբ գնացածները դեգերումների մեջ էին կամ արդեն ունեին իրենց նոր մարտերը:

Այս գետն են անցել խոջալուցիները բնակավայրից դուրս գալուց հետո

Բնակավայրից դուրս եկած խոջալուցիները գետն անցնելուց հետո, մինչև ճանապարհ դուրս գալը, անցել են այս լեռներով

■
ԱԼԻՖ ՀԱՋԻԵՎԻՆ ՀԵՏԵՎԱԾ ԽՈՒՄԲՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ԼՔԱԾՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Խոջալուից անմիջապես գետն անցնելով անտառ մտնելը Ալիֆ Հաջիևի նախաձեռնությունն էր կամ, համենայն դեպս, այդպես է ներկայացվում: Ալիֆ Հաջիևի անունը հաճախ է հանդիպում Խոջալուից դուրս եկած բնակիչների պատմություններում: Խոջալուի բնակչուհի Սանուբար Ալեքպերովայի պատմածից պարզվում է, որ իսկապես հենց նա է մարդկանց մի մասին շեղել Ասկերանով Աղդամ գնալու ճանապարհից. «Երբ Խոջալուի քաղաքապետ Էլման Մամեդովն ասաց, որ պետք է փրկվել, օդանավակայանի ղեկավար Ալիֆ Հաջիևը <Խոջալուից> մեզ անտառով Աղդամ տարավ: **Նախիջևանիկ գյուղի մոտ թակարդն ընկանք** (ընդգծումը իմն է – Հ.Խ.): Այն, ինչ ես այնտեղ տեսել եմ, երբեք չեմ մոռանա. դիակների կույտ առաջացավ» [Բ-79]: Այս նյութը հրապարակած հոդվածում հատված կա Խոջալուի մեկ այլ բնակչուհու՝ Մինեշ Ալիևայի պատմածից. «...մենք թափառում էինք անտառում... Անտառի ինչ-որ թաքստոցից մեր վրա կրակում էին: Ալիֆը պառկեց թփերի մեջ և կրակահերթ բացեց մեր դեմ կրակող զինյալների կողմը: Կրակոցներն անտառում ինչ-որ ժամանակ դադարեցին: Ճանապարհին նա պարբերաբար կրակում էր, և անտառի զինյալները դադարեցնում էին կրակոցները: **Երբ Ալիֆը փոխում էր <ավտոմատի> փամփշտակալը, հայերը պատասխան կրակոց սկսեցին** (ընդգծումը իմն է – Հ.Խ.), և գնդակներից մեկը կպավ Ալիֆի ճակատին» [Բ-79]:

Ալիֆ Հաջիևին փախուստի ճանապարհին հիշում է նաև Խոջալուի բնակչուհի Մալահաթ Ալիևան. «Մենք գնացինք Գար-Գար գետի մոտ, երեխաներին շալակած անցանք այն: Մենք գնում էինք մինչև ծնկները ձյունի միջով: Մարդիկ սայթաքում էին, ընկնում, ոտքի կանգնում և շարունակում գնալ: Ոչ ոք չէր հասկանում, թե մեզ հետ ինչ է լինելու: Մեր խմբի առջևից գնում էր Ալիֆ Հաջիևը: Կրակոցների ժամանակ մարդիկ փախան տարբեր կողմեր, շատերը զոհվեցին գնդակներից և սառան ձյունների մեջ: Առջևից գնացողները տեսան ասֆալտապատ ճանապարհ, դա Նախիջևանիկի ճանապարհն էր: Դրա վրա տանկ էր կանգնած: Տանկը շրջվեց և շարժվեց Ասկերանի կողմը: Մենք մտածեցինք, որ այն գնաց, և անտառից դուրս եկանք ճանապարհ: **Մարդիկ այլևս թաքնվելու տեղ չունեին, և այդտեղ տարբեր կողմերից մեր վրա սկսեցին կրակել** (ընդգծումը իմն է – Հ.Խ.): Սարսափելի էր: Տանկն էլ ետ շրջվեց և սկսեց մեր վրա կրակել թնդանոթից» [Ա-31, 176–177]: Ալիֆ Հաջիևի հետևից գնացող Մալահաթ Ալիևան, նույն խմբի հետ գնացած Սանուբար Ալեքպերովայի նման, **չի հիշա-**

տակում անտառում ճանապարհի տարբեր հատվածների կրակոցներ, ինչպես **հիշատակում է** նույն խմբի հետ գնացած Մինեշ Ալիևան: Մալահաթ Ալիևան Սանուբար Ալեքպերովայի նման կոնկրետ դեպքի մասին է պատմում, որը տեղի է ունեցել Նախիջևանիկ գյուղ տանող ճանապարհին: Մալահաթ Ալիևան գյուղի մոտ «դիակների լեռներ» չի տեսել, ինչի մասին պատմում է նույն խմբի հետ գնացած Սանուբար Ալեքպերովան, բայց պատմում է կրակոցներից զոհվածների և փախուստով մարդկանց ցրվելու մասին: Նույնն է պատմում նաև Միրվարի Խալիլովան. «**Նախիջևանիկ գյուղի մոտ** (ընդգծումը իմն է – Հ.Խ.) մարդկանց դեմ կրկին կրակեցին: **Իմ մոտի մի քանի մարդ սպանվեց** (ընդգծումը իմն է – Հ.Խ.) գնդակներից և ընկան: Կենդանի մնացածները կրկին նետվեցին անտառի խորքը» [Ա-30, 27]: Այս դեպքում զոհվածները «մի քանի մարդ են», մյուսներն, ըստ պատմողի, ցրվել են անտառում:

Խոջալուի բնակիչներից Սուլեյման Աբբասովը Նախիջևանիկի ճանապարհի իրենց անցումից հիշում է ինչպես կրակոցները, այնպես էլ այն, որ իրենք հաղթահարել են այդ պատնեշը. «Կարճ կռիվ սկսվեց, որի արդյունքում մեզ հաջողվեց հաղթահարել այդ պատնեշը» («Завязался короткий бой, в ходе которого нам удалось пробить этот заслон»): Աբբասովի պատմածով այդ կռվից հետո իրենք կրկին մտել են Աղդամ տանող ճանապարհ, որից հետո ընկել են «դարանում թաքնված БТР-ների խաչաձև կրակի տակ», որտեղ ինքը վիրավորվել է [Բ-46; Ա-30, 28, Բ-33]: Բայց այդ ուղղությամբ Աղդամ տանող ճանապարհին այլևս հայկական բնակավայր չկար, չկային նաև հայկական դիրքեր: Դա Աղդամի տարածք էր և մինչև 1993 թ. եղել է ադրբեջանական ռազմական վերահսկողության տակ (տե՛ս քարտեզ 2, էջ 210):

Ըստ այս պատմողների «բախման ելքի» մասին դատողությունների՝ մի շարք հարցեր և պատասխանների տարբերակներ կան: Ինչքա՞ն ժամանակ են կրակել իրենց հանդիպողները՝ մինչև բոլորին ոչնչացնե՞ն, մինչև կենդանի մնացած բոլորը փախչե՞ն, փախչողներին հետապնդե՞լ են: Միվրարի Խալիլովայի պատմելով նրա մոտ «մի քանի մարդ սպանվեցին գնդակներից և ընկան: Կենդանի մնացածները կրկին նետվեցին անտառի խորքը», Սուլեյման Աբբասովի պատմելով՝ «Կարճ կռիվ սկսվեց, որի արդյունքում մեզ հաջողվեց հաղթահարել այդ պատնեշը»: Մյուսների պատմությունները կանգ են առնում կրակոցների վրա, ելքը չի երևում:

Նույն խմբի կազմում է եղել նաև Խոջալուի քաղաքագլուխը՝ Էլման Մամեդովը: Նա նույնպես անտառի կրակոցներ չի հիշում, փոխարենը նա չի ասում «հայկական Նախիջևանիկ գյուղի մոտ», ասում է՝ «Նախիջևանիկի դաշտերում». «Քաղաքի փոքրաթիվ պաշտպանները և կենդանի մնացած խաղաղ բնակչությունը նահանջեց անտառ՝ անցնելով սառը գետը: Ողջ գիշեր կանանց, երեխաների, ծերունիների, վիրավորների հետ անցնում էինք անտառով: Առավոտյան դուրս եկանք բացատ, այնուհետև **հայկական Նախիջևանիկ գյուղի դաշտերն էին** (ընդգծումը իմն է – Հ.Խ.): Այստեղ էլ մեզ դիմավորեց թնդանոթ-

ների և ավտոմատների կրակը: Ուժասպառ կենդանի թիրախներին անխնա կրակում էին դեմ հանդիման: Այստեղ իմ հայրենակիցներից, մտերիմներից, հարազատներից շատերն ընկան: Ավտոմատներով զինված ես և իմ յոթ ընկերները ջանում էինք նրանց ծածկել: Բայց անհաջող: Բոլոր կողմերից կտրված, մենք 12 ժամ կիրճում ձյան վրա պառկած էինք՝ կրակոցների պատճառով հնարավորություն չունենալով նույնիսկ գլուխները բարձրացնել» [Ա-30, 26]:

Քաղաքագլուխը չի խոսում այն մասին, թե ինչու՞ ինքը ընկավ/ընտրեց անտառով անցնող ճանապարհը և այդտեղով տարավ «քաղաքի փոքրաթիվ պաշտպաններին և կենդանի մնացած խաղաղ բնակչությանը»: Ով ով, բայց քաղաքագլուխը հաստատ գիտեր Ասկերանով Աղդամ տանող ճանապարհի միջանցքի մասին: Մի կողմ թողնելով այն, որ Նախիջևանիկի դաշտերում իրենց վրա կրակում էին թնդանոթից (նախիջևանիկցիները թնդանոթ չունեին, իհարկե, բայց արդեն մի քանի ավտոմատ ունեին, որ ավար էին վերցրել 1991թ. հունվարին իրենց վրա հարձակված աղդամցիներից և որոնք օգտագործում էին դիրքերում հերթի կանգնող ինքնապաշտպանական խմբերը), հերթով նայենք մի քանի այլ հակասությունների: Նախիջևանիկով անցած խոջալուցիները խոսում են կարճատև բախման կամ կրակոցների մասին, իսկ Սուլեյման Աբբասովի վկայությամբ «**կարճատև կովով պատնեշը հաղթահարել**» և անցել են՝ շարունակելով ճանապարհը, իսկ ահա քաղաքագլուխը՝ Էլման Մամեդովը, ավտոմատներով զինված իր յոթ ընկերների հետ 12 ժամ թաքնվել է ինչ-որ կիրճում, «կրակոցների պատճառով հնարավորություն չունենալով նույնիսկ գլուխները բարձրացնել»:

Նույն քաղաքագլուխը մեկ այլ տարբերակ ևս պատմել է. «Սառույցի սառնությամբ գետն անցնելուց հետո մենք գնում էինք Քյաթուկի սարի կողմը: Ճանապարհին անտառներում շատ մարդ զոհվեց սառչելուց: Գնացինք մինչև առավոտյան ժամը 7-ը, դուրս եկանք հայկական Նախիջևանիկ գյուղի մոտի դաշտը: Այդտեղ մեզ սպասում էին հայ ավտոմատավորները, թնդանոթաձիգները և ԲՏՐ: Ուժեղ կրակահերթով սկսվեց անզեն մարդկանց զանգվածային ոչնչացումը: Այստեղ շատ կանայք և երեխաներ զոհվեցին: Մարդկանց մի մասը գնաց Գյուլափլու գյուղի կողմը, և այնտեղ մոտ 200 մարդ պատանդ ընկավ հայերին: Մենք սկսեցինք ծածկել (прикрывать – այստեղ՝ կրակոցներով դիմադրել, ապահովել նահանջը – Հ.Խ.) կենդանի մնացած մարդկանց, և նրանց մի մասը հասավ Աղդամ: Ես իմ յոթ ընկերների հետ կարողացանք դուրս գալ շրջափակումից, ուշ էր, բայց մեր բախտը բերեց՝ մենք թաքստոց գտանք: Ժամը 9-ից մինչև երեկոյան 8-ը մնացինք այնտեղ: Եվ միայն երեկոյան, երբ սկսեց ձյուն տեղալ, դուրս եկանք և Աղդամ հասանք փետրվարի 27-ի առավոտյան» [Բ-83]:

Այս պատումում արդեն «թնդանոթներին և ավտոմատներին» ավելացել է ԲՏՐ-ը, այստեղ արդեն ասվում է «***шквальный огонь***», այսինքն շատ ուժեղ, հզոր, չընդհատվող կրակոցներ, ինչը փաստացի խիստ սուղ զենքի հնարավորություն ունեցող գյուղացիների դեպքում անհնար էր: Քաղաքագլուխն ասում

է. «Սկսվեց անզեն մարդկանց զանգվածային ոչնչացումը» (***Началось массовое истребление безоружных людей***): **Չնայած թե՛ նախորդ, թե՛ առկա պատումից երևում է, որ թե ինքն էր զինված, թե իր հետ այլ զինվածներ կային**: Այստեղ քաղաքագլուխը չի խոսում իր զոհված հարազատների մասին, և ինքն ու ավտոմատներով զինված իր յոթ ընկերները թաքնվել են ոչ թե կիրճում, այլ «մենք թաքստոց գտանք»-ում, բայց չգիտես ինչու այստեղ չկար 12 ժամ կիրճում թաքնված պատումի «կրակոցների պատճառով նույնիսկ գլուխները բարձրացնելու անհնարինության» մասին հիշողությունը: Փոխարենը այստեղ խոսվում է ինչ-որ շրջափակման մասին, որի մեջ ինքն ու ընկերներն ընկել էին: Եվ վերջապես շատ տարօրինակ է, որ քաղաքագլուխն իր զինված խմբի հետ թաքստոցից դուրս է եկել փետրվարի 26-ի երեկոյան ժամը 8-ին, իսկ Աղդամ հասել փետրվարի 27-ի առավոտյան: Այդ ճանապարհն ընդամենը 6–7 կմ է, հետիոտն գնալու դեպքում նույնիսկ հոգնած մարդկանց համար առավելագույնը երկու-երեք ժամվա ճանապարհ է: Ճանապարհին հայեր չկային, թաքնվելու կարիք չկար, խանգարող չկար: Իրենց հետ էլ կանայք, երեխաներ և, ինչպես երևում է՝ վիրավորներ չկային, ութ զինված տղամարդ էին: Եվ երկու պատմություններում էլ իսպառ բացակայում է Ալիֆ Հաջիևի մասին որևէ ակնարկ՝ չի եղել, չի տեսել, չի հիշում... Հիշում է կանանց ու երեխաների սպանությունները, «չի հիշում» կանանց ու երեխաների արանքից կրակող զինված մարդկանց, այդ թվում Ալիֆ Հաջիևի զոհվելը: Գլխավոր հարցն այստեղ այն է, թե ի՞նչ էր անում այս զույգը՝ ինքն ու Ալիֆ Հաջիևը Նախիջևանիկի ճանապարհին, ինչո՞ւ էին այնտեղ հայտնվել այն դեպքում, երբ նրանք հիանալի գիտեին Աղդամ տանող և հայերի կողմից հայտարարված այլ ճանապարհի մասին՝ ավելի հարմար, ավելի կարճ, ավելի անվտանգ, և ինչո՞ւ էին իրենց այդ արկածախնդրության մեջ ներքաշել խաղաղ բնակչությանը: Մարտի 2-ին Էլման Մամեդովն Աղդամում ասել է, և «Русская мысль»-ը մարտի 3-ին տպագրել է, որ իրենք գիտեին Աղդամ տանող միջանցքի մասին. «Մենք գիտեինք, որ այդ միջանցքը նախատեսված էր խաղաղ բնակչության դուրս գալու համար…»: Գիտեին, բայց խաղաղ բնակչությանն այլ ճանապարհով տարան: Ինչո՞ւ: Դրա վերաբերյալ հարցեր չեն տրվում:

Նախիջևանիկի ճանապարհով փետրվարի 26-ին և 27-ին անցել և առանց միջադեպերի Աղդամ են հասել խոջալուցիների տարբեր խմբեր, և միշտ հայկական դիրքում գյուղի ինքնապաշտպանները կանգնած են եղել: Փետրվարի 27-ի առավոտյան այդ նույն ճանապարհն անցել է, օրինակ, Խոջալուի միլիցիայի լեյտենանտ Շահիդ Մուրադովի գլխավորած փախստականների խումբը: Հայ ինքնապաշտպանները նրանց խնդրել են զենքերը վայր դնել և շարունակել իրենց ճանապարհը, բայց մերժվել են: «Դրանից հետո նրանք հեռացան մեր ճանապարհից: Մենք խաղաղ բնակիչների հետ գնացինք դեպի Աղդամ», — պատմել է Շահին Մուրադովը [Բ-68]: **Ինչո՞ւ Նախիջևանիկի ճանապարհին այն խումբն է հայերի հետ բախման «միջադեպի մեջ ընկել», որը Խոջալուի պարտությունից հետո բնակավայրից դուրս գալով մարդկանց համոզեց գնալ հենց այդ**

ճանապարհով: Խոջալուի բնակիչներից այդ ճանապարհն անցած խմբերից «Նախիջևանիկ գյուղի մոտ» ուրիշ ոչ մի ընդհարման պատմություն չկա Ադրբեջանում հրատարակված պատմություններում:

Փետրվարի հավանաբար 28-ին կամ 29-ին «Նախիջևանիկի դաշտի» կռվի վայրում են հայտնվել Ադրբեջանի պաշտպանության բանակի 1992թ. նորանշանակ հեռուստալրագրող Սեիդաղա Մովսումովը և Աղդամի Ժողովրդական Ճակատի դասակի հրամանատար Ալլահվերդի Բաղիրովը: Սա հենց նույն Ալլահվերդի Բաղիրովն է, որ փետրվարի 25-ին, Խոջալուի պաշտպանության օրը, ըստ կազմված ծրագրի, պիտի իր դասակով գնար գրավեր հայկական Փիրջամալ և Նախիջևանիկ գյուղերը: Այս զույգը Ասկերանի հայկական գումարտակի հրամանատար Վիտալի Բալասանյանի թույլտվությամբ մի խումբ ադրբեջանցի զինվորների հետ գնացել էր զոհերի դիակները հավաքելու: Սեիդաղա Մովսումովը դիակների մեջ տեսել է նաև Ալիֆ Հաջիևի դին. «...**տեսանք մեր շատ մարտիկների մարմիններ: Նրանք կռվել էին** (ընդգծումը իմն է – Հ.Խ.): Զգացվում էր, որ այդ հերոսները մինչև վերջ կռվել են խաղաղ բնակչությանը փրկելու համար: **Այնտեղ էր նաև Ադրբեջանի հերոսական որդի Ալիֆ Հաջիևի մարմինը** (ընդգծումը իմն է – Հ.Խ.): Ալիֆը հայերի դեմ կռվում շատ հերոսական էր: Նա Խոջալուում իր եղբայրների հետ մինչև վերջին պահը կռվել էր, իսկ քաղաքի պաշտպանությունից հետո ամեն ինչ արել է կենդանի մնացածներին թշնամուց պաշտպանելու: **Նահանջելիս անգամ հարձակվել է հայերի վրա: Նա է սարքել և ոչնչացրել Խոջալուի օդանավակայանը** (Ալիֆ Հաջիևը օդանավակայանի ՕՄՕՆ-ի ղեկավարն էր – Հ.Խ.): **Այն ժամանակ շատ հայերի, որոնք օդանավակայան էին գնում, դժոխք էր ուղարկել...** (ընդգծումը իմն է – Հ.Խ.): Բարեբախտաբար Ալիֆի փեշն ընկած էր նրա դեմքին, հայերը նրան չճանաչեցին, այլապես մեզ չէին տա նրա մարմինը» [Բ-107], — ասում է Մովսումովը: Այս նոր վկայությունն իր հերթին հակասում է «անզեն մարդկանց զանգվածային ոչնչացման» մասին քաղաքագլխի պատումին, և հաստատում, որ Նախիջևանիկի դաշտ հասած նահանջողների մեջ զինյալները քիչ չէին, առնվազն Մովսումովն ու Ալլահվերդի Բաղիրովը տեսել են «**շատ մարտիկների մարմիններ**», և նրանք կռվել են: Իսկ Ալիֆ Հաջիևի մասին ասված «**նահանջելիս անգամ հարձակվել է հայերի վրա**» արտահայտությունը վկայում է, որ նախահարձակ է եղել, և այդ մասին Սեիդաղան կարող էր նախապես իմացած լինել նաև այդ նույն խմբի Նախիջևանիկի դաշտով անցած և Աղդամ հասածներից: Եվ կրկին հարց է մնում՝ ինչո՞ւ այդ զինյալները նահանջող խաղաղ բնակչությանը տարան բոլորովին այլ ճանապարհով, ենթարկեցին գիշերը ցուրտ, ձյունապատ անտառով անցնելու տառապանքներին, հասցրին Նախիջևանիկ գյուղի ճանապարհ և, նրանց կյանքը վտանգի ենթարկելով, հրազենային կռիվ հրահրեցին իրենց բնակավայրը պաշտպանող մարդկանց հետ:

Թոմաս դե Վաալը, հղելով «ասում են»-ին, գրում է. «Ասում են, թե Հաջիևը մարդկանց համոզել էր փախչել Աղդամ՝ խոստանալով, որ իր օմօնական-

ները կուղեկցեն ու կպաշտպանեն նրանց: Գիշերը Խոջալուի բնակիչների բազմամարդ ամբոխը փախավ անտառներով՝ մինչև ծնկները հասնող ձյան միջով իջնելով դեպի Գարգար գետակի հովիտը (Թոմաս դե Վաալը կամ չգիտի, կամ չի ուզում ասել, որ Խոջալուի բնակիչների մեծ մասը գնացել են Ասկերանով Աղդամ հատկացված միջանցքով – Հ.Խ.): Վաղ առավոտյան Խոջալուի բնակիչների ամբոխն ու նրանց ուղեկցող մի քանի օմօնականներ անտառից դուրս եկան բաց տարածք՝ հայկական Նախիջևանիկ գյուղի մոտ: Այստեղ նրանց դիմավորեց բլրի վրա տեղակայված հայ մարտիկների բացած կրակը: Օմօնականները պատասխան կրակ բացեցին, բայց ուժերը խիստ անհավասար էին, ու նրանք սպանվեցին» [Ա-37, 170]: Հարց չտանք Թոմաս դը Վաալին, թե «նրանք»՝ ովքե՞ր սպանվեցին, օմօնականնե՞րը, Խոջալուի բնակիչների ամբո՞խը, բոլո՞րը: Որտեղի՞ց է նրան հայտնի «**մի քանի օմօնականների**» մասին, ի՞նչ է նշանակում «մի քանի»՝ 5, 10, 20 մարդ, «**Նախիջևանիկ գյուղի մոտ, բլրի վրա տեղակայված հայ մարտիկների բացած կրակի**», «**խիստ անհավասար ուժերի**» մասին, և առհասարակ գիտի՞ արդյոք նա, թե որտե՞ղ է Նախիջևանիկը: Որևէ մեկը նրան «չի՞ ասել», թե որքան էին «**հայ մարտիկները**», ովքե՞ր էին նրանք, առհասարակ «մարտիկնե՞ր էին» գյուղացիները, ի՞նչ զենք ունեին այդ «մարտիկները» փորձառու օմօնականների դեմ: Ես այդ հարցերը տվել եմ և պատասխանները լսել՝ կա՛մ «չգիտեմ», կա՛մ «ասում են»: Հնարավոր է՝ նրան «ասել են» նաև, որ «բլրի վրա տեղակայված հայ մարտիկների» թիվը գերազանցում էր «մի քանի օմօնականներին», և որ հայ մարտիկները օմօնականներից ավելի լավ էին զինված, ավելի փորձառու էին: Թոմաս դը Վաալը ո՛չ Նախիջևանիկի տեղը գիտի, ո՛չ այդ գյուղի բնակիչների մասին որևէ տեղեկություն ունի, ո՛չ պատկերացում ունի այն մասին, թե այդ ի՞նչ «բլուր» էր գյուղի մոտ, որի վրա «տեղակայված» հայ մարտիկներ կային, որտեղի՞ց էին նրանք այնտեղ հայտնվել: Ինքն է գրել, որ խոջալուցիները դուրս են եկել «բաց տարածք՝ հայկական Նախիջևանիկ գյուղի մոտ», ուրեմն որտեղի՞ց հայտնվեց «բլուրը»: Տարօրինակ է, որ նա ո՛չ ինքն իրեն, ո՛չ իրեն «ասողներին», ո՛չ որևէ մեկի չի հարցրել, թե ինչո՞ւ նահանջողները հատկացված նորմալ ճանապարհը թողած գնացին Նախիջևանիկի ուղղությամբ, ինչո՞ւ Հաջիևը նրանց խոստացավ օմօնականների հետ օգնել այդ ուղղությամբ գնալու դեպքում, և վերջապես ինչպե՞ս օգնեց:

Իրականությունն այն է, որ «Նախիջևանիկի մոտ» արտահայտությունը մարդկանց շեղում է բախման իրական վայրից: Խոջալուից Նախիջևանիկ գնացող ճանապարհին **մի բլրի մոտ իսկապես բախում եղել է, միայն թե այդ բլուրը Նախիջևանիկի մոտ չէ, այդ բլուրը Ասկերան-Նախիջևանիկ ճանապարհին է՝ Նախիջևանիկ չհասած**, դրան դեռ կանդրադառնանք: Նրան, ցավոք, չի հետաքրքրել նաև, թե ի՞նչ կարող էին «ասել» Նախիջևանիկում ապրող «հայ մարտիկները» կամ ուղղակի գյուղացիները: Գուցե նրա՞նք էլ «ասեին», գուցե նրա՞նց էլ արժեր լսել: Այս ամենը չիմացող Թոմաս դը Վաալի գրածին հղում են անում այլ գրողներ և տիրաժավորում սխալ մեկնարկածը:

■
Ի՞ՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ՆԱԽԻՋԵՎԱՆԻԿՈՒՄ 1992 Թ. ՓԵՏՐՎԱՐԻՆ ԱՊՐԱԾ ԵՎ ՓԵՏՐՎԱՐԻ 26-ԻՆ ԴԱԾՏԻ ԿՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Տխուր է, իհարկե, որ ոչ ոք երբեք չի հետաքրքրվել ադրբեջանական պատումներում այդքան շատ շրջանառվող Նախիջևանիկ գյուղի գտնվելու վայրով, գյուղի բնակիչներով և նրանց տեսածներով կամ արածներով: Վերջ ի վերջո «մեղադրվող կողմն» էլ խոսելու իրավունք ունի:

Նախիջևանիկ գյուղը, ինչպես վերն ասվեց, Խոջալուից մոտ 6 կմ հարավարևելք, Ասկերանից՝ 7 կմ հարավ ընկած հայկական գյուղ է, կտրված Ասկերան-Աղդամ տանող հիմնական ճանապարհից: Նախիջևանիկը հյուսիսից և արևելքից սահմանակցում է Աղդամի ադրբեջանական գյուղերին: Աղդամի ադրբեջանական գյուղերի բնակչության հետ նախիջևանիկցիները լարված հարաբերություններ ունեին 1988 թ. սկսած, իսկ 1991 թ-ից հետո նրանց համար դեպի Աղդամ ճանապարհը փաստացի փակ էր հաճախակի հարձակումների, գյուղից առևանգված պատանդների և այլ պատճառներով: 1990 թ. սպանվել էր գյուղի հովիվ Մեխակը, նույն թվականի աշնանը հարևան Ղասմլու ադրբեջանական գյուղից միանգամից առևանգել էին դաշտում աշխատող 13 մարդու, 1991 թ. հունվարի 30-ին հարձակվել էին Ասկերան թաղում գնացող մարդկանց մի խմբի վրա և այլն: Այս դեպքերը առիթ էին հանդիսացել, որ գյուղի տղամարդիկ կազմակերպեին ինքնապաշտպանական խմբեր և հերթապահությամբ հսկեին գյուղ տանող ճանապարհները: Հենց այս մարդկանց է, որ ադրբեջանական տեքստերում կոչում են «հայկական բանդիտական կազմավորումներ»:

Ադրբեջանական տեքստերի մեծ մասում ասվում է, որ «Խոջալուի բնակիչների մեծ մասը շարժվեց այն ճանապարհով, որը տանում էր սակավաջուր գետի մյուս ափը, արևածագին մոտ լեռներով հասան Նախիջևանիկի մոտի բաց դաշտ, որն այն ժամանակ գտնվում էր հայերի վերահսկողության տակ»: Ոչ ոք չի հետաքրքրվում, թե ինչո՞ւ նրանք գնացին այդ՝ ոչ մեկի կողմից չնախատեսված ուղղությամբ: Ի՞նչ է նշանակում «հայերի վերահսկողություն»: Տպավորություն է ստեղծվում, որ գյուղում հայկական ռազմական կազմավորում կար: Իրականում Նախիջևանիկը ոչ թե հայկական վերահսկողության տակ էր, այլ պարզապես հայկական գյուղ էր, գյուղացիները դեռևս ապրում էին իրենց գյուղում, և նրանց տղամարդիկ կամավորական ինքնապաշտպանական ջոկատներով հսկում էին

իրենց գյուղի սահմանները՝ հարձակումների դեպքում գյուղի բնակչությանը պաշտպանելու համար: Իսկ այդպիսի հարձակումներ լինում էին ոչ միայն հարևան ադրբեջանական գյուղերից, այլ նաև Աղդամից եկող զինված կազմավորումների կողմից: Այդպիսի մի հարձակում Աղդամի Ժողովրդական Ճակատի մարտիկների կողմից, օրինակ, եղել էր 1991թ. հունվարին:

Նախիջևանիկում գիտեին, որ փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը հայերը փորձելու են գրավել Խոջալուն, և հրահանգ ունեին գիշերը ինքնապաշտպանական ջոկատներով կանգնել գյուղ տանող ճանապարհին, քանի որ չէր բացառվում, որ Աղդամից կարող էին Խոջալուի պաշտպանության ռազմական ուժեր ուղարկվել նաև այդ ճանապարհով: Նրանց խնդիրն էր փորձել կասեցնել այդ օգնությունը Խոջալուին: Ինչպես տեսանք Աղդամի շտաբում ադրբեջանցիների կազմած ծրագրից, փետրվարի 23-ին իսկապես հայկական գյուղերի, մասնավորապես նաև Նախիջևանիկի վրա հարձակումը Աղդամից նախատեսված էր: Ծրագրավորվել էր, որ Ադրբեջանի Ժողովրդական Ճակատի ներկայացուցիչ Ալլահվերդի Բաղիրովի գլխավորած տարածքային պաշտպանության դասակը պիտի շարժվեր Աղդամ–Ղասըմլի[38]–Նախիջևանիկ գյուղերի ուղղությամբ, գրավեր Նախիջևանիկ և Փիրջամալ հայկական գյուղերը: Այդ մասին նախիջևանիկցիներն, իհարկե, կոնկրետ չգիտեին, բայց այդ հավանականությունը միշտ կար:

Նախիջևանիկում, սակայն, չէին սպասում, որ գրավված Խոջալուի բնակչության մի մասը կանցնի իրենց գյուղ տանող ճանապարհով: Դա անակնկալ էր բոլորի համար: Այն դժվար, վատ ճանապարհ էր: Նրանք գիտեին նաև, որ դուրս եկող խոջալուցիների համար մարդասիրական միջանցք կա հայտարարված՝ Ասկերանով Աղդամ տանող նորմալ ճանապարհը, որը կարճ էր ու հարմար:

Փետրվարի 25-ի և հաջորդող օրերի մասին նախիջևանիկցիները պատմում են.

Առաջին պատմող – Նախիջևանիկ գյուղի բնակիչ

«Խոջալուի գրավման ժամանակ մենք ճանապարհին հինգերորդ պոստ էինք ասում, այդտեղ էինք կանգնած: Ճիշտն ասած, այնքան էլ չէինք հավատում, որ մերոնք Խոջալուն կվերցնեն: Չէինք հավատում, որովհետև տեսնում էինք, թե քանի հատ քաղաքացիական վերտալյոտներ էին Խոջալու մտնում: Հասկանալի ա ինչ պիտի տանեին. սննդամթերք, վառելիք, զենք, զինամթերք էին տանում Խոջալու: Մարդիկ էին տանում: Խոջալուում ահագին օմօնականներ կային, մի մասին նույնիսկ ճանաչում էինք:

---

[38] Ղասըմլը - Ադրբեջանի Աղդամի շրջանի ադրբեջանաբնակ գյուղ է, 1893թ. փոքր գյուղակ էր, կոչվում էր Կասըմ-բեգլի, մեկն էր Շելլի համայնքի 6 գյուղական բնակավայրերից, ուներ 126 բնակիչ, բոլորը՝ շիա թաթարներ [Բ-21, №1331]:

Ստեփանակերտից մեկը եկավ, թե բա էս գիշեր՝ փետրվարի 25-ին, պիտի Խոջալուն վերցնենք: Էտ օրը մեր հերթափոխի օրն էր, մի հինգ-վեց հոգով գյուղի ներքևի մասում կանգնած էինք: Երևում էր, որ գիշերը կրակում էին, <Խոջալուի կողմից> ձենները գալիս էր: Առավոտ դիրքերից եկանք գյուղ, որ նախաճաշենք, համարյա թե չհասցրեցինք էլ նորմալ նախաճաշենք, մեկ էլ գյուղի զանգը հնչեց: Հավաք էր: Հավաքվեցինք, թե բա գնում ենք պոստ, Խոջալուն արդեն հանել են, մարդիկ մեր գյուղի կողմ են գալիս: <Մեզ հայտնեցին>, որ հետները զինյալներ կան, հրաման են տվել, որ մոտենան՝ պիտի առաջարկենք, որ էտ զինյալները զենքերը հանձնեն: Խաղաղ բնակչությանը բաց ենք թողնում: Ռացիա ունեինք, էդ ռացիայով Ասկերանից ասել էին՝ բաց եք թողնում գնան: Փետրվարի 26-ն էր արդեն: Իջանք էտ 5-րդ պոստի վրա, էնտեղից ուղիղ ճանապարհ կար Աղդամ: Խրամատում կանգնած ենք, տեսնում ենք կանոն ա գալիս քաղաքացիական շորերով: Իրանց զինյալները խաղաղ բնակչությունից ոնց որ պատնեշ կազմած էին: Հա, սաղ երևում էին՝ կանայք, երեխաները, բանիկները: Բանիկները կամուֆլյաժով էին, հետները գնդացիր էլ ունեին: Ժողովրդի մեջից դրանք սկսեցին կրակել: Իրանք էտ խաղաղ բնակչության մեջից կրակում էին: Մերոնցից երկուսը սպանվեցին: Մեկը Արամի եղբայրն էր, մեկն էլ հարևանս էր, անունը Աշոտ: Դե իրանք որ կրակում էին՝ ի՞նչ պիտի անեինք, կրակելով պիտի պատասխանեինք: Մենք խրամատում էինք եղել, ժամանակ ա եղել, որ գլուխներս չէինք կարում հանեինք: Մի հատ ԲՏՌ ունեինք, տղորանցից էլ մի քանի հոգի հետևից նստան ԲՏՌ: ԲՏՌ-ից էլ էինք կրակում, իրանք էլ էին կրակում: Ջոհեր էլ եղան, վիրավորներ էլ եղան: Խաղաղ բնակիչներից էլ, հա: Իրանք էտ խաղաղ բնակչությանը որպես պատնեշ օգտագործելով դուրս եկան: Անցան գնացին, հետո էլ որոշ ժամանակ հետո է՛լ ավտոմատ, է՛լ պուլիմյոտ, դըռ հա դըռ, դըռ հա դըռ: Չէինք հասկանում ով ում վրա է կրակում, մեր դիրքից հետո հայկական դիրք չկար, հայկական գյուղ էլ չկար, էտ ովքե՞ր էին կրակում, ո՞ւմ վրա էին կրակում: Բայց ձայները պարզ լսվում էր՝ ավտոմատով, մեկ էլ գնդացիրով էին խփում: Ուղտասարի մոտից էր: Իրանց բնակչության վրա կրակում էին դեմից: Իրանք էտ Շելլի գյուղի մոտից կրակում էին, դե մարդիկ էլ ով ոնց կարողացել է՝ փախել է, լցվել է անտառները: Էտ անտառները լիքն էին փախստականներով: Դա սկի դիտակետ չէր, մի թեթև նայել ենք ինչ կա, ինչ չկա: Դրանից առաջ չգիտեինք էլ, որ դրանք էնդեղ դիրքավորվել են:

Հա, մեզ ասվել էր, որ Աղդամի ուղղությամբ միջանցք ենք տվել, որ դուրս գան, բայց զարմանալու բան չկար, <որ մեր ճանապարհով էլ են եկել>: Էն ժամանակ ով ոնց կարողացել ա՝ դուրս ա եկել: Օրինակ, կային, որ խաղաղ բնակիչների խմբավորումներ են եղել, մեր տղերքը հանդիպել են, բերել են Ասկերան, հետո բաց են թողել Աղդամի ուղղությամբ: Էս հարևան գյուղում անտառներում էնքան մոլորված մարդիկ են եղել, մերոնք բռնել բերել են, հետո սաղին հավաքել տարել են Ասկերան, ընդեղից բաց են թողել: Բայց ինչի՞ էին իրանք

իրանց բնակչության վրա կրակում: Հետո էլ փետրվարի 27-ին երևի մի 200 հատ «Գրադի» սնարյադ են բաց թողել մեր գյուղի վրա: Մի հատ մարդ մահացավ: Էն կինոներում որ ցույց ա տալիս, է, որ արկը պայթում ա՝ մարդը եսիմ քանի մետր բարձրանում ա, այ էտ ձևի: Մի 10 զալպ թխել են, չէ, մի 5 զալպ: Ճիշտ ա՝ գյուղում համարյա մարդ չկար, Նախիջևանիկից կին-երեխա սաղ գնացել էին Փրջամալ, մեր կողքի գյուղն ա, ճանապարհից մի քիչ կողք ա, փակ գյուղ ա: Մի քանի օր ընդեղ են մնացել»[39]:

Երկրորդ պատմող – Նախիջևանիկ գյուղի բնակիչ

«Խոջալուի դեպքի ժամանակ մեր գյուղի տղերքի կամանդիրը ես եմ եղել: Վիտոն (Վիտալի Բալասանյան – Հ.Խ.) Ասկերանի կամանդիրն ա եղել, ասել ա Խոջալուն դուրս ա կյամ: Իրանց ճանապարհ տված ա, որ անցնեն գնան, բայց ասել ա ձեր գյուղերը պահեք: Գիշերը կանգնեք՝ մի բան չպատահի: Հետո տեսանք՝ Խոջալուից շատերը եկել են մեր կողմը, գրուպա-գրուպա գալիս են: Բաց ենք թողնել, անցել են դեպի թուրքի կողմը, Շելլիի կողմը: Գրուպայա եղել, ավտոմատչիկները մեջին, խաղաղ ժողովուրդը խելապատառ եկել ա, որ գնա, գրուպի մեջ էլ ավտոմատչիկներ, ու եթե ավտոմատչիկների միջից կրակող եղել ա մեր վրա, արդեն մենք էլ ենք կրակել: Կրակը ընդեղից ա գալիս, արդեն պիտի կրակես, էլի: Բայց շատ գրուպա եկել ա, մեր վրա չեն կրակել, գնացել են, անցել են, բաց ենք թողել, քյացել են: Մերոնց վրա կրակել են 5-րդ պոստի մոտ, մերոնք էլ էնդեղ իրանց վրա են կրակել: Մեր մյուս պոստում, ֆերմայի մոտ, որտեղ ես էի, առհասարակ ոչ մի մարդ չի սպանվել, ոչ մի զոհ չկա: Մենք ֆերմայի մոտ էինք էդ ժամանակ, ֆերմայի մոտ թուրք չի սպանվել, մեր վրա իրանք այնտեղ չեն կրակել, մենք էլ չենք կրակել, անցել գնացել են: Մենք՝ ֆերմայի մոտի մեր պոստը սարի էս կողմն ա, իրանք անցել գնացել են, սարի էն մյուս կողմում՝ Շելլիի կողմում են իրանց սպանել: Բաց ենք թողել, քյացել են Շելլիի պոստը, թուրքերը իրանք իրանց թուրքերին կոտորել են: Ավտոմատով, պուլիմյոտով կոտորել են իրանց թուրքերին: Իմ կարծիքով իրանք չեն շփոթել հայերի հետ: Շփոթելու բան չկար, մենք էդպես խելապատառ թուրքի պոստ չէինք գնա, իրանք էլ գիտեին: Էն որ տելեվիզորով ցույց են տալիս, է, դա լոխ իրանց պոստի մոտ ա եղել: Դա թուրքի, Աղդամի հողն ա, մեր հողը չի, սարի էն կողմնա եղել: Հետո իրանք եկել են վերտալյտով <դիակները> տարել: Հետո էլ անտառներում սպանվածներին են ցույց տալիս: Անտառներում շատերը զոհվել են, կամ սպանվել են սարի էն մյուս, թուրքական կողմում: Էնդեղ հայեր չկան: Մեր կողմի սարերում էլ են զոհվել իհարկե, բայց հիմնականը թուրքի կողմի սարի լանջի անտառներում են մնացել: Սառել են, թե կրակել են, թե ինչ ա եղել՝ շատը էնդեղ ա եղել, գրուպաների մեծ մասը էնդեղով՝ իրանց անտառներով ա անցել: Իմանալով են կրակել, հաստատ: Պատճառը չեմ կարա ասեմ, բայց կարամ կարծիք ասեմ: Իրանք՝ <փախչողնե-

[39] Գրուցել է Գոհար Մխիթարյանը:

ը> իսկական թուրքերը չեն, մեսխեթցի թուրքերն են, երևի էլ արդեն հարկավոր չէին իրանց: Օրինակ, հայը կնոջ վրա չի կրակի, երեխու վրա չի կրակի, ծերի վրա չի կրակի, հասարակ գրաժդանսկի մարդկանց չի կրակի: **Բա մտածելու բան չի՞, թե խի են իրանց էստեղով տարել: Իրանց ճանապարհ էին տվել, ինչու՞ էնտեղով չեն տարել: Պատճառ ունեցել են, չէ՞**»[40] (ընդգծումը իմն է – Հ. Խ.):

Երրորդ պատմող – Նախիջևանիկ գյուղի բնակիչ

«Խոջալուի <գրավման> ժամանակ մենք մեր դիրքերում էինք: Գիտեինք, որ եթե մերոնք գրավեն Խոջալուն, խոջալուցիները պետք է Ասկերանով Աղդամ գնային: Մեզ ասել էին, որ կանգնենք գյուղի պաշտպանության դիրքերում: Ես ֆերմայի մոտ էի: Գիշերը տեսանք մեր գյուղ տանող ճանապարհով գալիս անցնում էին: Մեր պոստի մոտ կրակոցներ չեն եղել, մարդիկ անցել գնացել են»[41]:

Չորրորդ պատմող – Նախիջևանիկ գյուղի ամուսիններ

«Մենք Խոջալուին չենք մասնակցել, որովհետև մեզ ասել են՝ դուք ձեր գյուղը պահեք: Ստեղից ոչ մեկին չեն տարել, որ Խոջալուի գրավմանը մասնակցեն: Մենք հաջորդ օրն ենք իմացել, որ նրանց մի մասն եկել են էս անտառները: Էդ մարդիկ պիտի Ասկերանով գնային Աղդամ, մոլորվել են՝ մեր գյուղի մոտով էին գնում: Ձյուն էր, մենք տեսել ենք, որ գիշերվա ընթացքում մարդիկ են անտառով անցել: Խմբերով մեր գյուղի մոտով էլ են անցել, մի 5 կիլոմետր էն կողմ թուրքական գյուղեր են, մեր գյուղով անցել են՝ փրկվել: Միջանցք ա տված եղել թուրքերին, իրանք թե շեղվել են, թե ոնց են ճանապարհից դուրս եկել: Առավոտյան հա, ընդհարում ա տեղի ունեցել: Մերոնք տեսել են, որ զինված օմօնականներ են, կանացի շորերով՝ տարբեր, նույնիսկ իրենց <զինվորական> շորերով էլ են եղել, գալիս են դեպի մեր պաշտպանական դիրքերը: Իրանք իրենց ժողովրդին ուղեկցել են: Կրակոցներ են եղել: Սարուխանյանի հորեղբայրը մեր առաջին զոհն ա եղել էդ ժամանակ: Մեր պոստերում տեսել են իրան, սպանել են, արդեն մերոնք սկսել են կրակել իրանց վրա: Գյուղի բնակիչ էդ կրակոցներից մոտ 7 – 8 հոգի զոհվել ա: Ամենաշատ զոհը, որ գյուղը տվել ա, դա Խոջալուն որ վերցրել են, հաջորդ օրն իրանց ամբողջ հրետանին մեզ վրա են կրակել, մուռը հանել: Ամեն տեսակի զենքերից կրակել են Աղդամից: Մենակ 4 երիտասարդ տղաներ էդ օրն են զոհվել: Մեր ազատամարտիկները որոշ մարդկանց գերի են վերցրել: Ես լսել եմ, որ մայր ու որդի են գերի վերցրել, մի ծեր մարդու են վերցրել, բայց չեն կոտորել, տարել են Ասկերան հանձնել, հետո նրանց փոխանակել են մեր գերիների հետ: Էդ գերիների մեջ օմօնականներ են եղել, էդ կանանց հետ, կանանց շորեր հագած, իրանց հետ, որպեսզի անցնեն էդ միջանցքով»[42]:

---

[40] 1960 թ. Նախիջևանիկում ծնված տղամարդու հետ իր տանը զրուցել է Արսեն Հակոբյանը:

[41] 1963թ. ծնված տղամարդու հետ զրուցել է Ձարուհի Համբարձումյանը:

[42] Ամուսինների հետ զրուցել է Շուշան Սարատիկյանը:

Հինգերորդ պատմող – Նախիջևանիկի հարևան Փիրջամալ գյուղի բնակիչ, տղամարդ, 1992թ. փետրվարի 25-ի գիշերը մասնակցել է Նախիջևանիկ գյուղի պաշտպանությանը

«Մերոնք որ Խոջալուն պիտի վերցնեին, իմ հրամանն ա էղել Ասկերանից մինչև ստեղ էդ ճանապարհը վերահսկել, որ թշնամին Աղդամից չհարձակվի մեր վրա: Աղդամից, Շելլիից որ մեր կողմից հարձակվեն Ասկերանի վրա, մենք պետք է պաշտպանենք <մեր գյուղերը>: Մենք չգիտեինք, որ Խոջալուից դուրս եկած թուրքերը մեր գյուղերի մոտով են անցնելու: Նրանց ճանապարհ էր տրված Ասկերանի միջով Աղդամ գնալ: Ես գիտեի, որ հրաման կա խաղաղ բնակչությանը ձեռք չտալ, ճանապարհը թողել բաց, սապոավաժդատ անել [ուղեկցել], թող գնան, հլա օգնել, թող գնան, խաղաղ բնակչությանը բաց թողենք: Գիշերը երբ որ տեսանք մեր ճանապարհով են գնում, ես հինգերորդ պոստումը կանգնած միկրաֆոնով խոսել եմ թուրքերեն, ռուսերեն, ավելի շուտ ռուսերեն, հայերեն, խնդրել եմ, որ դուրս եկեք, առանց արգելք գնացեք: Ու դուրս են էկել: Դա 2–3 սուտկա քաշել ա: Փետրվարի 27-ին, 28-ին, 29-ին, անտառներում թաքնվում էին, մեկը վախենում ա գա, մեկը սպասում ա, մեկը արդեն սովածանում ա, գալիս ա, մեկը մրսում ա: Էդ ժամանակ էլ ձյուն էր էղել: Գալիս էին, կանանց բերել ենք, ստեղ չայ ենք տվել, կերակրել ենք (կինը միջամտում է՝ «էդ ընթացքում մենք դաժե վախենում էինք տների մեջը, որովհետև զինված մարդիկ էլ կային իրանց մեջ»): Դե զինվածները, օմօնը, դրանցից ով զենք ուներ, դիմադրում էր՝ ոչնչացնում էինք… բայց խաղաղ բնակչությանը, կանանց բերել ենք, չայ ենք տվել, կերակրել ենք: Մեր գյուղի ակումբի մոտի գարաժներում էինք պահում մի քանի օր: Կանայք ադիալ-մադիալ են տվել: Ով ցանկացել ա, կարողացել ա՝ ոտով իջել ա <Աղդամ>, ով չի կարողացել՝ տարել ենք Ասկերան, հանձնել: Ճանապարհին ընկած դիակներ շատ եմ տեսել: Հետո թուրքերը վերտալյոտով իջել են, իրանց դիակները հավաքել, տարել են: Բայց դիակները մի տեղ չէին, տարբեր տեղ էին, որը սնարյադից, որը հայի կրակոցից, որը թուրքերը իմացել են, թե մերոնք են հարձակվում՝ կրակել են: Տարբեր, ես չեմ կարա մանրամասնը, իսկականից չգիտեմ»[43]:

Այս մարդու հետ երկար ենք զրուցել: Միասին գնացել ենք նայելու գյուղի «մի քանի օր գարաժներում» մարդկանց պահման վայրը: Մարդու պատմելով այդտեղ եղել են մինչև 80 մարդ: Մեր հարցին՝ թե քանի՞ մարդու են թույլ տվել միանգամից ինքնուրույն Աղդամ գնալ, պատասխանեց. «Թողել ենք հատուկ կարիք ունեցողներին: Լավ հիշում եմ, մեկը եկավ ասեց աղջիկս հղի է, թողեք մինչև ծննդաբերելը գնանք հասնենք Աղդամ: Լավ, բարի մարդ էր, հայերեն էլ խոսում էր: Դե հո չէինք պահելու, եթե հատուկ կարիք ունեին և կարող էին գնալ՝ թողնում էինք գնան: Առնվազն 6 կամ 7 մարդ էդպես գնացել են: Բայց զենքն

[43] Փիրջամալում ապրող տղամարդու պատմությունը գրանցել են Հ.Խառատյանը և Հ.Զոհրաբյանը:

արդեն իրենցից վերցրել էինք»: Հարցին՝ թե միջադեպեր, բախումներ չե՞ն եղել այդ ընթացքում, պատասխանեց. «Պահակներ էինք դրել, մեր գյուղացիները չէին կարող հետները շփվել: Ուտելիքն էլ էին պահակների միջոցով փոխանցում: Մեր պահակ տղաներից մեկը եկավ ասեց, թե մի կին ուզում է ինձ հետ հանդիպել: Էտ կինը եկավ: Գեղեցիկ, երիտասարդ կին էր, անունն էլ եմ հիշում՝ Մամեդովա Սահդա Ջալիլ կըզը: Եկավ ասեց, որ կանայք վախենում են բռնաբարությունից, որ էտպիսի վտանգ են զգում: Հանգստացրի, ասացի, որ անձամբ կհետևեմ: Մեր տղաներին խիստ զգուշացրեցի՝ ծանր պատիժներ կստանաք»:

Վեցերորդ պատմող – Նախիջևանիկ գյուղի բնակչուհի

«Մերոնք պոստերում կանգնած են եղել: Դրանք գալիս անցնում էին, բայց առավոտը կրակել են մերոնց վրա: Այդտեղ կռիվ է ընկել, մերոնցից երկու երիտասարդ այդտեղ մահացել են: Մեկը Աշոտն էր, Յուրայի տղան: Յուրան էլ հաջորդ օրը մահացավ, թուրքերը եկել մեր գյուղը վերտալյոտով կրակում էին: Մենք մեղավո՞ր էինք, որ Խոջալուն գրավել են: Մուռը մեզնից էին հանում: Մեր գյուղի ժողովուրդը փախել է կողքի գյուղերը: Ես գնացել եմ Վարդաձոր (Փիրջամալ): Այնտեղի ակումբում այդ փախստական թուրքերից կանայք ու երեխաներ կային: Գերի չէին, ուղղակի փախչող մարդիկ էին, մոլորված, վախեցած: Հետո մի մասը գնաց Աղդամի կողմը, մյուսներին էլ տարան հանձնեցին, երևի Ասկերան, կամ Ստեփանակերտ: Մեր գյուղում չկային, որովհետև մեր գյուղը թուրքերը գնդակոծում էին, մենք էլ չէինք մեր գյուղում մնում: Արմենն ու Սարուխանյան Հայկը զոհվել էին՝ երկուսին միասին տարան թաղեցին: Արմենը 86 տարեկան էր, Հայկը՝ 26: Վերտալյոտից մեր վրա կրակում էին՝ չէինք կարողանում էդ մարդկանց տանել թաղել: Հիմի եկել են նկարահանել, դիակներ են ցույց տալիս, ասում են՝ «Նախիջևանիկի մոտ»: Ախր դա մեր գյուղի տարածքը չի, Աղդամինն ա, թուրքինն ա: Բայց անընդհատ խոսում են՝ «Նախիջևանիկի մոտ, Նախիջևանիկի մոտ»: Սուտ: Նախիջևանիկի տարածքում էլ է մարդ սպանվել, թող նրանց ցույց տան: Բայց Նախիջևանիկի տարածքում դիակները շատ չէին, հետն էլ ոչ մեկը այդ դիակները չէր այլանդակել, ինչո՞ւ ցույց տան: Իրանց արածը ցույց են տալիս, ասում են՝ Նախիջևանիկի մոտ»[44]:

Մեր հետազոտական խումբը մի քանի անգամ անցել է Ասկերանից Նախիջևանիկ տանող ճանապարհով: Հայկական 5-րդ դիրքը, որտեղ տեղի է ունեցել ընդհարումը, գտնվում է Ասկերանից մոտ 3 կիլոմետր հեռավորությամբ, Նախիջևանիկ գյուղին պատկանող դաշտում՝ գյուղ չհասած, մոտ 4 կիլոմետր հեռավորությամբ մի բլրի լանջին: Ասկերանից Նախիջևանիկ տանող ճանապարհի հենց այս 3 կիլոմետր հեռավորության հատվածի բլրի մոտից մի փոքր ճանապարհ շեղվում է դեպի Շելլի-Աղդամ: Բախումը տեղի է ունեցել հենց այդ շեղ-

[44] Գալյա Սարուխանյանի հետ զրուցել է Գոհար Ստեփանյանը Նախիջևանիկ գյուղի իր տանը:

վող հատվածում: Տարածքը գտնվում է Նախիջևանիկ գյուղին պատկանող դաշտում, հենց ճանապարհի մոտ, բայց Նախիջևանիկ գյուղից մոտ 4 կիլոմետր, Աղդամի ադրբեջանական Շելլի գյուղից 2–2.5 կիլոմետր հեռավորության վրա (տե՛ս քարտեզ 3, էջ 211):

Իրականում Նախիջևանիկի ճանապարհին գտնվող հայկական 5-րդ դիրքի մոտով անցել է ոչ միայն այս խումբը: Փախստականների հոսքը խմբերով նույն ճանապարհով շարունակել է անցնել, նրանք թեքվել են դեպի Շելլի և առանց միջադեպերի հասել են Աղդամ թե փետրվարի 26-ին, թե փետրվարի 27-ին, և միշտ հայկական դիրքում գյուղի ինքնապաշտպանները կանգնած են եղել: Փետրվարի 27-ի առավոտյան այդ նույն ճանապարհին անցած Խոջալուի միլիցիայի լեյտենանտ Շահին Մուրադովը իր գլխավորած փախստականների խմբի անցման մասին պատմել է «Azerbaycan» թերթին Խոջալուի գրավման 5-րդ տարելիցին՝ 1997 թ. փետրվարի 26-ին: Շահին Մուրադովը մի խումբ մարդկանց հետ փետրվարի 26-ի ցերեկը, իր պատմածով, դիրքավորվել է Խոջալուի ծայրամասի հինգ հարկանի նորակառույց շենքի ներսում և 12 ժամ, մինչև մութն ընկնելը, դիմադրել հայերի գրոհներին. «Մութը դարձավ մեր փրկարարը: Լիակատար խավարի մեջ մենք դուրս եկանք տնից: Հայերը չկարողացան կանգնեցնել մեզ: Մեզ հետ վերցնելով խաղաղ բնակիչներին՝ մենք ճանապարհ ընկանք դեպի Աղդամ: Հասանք Նախչավանիկ գյուղ և հանդիպեցինք հայերի հետ (իրականում «Նախիջևանիկ գյուղ» չեն հասել, ինչպես փախստականների որևէ այլ խումբ չի հասել, «Նախիջևանիկ գյուղ» ասելով միշտ նկատի ունեն նրան պատկանող տարածք–Հ.Խ.): **Նրանք ասացին, որ եթե զենքներս վայր դնենք ու հանձնվենք, մեզ ողջ բաց կթողնեն դեպի Աղդամ: Սա հայկական հնարք էր: Մենք լավ գիտեինք, որ եթե զենքը վայր դնենք, մեզ կոչնչացնեն: Դրա համար էլ մենք այդ առաջարկությանը պատասխանեցինք կրակով** (ընդգծումը իմն է–Հ.Խ.): Դրանից հետո նրանք հեռացան մեր ճանապարհից: Մենք խաղաղ բնակիչների հետ գնացինք դեպի Աղդամ» [Բ-68]: Հնարավոր է՝ հենց այդպես էլ եղել է: Չի բացառվում, որ հայ դիրքապահները գերադասել են զինված բախում չունենալ գյուղի համար ակնհայտ վտանգ չներկայացնող խմբի հետ և նաև չվտանգել նրանց հետ գնացող խաղաղ բնակչությանը: Հնարավոր է Շահին Մուրադովը չափազանցնում է՝ ասելով, որ իրենք կրակել են: Հնարավոր է նաև, որ գյուղի պաշտպանները չեն էլ տեսել փախստականների զենքը, ոչինչ չեն ասել, և խումբը շարունակել է գնալ իր ճանապարհով, իսկ Շահին Մուրադովը իր պատմության մեջ մի փոքր հերոսականացնում է իրենց անցումը: Բայց եթե համարենք, որ այս պատմությունն ամբողջովին իրական է, ապա այն հաստատում է մի բան՝ ճանապարհին իրենց դիրքերը պաշտպանող հայերը չեն կանգնեցրել փախստականներին և լրացուցիչ բարդություններ չեն առաջացրել նրանց դժվար ճանապարհին առնվազն այն դեպքերում, երբ նրանք ակնհայտ վտանգ չեն ներկայացրել:

Բոլոր դեպքերում փետրվարի 26-ի առավոտյան Նախիջևանիկի ճանապարհին տեղի ունեցած բախման մասին կողմերից յուրաքանչյուրն ասում է՝ նրանք են սկսել: Բայց ադրբեջանական կողմում քաղաքացիական բնակչություն, կանայք, երեխաներ, վիրավորներ, սոված, ցրտահարված մարդիկ կային: Նախիջևանիկցիներն ասում են՝ կրակողները հենց նրանց են որպես վահան օգտագործել, նրանց միջից էին կրակում, նրանց օգտագործում էին որպես պատնեշ: Երբեմն էլ կնոջ հագուստով էին, դժվար էր հասկանալ՝ որն է տղամարդ, որը՝ կին: Մենք առաջարկում էինք՝ անցեք, գնացեք, բայց կրակում էին, հո չէի՞նք թողնելու այդ օմօնականները մեր գյուղ մտնեն: Մենք այնտեղ կանգնել էինք հենց դա թույլ չտալու համար: Հայերը նույնիսկ չգիտեին, որ նրանց մեջ էր հայ կանանց, աղջիկների պատուհաս տխրահռչակ Ալիֆ Հաջիևը: Համենայն դեպս տասնյակ պատմողներից ոչ մեկը նրա մասին չի խոսել: Շատ հավանական է՝ նա նույնպես կնոջ հագուստով է եղել, որովհետև Սեիդաղա Մովսումովի պատմածով՝ նրա փեշը ընկած էր դեմքին, և հայերը նրան չեն ճանաչել: Հայերը կրակել են այնքան, մինչև դիմացի կողմը կրակը դադարեցրել է՝ հավանաբար մինչև Հաջիևի սպանվելը: Եթե հայերը նահանջողներին ոչնչացնելու նպատակ ունենային՝ ստեղծված պայմաններում դա կարող էին անել: Այդպիսի նպատակ չկար, և հենց որ դիմացից կրակը դադարել է՝ իրենք էլ են դադարեցրել: Ու մարդիկ անցել գնացել են՝ շարունակելով իրենց դժվար ճանապարհը: Հայկական կողմն ասում է՝ այո, մենք պատասխանել ենք կրակոցներին, զոհեր եղել են, բայց հիմնական զոհերը մեզ մոտ չեն եղել, մեզ մոտից անցնելուց հետո են եղել: Սա սովորաբար շրջանցվում է: Եվ այստեղ «օգնության է հասնում» ադրբեջանցի լրագրող Չինգիզ Մուստաֆաևը, որն առաջինն է տեսել և խոսել հայկական դիրքն անցնելուց հետո, Աղդամի ադրբեջանական դիրքերի մոտ սպանվածների մասին, և որը, ցավոք, սպանվեց հենց ադրբեջանցիների կողմից երեք ամիս անց Նախիջևանիկ գյուղը գրավելիս, Նախիջևանիկի մոտ: Սրան պետք կլինի առանձին անդրադառնալ:

■
Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ ՆԱԽԻՋԵՎԱՆԻԿԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՑ ՇԵԼԼԻ-ԱՂԴԱՄ ԳՆԱՑՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Ասկերանում ապրող Սլավիկ Առուշանյանի պատմությունը (Պարոն Առուշանյանի հետ Ասկերանից դուրս ենք եկել և, գնալով փախստականների անցած ողջ ճանապարհով, կանգ առել հայկական 5-րդ դիրքերում, հասել ենք դրանից ադրբեջանական Շելլի գյուղի ուղղությամբ Աղդամ տանող ճանապարհի 2–2,5 կմ հեռավորությամբ գտնվող ադրբեջանական դիրքին՝ գյուղին հարող լանջին, որտեղից, ըստ պարոն Առուշանյանի, կրակել են Խոջալուի փախստականների վրա)։

«Մեր ջոկատը գտնվում էր ճիշտ սրա դիմաց, Խնաբադի ու Ասկերանի արանքի բարձունքի դիրքերում (ցույց է տալիս իրենց դիրքերը, ուղիղ գծով հավանաբար 1 կմ հեռավորությամբ)։ Մեր դիրքին ասում էինք «Ճային պոստ»։ Դա հայկական 4-րդ դիրքն էր։ Մենք ողջ գիշեր դիրքերում կանգնած էինք, որ եթե Աղդամից հարձակում լիներ՝ թույլ չտայինք Ասկերանի ճանապարհով առաջ գնան։ Մեր մոտից այս ողջ տարածքը հիանալի երևում է։ Ինչպես դուք եք հիմա այստեղից տեսնում մեր այն ժամանակվա դիրքը, այդպես մենք էին այն ժամանակ տեսնում այստեղի իրենց դիրքը։ Բայց այն ժամանակ մենք չգիտեինք, որ դրանք այստեղ դիրքավորվել են, դե բաց տեղ է, ճանապարհին մոտ, բոլորովին հարմար չէր դիրքի համար։ Ինչպես հետո հասկացանք՝ այդ գիշեր էին եկել այստեղ, երևում է՝ կարճ ժամանակով էին դիրքավորվել։

Սրանից մի քիչ վերև՝ բարձունքին, մենք փոքրիկ դիրք ունեինք, մեր 2-րդ դիրքն էր, մի քանի մարդ էին։ Մերոնք այնտեղից հսկում էին, որ եթե Աղդամի կողմից, կամ թեկուզ Շելլիից մեր գյուղերի վրա ադրբեջանական ջոկատ գա՝ կանգնեցնեն, կամ լուր տան Ասկերանին և հայկական գյուղերին։ Այդ բարձունքին Լաչինղոյ ենք ասում, գուցե Լաչին ղայա՝ Լաչինի բարձունք բառերից է, չգիտեմ։ Թուրքերը սրան Ղարաղայա են ասում։ Ճիշտ մերոնց՝ Նախիջևանիկի դաշտերի և թուրքերի Շելլի գյուղի դաշտերի սահմանագծին է, մի տեսակ ոնց որ չեզոք գոտի։ Հետո իմացանք, որ փետրվարի 26-ի գիշերը թուրքերը գրավել են Լաչինղոյի մեր պոստը։ Մերոնցից երկու տղա էին սպանվել, երկուսն էլ՝ վիրավորվել։ Վիրավորվածները հետո հոսպիտալում մահացան։ Բայց փետրվարի 25-ի գիշերը այդ մասին դեռ չգիտեինք։

Փետրվարի 26-ի առավոտյան, արդեն լրիվ լույս էր, Խնաբադի ու Ասկերանի արանքի բարձունքի մեր դիրքից տեսնում ենք, որ այ հենց էս ճանապարհի

մոտից թնդանոթից կրակում են: Ոչ թե լսել եմ, այլև աչքովս տեսել եմ: Մեր ամբողջ ջոկատն է տեսել՝ կրակում էին իրենց կողմ վազող մարդկանց վրա: Մեր ջոկատի տղաները կան, կարող եք բոլորին հարցնել (տե՛ս քարտեզ 4, էջ 212: Էջ 213-ում՝ Լաչնոյ բարձունքի լուսանկարը դիմացի լանջից՝ հայկական 4-րդ դիրքից):

Փախստականներն արդեն որ մեր 5-րդ դիրքն անցել էին և թեքվել իրանց կողմը՝ սկսել են վազել, նրանք էլ պատահական, թե միտումնավոր կրակել են քաղաքացիական բնակչության վրա: Անցել են իրանց կողմը՝ արդեն թնդանոթից էնտեղ կրակել են: Իրանք մի քիչ առաջ են գնացել էն բարձունքից՝ արդեն ինքնաձիգով ու կարաբինով, ավտոմատով կրակել են սրանց վրա: Էլի չեմ հասկանում՝ ո՞նց ա եղել: Գոնե դրանց շորերից պիտի տեսնեին, հասկանային, որ վազողները թուրքեր են, նրանց հագին տարբեր գույնի շորեր են եղել, <հագուստով հայերն ու թուրքերը տարբերվում են>: Արևելյան լանջի վրա իրանց կրակել են: Ուրիշ տեղից դա չի երևում, ոչ ասկերանցիների, ոչ նախիջևանիկցի մեր դիրքապահների տեսադաշտում չէր գտնվում: Միայն մեր ջոկատի տղաներն են տեսել դա, միայն մենք կարող էինք տեսնել, որովհետև մենք էլ էինք բարձունքում, դրանց դիմաց էինք, մեր տեսադաշտը փակող բան չկար: Ոչ Ասկերանի կողմից է երևում, ոչ Նախիջևանիկի կողմից: Մեր 5-րդ դիրքի կողմից նայելու դեպքում բլուրն է ծածկում: Ես աչքովս տեսածն եմ ասում, որ կրակել են թնդանոթով իրենց ժողովրդի վրա: Հիմնական էն՝ որ ձեռը չկա, ոտը չկա՝ դրանք թնդանոթով խփվածներն են, թնդանոթի վիրավորումը տարբերվում ա: Թնդանոթը ստեղից ա կրակել: 2005 թ. ես այստեղ եմ եկել նաև ադրբեջանցի լրագրող Էյնուլլա Ֆաթուլիևի հետ: Արցախ էին եկել մի խմբով, հարց ու փորձ էր անում, ինձ էլ խնդրեց տանել այդ սպանդի վայրը: Ես իրեն բերեցի այստեղ, ինքն իր աչքով տեսավ ողջ ճանապարհը: Հեսա տես գիլզերը, հնարավոր ա էլի լինի: Մենք էն բարձունքի վրա ենք եղել, իրենք՝ ստեղ, մեր դիմացի բարձունքի վրա: Ահա՝ տեսեք, մինչև հիմա թնդանոթի գիլզերը կան, որ լավ ման գանք՝ էլի կգտնենք[45]:

Թնդանոթի «գիլզերը»՝ պարկուճները, հենց մեր կանգնած վայրում էին (տե՛ս էջ 110):

Այսպիսով, ըստ հայերի և խոջալուցի Սուլեյման Աբբասովի պատմությունների, Նախիջևանիկի ճանապարհի հայկական 5-րդ դիրքն անցնելուց հետո խոջալուցիները հասել են Շելլիի մոտ, որտեղ նրանց մի մասը զոհվել է դիմահար կրակոցներից: Ո՞ւմ հետ կարող էին բախվել ողջ գիշեր դեգերած և վերջապես Աղդամի մատույցներին հասած խոջալուցիները:

---

[45] Սլավիկ Առուշանյանի հետ Ասկերանում և Ուղտասարի մոտ զրուցել են Հրանուշ Խառատյանը և Գոհար Մխիթարյանը:

■
ԱՂԴԱՄԻ ՁԻՆՎԱԾ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՕԳՆՈՒՄ ԵՆ ԽՈՋԱԼՈՒԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

Ադրբեջանական աղբյուրները հաստատում են պարոն Առուշանյանի ասածը՝ փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը Աղդամի զինյալների մի խումբ գրավել է Շելլի գյուղի մոտ գտնվող Լաչնղույ բարձունքը, որին ադրբեջանցիները Ղարաղայա են անվանում: Մինչև փետրվարի 25-ը այս բարձունքում փոքրաթիվ մարդկանցով հայկական 2-րդ դիրքն էր: Բարձունքը գրված ադրբեջանցիներից Ջաբար Օրուջևի պատմածով «Խոջալուն շրջափակված էր: Խոջալուցիները գնացին ոչ թե Աղդամ, այլ լեռները և անտառները: Պատճառը շատ պարզ է՝ հայերը գրավել էին Աղդամի ճանապարհի Ղարաղայան: Նույն տարածքում Ալա Յաղուբի[46] զինվորները Խրամորթում[47] էին (հայկական գյուղ Ասկերանի շրջանում, Ասկերանից հյուսիս Աղդամ տանող ճանապարհի մոտ – Հ. Խ.) և 19-րդ դիրքում, իսկ Ահմադավարի ուղին անցնում էր 18-րդ դիրքով: Քանի որ խոջալուցիներին անհնար էր Ասկերանի կողմից օգնել, զինյալների մի խումբ օգնության ծրագիր կազմեց և գործողություններ սկսեց Ղարաղայայից: Այդ գործողությունները համաձայնեցված չէին ղեկավարության հետ... Մենք Խրամորթում գտնվողներին լուր տվեցինք, որ նրանք կսկսեն կրակել այդ ուղղությամբ, և տեղեկացրինք 19-րդ դիրքին **Ասկերանի վրա հարձակվելու մասին** (ընդգծումը իմն է – Հ. Խ.): Նպատակը հայերի ուշադրությունը շեղելն էր այնտեղից, ուր մենք ուզում էինք գնալ (հավանական է, որ հենց Խրամորթում գտնվածների

---

46 Ալա Յաղուբին Աղդամին մոտ գտնվող հայկական գյուղերի բնակչությունը հիշում է 1990–91թթ-ից՝ որպես հայերից պատանդներ փախցնող խմբավորման ղեկավար և պատանդների փոխանակման միջնորդներից մեկը: «Ալա Յակուբ են ասում… երեսի մի կողմը էրված ա եղել, շոամով էլի, խրմզ էլ էին ասում: Խրմզ Յակուբի գրուպան թուրքերի ազգային ճակատն ա եղել Աղդամում: ...Սովետի վախտ ես իրան չգիտեի, բայց շատ մարդիկ գիտեին, ասում էին էդ Ալա Յակուբը քարտաշ ա եղել, ինչ ա եղել, չեմ իմանում», — «պատանդային պատերազմի» շրջանի մասին իր հուշերը Արսեն Հակոբյանին պատմել է Նախիջևանիկ գյուղի բնակիչ Գ.Մ-ն:

47 1992թ. հունվարի վերջին ադրբեջանցիները գրավել էին Ասկերանի շրջանի՝ Աղդամին մոտեցող ճանապարհի մոտ գտնվող հայկական Խրամորթ և Ֆարուխ գյուղերը: Գյուղի բնակչությունը քաշվել էր լեռները: Խրամորթն ամբողջովին թալանվել էր: Շուտով հայերը ետ էին գրավել Խրամորթը, որի ընթացքում նահանջող ադրբեջանական զինված խումբն ամբողջովին կողոպտել և այրել էր գյուղը: Խրամորթը գրավելուց հետո հայերը գտել էին Խրամորթի բնակիչ տարեց կանանց և տղամարդկանց 6 պղծված դիակներ: Խոջալուն պաշտպանելու Աղդամի շտաբի փետրվարի 23-ի ծրագրով Յաղուբ Ռզաևի գլխավորած տարածքային պաշտպանության դասակը պիտի շարժվեր Աղդամ-Խանաբադ ուղղությամբ, որն անցնում էր Խրամորթով:

կամ 19-րդ դիրքի խումբն է Ասկերան գնալով հրահրել Ասկերանի ամրոցի մոտի փոխհրաձգությունը, որի մասին պատմում է Սամվել Բաբայանը – Հ.Խ.): Մենք մեր դիրքից շարժվեցինք Ղարաղայա: Շելլիում **շատ մարտիկներ կային** (ընդգծումը իմն է – Հ.Խ.): Նրանք նույնպես ցանկանում էին օգնել Խոջալուի բնակիչներին, բայց չէին կարող առաջ գնալ: ...Նրանք ինձ ասացին՝ Օրուջ, հայերը մեր աչքի առաջ ժողովրդին տանում են (սա տարօրինակ է, քանի որ փախստականների կողքին կամ հետևից հայեր չէին գնում, ո՞ւր կարող էին հայերը «տանել» Աղդամ գնացող խոջալուցիներին: Բոլոր դեպքերում, եթե հայերը խոջալուցիներին որևէ տեղ տանեին, դա անկասկած Ասկերանի ճանապարհով մինչև Աղդամի սահմանագիծն էր լինելու – Հ.Խ.): Ես ասացի, որ կարող ենք գնալ Ղարաղայան գրավել: Եթե մենք այն գրավենք, մարդկանց կարող ենք Աղդամ տանել: Աստված մեզ ուժ տվեց, և մենք դա արեցինք: Յաշարը, Շելլիից Ալեքսանդրը և մի տղա վիրավորվեցին, երկու հայ էլ մենք սպանեցինք և գրավեցինք Ղարաղայան: Հայերը հասկացան, որ մենք Ղարաղայայի գագաթին ենք, իրենց գլխից վեր, կարող ենք թնդանոթից խփել, և Ղարաղայայի հետևում գտնվող իրենց ԲՏՐ-ը և ԲՄՊ-ն գնացին: Ջանփոլադ Ռզաևը տանկով հետապնդեց, նրանք անցան բլուրներից այն կողմ և աչքից անհետացան: Հետո իմացա, որ հայկական ԲՄՊ-ն խփել է մեր տանկը և Ջանփոլադ Ռզաևը զոհվել է» [Բ-108]:

Ուշագրավ է, որ Շելլիում կամ Շելլիի մոտ հավաքված մարտիկներից առնվազն Ջանփոլադ Ռզաևը փետրվարի 26-ի առավոտյան տանկով էր: Ջանփոլադ Ռզաևը Աղդամի Ժողովրդական Ճակատի ռազմական կազմավորումներից մեկի ղեկավար Յաղուբ Ռզաևի որդին էր: Յաղուբ Ռզաևը՝ նույն ինքը Գաթըր Մամադ, նույն ինքը՝ Ալա Յաղուբ, նույն ինքը՝ Մամեդ Յաղուբ, Ադրբեջանի Ժողովրդական Ճակատի Աղդամի այն ներկայացուցիչն էր, որը ղեկավարում էր Ժողովրդական Ճակատի պատգամավոր Ղասըմ Քերիմովի Աղդամի զինյալներին: Հենց նա էր զավթել Խոջալուի ապաշրջափակման համար Գյանջայից/Կիրովաբադից ուղարկված Տ-72 տանկերից 5-ը, որոնցից 3-ը հանձնել էր տարածքային գնդի ղեկավար, փոխգնդապետ Շիրին Միրզոևին: Աղդամում Խոջալուի պաշտպանությունը կազմակերպող շտաբին չէր հաջողվել այդ տանկերը ետ ստանալ: Շտաբում ծրագիրը կազմող Ինթիգամ Աբդուլլաևը փորձել է Ղարաբաղի գոտու հրամանատար Ֆահմին Հաջիևի միջոցով տանկերը ետ ստանալ, բայց վերջինս պատասխանել է, որ ինքը «չի կարող հանրապետության ժողովրդական պատգամավորին (Ղասըմ Քերիմովին – Հ.Խ.) հրամայել կամ <նրանից> պահանջել», և որ այդ տանկերի համար նրանք փող են վճարել [Բ-70, 47]: Հիշենք, Յաղուբ Ռզաևը ըստ փետրվարի 23-ին Աղդամում կազմված ծրագրի, փետրվարի 25-ին պետք է իր մարդկանցով շարժվեր Աղդամ – Խանաբադ ուղղությամբ, զավթեր «հայկական բանդիտային կազմավորումների» կրակակետերը և կազմակերպեր պաշտպանությունը, իսկ հետո դուրս գար հայկական Ներքին Կըլչբաղ գյուղի վրա: Դրա փոխարեն նրա խմբի մարդկանց առնվազն

մի մասը, այդ թվում որդին, փետրվարի 26-ի գիշերը կամ առավոտյան Ալլահ-վերդի Բաղիրովի խմբի հետ տանկով հայտնվել են Շելլիի մոտ՝ Ուղտասարի լանջին:

Օրուջևը չի պատմել, թե կրակոցներ են լսել Նախիջևանիկի ճանապարհից, չի պատմել, թե Ղարաղայայի վրա ինչպես են հանդիպել փախստականներին, բայց պատմել է, որ երբ հանդիպեցին փախստականներին, նրանք վախեցած էին. «Մենք գոռում էինք, ասում էինք, որ մենք Աղդամից ենք, Ալա Յաղուբի, Ալլահվերդի Բաղիրովի, Ֆրեդ Ասիֆի մարդիկ ենք, եկել ենք ձեզ օգնելու: Այն ժամանակ բոլորը Ալա Յաղուբին, Ալլահվերդի Բաղիրովին գիտեին: Ղարաղա-յայում գերությունից ազատեցինք 200 մարդ և 100 դիակ, և ուղարկեցինք Աղ-դամ»: Սա, ըստ պատմողի, եղել է փետրվարի 26-ին: Կրկին հիշենք, որ ըստ Աղդամում փետրվարի 23-ին կազմված ծրագրի, Մագգերամով Ասիֆը, նույն ին-քը՝ Ֆրեդ Ասիֆը, պետք է փետրվարի 25-ին իր մարդկանցով գնար Աղդամ–Աս-կերան–Քյաթուկ ուղղությամբ, բայց փետրվարի 26-ի գիշերը նրա մարդիկ, կամ առնվազն նրանց մի մասը նույնպես հայտնվել են Շելլիի մոտ՝ Ղարաղայայի բարձունքում:

Տարօրինակ է, որ Օրուջևը չի խոսում Ղարաղայա/Լաչինղույի դիմաց եղած կրակոցների մասին, բայց ասում է, որ փետրվարի 26-ին Ղարաղայայում հավա-քել, փրկել են 200 գերի, հավաքել են 100 դիակ և ուղարկել Աղդամ: Չի ասում, թե Լաչիղույ/Ղարաղայայում գտնվելով՝ կոնկրետ որտեղից են իրենք հավաքել 100 դիակը կամ ինչ գերիներ կարող էին լինել Շելլիի մոտ, որը ադրբեջանական

վերահսկողության տարածք էր: Ինչպե՞ս կարող էին նրանք փետրվարի 26-ին դիակներ հավաքել հայկական վերահսկողության գոտուց: Մնում է մտածել, որ նրանք հենց Շելլիի մոտից՝ Աղդամի մատույցներից, ադրբեջանական վերահսկողության գոտուց են հավաքել դիակները: Բայց ինչպե՞ս կարող էին փետրվարի 26-ին խոջալուցիների դիակներ հայտնվել ադրբեջանական վերահսկողության գոտում:

Հիմա արդեն պարզ է, որ առնվազն փետրվարի 26-ի առավոտյան Ուղտասարի մատույցներում, Շելլիի մոտ, ադրբեջանական ռազմական կազմավորում կար: Առնվազն՝ Աղդամից գիշերը եկած «Ալա Յաղուբի, Ալլահվերդի Բաղիրովի, Ֆրեդ Ասիֆի մարդիկ», այդ թվում՝ Ալա/Յաղուբ Ռզաևի որդի Ձանփոլադ Ռզաևը իր զինակիցների հետ: Այստեղ է եղել նաև ինքը՝ Ալլահվերդի Բաղիրովը: Նրա որդին՝ Էլշան Բաղիրովը, լրագրողի հարցին՝ «Որտե՞ղ էր Խոջալուի միջադեպի ժամանակ Ձեր հայր Ալլահվերդի Բաղիրովը և ի՞նչ էր անում», պատասխանել է՝ «Նրանք հակագրոհում էին, որի հետևանքով ահագին մարդ ողջ-առողջ Խոջալուից եկան Նախիջևանիկ-Շելլիի ուղղությամբ» (Həmin vaxt onlar əks hücuma keçmişdilər, nəticədə Naxçıvanik-Şelli istiqamətində Xocalıdan xeyli insan sağ-salamat gəlmişdi) [Բ-105]: Որտե՞ղ կամ ո՞ւմ դեմ էին հակագրոհում այդ մարդիկ Շելլիի մոտ, Նախիջևանիկի ճանապարհ տանող հատվածում, եթե այդտեղ գրոհող չկար: Արդյո՞ք նրանք չէին փետրվարի 26-ի առավոտյան Ղարաղայա/Լաչինղույի դիմացի Շելլիի ճանապարհին դիրքավորվածները, որոնց մասին պատմում է Սլավիկ Առուշանյանը: Հիշենք, որ դեռ փետրվարի 23-ին Աղդամի շտաբում կազմված ծրագրի համաձայն «Ալլահվերդի Բաղիրովի գլխավորած տարածքային պաշտպանության դասակը» փետրվարի 25-ին պետք է Շելլի ադրբեջանական գյուղի մոտով անցներ Նախիջևանիկ հայկական գյուղ, գրավեր այն, ապա գրավեր Փիրջամալ հայկական գյուղը և դրանք պահեր: Սա՝ ըստ ծրագրի: Երկու օր հետո, կազմված ծրագրի տապալումից հետո, դրա մեջ արագ փոփոխություն էր եղել, և փետրվարի 25-ի գիշերը, ժամը 2-ին որոշվել է գլխավոր համարել Շելլի–Խոջալու ուղղությունը: Բայց անկախ ծրագրի էլ Ալլահվերդի Բաղիրովի նպատակը Նախիջևանիկը գրավելն էր: «...ես հիշում եմ, Ֆահմին Հաջիևն ինձ ասել էր, որ խմբերից յուրաքանչյուրն ունի իր նպատակը և չի ուզում միավորվել: Օրինակ, Գաթըր Մամեդը ուզում է զավթել Խանաբադը, և, իր խոսքերով, կողոպտել: **Ալլահվերդի Բաղիրովն ուզում է գնալ Նախիջևանիկի դեմ** և այլն: Բայց ես կտրականապես դեմ էի, որ այդ առանձին խմբավորումները Խոջալուի ճակատագրի հետ կապված տարբեր խնդիրներ լուծեն» [Բ-70, 50],—ասել է Ինթիգամ Աբդուլաևը Խոջալուի շուրջ քննչական հարց ու պատասխանի ժամանակ: Կա նաև մյուս տարբերակը: Աղդամի շտաբում Խոջալուն պաշտպանելու ծրագիրը կազմած Ինթիգամ Աբդուլաևին տրված քննչական հարց ու պատասխանից պարզվում է, որ նախապես ծրագրավորված մարտական գործողությունների մաս էր «Աղդամ–Խոջալու

տարածքի հայկական գյուղերը «բանդկազմավորումներից» (փաստացի՝ հենց գյուղերի բնակիչներից) ազատելու հայտը. **Այդ գյուղերն էին «Նախիջևանիկ, Փիրջամալ, Դահիրազ, Ասկերան, Խանաբադ**: Հայտի պատճենը, այսինքն սևագիր օրինակը կազմել էր Մեհտիևը: Հնարավոր է, որ նա չկարողանա այս վերականգնել: Բայց հանրապետության պաշտպանության մինիստրի անունով գործողությունն ապահովելու հայտ-հաշվարկը հանձնվել է Ֆ.Հաջիևին: Գիտեմ նաև, որ նա այդ հարցով հեռախոսային խոսակցություն է ունեցել Շահին Մուսաևի հետ» [Բ-70,50]: Այս ամենն անկասկած թույլ է տալիս ենթադրել, որ Ալլահվերդի Բաղիրովն իսկապես փետրվարի 26-ի գիշերը իր, Մազգերամով (Ֆրեդ) Ասիֆի, Յաղուբ/Ալա Ռզաևի մարդկանցով հասել է բաղձալի տարածք՝ ընդհուպ մոտենալով Նախիջևանիկին:

Ալլահվերդի Բաղիրովը թերևս գործել է ինքնագլուխ, բայց նրա մտադրությունների մասին «վերևներում» գիտեին: Ինչպես գործողություններին մասնակցած Ջաբար Օրուջևն է ասել՝ պարզապես «այդ գործողությունները համաձայնեցված չէին ղեկավարության հետ» և ըստ երևույթին լոկալ խնդիր պիտի լուծեին՝ Նախիջևանիկի, գուցե նաև հարակից հայկական գյուղերի գրավումը:

Նոր չէ, որ Ալլահվերդի Բաղիրովն ուզում էր Նախիջևանիկը գրավել, և դա բոլորին հայտնի էր: Բաղիրովի կենսագիրները գրում են, որ «1992թ. հունվարին Ալլահվերդի Բաղիրովի գլխավորած 150 հոգիանոց գունդը հաղթահարել է Նախիջևանիկ գյուղի թշնամական ուժերը, նույնիսկ կարողացել է հասնել Ասկերան և զբաղեցնել Փիրջամալ գյուղի բարձունքները: Այդ գործողությունների ժամանակ ցուցաբերած հերոսությունների համար Ալլահվերդին արժանացել է «գեներալ Մուհամմեդ Ասագովի» անվան պարգևի» [Բ-106]: Նախիջևանիկցիները Ալլահվերդի Բաղիրովի անունը չեն հիշատակում, բայց հիշում են, որ ադրբեջանցիների կողմից 1991թ. հունվարի 30-ին (ոչ թե 1992թ-ին) հարձակում է եղել: Նախիջևանիկցիները պատում են. «Մինչև այդ էլ տարբեր ձևերով նեղում էին՝ մարդ էին առևանգում, պատանդ էին տանում, անասնագողություն, դրանք շատ են եղել: Մեր կողքի Փրջամալ գյուղի կոլտնտեսության ֆերմայի պահակին՝ Անդրանիկին էին սպանել, ականջն էլ կտրել էին: Մեր գյուղի մի տղայի սպանեցին, Մեխակ էր անունը: Ոչխարներ էր պահում, հանդում սպանեցին: Արդեն նման բաներ կար: Բայց մեր գյուղում առաջին կռիվը եղավ 1991թ. հունվարի 30-ին: Խոջալուի մոտ Ասկերանից Ազատ անունով մի տղայի սպանել էին, մերոնք գնում էին թաղմանը: Իրանք հարձակվել էին ճանապարհի վրա: Մերոնք մի երկու-երեք հոգով էին, մի հատ ինքնաձիգ ունեին: Հինգ հատ զոհ են տվել թուրքերը, մենք՝ ոչ մի բան: Ու իրանց զենքերը վերցրել էինք: Հաջորդ օրը իրանց դիակները եկան տարան: Դրանից հետո էդ կռվի վայրում 5-րդ պոստը սկսեցինք ձևավորել»[48]: Սա հենց այն «պոստն» է, որի մոտ փետրվարի 26-ի

[48] Նախիջևանիկցիների հետ զրուցել են Գոհար Մխիթարյանը և Ջարուհի Համբարձումյանը:

առավոտյան տեղի է ունեցել նախիջևանիկցիների և Խոջալուի մարտիկների բախումը: 1991թ. բախման մասին Նախիջևանիկ գյուղի բնակիչ Գ.Մ-ն պատմել է. «Հետո նույն օրը բերում են պուշկան, գոադաբոյնի պուշկան, բերում են իրենց գյուղ՝ Շելլի, կանգնեցնում, խփում <Նախիջևանիկ> գյուղի վրեն, ավելի ճիշտ սա գնում ընկնում ա գյուղի ներքևը, երկրորդ սնարյադն ընկնում ա գյուղի վերևը, երրորդ սնարյադն ընկնում ա ուղիղ իմ տան մեջ: Իմ տան մեջ էլ ես ապրել եմ ընդամենը մի տարի, նորակառույց տուն ա, ընկում ա տանս մեջ, իմ և հարևանիս երեխաներն էլ մեր տանն են լինում: Բայց երեխաները փրկվում են, կինս երեխաներին հավաքում, գնում ա հարևանի տուն, մտնում են պադվալը: Ես էդ ժամանակ տանը չեմ եղել»[49]:

1991թ. հունվարի 30-ին Ալլահվերդի Բաղիրովը չկարողացավ Նախիջևանիկը գրավել, բայց միշտ առիթներ էր փնտրում այդ անելու: Նա կարող էր օգտագործել հայերի կողմից Խոջալուի գրավման առիթն ու ժամանակը, համոզված լինելով, որ Խոջալուի գրավմամբ զբաղված հայերը ուժեր չեն ունենա լուրջ դիմադրություն ցույց տալ Նախիջևանիկում: Նրա գործողություններն Աղդամի ղեկավարության հետ համաձայնեցված չէին, բայց մեծ հավանականությամբ համաձայնեցված էին Խոջալուում գտնվող Ալիֆ Հաջիևի հետ:

Ալլահվերդի Բաղիրովը շատ մարդ չուներ: Խոջալուի ապաշրջափակման գործողությունները ծրագրավորելու պահին «Ալլահվերդի Բաղիրովի հետ կար վեց մարդ առանց զենքի, 2 գնդացիր, 1 հակահետևակային նռնականձիգ և 1 որսորդական հրացան» [Բ-70, 51]: Իհարկե, եթե Նախիջևանիկի ինքնապաշտպանական ջոկատն իսկապես ներգրավված լիներ Խոջալուի գրոհին՝ նույնիսկ փոքր ուժերով կարելի կլիներ Նախիջևանիկը գրավել: Գյուղում պարզապես դիմադրող մարդ չէր գտնվի, և 2 գնդացրի ու մեկ նռնականետի առկայությամբ հնարավոր կլիներ գյուղացիներին փախուստի մատնել: Բայց Նախիջևանիկի ինքնապաշտպանական խումբը Խոջալուի գրավման գործողությանը չէր մասնակցում և գիշերը կանգնած էր գյուղի պաշտպանության դիրքերում: Նրանք վտանգը սպասում էին հենց Աղդամ–Շելլիի կողմից, և նրանց խնդիրն էր այդ կողմից եկող ադրբեջանական խմբին թույլ չտալ Խոջալուին օգնության հասնել:

Ձաբար Օրուջևի պատմածից դատելով, սակայն, Ալլահվերդի Բաղիրովը միայն իր մարդկանցով չէր գիշերը Շելլի հասել: Ալա Յաղուբի/Յաղուբ Ռզաևի, Ֆրեդ Ասիֆի մարդկանցով համալրված նրա ջոկատը գիշերը գնացել էր Աղդամին համարյա կպած Շելլի, նրա խմբի մի մասը Շելլի գյուղի մարտիկների հետ միասին գրավել էր Լաչինղույ/Ղարաղայան, իսկ մյուսները հավանաբար դիրքավորվել էին դիմացը՝ Ուղտասարի լանջին: Նա, անկասկած, տեսել է, որ Նախիջևանիկի տղամարդիկ չեն մասնակցում Խոջալուի գրավման գործողություններին և կանգնած են իր ճանապարհին՝ հայկական 5-րդ դիրքում: Հավանական

[49] Գրուցել է Արսեն Հակոբյանը:

է, որ չի համարձակվել առաջ գնալ՝ մինչև Խոջալուից լուր կստանա դեպքերի ընթացքի մասին: Ճիշտ է՝ նրանց հետ ծանր տեխնիկա կար, առնվազն Յաղուբ Ռզաևի որդի Ֆանփոլադ Ռզաևը տանկով էր: Նրանք անշուշտ տեսել են, որ Նախիջևանիկի 5-րդ դիրքի հայերի մոտ տանկ չկա, բայց առաջ չեն գնացել, հավանաբար վախեցել են, որ ճանապարհն ականապատված է: Հենց նախորդ՝ փետրվարի 24-լույս 25-ի գիշերը ЗИЛ-131 մեքենայով հետախուզության գնացող 15 մարդուց բաղկացած ադրբեջանական մի խումբ պայթել էր Խանաբադի ճանապարհին՝ Գաթրը Մամեդ/Յաղուբ Ռզաևի շտաբի մոտ, հենց ադրբեջանցիների տեղադրած ականի վրա [Բ-70, 53]: Երկրորդ այդպիսի դեպքը կարող էր ճակատագրական դառնալ:

Ղարաղայայի դիմաց՝ Շելլիի մոտ դիրքավորվածները գիշերը ռացիայով լուր են ստացել, որ Խոջալուն ընկել է, և որ բնակչության մի մասը զինված պաշտպանների հետ միասին անցնելու է հենց Նախիջևանիկի ճանապարհով: Կամ գուցե հենց իրենք են հրահրել Նախիջևանիկի մոտով անցումը՝ իրենց գործողություններից «հայերի ուշադրությունը շեղելու համար» ընդհարում հրահրելով Ասկերանի մոտ և այդ ճանապարհը վտանգավոր դարձնելով՝ ուղղակի կամ կողմնակիորեն հարկադրելով, որ նահանջողները բռնեն Նախիջևանիկի ճանապարհը: Ալլահվերդի Բաղիրովի խմբի մարտիկ Օրուջևն ասել է. «Մենք Խրամորթում գտնվողներին լուր տվեցինք, որ նրանք սկսեն կրակել <Ասկերանի> ուղղությամբ, և տեղեկացրինք 19-րդ դիրքին Ասկերանի վրա հարձակվելու մասին: Նպատակը հայերի ուշադրությունը շեղելն էր այնտեղից, ուր մենք ուզում էինք գնալ: Մենք մեր դիրքից շարժվեցինք Ղարաղայա»: Այսինքն այս մարդիկ փետրվարի 25-լույս 26-ի գիշերը նախ հարձակում են կազմակերպել Ասկերանի վրա՝ փաստացի փոխհրաձգության հրահրելով Ասկերանի ամրոցի մոտ կանգնած հայկական դիրքապահներին՝ դրա մեջ ներքաշելով նաև Աղդամ գնացող խոջալուցիների մեջ գտնվող զինվածներին, և առիթ դարձել նահանջող քաղաքացիական բնակչության զոհերի համար: Երկրորդ՝ շեղել են նահանջողների մեկ այլ խմբի անցումը հատկացված ճանապարհից և փաստացի ուղղել նրանց դեպի Նախիջևանիկ տանող ճանապարհ: Երրորդ՝ դիրքավորվել են հենց Աղդամի մատույցներում՝ Նախիջևանիկ տանող ճանապարհից 2–2,5 կմ հեռավորությամբ և սպասել: Ինչի՞ են սպասել:

Ակնհայտ է, որ Խոջալուում ինչ-որ մարդիկ, մեծ հավանականությամբ Խոջալուի քաղաքագլուխն ու պաշտպանության և ՕՄՕՆ-ի ղեկավար Ալիֆ Հաջիևը **համոզված գիտեին**, որ մինչ իրենք պաշտպանում էին Խոջալուն հայերի գրոհից, ադրբեջանական կոնկրետ մի խումբ պետք է գրաված լինի Նախիջևանիկը: Հենց այդ պատճառով նրանք ընտրեցին Աղդամ գնալու հենց այդ ճանապարհը՝ իրենց հետ գնացողներին վստահեցնելով, որ հայկական Նախիջևանիկ գյուղը ադրբեջանցիների կողմից գրավված է: Խոջալուի բնակիչներից Սուլեյման Աբբասովի պատմածը հենց դա է հաստատում. «Մենք մի խումբ բնակիչների հետ

հասանք Նախիջևանիկ գյուղ, հուսալով այստեղ հանգրվան գտնել: **Մինչ այդ ռացիայով մեզ հայտնել էին, որ գյուղը գրավել են հայ զինյալներից** (ընդգծումը իմն է – Հ.Խ.): Հնչեցին առաջին կրակոցները... Կարճ մարտ սկսվեց, մեզ հաջողվեց ճեղքել պատնեշը և դուրս գալ Աղդամ տանող ճանապարհ, բայց մեր ճանապարհը փակեց ԲՏՐ...-ը: Այն կողմնակի ճանապարհով շրջանցելով՝ մենք կրկին ճանապարհ դուրս եկանք, և արդեն որերորդ անգամ ընկանք խաչաձև կրակոցների տակ այս անգամ արդեն դարանում թաքնված բէտէէրներից... Իմ ոտքը վիրավորվեց: Մեծ դժվարությամբ մեզ հաջողվեց օգնության հասած աղդամցիների հետ դուրս պրծնել» [Բ-29, 28; Բ-46, Բ-33]: Ո՞վ էր ռացիայով հայտնել այս խմբին, որ Նախիջևանիկը «հայ զինյալներից», իրականում գյուղի բնակիչներից գրավված է, ո՞վ պիտի գրավեր այն, ում հետ ռացիայով կապվել էր խմբից ինչ-որ մեկը, և ո՞վ էր այդ ինչ-որ մեկը, որ գիտեր Նախիջևանիկը գրավելու ծրագիրը և ռացիայով կապվել էր այդ ծրագիրն իրականացնելու մտադրության խմբի հետ: Համարյա անկասկած՝ Ալիֆ Հաջիևն էր: Խոջալուն լքելու և բնակչության հետ հայերի հատկացրած միջանքով անցնելու նրա մտադրությունը, ինչի մասին ռադիոհաղորդագրությամբ ասել էր գիշերվա ժամը 1.30-ին, և որը լսել է Լևոն Մելիք Շահնազարյանը, փոխվել է ինչ-որ մեկի հետ ռացիայով խոսելուց հետո: Այդ «ինչ-որ մեկը» պետք է Ալլահվերդի Բաղիրովը լիներ: Եվ համարյա անկասկած՝ ծրագրին տեղյակ էր քաղաքագլուխ Էլմար Մամեդովը: Պատահական չէ, որ բազմաթիվ հարցազրույցներ տված, ելույթներ ունեցած քաղաքագլուխը ոչ մի անգամ «չի հիշել», որ ինքն ու Հաջիևը միասին էին, նույն խմբում էին, և ոչ մի անգամ չի ասել, թե ինչո՞ւ իրենք զինված օմօնականների հետ միասին ընտրեցին Նախիջևանիկի ճանապարհով գնալու տարբերակը՝ իրենց հետ տանելով անզեն քաղաքացիներին: Չի խոսել այդ մասին՝ միշտ գիտակցելով Խոջալուի խաղաղ բնակչության նկատմամբ իրենց արած սխալը, եթե ոչ հանցանքը: Նախիջևանիկը, սակայն, գրավված չէր, և ուրեմն կամ ռացիայով խոջալուցիներին սուտ տեղեկություն էին հաղորդել, թե գրավել են, կամ նահանջող խմբի մեջ ռացիայով կապվողն էր սուտ ասել իր հետ գնացողներին: Տվյալ դեպքում երկուսն էլ հավանական էր: 1-ին տարբերակի դեպքում գյուղը գրավել պատրաստվող խումբը, տվյալ դեպքում Ալլահվերդի Բաղիրովի խումբը, կարող էր ծրագրավորել միանալ Խոջալուից փախստական բնակիչների հետ գնացող ադրբեջանցի օմօնականներին և մարտիկներին և նրանց փաստի առաջ կանգնեցնելով՝ միասին փորձել գրավել Նախիջևանիկը, ուստի հայտնել է, որ գյուղն արդեն գրավված է, որպեսզի փախստականները չփոխեն ճանապարհը: Գուցե նաև ռացիայով իր հետ Խոջալուից խոսողին առաջարկել է իր հետ գնացողներին ասել, թե գյուղը գրավված է, մոտենալ գյուղին և միասին փորձել գրավել այն: Ավելի հավանական է թվում առաջին տարբերակը: Այս իմաստով ուշագրավ է «Պրավդա» թերթի թղթակից Զաուր Կադրմբեկովի 1992թ. մարտի 7-ի հոդվածի մի ակնարկը. «...**աղդամցիները պարզապես**

խաբել են խոջալուցիներին, նրանց ուղարկելով հայկական Նախիջևանիկ գյուղի կողմը և այդպիսով բախում հրահրել գյուղի հայկական պաշտպանության դիրքերում» [Ա-14]:

Ճանապարհին հայկական 5-րդ դիրքին մոտենալով և տեսնելով կանգնած զինված հայ, ոչ թե ադրբեջանցի տղամարդկանց, Ալիֆ Հաջիևը նախահարձակ է եղել (Սեիդաղա Մովսումովն ասում է՝ «**նահանջելիս անգամ հարձակվել է հայերի վրա**») և մարտի բռնվել հայկական ինքնապաշտպանական ջոկատի հետ՝ թերևս վստահ լինելով, որ շուտով իրենց կմիանա Նախիջևանիկը գրավելու մտադրությամբ դարանում գտնվող Ալլահվերդի Բաղիրովի ջոկատը: Ծրագիրը տապալվել է, ջոկատը չի միացել, Ալիֆ Հաջիևը զոհվել է՝ իր անխոհեմությամբ խաղաղ բնակչության զոհերի պատճառ դառնալով: Կարճ մարտը դադարել է, 5-րդ դիրքի հայերի հետ ընդհարումից ազատված խումբը շարունակել է ճանապարհը դեպի Աղդամ և հայտնվել քիչ հեռու, Շելլի գյուղի մոտ, արդեն Աղդամի մատույցներում դարան մտած Ալլահվերդի Բաղիրովի ադրբեջանական խմբի դիմաց: Այդտեղից թնդանոթային և ավտոմատային կրակահերթեր են լսվել հայկական 5-րդ դիրքում, իսկ Սուլեյման Աբբասովի ասածով՝ ընկել են խաչաձև կրակահերթի տակ: Հենց սա է, որ դիմացի լանջից **տեսել են** հայկական 4-րդ դիրքի ջոկատի տղաները և չեն հասկացել՝ ինչո՞ւ են ադրբեջանցիները կրակում ադրբեջանցիների վրա: Այստեղ նույնպես փախստականների խմբի մի մասը զոհվել է, մյուսներին «հաջողվել է օգնության հասած աղդամցիների հետ դուրս պրծնել»: Հնարավոր է, որ օգնող աղդամցիները հենց Ղարաղայան՝ Լաչինղույը նոր գրաված նույն Ալլահվերդի Բաղիրովի մարդիկ էին: Հասկանալի է դառնում, թե որտեղից և ինչ փախստականների են օգնել, և ինչ դիակներ են Լաչինղույի բարձունքում գտնվողներն այդ օրն ուղարկել Աղդամ: Բայց ուղարկել են ոչ բոլոր դիակները: Իսկապես, ըստ այդ տարածքում փետրվարի 29-ին դիակները տեսած Չինգիզ Մուստաֆաևի նկարագրածի, «գնդակահարվածների մեծ մասը գլխից է և կրակոցը՝ շատ մոտիկից... դիմադրության և փախուստի ոչ մի նշան չկա: Ոմանց սպանել են մի կողմ տանելով, շատերին ոչնչացրել են ընտանիքներով, բոլորին միանգամից: Որոշ դիակների վրա կան մի քանի վերքեր, որոնցից մեկն՝ անպայման գլխին» [Ա-30, 55]: Սա շատ է նման այն դեպքերին, երբ գնդակահարվողները գնդակահարողներից թշնամանք չեն սպասել, չեն դիմադրել, փախուստի փորձ չեն արել, և տվյալ իրավիճակում հավանաբար ընդունել են որպես փրկարարների:

Շելլիի մոտի դիրքում գտնվող Ալլահվերդի Բաղիրովի մարդիկ անկասկած լսել են հայկական 5-րդ դիրքի մոտի կրակոցները: Հնարավոր է՝ համոզված են եղել, որ Ալիֆ Հաջիևի մարտիկներն արագ գրավել են հայկական դիրքը, և իրենց կողմ վազողներին համարելով փախչող հայեր՝ թնդանոթից և ավտոմատներից կրակել են: Պարտվելու դեպքում հայերն իսկապես կարող էին այդ ուղղությամբ փախչել, նրանք դեռ չգիտեին, որ Լաչիղույի հայկական 2-րդ

դիրքն ադրբեջանցիները գրավել են: Հետո հասկացել են սխալը, մոտեցել են այդ մարդկանց, տեսել են, որ Խոջալուից փախչողներն են, վախեցել են իրենք իրենց արածից և հնարավոր է՝ արդեն վիրավորներին տեղում գնդակահարել են: Հենց դրա համար էլ դիմադրության կամ փախուստի որևէ փորձ չի եղել՝ խոջալուցիներն ադրբեջանցիներից այդպիսի բան ուղղակի չեն սպասել: Հենց այդ դեպքն է նկարագրում Սուլեյման Աբբասովը՝ պատմելով, որ Նախիջևանիկից հետո «մենք կրկին ճանապարհ դուրս եկանք, և արդեն որերորդ անգամ ընկանք խաչաձև կրակոցների տակ, այս անգամ արդեն դարանում թաքնված բէտէէրներից»:

Հազիվ թե հանցագործները խոստովանեին, որ պատահաբար կամ միտումնավոր կոտորել են Խոջալուի փախստականներին: Հնարավոր է՝ կենդանի մնացածներին ասել են, որ թնդանոթից կամ ավտոմատից կրակողները հայեր էին, իսկ ահա իրենք եկել և մյուսներին փրկել են: Հնարավոր է նույնիսկ, որ ճիշտն են ասել՝ մոլորվել ենք, սխալվել ենք, հայերի տեղն ենք դրել, բայց եղածն արդեն եղել է, փակենք այս թեման և մտածենք մյուսների մասին: Կենդանի մնացածներին տարել են Աղդամ՝ անընդհատ մտածելով, թե ինչպես թաքցնեն իրենց արածը:

Հասկանալի է դառնում նաև Ջավադ Օրուջևի պատմության մեկ այլ դրվագ ևս, ըստ որի երբ հանդիպեցին փախստականներին, նրանք վախեցած էին. «Մենք գոռում էինք, ասում էինք, որ մենք Աղդամից ենք, Ալա Յաղուբի, Ալլահվերդի Բաղիրովի, Ֆրեդ Ասիֆի մարդիկ ենք, եկել ենք ձեզ օգնելու»: Ինչից կարող էին վախեցած լինել ադրբեջանցի փախստականները ադրբեջանական դիրքի մոտ: Նրանք ակնհայտորեն վախեցած էին իրենց հետ պատահած այն իրողությունից, որ իրենց դեմ կրակել են հենց ադրբեջանական դիրքից:

Շելլիի մոտ՝ Աղդամի մատույցներում սպանվածների մասին, ինչպես հայտնի է, առաջինը բարձրաձայնել է Չինգիզ Մուստաֆաևը: Չնայած հիշյալ ճանապարհով արդեն շատերն էին հասել Աղդամ և կարելի է վստահ լինել՝ Աղդամում տեղյակ էին ճանապարհին պատահած ողբերգությունների, զոհերի, անտառներում մոլորվածների մասին, բայց լռում էին: Մնացած ամեն ինչից բացի անհնար է, որ փետրվարի 27-ի առավոտյան Աղդամ հասած Խոջալուի քաղաքագլուխը Աղդամի շտաբում տեղեկացրած չլիներ ճանապարհին եղած զոհերի, առնվազն Ալիֆ Հաջիևի զոհվելու մասին, չխոսելով արդեն նույն ճանապարհով Աղդամ հասած այլ խոջալուցիների մասին: Բայց մինչև փետրվարի 29-ը այդ մասին չէր խոսվում և արտասահմանյան, նույնիսկ տեղական թղթակիցներին չէին թողնում այդ ուղղությամբ գնալ: Բնական է, որ Աղդամում բազմաթիվ լրագրողներ էին հայտնվել, և նրանց տեղեկացնում էին այն և այնքան, ինչ և որքան հարմար էին համարում տեղական իշխանությունները: Տվյալ դեպքում ավելի ճիշտ կլինի ասել՝ իշխանությունների Ադրբեջանի Ժողորդական Ճակատի ներկայացուցիչները: Չինգիզ Մուստաֆանն ասում է.

«Փետրվարի 28-ին ես գնացի Աղդամ և ասացի, որ ուզում եմ նկարահանել այս ողբերգությունը: Ինձ բոլորն ասացին, որ դիակները միայն Խոջալուում են, որ բանակցություններ են տարվում հայերի հետ, կատարվում է դիակների, գերիների փոխանակություն և այլն... որ դիակները բերվում են: Երբ Խոջալուի մարդիկ ինձ ասացին, որ ֆերմայի մոտ... բայց նրանք իմացել էին, որ այնտեղ կենդանի մարդիկ կան, որոնք Խոջալուից ոտքով եկել էին և այնտեղ թաքնվել: Երբ այդպես ասացին, ես խնդրեցի ԲՏՐ, մեքենա, ոտքով... Բայց բոլորն ինձ ասում էին՝ «այնտեղ ոչ մի դեպքում չի կարելի, այնտեղ կոիվներ են, հայերն այնտեղ կրակի տակ են պահում...» [Բ-80]:

Փետրվարի 28-ը այն օրն էր, երբ հայկական կողմը հրավիրել էր ադրբեջանցիներին քննարկելու իրենց մոտ մնացած խոջալուցիներին Աղդամ հանձնելու մասին: 2012թ. դեկտեմբերին Վիտալի Բալասանյանը իր ֆեյսբուքյան էջում գրել է. «Առաջին անգամ Աղդամի ռազմական հրամանատարության հետ կապվելու անհրաժեշտություն առաջացավ Խոջալուի ազատագրումից հետո, երբ քաղաքի ադրբեջանական բնակչությունը հայտնվեց մեզ մոտ՝ ներկալված անձանց (interned, интернированный) կարգավիճակում: Ես կապվեցի ադրբեջանցիների հետ և հրավիրեցի ժողճակատի ներկայացուցիչներին հանդիպման՝ քննարկելու քաղաքացիական անձանց նրանց փոխանցելու հարցը: Մենք որոշել էինք հանձնել բոլոր ներկալված անձանց՝ առանց որևէ նախապայմանի և փոխանակման... Առաջին հանդիպումը Ալլահվերդի Բաղիրովի հետ կայացավ 1992թ. փետրվարի 28-ին: Եղանակը շատ վատ էր, ես պահանջեցի ավտոբուսներ տալ՝ ադրբեջանական քաղաքացիական բնակչությանն Աղդամ տեղափոխելու համար: Նույն օրն էլ, երեկոյան ժամը տասին, Խոջալուի ադրբեջանցիների առաջին խմբաքանակը, հիմնականում կանայք և երեխաներ, ուղարկվեցին Աղդամ»: Նա նույնիսկ այդ հանդիպման լուսանկարն է հրատարակել [Բ-67]

(տե՛ս էջ 118: Զախից առաջինը՝ կիսադեմ, Ալլահվերդի Բաղիրով, երրորդը՝ Վիտալի Բալասանյան):

Ինչու՞ էր ուրեմն փետրվարի 28-ին ասվում, որ «դիակները միայն Խոջալուում են», «այնտեղ դիակներ չկան, գուցե միայն մեկ երկուսը», որ դժվարություններ կան դիակները տեղափոխելու բանակցությունների հարցում: Եվ ոչ ոք չէր խոսում այն մասին, որ փետրվարի 27-ից սկսած ուղղաթիռից գնդակոծվում էր հենց հայկական Նախիջևանիկ գյուղը: Փոխարենն ասում էին՝ «այնտեղ դիակներ չկան», «հայերն այնտեղ կրակի տակ են պահում»: Ի՞նչ և ումի՞ց էին թաքցնում: Ի՞նչն էին «հայերը կրակի տակ պահում»: Դատարկ ճանապա՞րհը: Վախենում էին, որ լրագրողներն ինչ-որ անցանկալի բա՞ն կտեսնեն: Ինչո՞ւ լրագրողները չէին կարող գնալ և հանրությանը տեղեկացնել այդ ողբերգության մասին: Մի՞թե «վատ նյութեր էին» հայերի վայրագություններն աշխարհին ցույց տալու համար:

Ի՞ՆՉ ԹԱՔՑՆԵԼԻՔ ԿԱՄ «ՑՈՒՑԱԴՐԵԼԻՔ» ԿԱՐ ԱՂԴԱՄԻ ՄԱՏՈՒՅՑՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՅՐՈՒՄ

Աղդամի մատույցներում՝ Շելլիի մոտ, Ղարաղայան գրաված ադրբեջանական զինված կազմավորման կողմից սպանվածների խնդրին վերը անդրադարձանք: Թաքցնելիքներից մեկը հավանաբար հենց այդ փաստն էր՝ ոչ մի կերպ թույլ չտալ տեղեկության արտահոսք «ադրբեջանցիները սպանել են Խոջալուի խաղաղ բնակչությանը» փաստի մասին: Մինչև խոջալուցիների անցման այս չնախատեսված վայրում տեղի ունեցածը չստուգվեր ԱԺՃ-ի կամ իշխանությունների կողմից, տեղանքը «կարգի չբերվեր», այնտեղից կարող էր տեղեկությունների անցանկալի արտահոսք լինել: Ուրեմն հարկավոր էր տեղանքը նախապատրաստել: Փետրվարի 27-ին և 28-ին տարածքն արագորեն ստուգում և կամ հանցանքի հետքեր էին փնտրում, կամ ինչ-որ անկանխատեսելի վկայություններից մաքրում: Այն տարիներին ԱԺՃ-ի համակիր, Այազ Մութալիբովի իշխանությանն ընդդիմադիր երիտասարդ հեռուստալրագրող Սեիդաղա Մովսումովը հետագայում պատմել է, թե ինչպիսի խստությամբ էին հետևում տեղեկատվական արտահոսքի կանխմանը. «CNN-ի և BBC-ի լրագրողները Աղդամ էին եկել իրադարձությունները լուսաբանելու: Նրանք կարող էին սպուտնիկով տեղեկություններ և պատկերներ փոխանցել արտասահման: Նրանց մեքենաների վառելիքը վերջացել էր, և անվադողերը պայթեցրել էին, այնպես որ, նրանք չէին կարող նկարել: Պաշտպանության նախարարության այն ժամանակվա մամուլի պատասխանատու ավագ լեյտենանտ Էլխան Սաղըգովը արտասահմանյան լրագրողների վառելիք գնելուն օգնելու համար գնաց շրջանային դատախազություն: Հավատացեք, օգնելու փոխարեն տեղական իշխանությունները գողացան նկարահանումների, ձայնագրությունների և լուսանկարահումների ժապավենները և նրանց հրամայեցին Կարմիր Խաչի հետ միասին Աղդամը լքել և գնալ Բարդա: Ասել էին, որ հրամանը Բաքվից է» [Բ-107]:

Լրագրողների մուտքն արգելող գործողություններին զուգահեռ, հենց այն ժամանակ, երբ Չինգիզ Մուսաֆաևին ասում էին, որ այդ ուղղությամբ դիակներ չկան, և որ «հայերն այնտեղ կրակի տակ են պահում», նույն օրը՝ փետրվարի 27-ին, Աղդամ էին թռել երեք МИ-24 ռազմական ուղղաթիռներ, որոնց ուղեկցությամբ չորս МИ-8 քաղաքացիական ուղղաթիռներ մինչև ժամը 5-ը զբաղվել են Նախիջևանիկի ուղղությամբ դիակների հավաքումով [Բ-70, 49]: «Խոջալուի դեպքը» քննող հանձնաժողովին հետագայում, ապրիլ ամսին ցուցմունք տված

օդաչուն՝ МИ-24 էսկադրիլիայի, МИ-8 օղակի հրամանատար Խանլար Սաֆտար-օղլու Սատտարովը փետրվարի 27-ի մասին պատմել է, որ իրեն 10 մարդու ուղեկցությամբ ուղարկել են Ասկերանից 2,5 կմ հարավ դիակներ հավաքելու. «Երբ ես վայրէջք կատարեցի, տարբեր վայրերում կային քաղաքացիական բնակչությունից 15–20 դիակներ: Նրանց մեջ կային երեխաներ, կանայք, ծերունիներ և երիտասարդ տղաներ: **Վայրէջքի վայրում բոլոր կողմերից կրակում էին ուղղաթիռի ուղղությամբ** (ընդգծումը իմն է–Հ.Խ.), չնայած իմ ուղղաթիռը վերևից վերահսկվում էր ռազմական ուղղաթիռներով: Դիակների կամ վիրավորների հետևից ինձ հետ եկած մարդիկ հիմնականում փնտրում էին իրենց հարազատներին կամ ծանոթներին: Ժամանակի սղության պատճառով այդ մարդիկ հասցրեցին բերել ութ դիակ և մեկ կենդանի կնոջ: Երկրորդ թռիչքի ժամանակ ինձ հետ թռչում էր Աղդամի դատախազության քննիչը, ազգանունը չեմ հիշում: **Այդ ժամանակ դուրս էինք հանում ֆերմայի մոտ կրակոցների տակ ընկած վիրավոր մարտիկներին** (ընդգծումը իմն է–Հ.Խ.)» [Բ-70, 98]: Նույն երեկո օդաչուն վիրավոր մարտիկներին անմիջապես տարել է Բաքու (օդաչուի ցուցմունքի փաստաթուղթը տե՛ս էջ 126-127):

Առաջին թռիչքի ժամանակ՝ «Ասկերանից 2,5 կմ հարավը» հենց Նախիջևանիկի ճանապարհի 5-րդ հայկական դիրքի մոտ է, այն գտնվում էր հայկական վերահսկողության գոտում, ինչած կրակոցների աղբյուրի հասցեականությունը ճշտված չէ՝ ովքե՞ր էին կրակում, որտեղի՞ց էին կրակում: Այդ օրը Աղդամից գնդակոծվում էր Նախիջևանիկը: Ինքն օդաչուն չի ասում, թե կրակողները հայեր էին, բայց տրամաբանորեն պիտի հայերը լինեին: Նույն օրվա՝ Աղդամի դատախազության քննիչի հետ երկրորդ թռիչքի մասին խոսելիս օդաչուն եղել է **ֆերմայի մոտ**, կրակոցներ չի հիշատակում, նրան հարց չեն տալիս վիրավորների կամ դիակների թվի մասին: Մարդն ինքը «դիակների» մասին ոչինչ չի ասում, բայց հստակ ասում է, որ **դուրս էին հանում ֆերմայի մոտ կրակոցների տակ ընկած վիրավոր մարտիկներին** (ընդգծումը իմն է–Հ.Խ.), որոնց տարել է Բաքու (օդաչուի վայրէջքի վայրերը տե՛ս քարտեզ 5, էջ 214):

Ֆերման, որի մասին պատմում է օդաչուն, հնարավոր է՝ Ասկերանից մոտ մեկ կիլոմետր հեռավորությամբ Նախիջևանիկի ճանապարհին գտնվող խոզի ֆերման էր, որի տեղում այսօր գաջի գործարան է: Այդպես եմ ենթադրում, քանի որ այս ֆերմայի մոտ փետրվարի 26-ին կռիվ է եղել և այստեղ իսկապես կարող էին **կրակոցների տակ ընկած վիրավոր մարտիկներ լինել**: Քանի որ ադրբեջանական նյութերում ոչինչ չգտնվեց այդ կռվի մասին, ստիպված եմ տեղի ունեցածը միայն հայկական նյութերով ներկայացնել: Պատմողը այդ կռվին մասնակցած ասկերանցի 50-ամյա տղամարդ է. «Մերոնք Խոջալուն արդեն գրավել էին: Փետրվարի 26-ին մենք հսկում էինք Ասկերան–Աղդամ ճանապարհը, որպեսզի թույլ չտանք Աղդամից բանակների գալը: Լուր եկավ, որ Շելլիի կողմից ինչ-որ խումբ գալիս է դեպի Նախիջևանիկի ճանապարհի կողմը: Մեզ

7–8 հոգով БТР-ով ուղարկեցին էդ կողմ: Իրանք Շելլիից գալիս էին բլուրների վրայով: Բայց շատ էին, երևի մի հիսուն տղամարդ կլինեին, ավտոմատներով: Իրանք հա գալիս էին: Մեր տղաներին մի հատ БРДМ մոտեցավ, մեզնից շատ մոտ էր: Մեր մոտ էլ մի հատ ասկերանցի գրանատամյոտչիկ կար: Ինքը բանակում ծառայելիս գրանատամյոտչիկ էր եղել: Մեր մոտ գրանատամյոտի երեք հատ վստրել կար, հիսուն մետրի վրա խփեց էդ գրանատամյոտով, բայց չկպավ: Իրանցը БРДМ էր, մենք էլ չէինք իմանում դա ինչ ա, առաջին անգամ էինք տեսնում, առհասարակ ծանոթ չէինք: Մի քիչ հեռվից խփում են մեզ: Լուր տվեցինք <ռացիայով>, որ դրությունն էսպիսին ա: Ասեցին Ստեփանակերտից օգնություն ա գալիս, դիմացեք մինչև տեղ հասնեն: Դե դիմանում էինք, բայց քիչ էինք, դես ու դեն վազելով ավտոմատներով կրակում էինք: Ստեփանակերտից էլ էին БРДМ ուղարկել, հլա ճանապարհին էլ ցեպը դուրս եկավ: Խփեցինք իրանց, փախան Շելլիի կողմը, մենք էլ հետևից կրակելով գնում էինք: Հիշում եմ, որ մեր БТР-ը իրանց հետևից քշում էր, ես էլ БТР-ի գլխին նստած եմ: Նույնիսկ մեկը մեր БТР-ին խփեց, բայց չկպավ մեզ: Ահագին հետապնդեցինք, երևի մի տասը հոգի սպանվեցին իրանցից»[50]: Այս «ֆերմայի մոտից» օդաչուն իսկապես կարող էր տանել միայն մարտիկների՝ վիրավոր կամ սպանված: Այնտեղ խաղաղ բնակչությունից զոհեր չկային: Այս մարտիկները Խոջալուից չէին, Աղդամից կամ Շելլիից էին: Հնարավոր է՝ հենց Ալլահվերդի Բաղիրովի խմբից: Այս դրվագում օդաչուն խաղաղ բնակչությունից զոհվածների մասին չի խոսում:

Բայց հնարավոր է նաև, որ խոսքն այ́ս ֆերմայի մասին չէ: Հնարավոր է, որ խոսքն այ́ն ֆերմայի մասին է, որի մոտ ամսի 29-ին եղել է Չինգիզ Մուստաֆաևը, և որը Աղդամի ադրբեջանական դիրքերից հեռու էր մոտ 700 մետր: Սա հենց Շելլիի մոտ սպանվածների վայրն է: Եթե օդաչուի խոսքը այ́ս ֆերմայի մասին է, ապա հասկանալի է դառնում, թե ինչու այդ թռիչքի ժամանակ ուղղաթիռի դեմ կրակոցներ չեն եղել՝ դա ադրբեջանական վերահսկողության գոտի էր: Եվ մտածելու առիթ է, թե **կրակոցների տակ ընկած ինչ վիրավոր մարտիկներ** էին տանում այդ վայրից և ինչո́վ էր զբաղված այդ թռիչքի ժամանակ օդաչուի հետ միասին Աղդամի դատախազությունից եկած քննիչը:

Շատ ուշագրավ է նաև հաջորդ օրվա՝ փետրվարի 28-ի մասին նրա ցուցմունքը. «1992թ. փետրվարի 28-ին ռազմական МИ-24 մեքենայով թռել եմ ուղեկցելու Ումուդլու գյուղից դուրս եկած МИ-8 ուղղաթիռներին՝ Նախիջևանիկի և Ասկերանի արանքի դիակները դուրս տանելու: Երբ ես տեղ հասա, մեր վրա խոշոր տրամաչափի թնդանոթներից կրակում էին ֆերմայի կողմից, մեքենայի վայրէջքի վայրից 200 մետր հեռավորությունից» [Բ-70, 99]: Սա կարող էր Ասկերանից մեկ կմ հեռավորությամբ գտնվող ֆերման լինել, որը Ասկերանի և Նախիջևանիկի արանքում էր և հայկական վերահսկողության տակ էր: Ուրեմն

[50] Ջրուցել է Հ.Խառատյանը:

ամսի 28-ին շարունակում էին դիակներ հավաքելը: Սա շեշտում եմ, որովհետև հայկական վերահսկողության գոտուց դիակները հավաքելու պայմանավորվածության բանակցությունը եղել է փետրվարի 28-ին, և հայկական վերահսկողության գոտուց դիակներն սկսել են հավաքել փետրվարի 29-ին: Ուրեմն մինչ այդ հայկական վերահսկողության գոտուց հապճեպ տարվել են գլխավորապես **հատուկ ընտրված դիակներ կամ վիրավորներ՝ զինվածներին**:

Ադրբեջանի պաշտպանության բանակի 1992թ. նորանշանակ հեռուստալրագրող Սեիդաղա Մովսումովի պատմությունը գալիս է հաստատելու, որ մարտիկների մարմիններից «տարածքի մաքրման» գործողությունը փետրվարի 29-ին շարունակվել է՝ արդեն հայերի հետ համաձայնեցված: Դիակները հավաքելու ընթացքում նրանց դեմ կրակողներ չեն եղել: Նա հայկական 5-րդ դիրքի մոտ տեսել է «**շատ մարտիկների մարմիններ, նրանք կովել էին», «նահանջելիս անգամ հարձակվել է հայերի վրա», «զգացվում էր, որ այդ հերոսները մինչև վերջ կովել են խաղաղ բնակչությանը փրկելու համար**» (ընդգծումը իմն է – Հ.Խ.): Ոչինչ, որ այդ զինված հերոսները վտանգի են ենթարկել անզեն խաղաղ բնակչության կյանքը: Այստեղից նա և Ալլահվերդի Բաղիրովը տարել են զոհերի դիակները:

Չինգիզ Մուստաֆաևին հաջողվել է «տարածք» հասնել «ամսի 29-ին (անընդհատ գրվում է, որ Չինգիզ Մուստաֆաևը առաջին անգամ այդ տարածքում եղել է փետրվարի 28-ին, բայց ինքը Չինգիզն ասում է՝ փետրվարի 29-ին- Հ.Խ.), երբ Ումուդլը գյուղից ռազմական ուղղաթիռներով վերադառնում էինք Աղդամ, մեծ դժվարությամբ իմ խնդրանքով այնտեղ թռանք հակառակ կողմից, ես տեսա և նկարահանեցի, որ այն վայրում, որտեղ այդ ֆերման է, Խոջալուից 10 կմ հեռու, մեր (ադրբեջանական – Հ.Խ.) պոստից մոտավորապես 700 մետր հեռու... գետնին թափված 50 դիակ...»: Չ.Մուստաֆաևը հենց ուղղաթիռից նկարում է՝ տեսնելով նաև, որ «մերոնցից (ադրբեջանցիներից – Հ.Խ.) 10 մարդ շրջում էին դիակների մեջ... Նրանք Աղդամից էին, զինվորական հագուստով, նրանք էլ մեզ նկատեցին... ուղղակի քայլում էին դիակների մեջ... Մինչ այդ ինձ ասում էին՝ «այնտեղ դիակներ չկան, գուցե միայն մեկ երկուսը... այնտեղ գնալ հնարավոր չէ, այնտեղ հայեր են, կրակում են» և այլն: Եվ երբ մեր ուղղաթիռը վայրէջք կատարեց, այնտեղից հանկարծ 3 ուղղաթիռ թռան Աղդամ, իսկ այն տասը մարդը ինչպես հետիոտն եկել էին, այնպես էլ գնացին: Մենք վեց հոգի էինք, մնացինք այնտեղ, իսկ ուղղաթիռները վերադարձան Աղդամ: Մենք վայրէջքից հետո դիակների մեջ մնացինք 45 րոպե, ճանապարհից 25 մետր հեռավորության վրա, նկարահանեցինք... <Այդ ընթացքում> երկու անգամ հայերով լի մեքենաներ անցան, մեզ տեսան, ոչ մի գնդակ չարձակեցին, և մենք հետիոտն գնացինք Աղդամի ուղղությամբ»:

Չինգիզ Մուստաֆաևի նկարագրած վայրի ֆերման գտնվում էր Խոջալուից մոտ 10 կմ հեռավորությամբ, Աղդամի ադրբեջանական դիրքերից հեռու էր «մո-

տավորապես 700 մետր», բոլոր դեպքերում ադրբեջանական վերահսկողության տարածք էր, և այնտեղ փետրվարի 29-ին Աղդամից զինվորական հագուստով 10 մարդ ազատ կանգնած էր: Որևէ չափանիշով այն չէր կարող Նախիջևանիկի մոտ կամ Ասկերան-Նախիջևանիկ ճանապարհին լինել: Չինգիզը համոզվում է, որ Աղդամում հիանալի գիտեին «այնտեղ» զոհվածների մասին, «այնտեղ» նույնիսկ ուղղաթիռներ և զինվորականներ են գնում: Ինչո՞ւմն էր գաղտնիքը: Ամսի 29-ին Չինգիզի նկարած կադրերում սպանված խաղաղ բնակչության դիակներ էին: **Զինվածների դիակներ և «վիրավոր մարտիկներ» արդեն չկային**:

Սեիդաղա Մովսումովն իր հերթին պատմում է. «Հանգուցյալ Չինգիզ Մուստաֆաևը նկարում էր Նախիջևանիկի կողմում: Մեր մարդիկ այստեղ էին եկել ուղղաթիռով: Հայերը կրակել էին ուղղաթիռի վրա, անձնակազմը զոհվել էր, Չինգիսխանը թշնամու հետ դեմ առ դեմ միայնակ էր մնացել: Բարեբախտաբար ադրբեջանցի մի օդաչու հետո հիշեց և եկավ տարավ Չինգիզին: Մենք բարձունքի վրա էինք և այդ ամենը տեսնում էինք. երկու մարդ գնում էին հայերին ընդառաջ: Նրանցից մեկը Շամիլ Սաբիրօղլուն էր, «Սեհերի» թղթակիցը, մյուսը արտասահմանյան լրագրող էր: Ես հեռվից տեսնում էի, որ հայերը նրանց համար թակարդ են սարքում և պատրաստվում են գերի վերցնել: Շամիլգիլն այդ մասին չգիտեր: Ես ստիպված ավտոմատից նրանց գլխի ուղղությամբ կրակեցի: Քանի դեռ Շամիլգիլը գետնին պառկած էր, ես ուժեղացնում էի կրակահերթը: Ես չէի կարող խոսել, որովհետև հայերը մեզ հետ էին: Բարեբախտաբար նրանք ինձ չխանգարեցին կրակել, հավանաբար չհասկացան, թե ինչու եմ կրակում: Ես իմ նպատակին հասա՝ Շամիլենք վերադարձան: Վստահ եմ, որ եթե Շամիլենք չհասկանային՝ նրանց պատանդ կվերցնեին» [Բ-107]: Ահա այս անհավանական հերոսական դրվագի (անհավանական, որովհետև դժվար է պատկերացնել, որ Մովսումովի կողքին գտնվող հայ մարտիկներն անխոով նայել են, թե ինչպես է երիտասարդ լրագրողն առանց տեսանելի առիթի ավտոմատից կրակահերթ բացում «Շամիլգիլի դեմ ինչ-որ դավադրություն նյութող» հայերի ուղղությամբ) օրն է Սեիդաղան տեսել Չինգիզ Մուստաֆաևին: Ուրեմն դա փետրվարի 29-ն էր, որովհետև Չինգիզը փետրվարի 29-ին է առաջին անգամ եղել «Նախիջևանիկի կողմերում»: Մյուս կողմից տարօրինակ է, որ Սեիդաղան խոսում է Չինգիզին բերած ուղղաթիռի խփվելու մասին, ինչին Չինգիզը կարծեք թե տեղյակ չէ, և հետո Չինգիզի հետևից նոր ուղղաթիռ չի գնացել, նա հետիոտն է վերադարձել: Այնպես որ անհամապատասխանությունները շատ են:

Չինգիզն իրականում Նախիջևանիկի մոտ չէր աշխատում: Համենայն դեպս, նա ինքն այդ մասին չի խոսում: Նա Շելլիի մոտ, Աղդամի մատույցներում՝ Աղդամի ադրբեջանական դիրքերից 700 մետր հեռավությամբ էր աշխատում: Եվ եթե ինքը՝ Սեիդաղան Չինգիզին տեսել է, ուրեմն ինքն էլ Ալլահվերդի Բաղիրովի հետ միասին հայկական 5-րդ դիրքի մոտի դիակները հավաքելուց հետո գնացել է այդտեղից 2–2,5 կմ հեռավորությամբ Շելլիի մոտ գտնվող սպանդի

վայր, այլապես չէր տեսնի Չինգիզին: Բայց ամենակարևորը՝ Սեիդաղայի հետ էր նաև Նախիջևանիկը գրավել երազող, Ժողովրդական Ճակատի զինյալներից Ալլահվերդի Բաղիրովը: Սեիդաղան չի խոսում ոչ այս տարածքի դիակների մասին, ոչ այն մասին, թե ինչով էր զբաղված Ալլահվերդի Բաղիրովը: Եվ որ գլխավորն ու տարօրինակն է՝ Սեիդաղան և Ալլահվերդին, գնացած լինելով դիակները հավաքելու, ինչ-որ պատճառով չեն հավաքել այն դիակները, որոնց հենց նույն ժամանակ նկարահանել է Ձինգիզը: Հարց է, թե ինչո՞ւ են դրանք թողել առնվազն մինչև մարտի 2-ը, երբ արդեն պաշտոնական թույլտվությամբ այնտեղ են տարել արտասահմանյան լրագրողներին:

Մի բան կարծեք թե ակնհայտ է՝ մինչև փետրվարի 29-ը հիմնականում տարվել են «մարտիկների դիակներ»: Սա կարելի է համարել «տարածքը մշակելու» երկրորդ հաստատումը: **Տարածքը զինվածների մարմիններից մաքրվում և խաղաղ բնակչության զոհերին թողնվում էր՝ ցույց տալու համար, որ «հայերը անզեն, անզոր խաղաղ բնակչության կոտորած են արել»**:

Ինչքա՞ն «մարտիկներ» են եղել Խոջալուից Աղդամ գնացող խաղաղ բնակչության հետ՝ կարելի է միայն ենթադրել: Իրականում խաղաղ բնակչության հետ գնացող «մարտիկների» մասին խոսել են միայն հայերը: Ադրբեջանական տեքստերում նրանք հայտնվում են պատահական, հաճախ կողմնակի նյութերի մասին խոսելիս: Ադրբեջանական կողմը խոսել է բացառապես «խաղաղ բնակչության սպանդի» մասին: Քանի որ Խոջալու բնակավայրի ներսում զոհեր քիչ են եղել (տես «Որքա՞ն մարդ է «կոտորվել» Խոջալուում» բաժինը), և հայտնի է, որ Խոջալուից դուրս գալու ժամանակ զինաթափում չի եղել, բոլոր զինվածները դուրս են եկել իրենց զենքերով: Փաստացի կարելի է ասել, որ որքան զինված կար Խոջալուում, այդքան էլ կար Խոջալուից Աղդամ գնացող բնակչության մեջ: Դատելով բանավոր պատմություններից՝ նրանց մի մասը զոհվել է ճանապարհի բախումների ժամանակ: Բնականաբար դիրքապահ հայերը փոխհրաձգության ժամանակ թիրախավորել են զենք օգտագործողներին: Կոնկրետ որտեղ և որքան մարտիկ է զոհվել՝ կարող են ասել դիակները հավաքած ադրբեջանցիները: Բայց նրանք հաստատ զոհվել են նաև հայկական 5-րդ դիրքի և ադրբեջանական Շելլի գյուղի մոտ՝ Աղդամի մատույցներում: Հայկական 5-րդ դիրքում զոհվածների մեջ հայտնաբերվել է Ալիֆ Հաջիևի մարմինը: Կարելի է չկասկածել, որ նրա հետ են եղել Խոջալուի իր ենթակայության օմօնականները: Ալիֆ Հաջիևին իր բարեկամը համարող Թոմաս Հոլցը գրում է, որ «Ալիֆ Հաջիևի հրամանատարության տակ գտնված քառասունից ավելի մարդկանցից միայն տասն են կենդանի մնացել» [Ա-36, 123]: Սա արդեն իսկ խոսուն թիվ է: Բայց խաղաղ բնակչության հետ տարբեր ճանապարհներով գնում էին ոչ միայ Ալիֆ Հաջիևի օմօնականները: Սեիդաղա Մովսումը զոհվածների մարմինները հավաքելիս հանդիպել է «շատ մարտիկների դիակների»: Խոջալուցի մարտիկների մեջ կային հայտնիները, Ալիֆ Հաջիևը նրանցից միակը չէր: Ադրբեջանական

[illegible] ноторие перешли в МО Азербайджанской Республики и гражданские пилоты из Забрашского аэропорта.

26 февраля 1992 г. я находился в отпуске и случайно оказался в Забратском аэропорту. Мне поступило указание вылетать в г. Агдам, но пилотов подготовленных к ночным полетам не оказалось. По указанию командира Забрашского авиаотряда я вылетел в Агдам и прибыл 26 февраля прилетел в г. Агдам. На следующий день 27 февраля дан 10 человек вывоза на вертолете трупов из района города Аскерана, т.е. южнее Аскерана 25 км. В этом районе, где я приземлился, в разных местах лежали трупы мирных жителей 15-20 человек. Среди них были дети, женщины, старики и молодые ребята. В районе приземления со всех сторон по вертолету велось обстрел. Меня, т.е. вертолет пилотируемый мной, прикрывал сверху 2 боевые вертолеты МИ-24. Люди, которые прилетали со мной для вывоза трупов или раненых, в основном искали своих родных или знакомых. Из за дефицита времени, т.к. обстреливали нас, эти люди успели принести восемь трупов и одну живую женщину. При второй вылете, у меня на борту находился следователь прокуратуры из г. Агдама, фамилию не помню. При этом вывозили раненых бойцов, которые попали под обстрел около фермы. Вечером 27 февраля 1992 года с ранеными на борту, я вы-

лежел в г. Баку и на следующий день
мой экипаж заменили.
Уточняю, что я 28 февраля 1992 года
на боевой машине МИ-24 вылетел
на сопровождении вертолетов МИ-8
из с. Гиндиу в виде мирных ме-
лей. Первый вертолетов МИ-8
которые меня сопровождали при вылете
трупов между с. Нахичеванью и
Агдераном, Гувалев, Юсифов и Ка-
ширинов. Когда я пролетел, нас
обстрелили со стороны фермы
крупнокалиберным пулеметом, кото-
находился в 200 метрах от посадо-
ного вертолета. Вместе Карпова Ива-
14 февраля 1992 года как я, Юсу-
Ахмедов Э.А., Гасанов Эдиет, Мамед-
перегнали боевые машины МИ-24
Забратский аэропорт и с этого вре-
ни начали заниматься подготовкой
боевых действий на этом вертолете
находясь в распоряжении МО АзР,
Приказом с 22 февраля 1992 года.
Дополняю, что в феврале на местах
вооружение сил самообороны не подчи-
лись единому командованию и надо бы
создать регулярную Армию, которая
в настоящее время создается.
Протокол мною прочитан с м
слов записан верно

Допросил: Э.А. Ахмед

Показания командира эскадрильи МИ-24, командира звена МИ-8 Забратского аэропорта САТТАРОВА Ханлара Сафтар оглу

տեղեկություններից մեկի համաձայն, «դիակների մեջ հայերը փնտրում էին նրանց արյունը ծծած, Ադրբեջանի ազգային հերոս Ագիլ Գուլիևի (Aqil Quliyev) մարմինը: Հայերը Ագիլ Գուլիևի մարմինը ցույց էին տվել Սեիդաղային և հարցրել՝ արդյո՞ք նա չի: Մովսումովը, իմանալով որ նա է, ասել է՝ ոչ» [Բ-108]: Այս «հայտնի մարտիկները» ադրբեջանցիներին հայտնի էին գլխավորապես հայերի նկատմամբ դաժանություններով, նրանցով հպարտանում էին Ազգային ժողովրդական Ճակատի համակիրները («Ալիֆ Հաջիևը շատ հայերի, ովքեր օդանավակայան էին գնում, դժոխք էր ուղարկել», «Ագիլ Գուլիևը հայերի արյունն էր ծծում» և այլն): Սրանք մարդիկ էին, որոնք նահանջի ճանապարհին հայեր հանդիպելիս պետք է նրանց «դժոխք ուղարկեին»: Բայց Խոջալուի խաղաղ բնակչության զոհերի մասին նկարահանումներում և կադրերում նրանց մեջ զինվածների կադրեր չեն ցուցադրվում:

Վերոհիշյալ Սեիդաղա Մովսումի պատմելով Չինգիզ Մուստաֆաևը միակ նկարողը չի եղել: «Դուք հավանաբար տեսել եք միայն Չինգիզի նկարածները, բայց եթե դուք տեսնեք այնտեղ արված ուրիշ կադրեր, բառի բուն իմաստով պարզ է դառնում հայերի դաժանությունը: Այն օրերին Ալլահվերդի Բաղիրովը և Ֆրեդ Ասիֆը ամեն օր նկարում էին: Այնտեղ ամեն ինչ պարզ երևում էր» [Բ-108]: Որտե՞ղ են նրանց նկարածները, ո՞ր օրվա նկարածներ են դրանք, եթե նրանք նկարել են մինչև մարտի 2-ը՝ ինչո՞ւմ է նրանց և Չինգիզի նկարածների տարբերությունը,–հարցեր են, որոնց պատասխաններն առայժմ միայն ենթադրական են: Փաստն այն է, որ այս տարածքում մարտի 2-ին նկարած կադրերից զատ սպանդի վայրեր կամ պղծված դիակների այլ նկարներ շրջանառության մեջ չկան, իսկ փետրվարի 29-ին այդ տարածքում Չինգիզի նկարած կադրերում դիակների պղծումներ չեն եղել: Մինչ լրագրողներին այնտեղ տանելը «տարածքը կարգի բերելու» երրորդ գործողությունը դիակների պղծումն էր:

Այսպես թե այնպես, մինչև մարտի 2-ը տարածքը մաքրված էր, վիրավորներին և մարտիկների մարմինները տարված էին, Ղարաղայայի հերոսների հանցագործության հետքերը վերացված էին, «հայերի դաժանությունները» ապացուցող խաղաղ բնակիչների, երեխաների դիակները առկա էին:

Մարտի 2-ին Չինգիզ Մուստաֆաևը վերադառնում է նույն վայրը, այս անգամ այլ լրագրողների հետ: Նրան այլևս ոչ միայն չեն խանգարում գնալ, չեն համոզում չգնալ, այլ նրա հետ ուղարկվում է լրագրողների խումբ և հայտնաբերում... բարբարոսաբար այլանդակված, պղծված դիակներ: Բոլորը ցնցված են: Այդ թվում՝ իշխանությունները, չնայած այնտեղ արդեն առնվազն երկու անգամ ուղղաթիռ էին ուղարկել, որոնցից մեկով՝ նաև դատախազության քննիչ, և առնվազն մեկ անգամ էլ թափքավոր մեքենայով դիակներ հավաքելու էր գնացել Ալլահվերդի Բաղիրովը Սեիդաղա Մովսումովի հետ: Աղդամի իշխանություններն արդեն գիտեին ինչ կա «տարածքում» և մարտի 2-ին նրանց համար ցնցող նորություն չկար: Ցնցված լրագրողները նկարահանում են, ինքը Մուստաֆաևը՝ երկ-

րորդ անգամ, խորապես հուզված՝ տեսնելով, որ դիակների թիվն ավելի մեծ է, նախորդ իր նկարահանած դիակներն անճանաչելի փոխված են, այլանդակված, ոմանց գանգամաշկը քերթած, աչքերը հանած... Վերադառնում են Աղդամ, ցուցադրում իրենց նկարահանածները: Մարտի 4-ին Չինգիզի երկու նկարահանումներն էլ ցուցադրվում են Մոսկվայի ադրբեջանական ներկայացուցչությունում և... աշխարհը ցնցվում է «հայերի բարբարոսության» մասին վկայող նկարներից: **1992 թ. մարտի 2-ին Աղդամից տարված լրագրողները տեսան «խոջալուցիների կոտորածի վայրը»: Նրանց ասացին, որ դա «հայկական Նախիջևանիկ գյուղի մոտ է», մարդիկ տեսան երեխաների, աղջիկների, կանանց, տարեցների պղծված դիակներ՝ պոկված եղունգներ, գանգամաշկված և ջարդված գլուխներ, մարմնի կտրտված անդամներ, աչքերի խոռոչներ... Դիակների մեջ զինվածների, մարտիկների մարմիններ արդեն չկային**: Իրականում նրանց ոչ միայն Նախիջևանիկի մոտ, այլ նույնիսկ հայկական 5-րդ դիրքի մոտ չէին տարել: Այնտեղի դիակներն արդեն հավաքված էին (տե՛ս քարտեզ 6-ը, էջ 215): Չինգիզը «բարձրաձայն» լռում է փետրվարի 29-ի և մարտի 2-ի իրավիճակի տարբերությունների մասին:

Դեռևս մարտի 1-ին ամերիկացի լրագրող Թոմաս Հոլցը շտապել էր հայտարարել, որ «հայ զինվորները կոտորել են հարյուրավոր փախստական ընտանիքների» [Ա-34]: Մինչև մարտի 1-ը Աղդամ տարվող սպանված մարդկանց մարմինները տեսնելով՝ գուցե նա կարող էր թեկուզ չափազանցված այդպիսի հայտարարություն անել, բայց վստահաբար նա չգիտեր, թե ինչ է տեղի ունեցել Խոջալուի բնակչության հետ, որտեղ են նրանց մի մասը սպանվել, ինչ պայմաններում, և այս «հայ զինվորները կոտորել են փախստական ընտանիքներին»-ը դուռ էր բացում ազատ, անապացույց և չհիմնավորված հայտարարությունների համար՝ «կոտորած»-ի ենթարկվում են խաղաղ բնակչությունը, անզեն մարդիկ:

Մարտի 2-ի «ցուցադրությունից» հետո դռները լայն բացվեցին: Սարսափելի տեսարանները համապատասխան մեկնաբանություններով ներկայացվում էին իշխանությունների կողմից, պատասխանատվությունը իշխանություններինն էր: «Կոտորած» բառը դարձավ Խոջալուի ուղեկիցը: Մարտի 3-ին BBC-ի թղթակիցը ուղիղ եթերում հայտարարեց, որ **տեսել է շատ մոտ տարածքից գնդակահարված ադրբեջանցի տղամարդկանց, կանանց, երեխաների, մանուկների 100-ից ավելի մարմիններ** (BBC reporter was live on the line and he claimed that he saw more 100 bodies of Azeri men, women and children as well as baby who are shot dead from their heads from a very short distance) [Բ-60]. «Շատ տագնապալի պատկեր է, լեռան վրայից բարձրացրել են խաղաղ բնակչության՝ հայերի կողմից սպանված կանանց, տղամարդկանց և երեխաների 100-ից ավելի դիակներ... Նկարներից երևում է նաև, որ մոտ տասը մարդու՝ կանանց և երեխաների, կրակել են գլխին 1 մետր հեռավորությունից: Ադրբեջանը հայտարարել է, որ հայկական ուժերը սպանել են ավելի քան 1000 խաղաղ բնակիչների» [Բ-61]:

Մարտ ամիսը նշանավորվեց խոջալուցիների նկատմամբ հայերի վայրագությունների մասին ահասարսուռ տեղեկություններով: Եվ ամենուր ասվում էր՝ «դեպքը տեղի է ունեցել հայկական Նախիջևանիկ գյուղի մոտ»: Լրագրողներին ոչինչ չէր ասում «Նախիջևանիկ» անունը, նրանք գյուղը չէին էլ տեսել: Նրանց գտնված վայրից Նախիջևանիկը հեռու էր առնվազն 3 կմ: Նրանց տեսածը կարող էր այդ տարածքից տեսանելի ադրբեջանական Շելլի գյուղը լիներ: Բայց ասո՞ւմ են՝ «սա Նախիջևանիկի մոտ է», կգրեն՝ «Նախիջևանիկի մոտ»: Հիմնական ստանդարտը «Սեհեր» գործակալության մատուցած ձևակերպումն էր. «Ինչպես տեղեկությունների տարբեր աղբյուրներին հղում անող «Սեհերը» հայտնում է, **Խոջալուի պաշտպանների մեծ մասը ընկել է մարտի դաշտում**[51] (ընդգծումը իմն է – Հ.Խ.), իսկ կենդանի մնացածները հուսահատ փորձ են արել կրակը և թակարդը հաղթահարելով հասնել Աղդամ: Ավաղ, շատերին դա չի հաջողվել: Առաջիններից մեկն ընկավ միլիցիայի մայոր, Խոջալուի օդանավակայանի նախկին պարետ, քաղաքի պաշտպանությունը գլխավորող Ալիֆ Հաջիևը: Նա պաշտպանում էր կանանց և երեխաների նահանջը և, ինչպես վկայում է Խոջալուի բնակչուհի Մինեշ Ալիևան, **գնդակահարվել է հայ բանդիտների կողմից: Նրանց, ովքեր առաջ գնացին, հայկական Նախիջևանիկ գյուղի մոտ սպասում էր հայ ավտոմատավորների, թնդանոթաձիգների, զրահամեքենաների հաշվեհարդարը** (ընդգծումը իմն է – Հ.Խ.): Քաղաքի գործադիր իշխանության գլուխ Էլման Մամեդովը պատմում է, որ հենց այստեղ տեղի է ունեցել չդադարող հրետակոծության տակ ընկած անզեն մարդկանց զանգվածային կոտորածը» [Ա-30, 114]:

Ուշադրություն դարձնենք այն փաստին, որ տեղեկատվության մեջ չի ասվում, թե Ալիֆ Հաջիևն սպանվել է հենց Նախիջևանիկի մոտ, փոխհրաձգության ժամանակ: Ասվում է՝ «գնդակահարվել է հայ բանդիտների կողմից», որից հետո նոր «առաջ գնացողները հասել են Նախիջևանիկի մոտ»: Պարզ է՝ չեն գրվել, որ «հայ բանդիտները» հայկական Նախիջևանիկ գյուղի բնակիչներն են, ովքեր պաշտպանվում էին հենց Հաջիևից: Բայց սա առանձին թեմա է: Իսկ առայժմ կրկնենք, որ սպանդի վայրը ներկայացնողներն ասում են՝ Ալիֆի գնդակահարությունից հետո է, որ «**նրանց, ովքեր առաջ գնացին, հայկական Նախիջևանիկ գյուղի մոտ սպասում էր հայ ավտոմատավորների, թնդանոթաձիգների, զրահամեքենաների հաշվեհարդարը**»: Այս տեղեկությունը ճիշտ կլիներ, եթե ձևակերպվեր հետևյալ կերպ՝ «**Ալիֆ Հաջիևը ուրիշների հետ սպանվեց հայկական Նախիջևանիկ գյուղի դիրքերի մոտ բախման ժամանակ, իսկ նրանց, ովքեր առաջ գնացին, սպասում էր ավտոմատավորների, թնդանոթաձիգների, զրահամեքենաների հաշվեհարդարը**»: Բայց տեղեկության նպատակն այլ էր՝ «հայերը սպանել են խաղաղ բնակչությանը, չեն բավարար-

[51] Իրականում բուն մարտի դաշտում՝ Խոջալու բնակավայրում զոհերի մասին ոչ մի տեղեկություն չէր տրվում: Այդ մասին՝ ստորև:

վել՝ խոշտանգել են դիակները»: Կասկածը կրծում է Չինգիզ Մուստաֆաևի սիրտը: Շատ հիմնավոր կասկածը՝ ինչ է նախապատրաստվել լրագրողների խմբի համար փետրվարի 29-ից հետո, ինչը նրանք չպիտի տեսնեին, ովքեր էին փետրվարի 29-ին դիակների մեջ զինվորի հագուստով շրջող 10 ադրբեջանցիները, ինչո՞ւ նրանք անմիջապես հեռացան Աղդամ տանող Շելլի գյուղի կողմը, հենց որ տեսան իրենց: Ի՞նչ երեք ինքնաթիռներ էին դիակների մոտ, որոնք իրենց վայրէջքից հետո անմիջապես թռան Աղդամ: Ինչո՞ւ էին ասում, թե «այնտեղ դիակներ չկան, այնտեղ վտանգավոր է, հայերը կրակում են», մինչդեռ այնտեղ դիակներ կային, վտանգավոր չէր, և հայերը չէին կրակում: Ինչու՞ մարտի 2-ին այլանդակված էին դիակներ, որոնք փետրվարի 29-ին նույն վայրում էին և այլանդակված չէին: Եվ այդ վայրը Նախիջևանիկի մոտ չէր, Աղդամի ադրբեջանական դիրքերի մոտ էր: Այդ մասին Չինգիզը բարձրաձայն չէր խոսում, բայց մարտի 3-ից հետո առանձին մարդկանց հետ քննարկում էր: Զուր չէր Ադրբեջանի՝ կյանքի փորձով իմաստնացած նախագահ Այազ Մութալիբովը նրան զգուշացրել. «Չինգիզ, ոչ մեկի չասես նկատածդ, այլապես քեզ կսպանեն» [Բ-24, 255]: Զեխ լրագրող Դանա Մազալովան պատմում է, որ 1992 թ. մարտի կեսերին ադրբեջանական լրագրող և օպերատոր Չինգիզ Մուստաֆաևը Բաքվի իր տանը իրեն ցույց է տվել փետրվարի 29-ին և մարտի 2-ին նույն վայրում նկարահանած իր նյութերը և դրանց տարբերությունը և ասել, որ ինքը հիմա Բաքվում վախենում է առանց զրահաբաճկոնի շրջել [Բ-86]: Դանա Մազալովայի հետ զրուցող լրագրողը՝ Մարինա Գրիգորյանը, հարցնում է՝ «Ի՞նչ եք կարծում, որտեղ կարող են լինել հիմա Մուստաֆաևի նկարած իրական կադրերը»: «Հավանաբար այն հեռուստաընկերությունում, որտեղ նա աշխատում էր: Պետք է փնտրել»: Թվում է՝ քիչ հավանական է, որ հեռուստաընկերությունն այդ վտանգավոր կադրերը պահած լինի: Բայց դրանք անկասկած Բաքվում մի տեղ պահված պիտի լինեն՝ առնվազն այդ հրեշավոր գործն արածների նկատմամբ երբևէ օգտագործելու նպատակով: Հետաքրքիր է, թե որտե՞ղ կլինեն Ալլահվերդի Բաղիրովի և Մագգերամով Ասիֆի արած նկարահանումները:

Չինգիզ Մուստաֆաևի կողմից բարձրացված հարցերի հանրայնացումից հետո սկսվում են մեկնաբանությունները: Օրինակ, պատերազմի մասնակից Ռեյ Քերիմօղլուն ասում է, որ փետրվարի 29-ին, երբ դիակների մեջ կանգնած մարդիկ տեսել են Չինգիզի ուղղաթիռը և փախել, «մեր զինվորներն են եղել, որոնք հայերի հետ պայմանավորվելուց հետո գնացել էին դիակներ հավաքելու: Զինվորները գիտե՞ն, թե ուղղաթիռը որտեղից է գալիս: Դրանք կարող էին հայեր լինել, <կամ> ռուսներ, և նրանց կարող էին գնդակահարել: Այն ժամանակ շատ բարդ վիճակ էր, դրա համար էլ փախչում էին... Դա չի նշանակում, որ <Աղդամի մատույցների> դիակների <պղծումը> մեր զինվորների ձեռքի գործն է... Չնայած Ղարաղայան գրավել էինք, բայց Ասկերանը հայերի հսկողության տակ էր, նրանք ցանկացած ժամանակ կարող էին գալ և պղծել դիակները: Մյուս կողմից,

որոշ <պղծումներ> կարող էին անել գիշերը վայրի կենդանիները: Ինչո՞ւ ոչ ոք այդպես չի մտածում: Երկար ժամանակվա ընթացքում վայրի կենդանիների թիվը շատացել էր, որովհետև այդ տարածքում մարդկային ոտքեր քիչ կային» [Բ-108]: Մարդը «մոռանում է», որ պղծված դիակները հենց ադրբեջանական հսկողության տակ գտնվող Ղարաղայայի դիմաց էին, Աղդամի մատույցներում, ուր հայերը չէին կարող գնալ և պղծել: Պատմողն ըստ երևույթին չգիտեր նաև, որ Ալլահվերդի Բաղիրովն ու Սեիդաղա Մովսումովը փետրվարի 29-ին հայկական հսկողության տակ գտնվող Նախիջևանիկի ճանապարհի հայկական 5-րդ դիրքի մոտի դիակները տարել էին, ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող Շելլիի՝ Աղդամի մատույցների մոտինը չէին տարել, չնայած հավաստի է, որ այդտեղ եղել էին: Այդ դիակները պղծվել են փետրվարի 29–մարտի 2-ի միջակայքում, մեծ հավանականությամբ՝ փետրվարի 29-ի երեկոյան, գիշերը կամ մարտի 1-ին: Պղծման նպատակը կարող էր երկուսը լինել՝ միասին, կամ դրանցից մեկնումեկը. ա/ առավելագույնս նվազեցնել իրական սպանողներին ճանաչելու հնարավորությունը, բ/ պղծումը վերագրել հայերի բարոյական նկարագրին՝ դիակապիղծի հրեշավոր մեղադրանքով:

Կարող է հարց առաջանալ՝ ինչո՞ւ չեն տարել Աղդամի մատույցների դիակները, բայց տարել են հայկական 5-րդ դիրքի մոտինը: Կարող էին, չէ՞, երկու վայրերինն էլ թողնել: Պատճառները շատ են և շատ պարզ՝ ա/ հայկական 5-րդ դիրքի մոտ իսկապես բախում էր եղել հայերի և փախստականների հետ գնացող օմօնականների ու զինյալների միջև, բ/ այս զույգը հայկական տարածք էր մտել Վ. Բալասանյանի թույլտվությամբ՝ հայ երկու զինվորների ուղեկցությամբ, հենց դիակները տանելու նպատակով: Նրանք չէին կարող չտանել հայկական դիրքի մոտի դիակները: Բայց դրանից հետո գնացել են ադրբեջանական տարածք՝ Աղդամի մատույցներ, որտեղ նրանց հետ հայ զինվորները չէին կարող գնալ, և այնտեղ նրանք ազատ էին անել, ինչ ուզում էին, գ/ 5-րդ դիրքում հայեր էին կանգնած, դիակները թողնելու և դրանք ցուցադրելու դեպքում արտասահմանցի լրագրողները կարող էին հարցեր տալ հայերին, և լսել ադրբեջանցիների համար անցանկալի պատասխաններ, դ/ 5-րդ դիրքի մոտ զոհվածների մեջ շատ էին զինված մարտիկների մարմինները, որոնց առկայությունն ինքնին խնդրահարույց էր՝ ցրվում էր հայերի կողմից «անզեն քաղաքացիներին կոտորելու» առասպելը, ե/ հայերի ներկայությամբ չէին կարող տանել միայն օմօնականների և մարտիկների դիակները, իսկ խաղաղ բնակչությանը՝ կանանց, երեխաների..., թողնել, զ/ չէին կարող պղծել 5-րդ դիրքի մոտի դիակները՝ հայերն այդ կտեսնեին և կհանրայնացնեին, իսկ չպղծելու դեպքում հարցեր կառաջանային՝ ինչու և ինչպես է, որ հայերը չեն պղծել իրենց դիրքի մոտի դիակները, բայց կարողացել են պղծել ադրբեջանական վերահսկողության տարածքի դիակները և այլն, է/ Շելլին և նրա մոտով անցնող ճանապարհը վերահսկվում էր ադրբեջանցիների կողմից, կոնկրետ բնակավայրի կպած չէր, դիակները պղծելու ընթացքը

տեսնող և խանգարող չէր լինի: Ավելի հեշտ էր լրագրողներին տանել ադրբեջանցիների կողմից վերահսկվող տարածք, որտեղից նախապես հավաքված կլինեին մարտիկների դիակները, և հայտարարել, որ «այս դիակները հայկական Նախիջևանիկ գյուղի մոտ են»:

Կատարվել էր բառի բուն իմաստով հանցագործություն: Նախ վտանգի են ենթարկել Ասկերանի և Նախիջևանիկի ճանապարհով անցնող խաղաղ բնակչությանը, հետո հենց իրենք կոտորել են Նախիջևանիկի ճանապարհը հատած և Աղդամի մատույցներին հասածներին, հետո էլ հաջորդ օրերից մեկում վերադարձել են և պղծել դիակները: Այս ամենից հետո հանրայնացրել են «հայերի վայրագությունների» առասպելը: Խոջալուի գրավումից 6 օր հետո:

Հիմա արդեն հայ լրագրող Մ. Գրիգորյանի կողմից պարբերաբար բարձրացվող հարցերը՝ «Ո՞վ է մարդկանց ուղարկել ղարաբաղցիների կողմից պաշտպանվող Նախիջևանիկի ուղղությամբ: Ո՞վ է Աղդամից ակնհայտ սխալ տեղեկություն տվել: Ո՞ւմ էր ձեռնտու, որ Նախիջևանիկում մարտ լինի: Ո՞ւմ էր պետք հարձակվել հայերի մարտական դիրքի վրա և կրակն ուղղել խաղաղ բնակիչների դեմ» [Բ-87], կարծեք թե պատասխան ունեն: Տարօրինակ է, որ այս հարցերն Ադրբեջանում չեն տրվում: Կամ՝ Ադրբեջանին չեն տրվում:

Ադրբեջանում այս հարցերը չեն տրվում, հավանաբար, որովհետև սպասվող պատասխանը լավ գիտեն: Հարցի բարոյական կողմը, իսկապես, ծանր և դժվար բացատրելի է: Ինչպե՞ս կարող էին ադրբեջանցիները սպանել ադրբեջանցիներին, հետո պղծել դիակները: Բայց հենց որ հարցը տեղափոխենք վերացական ադրբեջանցիներից՝ ժողովրդից, կոնկրետ մարդկանց, պատասխան կլինի: Ի՞նչ կոնկրետ մարդիկ էին «Խոջալուի սպանդի» դերակատարները:

Հայրենիքի համար կռվելու պատրաստ նեյրոֆիզիոլոգ Քյամիլ Ալին 1992 թ. գնացել է Աղդամ: Հետո նա իր դիտարկումների մասին պատմել է Թոմաս դե Վաալին. «1992 թ. Աղդամում զորք որպես այդպիսին չկար: Կային հայերի դեմ կռվող վեց կամ յոթ առանձին խմբավորումներ: Այդ խմբերը ձևավորվել էին տեղական հանցագործների, բանդիտների կողմից, ովքեր սպանությունների կամ այլ հանցագործությունների համար տարիներ շարունակ եղել էին խորհրդային բանտերում... Այդ խմբերը միմյանց միջև կոնֆլիկտներ ունեին այնպես, ինչպես ունեին հայերի հետ: Օրինակ, պայմանավորվում էին ռուսական զենքի պահեստներ զավթել: Զավթելուց հետո մեկին հասնում էր հինգ տանկ, մյուսին՝ ոչ մեկը: Վերջ, այնուհետև նրանք թշնամիներ են: Այդ վեց խմբավորումներն ի վիճակի չէին միասին որևէ ռազմական գործողություն իրականացնել: Մեկը գրոհի էր գնում, մյուսն ասում էր՝ ես չեմ գնա, այսօր կռվելու ցանկություն չկա... Պատերազմը քրեականների համար լավ տեղ է... Կարելի է դանակով խփել, կարելի է սպանել... Այն ժամանակ մեր բանակը ղեկավարում էին հանցագործները» [Ա-37, 165]:

Այդ կազմավորումներից մեկի հրամանատարը,—շարունակում է Թոմաս դե Վաալը,—Յաղուբ Մամեդն էր... Նրա ջոկատը տեղավորված էր քաղաքի գերեզմանատանը: Նրան հետո ձերբակալել են զոհված զինվորների մարմինները սառցարաններում պահեստավորելու և նրանց հարազատներից փող շորթելու մեղադրանքով: Մեկ այլ հրամանատար էր մարդասպանության համար բանտ նստած և հենց նոր ազատված Ասիֆ Մագերրամովը: Նրա մականունը «Ֆրոյդ» էր, քանի որ ինտելեկտուալի համարում ուներ:

Թոմաս Հոլցը Աղդամում հարցրել է պատանդների ճակատագրի մասին, և նրան ուղարկել են Յաղուբ Մամեդի մոտ: Այս մարդը զբաղվում էր հայ պատանդներին և ադրբեջանցի զոհված զինվորների մարմինները իրենց հարազատներին վաճառելու առևտրով: Հոլցը տեսել է Աղդամի հին գերեզմանատանը գտնվող Յաղուբ Մամեդի «աշխատատեղը», տեսել է զոհված ադրբեջանցի երիտասարդների սառույցի վրա պահվող տասնյակ դիակները, տեսել է այդ դիակների մշակման գործողությունները [Ա-36, 149–152]:

Ծանոթ անուններ են, այնպես չէ՞: Այս պատմության Յաղուբ Մամեդը նույն ինքը՝ Յաղուբ Ռզաևն էր կամ Ալա Յաղուբը: Նույն մարդը, որ Խոջալուին օգնություն ուղարկված տանկերից երկուսը յուրացրել էր: Սրանց ավելացնենք նաև Ալիֆ Հաջիևին, և առհասարակ կիսաքրեականներից հավաքագրված օմօնականի մասին Յու. Գիրչենկոյի տված բնութագիրը: Այն օմօնականների, որոնք արդեն ամիսներ շարունակ զբաղված էին քաղաքացիական բնակչության կողոպուտներով, կոտտանքներով և սպանություններով: Ահա թե ովքեր են Խոջալուի խաղաղ բնակչության սպանդի իրականացնողները: Հենց այս կարգի մարդիկ էին Սումգայիթում, Բաքվում գլխավորում ոչ թե պարզ մարդասպաններին, այլ սպանությունը դաժանագույն կոտտանքների վեր ածելուց հաճույք ստացող հրոսակներին: Այդ կարգի մարդիկ էին կարող Սումգայիթում անել այն, ինչի մասին 1988 թ. փետրվարի 29-ին տեղի ունեցած ԽՍՀՄ ԿԿ Քաղբյուրոյի նիստին պատմում էր ոչ ավել, ոչ պակաս ԽՍՀՄ Պաշտպանության մինստր Դմիտրի Յազովը. «Երկու կնոջ կրծքերը կտրել են, մեկի գլուխն են կտրել, մի աղջնակի մաշկը քերթելով հանել են: Ահա այսպիսի վայրենություններ: Որոշ կուրսանտներ դրանք տեսնելով ուշաթափվում էին...» [Բ-37, 82–90]:

Այդ նյութերին ամեն մարդ կարող է ծանոթանալ եղած քիչ հրապարակումներից [Ա-26, Բ-32]: Քիչ՝ քանի որ «Խորհրդային մամուլը ավանդույթ չունի կրքեր բորբոքելու սպանությունների, բռնաբարությունների, նվաստացումների, ջարդերի սիրտ սառեցնող զգայական պատմություններով» [Բ-30]: Բայց, ավելի կարևորը՝ կարող է ծանոթանալ չնայած կիսատ-պռատ ընթացած, բայց այնուամենայնիվ քննությամբ անցած Սումգայիթի դատավարության նյութերից [Ա-25, 24,25...; Բ-25, 149-160, Բ-58]: Դրանք արդեն հաստատ չեն կարող որակվել իբրև հորինված բանավոր պատմություններ: Այդ նյութերն իսկապես չափազանց խոսուն են, բայց այստեղ կհետևենք խորհրդային ավանդույթին և դրանք չենք

նկարագրի: Ցանկացած հետազոտող կնկատի, եթե նյարդերը տեղի չտան, թե որքան նույնական են սումգայիթյան բռնությունները և Աղդամի մատույցների Խոջալուի զոհերի նկատմամբ խոշտանգումները: Նույն ձեռագիրն է: Ջանազան տեղական մարտերի հետևանքով հայկական վերահսկողության գոտում զոհված խոջալուցիների մարմինների պղծման երևույթներ չեն վավերացվել ոչ Ասկերան-Աղդամ, ոչ Ասկերան-Նախիջևանիկ ճանապարհին:

Անշուշտ պետք է հաշվի առնել նաև ժամանակի՝ անիշխանության, ներքին և արտաքին քաղաքական կատաղի պայքարի, հասարակության տականքի ջրի երես դուրս գալու գործոնը: Ցավոք, զանազան քաղաքական հաշվարկներով այս կարգի սադիստ քրեականների պաշտպանության ստանձումը, ավելին՝ հերոսացումը նրանց արարքներին ի վերջո «մասնակից» է դարձնում նաև հասարակությանը:

Կարծում եմ, նյութերը թույլ են տալիս վերականգնել ու դեպքերի զարգացումների այսպիսի հնարավոր պատկեր.

1. Փետրվարի 25–26-ի գիշերը, մինչ հայերը գրավում էին Խոջալուն, հայկական Խրամորթ գյուղը գրված Ալա Յաղուբ/ Յաղուբ Ռզաևի գլխավորած խումբը, և ադրբեջանական 19-րդ դիրքում գտնվող ադրբեջանցիները Ալլահվերդի Բաղիրովի հետ համաձայնությամբ հարձակում են ձևացրել Ասկերանի դեմ՝ հայերի ուշադրությունը Աղդամից Նախիջևանիկի ուղղությամբ շարժվող Ալլահվերդի Բաղիրովի նախաձեռնությունից շեղելու համար: Արդյունքում Ասկերանի ամրոցի մոտ փոխհրաձգություն է հրահրվել, որին կամա-ակամա ներքաշվել են պարտված Խոջալուից դուրս եկածները, ինչի հետևանքով զոհվել են ոչ միայն երկու կողմերի զինվածները, այլ նաև Խոջալուից նահանջող խաղաղ բնակչության ներկայացուցիչներ: Նահանջողների մի մասը այդ վայրից խուճապահար մտել է անտառները և շարժվել հայկական Քյաթուկ գյուղի ուղղությամբ՝ Աղդամ գնալու: Մյուսները շարունակել են ճանապարհը դեպի Աղդամ:
2. Փետրվարի 25–26-ի գիշերը Ժողովրդական Ճակատի Աղդամի խմբերից կազմված միացյալ ջոկատը, Ալլահվերդի Բաղիրովի գլխավորությամբ, գնացել է Աղդամի շրջանի Շելլի ադրբեջանական գյուղ, որի մարտիկների հետ գրավել է հայկական Նախիջևանիկ գյուղի՝ Շելլիի հետ սահմանային դաշտային հողատարածքում գտնվող Ղարաղայա/ Լաչինղոյ բարձունքը և դիրքավորվել այդ գյուղի մոտ, նպատակ ունելով այս կամ այն կերպ այդ գիշեր գրավել հայկական Նախիջևանիկը: Այդ նպատակով Ալլահվերդի Բաղիրովը կապվել է Խոջալուում գտնվող Ալիֆ Հաջիևի հետ և նրա հետ համաձայնեցրել իր ծրագիրը: Կամ՝ վերածրագրավորել նախապես համաձայնեցված գործողությունները:

3. Խոջալուից դուրս եկած բնակչության մի մասին քաղաքի ՕՄՕՆ-ի ղեկավար և քաղաքի պաշտպանությունը գլխավորող Ալիֆ Հաջիևը և քաղաքագլուխ Էլմար Մամեդովը խաբել են, որ հայկական Նախիջևանիկ գյուղը գրավված է ադրբեջանցիների կողմից, և նրանց տարել են անտառային վտանգավոր ճանապարհով՝ մտադրություն ունենով Ալլահվերդի Բաղիրովի հետ Նախիջևանիկը գրավելու:
4. Փետրվարի 26-ի առավոտյան Խոջալուից փախստականների առաջին խումբը հանդիպել է Նախիջևանիկը պաշտպանող հայ դիրքապահներին, Ալիֆ Հաջիևն իր մարտիկների հետ նախահարձակ է եղել, այստեղ կարճ մարտ է տեղի ունեցել, որի ժամանակ զոհվել են Հաջիևը, մարտիկների մի մասը, սպանվել և վիրավորվել են անզեն մարդիկ՝ տղամարդիկ, կանայք, երեխաներ: Զոհեր և վիրավորներ են ունեցել նաև հայերը:
5. Մարտից հետո խոջալուցիները շարունակել են ճանապարհը դեպի Աղդամ, բայց 2–2,5 կիլոմետրից՝ բլուրն անցնելուց և դեպի Շելլի թեքվելուց հետո նրանց դեմ կրակ են բացել Շելլիի մոտ դիրքավորված Ալլահվերդի Բաղիրովի ջոկատի մարդիկ, ենթադրենք՝ Խոջալուի փախստականներին շփոթելով հայկական 5-րդ դիրքից սպասվող հայ փախստականների հետ: Միակողմանի կրակահերթից զոհվել են տասնյակ մարդիկ:
6. Աղդամում իշխանություններն այս դեպքի մասին լռել կամ թաքցրել են, և փետրվարի 27-ի երեկոյան ուղղաթիռ են ուղարկել Աղդամի դատախազության քննիչի հետ, ըստ օդաչուի ցուցմունքի՝ տարել են «վիրավոր մարտիկներին»: Այլ կերպ ասած՝ խաղաղ բնակչության դիակների միջից տարել են վիրավոր մարտիկներին և զինված տղամարդկանց մարմինները: Ենթադրելի է՝ որ քննիչը զննել է տեղանքը, թերևս հանցագործության հետքեր կամ ապացույցներ է փնտրել:
8. Փետրվարի 29-ին Ալլահվերդի Բաղիրովն ու Սեիդաղա Մովսումովը հայերի համաձայնությամբ զինվորներ են բերել և հավաքել են հայկական 5-րդ դիրքի մոտի դիակները, որից հետո իբր գնացել են Աղդամի մատույցների՝ Շելլիի մոտի դիակները հավաքելու, բայց դրանք չեն տարել: Ենթադրելի է, որ գնացել են քննիչի կողմից նկատված հանցանշանները վերացնելու:
9. Նույն օրը նույն վայրն է գնացել լրագրող-օպերատոր Զինգիզ Մուստաֆաևը, նկարել է դիակները: Հնարավոր է՝ իր ներկայությամբ խանգարել է հանցանշանները վերացնելու մտադրությունը, քանի որ նրան բերող ուղղաթիռը տեսնելով՝ դիակների մեջ շրջող ադրբեջանցիները հեռացել են դեպի Շելլի:
10. Փետրվարի 29-ի գիշերը կամ մարտի 1-ին ինչ-որ մարդիկ նույն վայրն են եկել, ըստ երևույթին հանցագործության հետքերը վերացնելու: Այն դի-

ակները, որոնցով հավանաբար կարելի էր հասկանալ մարդկանց զոհվելու իրական աղբյուրը, ջարդոտել են, գանգամաշկը հանել կամ այլ ձևերով պղծել:

11. Մարտի 2-ին լրագրողների խմբի հետ Աղդամից կրկին նույն վայրն է եկել Զինգիզ Մուստաֆաևը, տեսել են արդեն պղծված դիակներ: Լրագրողներին ասվել է, որ իրենք տեսնում են հայկական Նախիջևանիկ գյուղի մոտի սպանվածներին, չնայած իրականում ոչ Նախիջևանիկի մոտ են տարել, ոչ հայկական 5-րդ դիրքի մոտ՝ այնտեղ արդեն դիակներ չկային:
12. Աշխարհով մեկ տարածել և շարունակում են տարածել հայերի ցեղասպանական գործողությունների մասին կեղծ տեղեկություններ:

Ցանկության դեպքում Ադրբեջանի պատկան մարմինները շատ հեշտ կարող էին բացահայտել իրողությունը՝ ի՞նչ է եղել և ինչպե՞ս են կոտորվել հայկական 5-րդ դիրքի մոտով անցած առաջին խմբի խոջալուցիները Շելլիի մոտ՝ ադրբեջանական վերահսկողության տարածքում, որտեղ նաև ադրբեջանական ռազմական կազմավորում կար: Չափազանց շատ կային վկաներ և «դեպքին» իրազեկ մարդիկ: Դրանց մեջ էին նախ և առաջ հենց այդ տարածքից փրկված խոջալուցիները: Բայց նրանք լռել են կամ նրանց լռեցրել են: Վկա-ականատեսների մեջ էին նաև, իհարկե, հանցագործության մասնակիցները, այդ թվում Շելլիի մոտ, Ղարաղայայում դիրքավորված Ալլահվերդի Բաղիրովի, Յաղուբ/Ալա Ռզաևի, Մազգերամով/Ֆրեդ Ասիֆի մարդիկ: Այն նույն Ալա Յաղուբի, որն ասել է, որ ինքը կարող էր լույս սփռել Նախիջևանիկի մոտի կոտորածի վրա, ինչպես նաև էական մանրամասնություններ պատմել պետական գործիչներ տարած ուղղաթիռի՝ Ղարաբաղի երկնքում կործանվելու մասին: Այս խոսքերից հետո Ալա Յաղուբը դարձել է Ադրբեջանի Ազգային ճակատի համար վտանգավոր և վերացման ենթակա. 1992 թ. ամռանը ձերբակալվել և անհայտ հանգամանքներում մահացել է բանտում [Ա-24, 255]: Փաստորեն, Ալա Յաղուբին նույնպես կարելի է համարել Խոջալուի զոհերից մեկը: Բայց գուցե նախ՝ Խոջալուի փախստական զոհերի դահիճներից մեկը: Դահիճը և զոհը միաժամանակ:

Ադրբեջանական այս նյութերին ծանոթ հայ պատմաբան Վահրամ Աթանեսյանը 2012 թ. հարց է տալիս՝ «Իսկ ո՞ւր են գնացել այդ մարդիկ՝ ՆԳՄ հատուկջոկատայինների հրամանատար Ռովշան Ջավադովը, Գաթիր Մամեդը, Ալլահվերդի Բաղիրովը, Շիրին Միրզոևը, Խուդի Խուդիևը: Հայտնի՞ է, թե որտեղ են գտնվել նրանք փետրվարի 26-ի գիշերը և առավոտյան, ցերեկը, ի՞նչ առաջադրանք են կատարել» [Ա-1]: Հիշեցնեմ՝ Ալլահվերդի Բաղիրովի որդին ասել է. «Նրանք հակագրոհում էին, որի հետևանքով շատ մարդիկ ողջ-առողջ Խոջալուից եկան Նախիջևանիկ-Շելլիի ուղղությամբ»: Իրականում պետք է ասվեր. «Նրանք այն ժամանակ հակագրոհում էին, որի հետևանքով Խոջալուից ողջ-

առողջ դուրս եկած ահագին մարդ անցան Նախիջևանիկ–Շելլի ուղղությամբ և շատերը տեղ չհասան»:

Ցանկության դեպքում, այո, շատ հեշտ էր բացահայտել «Խոջալուի առեղծվածը»: Բայց ինչո՞ւ բացահայտել իրենց շատ հայտնի երևույթը, եթե այն՝

ա/ ստվերելու էր օմօնականների վայրագություններով արդեն իսկ վարկաբեկված ադրբեջանական «ինքնապաշտպանությանը» և Ժողովրդական Ճակատի մարտիկներին,

բ/ լրացուցիչ վարկաբեկելու էր Բաքվի հայերի կոտորածներով «անուն վաստակած» Ադրբեջանի Ժողովրդական Ճակատին,

գ/ նվազեցնելու էր հայկական «բանդիտական կազմավորումների» մասին հյուսվող առասպելների քարոզչական ազդեցությունը,

դ/ թերևս ամենակարևորը՝ կարելի էր օգտագործել և Ազգային Ժողովրդական Ճակատի կողմից լայնորեն օգտագործվեց ներքաղաքական նպատակով՝ Այազ Մութալիբովի իշխանության դեմ:

Շատերը վստահ են, որ «Խոջալուի պարտությունը» և բնակչության նահանջի ճանապարհի ողբերգությունները հենց իշխանափոխության նպատակով էր կազմակերպված: Բոլորին հայտնի է 1992թ. ապրիլի 2-ին «Նեզավիսիմայա գազետային» տված հարցազրույցում Ադրբեջանի այն ժամանակ արդեն նախկին նախագահ Այազ Մութալիբովի ասածը. «Ինչպես ասում են այն խոջալուցիները, որոնք փրկվել են, այդ ամենը կազմակերպված է եղել, որպեսզի առիթ լինի իմ հրաժարականի համար: Ինչ-որ ուժ է գործել նախագահին վարկաբեկելու համար: Ես չեմ կարծում, թե հայերը, որոնք շատ ճշտորոշ և բանիմացությամբ էին գործում նման իրավիճակներում, կարող էին թույլ տալ, որ ադրբեջանցիները ֆաշիստական գործողություններում իրենց իսկ մերկացնող փաստաթղթեր ստանան… Կարելի է ենթադրել, որ ինչ-որ մեկը շահագրգռված է եղել, որ հետագայում այդ կադրերը ցուցադրվեն ԳԽ նստաշրջանում, ու ամեն ինչ շուռ տան իմ անձի դեմ: Եթե ես հայտարարեմ, որ դա ադրբեջանական ընդդիմության մեղքն է, կարող են ասել, թե ես նրանց զրպարտում եմ: Բայց դատողությունների ընդհանուր ֆոնն այնպիսին է, որ միջանցքը, որով մարդիկ կարող էին հեռանալ, հայերը, այնուամենայնիվ, թողած են եղել: Այդ դեպքում նրանք ինչո՞ւ պետք է կրակեին: Առավել ևս, Աղդամին մոտ տարածքում, որտեղ այդ ժամանակ բավականաչափ <ադրբեջանական> ուժեր կային, որոնք կարող էին դուրս գալ և օգնել մարդկանց»:

Իսկ թե որքան ադրբեջանական ուժեր կային այդ ժամանակ Աղդամում՝ ներկայացրել է պաշտպանության նախարար Ռահիմ Ղազիևը՝ պատասխանելով «Ռեալնի Ազերբայջան» թերթի թղթակցի հարցին.

«Փետրվարի 25-ի գիշերը Աղդամում կային Տ-72 տիպի 12 տանկ, 12 միավոր ՀՄՄ-2, 4 հատ «Գրադ» կայանք, 44 զրահատեխնիկա, 40 հրանոթ և 2500 զինվորներ: Այդ բոլոր ուժերը կարող էին նետվել օգնության, սակայն դա տեղի չունեցավ... Բավական էր «Գրադից» կրակ բացել: Իսկ մենք լավ նշանառու ունեինք՝ ռուս զինվոր Ինչիպիրենկոն: Նա կարող էր «Գրադից» խոցել ցանկացած թիրախ: Պատկերացնո՞ւմ եք: Հետո պարզվեց, որ «Գրադն» անհետացել է: Չկարողացան գտնել…» [Բ-66]:

ե/ կարող էր և լայնորեն օգտագործվեց թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից արտաքաղաքական նպատակներով՝ հայերին ջարդարար, ադրբեջանցիներին զոհ ներկայացնելու, Սումգայիթի, Բաքվի ջարդերը ստվերելու համար,

զ/ նպաստեց հայերի դեմ ադրբեջանական ատելությունը համախմբելու, մոբիլիզացնելու գործին, հընթացս՝ օգնեց նաև ադրբեջանական չավարտված ինքնության հետագա զարգացումներին,

է/ օգտագործվեց մի կողմից սումգայիթյան և Բաքվի կոտորածների կապակցությամբ ադրբեջանական բարդույթը չեզոքացնելու, մյուս կողմից՝ «ադրբեջանական ցեղասպանության» թեզը զարգացնելու համար,

ը/ ծառայեցվեց գուցե չծրագրավորած, բայց հընթացս հարմարեցված նպատակի՝ Ադրբեջանի իրանալեզու և կովկասալեզու ազգային փոքրամասնությունների՝ հայերի հանդեպ առկա և հնարավոր համակրանքը ջարդելու, վախեցնելու և նրանց ազգային ազատագրական հնարավոր միտումները չեզոքացնելու:

Չինգիզ Մուստաֆաևը պիտի փորձեր ականատես վկաների հետ զրույցներով հասնել ճշմարտությանը: Նույնիսկ Խոջալուի քաղաքագլուխ Էլման Մամեդովը նրա հետ տեսա-հարցազրույցներից մեկի ժամանակ պիտի ասի. «Մենք չգիտենք **ում վրա դնենք** այս դժբախտությունը և պատմությունն ում կմեղադրի սրանում»[52]:

Երկու ամիս անց, 1992թ. ապրիլին, դառնացած Չինգիզ Մուստաֆաևը Խոջալուի դեպքերը քննող հանձնաժողովին պիտի ասի. «Ես մինչև հիմա չեմ հասկանում, ինչո՞ւ մեր պոստից 600–700 մետրի վրա, որտեղ մեր զինվորներն ազատ ման են գալիս, այդ դիակներն ընկած էին և ոչ ոք դրանք չէր հավաքում: Դրա հետ էլ խոսում են, թե իբր փոխանակության, դիակները դուրս բերելու շուրջ դժվար բանակցություններ են գնում: Իբր այնտեղ թակարդ է եղել, այնտեղ հայեր են նստած եղել, մերոնց են սպասել, այնտեղ հնարավոր չէր ընկ-

[52] 1992թ. կատարված Չինգիզ Մուստաֆաևի այս տեսա-հարցազրույցը տեղադրված էր http://xocali.net/RU/Mamedov-Mustafayev.htm հասցեով: Այն այժմ չի աշխատում: Տե՛ս https://www.fmgnews.info/70810-hodzhalu-azerbaydzhancy-ubivali-ih-po-prikazu-geydara-alieva.html (դիտումը՝ 28.12.2020)

նել: ...Եթե չբացահայտվի... ես այս փաստերը, նկարած փաստերը, բոլորն ինձ մոտ են, ես կխնդրեմ հանձնաժողովին, քանի դեռ իրենք աշխատում են... Բայց ինձ թվում է... ես վախենում եմ, որ այս հանձնաժողովն էլ, ինչպես հունվարյան ողբերգության, ուղղաթիռի ողբերգության հանձնաժողովը, կասի, թե «եկեք մի 5–6 տարի նստենք, քննարկենք, իսկ այդ ընթացքում այն սև ուժերը, որոնք այս ամենը կազմակերպում են... նրանք ամեն օր կրկին ինչ-որ բան կազմակերպում են: Ադրբեջանում ժողովրդի դեմ մեզ հայտնի որևէ հանցագործություն չի բացահայտվել»: Եվ հանձնաժողովի նիստը վարող Թամերլան Կարաևը՝ Ժողովրդական Ճակատի Միլլի Մեջլիսի նախագահի տեղակալը, լուրջ դեմքով կպատասխանի. «Չգիտեմ: Սա նույնպես հազիվ թե բացահայտվի»:

Մեկ ամիս անց, մայիսի 10-ին, հայերի կողմից Շուշին գրավելու հաջորդ օրը, Ալլահվերդի Բաղիրովը Նախիջևանիկը գրավելու երրորդ փորձը կանի: Նա կմասնակցի Ասկերանի դեմ գրոհին, բայց «չկարողանալով Ասկերանը գրավել, Մուղանլու գյուղի կողմից շեղվել են, ճեղքել են հայերի պաշտպանությունը, գյուղի կողքով մտել են Աղբուլաղ, Դահիրազ և Արանզամին՝ Վարազաբուն, Փրջամալ գյուղերը... գյուղացիները հեռացան, թվով տասը կին մնացին Վարազաբունում, այդ թվում Բաքվից փախստական բուժքույր Նադյա Բաղդասարյանը... Մի քանի ժամից հայերը ետ են գրավել գյուղը, շատ տներ արդեն վառված էին, այդ թվում Նադյա Բաղդասարյանի տունը: Տասը կանայք անհետացել էին, պատանդ կանանցից մեկը՝ Երանիկը, ետ է վերադարձել, հետը բերելով Նադյա Բաղդասարյանի նամակը, որով գրում էր, որ թուրքերը տասը կանանց կվերադարձնեն մի տանկիստի դիմաց... Փրջամալ, այժմ Վարդաձոր գյուղից մի ընտանիք, Լաուրա Մելքումյանի ազգականը Ռյազան է տեղափոխվում, հանդիպում է մի թուրք կնոջ, և նա պատմում է ինը կանանց ճակատագիրը, մի փոս են փորել, կանանց լցրել են մեջը, բենզին լցրել և վառել: Պատմող թուրք կինը, զարհուրած, հեռացել է գյուղից» [Բ-69]:

Եվս մեկ ամիս անց, 1992 թ. հունիսի 12-ին Ալլահվերդի Բաղիրովը չորրորդ անգամ կկրկնի իր երազանքին հասնելու փորձը՝ Ժողովրդական Ճակատի նրա գլխավորած զունդը կրկին կմասնակցի Ասկերանի շրջանի՝ Աղդամի շրջանին հարակից հայկական Նախիջևանիկ, Փիրջամալ, Արանզամին (ներկայիս Վարազաբուն), Դահիրազ, Միրիքենդ գյուղերի գրավմանը: Գյուղերը կգրավվեն, կհրդեհվեն, իսկ բնակիչները կդառնան փախստականներ: «Հերոս Ալլահվերդի Բաղիրովի» ռազմական հաղթանակներից կարևորվում է Արանզամին գյուղի գրավումը, որտեղ նա «թողել է հայերի 100 դիակ և թշնամու տասը գերի է վերցրել» (100 erməni meyiti və 10 düşmən əsiri bahasına alındı Aranzəmin») [Բ-109]: «100 դիակը» երևի Բաղիրովի փշրված բյուրեղյա երազանքն էր: Արանզամինցիներն ասում են, որ գյուղը գրավելիս ունեցել են հինգ զոհ:

Հունիսի 12-ին Նախիջևանիկի մոտի դիրքերի ստուգումից վերադառնալիս Բաղիրովի մեքենան կպայթի հակատանկային ականի վրա հենց Արանզամին

գյուղի մատույցներում: Մեքենայի հինգ ուղևորներից կզոհվեն երկուսը՝ Բաղիրովն ու վարորդը: Նրան թաղելու գերեզմանափոս էր նախապատրաստվել Բաքվի Շեհիդների ծառուղիում, բայց ընտանիքի ցանկությամբ թաղվել է Աղդամի Շեհիդների գերեզմանատանը: Բաղիրովի որդին կասկածում է, որ հորը սպանել են նրա քաղաքական հակառակորդները [Բ-105]:

Հաջորդ օրը՝ հունիսի 13-ին, Նախիջևանիկ գյուղի մոտակայքում կսպանվի Չինգիզ Մուստաֆաևը (այլ տարբերակով՝ կզոհվի բեկորից): Ջուր չէր Այազ Մութալիբովը նրան խորհուրդ տվել «լուռ մնալ, թե չէ կսպանեն»: Թաղված է Բաքվի հերոսների ծառուղիում՝ ճակատագրի հեգնանքով Ալլահվերդի Բաղիրովի համար նախապատրաստված գերեզմանափոսում [Բ-106]: Թե՛ Ալլահվերդի Բաղիրովը, թե՛ Չինգիզ Մուստաֆաևը Ադրբեջանի ազգային հերոսներ են: Հետմահու: Չինգիզի սպանությունը մինչև այսօր քննարկվող թեմաներից է՝ ո՞ւմ էր անհրաժեշտ նրա մահը:

Ադրբեջանի ազգային հերոս է նաև Ալիֆ Հաջիևը: Խոջալուի պաշտպանության ղեկավարը, ՕՄՕՆ-ի պետը, Խոջալուի խաղաղ բնակչության բազմաթիվ զոհերի պատճառը: Նրա քրեական անցյալն այսօր առասպելականացել է որպես գաղափարների համար տուժած զոհի, չնայած նրան ճանաչողները բոլորը հիշում են և գիտեն, որ նույնիսկ համեմատաբար խաղաղ պայմաններում նա Ղարաբաղի միակ օդանավակայանում իր ցինիզմով և լկտիությամբ հայ կանանց ու աղջիկների ահ ու սարսափն էր, և նույնիսկ հպարտությամբ գրում են, որ «**այն ժամանակ շատ հայերի, ովքեր օդանավակայան էին գնում, դժոխք էր ուղարկել...**» [Բ-107]: «Այն ժամանակ»՝ այսինքն 1990–91 թթ.: 1992 թ. փետրվարի 26-ին այս ահաբեկիչ քրեական հանցագործը իր անփառունակ մահկանացուն կնքեց՝ իր հետ «տանելով» Խոջալուի անմեղ խաղաղ բնակիչներին: Նույնիսկ իր արարքը չգիտակցելով՝ Ալիֆ Հաջիևը Ադրբեջանին քաղաքական ծառայություն մատուցեց՝ «Խոջալուի ցեղասպանության» առասպելը:

Դեպքերից շատ ավելի ուշ, 13 տարի անց, լրագրող Էյնուլլա Ֆաթուլաևը հանդիպել է Խոջալուի՝ Նավթալանում ժամանակավորապես հանգրվանած փախստականներին, զրուցել նրանց հետ: Հանդիպումներից հետո գրել է. «... նրանք բաց խոստովանում էին... որ <Խոջալուի գրոհից> օրեր առաջ հայերը ծրագրվող գործողության մասին անընդհատ բարձրախոսերով զգուշացնում էին բնակչությանը, քաղաքացիներին առաջարկում էին դուրս գալ շրջափակումից և գնալ Կար-Կար գետի կողքի մարդասիրական միջանցքով: Խոջալուցիների խոսքերով իրենք օգտվել են այդ միջանցքից, որից դուրս գտնվող հայ զինվորներն իսկապես իրենց վրա չեն կրակել (խոսքը Խոջալու-Ասկերան-Աղդամ ճանապարհի մասին է – Հ. Խ.): Ժողովրդական Ճակատի որոշ զինվորներ ինչ-որ <պատճառով> խոջալուցիների մի մասին տարել են Նախիջևանիկ գյուղի մոտ, որն այդ ժամանակ գտնվում էր հայերի Ասկերանի գնդի վերահսկողության տակ (իրականում հայկական գյուղի բնակիչները դեռևս շարունակում էին ապ-

րել իրենց բնակավայրում, չնայած բազմաթիվ հարձակումներին: Նրանք գյուղը լքել և փախստական են դարձել նկարագրվող դեպքերից չորս ամիս անց՝ հունիսին կատարված լայնածավալ հարձակումից հետո – Հ. Խ.): Իսկ մնացած մասը հրանոթային համազարկի է ենթարկվել Աղդամի շրջանի մատույցներում» [Ա-26]:

Այս ամփոփման համար Էյնուլլա Ֆաթուլաևը կենթարկվի հետապնդումների և կձերբակալվի: Տարիներ անց Եվրոպական դատարանը նրան կարդարացնի: Դատական նյութերում կարդում ենք. «...Կար-Կար գետն անցնելով, փախստականների մի մասը բաժանվել է և ինչ-որ պատճառով շարժվել Նախիջևանիկի կողմը: Ազգային Ժողովրդական Ճակատի զորամասերն ըստ երևույթին ոչ այնքան ջանացել են Խոջալուի խաղաղ բնակչությանը փրկելու, որքան Ա. Մութալիբովին [Ադրբեջանի առաջին նախագահին] տապալելու ճանապարհին ավելի շատ արյուն թափելու...»: «Ես եղա այդ քաղաքում [Նավթալանում], *որտեղ խոսեցի հարյուրավոր (կրկնում եմ՝ հարյուրավոր) փախստականների հետ, որոնք պնդում էին, որ միջանցքը կար, և որ իրենք կենդանի են մնացել այդ միջանցքի շնորհիվ... հասկանում եք, դա պատերազմ էր և ճակատի գիծ... Իհարկե, հայերն սպանում էին [խաղաղ բնակչությանը], բայց Խոջալուի բնակչության մի մասի դեմ կրակել են մեր [զորքերը]... Դա միտումնավոր էր, թե ոչ, պետք է պարզեն քննիչները... [Նրանք սպանվել են] ոչ թե [ինչ-որ] խորհրդավոր [հրձիգների], այլ ԱԺՃ-ի զորամասերի սադրիչների կողմից... [Դիակները] պղծվել են մեր սեփական...*» [Բ-99]: Իսկապես, իրականությունն այնքան հասկանալի, պարզ ու հայտնի էր, որ այն շատերը գիտեին: Ադրբեջանի Գերագույն Խորհրդի նախագահ, Մութալիբովի հրաժարականից հետո նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Յաղուբ Մամեդովը (չշփոթել Աղդամի քրեական Յաղուբ Մամեդով/Ալա /Գաթիր/Մամեդ Ռզաևի հետ) շատերի փոխարեն է ասել, որ ինքը լավ գիտի, թե ում խղճին է Խոջալուի ողբերգությունը [Բ-36]: Գիտի, շատերը գիտեն: Դա ոչ ձեռնտու, հանցագործ և անամոթ իրականություն է, և միաժամանակ շատ ցանկալի՝ այն գլխիվայր շուռ տալու: Իմացողների համար՝ նաև վտանգավոր:

■
Ի՞ՆՉ Է ՊԱՏԱՀԵԼ ԱՍԿԵՐԱՆՈՒՄ ԵՎ ԱՍԿԵՐԱՆ - ԱՂԴԱՄ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Խոջալուից արևելյան ճանապարհով անցնող փախստականների հետ գնացող օմօնականների, Խոջալուի ինքնապաշտպանության մարտիկների, Խոջալուի քաղաքագլխի օրինակով տեսանք, որ Խոջալուի խաղաղ բնակչության հետ զինված մարդիկ շատ կային: Քանի որ Խոջալուն գրավող հայերը չէին կարողացել զինաթափել բնակավայրը լքող բնակչության հետ դուրս եկող մարտիկներին և օմօնականներին, զինվածներ կային նաև հատկացված միջանցքով գնացողների մեջ: Յուրի Գիրչենկոն հենց այդ ճանապարհով գնացողների մասին է գրել, որ «փախստականների որոշ խմբերում կային ադրբեջանական օմօնականներ և ուղղակի զինված մարդիկ քաղաքի գարնիզոնից: Այդ զինված ջիգիթները, հայկական դիրքերը տեսնելով, նրանց դեմ կրակ էին բացում... **Հայերը պատասխանում էին, զոհերի քանակն ավելանում էր** (ընդգծումը իմն է – Հ.Խ.)» [Բ-84, 8]: Սամվել Բաբայանի պատմածի համաձայն, այդպիսի ընդհարում էր եղել Ասկերանի ամրոցի մոտ, այն հատվածում, որտեղից ճանապարհը շեղվում է Քյաթուկի կողմը: «Փախստականների հետ դուրս էին եկել նաև Խոջալուն պաշտպանող զինված խմբերը՝ իրենց զենքերի հետ միասին, <և> մի մոմենտ մի շկվալնի կրակ ա էղել էդ գետի ափով գնացող թուրքերի կողմից»: Հնարավոր է՝ հենց այս դեպքը նկատի ունի Աղդամում գտնված ռուսական բանակի սակրավորների գումարտակի մայոր Յուրի Գիրչենկոն, որի պատմությամբ ադրբեջանցիներն Աղդամից փորձել են ճեղքել ազատ միջանցքը: Նրանց հետ են եղել նաև Աղդամում գտնվող սակրավորների գումարտակից մի քանի ենթասպաներ և <Աղդամի> թաղային միլիցիոներ, ավագ լեյտենանտ Վագիֆ Իսկենդարովը: Ենթասպաներից երկուսը և թաղային միլիցիոները զոհվել են. «...Այն պահին, երբ հայ դիրքապահները ետ էին մղում այդ գրոհը, նրանց թիկունքից մոտեցել են Խոջալուի առաջին փախստականների խմբերը, որոնց մեջ օմօնականներ կային: Օմօնականները կրակ են բացել <հայերի> դիրքերի վրա... Դիրքերից մեկն ամբողջովին ոչնչացել է: Բայց կար նաև երկրորդ դիրքը, որի գոյության մասին ադրբեջանցիները չեն իմացել: Եվ այդ դիրքից մոտիկ տարածությունից հայերն սկսել են գնդացիրից կրակել զինված ու անզեն ադրբեջանցիների վրա» [Բ-84, 9]:

Գիրչենկոյի պատմությունից հետևում է, որ փետրվարի 26-ին Խոջալուից դուրս եկած բնակչության ճանապարհին Աղդամից հայտնված ադրբեջանական

զինված խմբավորումը միայն Շելլիի մոտ՝ Լաչինղոյի բարձունքը գրված Ալլահվերդի Բաղիրովի «կոալիցիոն խումբը» չի եղել: Աղդամ–Ասկերան ճանապարհին այլ խմբեր էլ են հայտնվել: Այդ թվում՝ Ալլահվերդի Բաղիրովի Ղարաղայայի խմբից առանձնացած Ջանփոլադ Ռզաևի խումբը:

Ջաֆար Օրուջևի պատմածով Լաչինղոյ/Ղարաղայա բարձունքը գրավելուց հետո Ջամփոլադ Ռզաևը իր տանկով Աղդամի Շելլի գյուղի մոտից հետապնդել էր Ղարաղայայի հետևից հեռացած հայկական ԲՏՐ-ը և ԲՄՊ-ն: Ջանփոլադ Ռզաևի ընկերները պատմել են փետրվարի 26-ի նրա հետագա գործողությունների մասին. «Երեք քաջեր՝ տանկի հրամանատար Ջանփոլադ Ռզաևը, վարորդ մեխանիկ Ֆիքրեթ Ալիևը և հրաձիգ Բախտիյար Վելիևը շտապեցին կանանց, ծերունիներին և երեխաներին օգնելու: Հասնելով հակառակորդի գտնվելու վայրը (հայտնի չէ՝ որտեղ–Հ.Խ.), նրանք ոչնչացրին կրակի երեք օջախներ, ճեղքեցին պաշտպանությունը (հայտնի չէ՝ որտեղ և ինչ պաշտպանություն–Հ.Խ.)»: «Բոլոր կողմերից մեր դեմ շարժվում էին հակառակորդի տանկեր, ԲՏՐ-ներ և ԲՄՊ-ներ,- շարունակում է պատմությունը վարորդ-մեխանիկ Ֆիքրեթ Ալիևը: Մանևրելով և հակառակորդին ոչնչացնելով, մեզ հաջողվեց շրջափակումից (՞՞՞-Հ.Խ.) ազատել 180 անզեն մարդկանց (կրկին չի ասվում, թե որտե՞ղ էին շրջափակված փախչողները–Հ.Խ.): Մեր քողի տակ նրանք վազեցին Ղարադաղի կողմը: Հակառակորդը սկսեց կրակել փախստականների թիկունքին (՞՞՞–Հ.Խ.): Ջանփոլադը չդիմացավ, բացեց վերևի լյուկը, դուրս թռավ և ձեռքի թնդանոթով սկսեց կրակել հակառակորդի ԲՄՊ և ԲՏՐ-ներին: Հենց այդ պահին էլ մահացու վիրավորվեց: Նա հասցրեց ինձ ասել՝ «խնդրում եմ, թրթուրներով ոչնչացրու ԲՄՊ-ն», և հավերժ փակեց աչքերը: Տանկը շուռ տալով, ես կատարեցի հրամանատարի վերջին խնդրանքը՝ գրոհեցի ԲՄՊ-ի վրա: Բայց ուժերն անհավասար էին, հակառակորդին հաջողվեց խփել մեր տանկը: Երեսուն րոպե Բախտիյարի հետ երկուսով փոխհրաձգության մեջ էինք <հայերի դեմ>, մինչև հասավ գնդի հրամանատարը այլ մարտիկների հետ (ի՞նչ գնդի հրամանատար, որտեղի՞ց հասավ–Հ.Խ.) և հակառակորդի կրակի հեղեղի տակ մենք բուքսիրով դուրս քաշեցինք մեր տանկը, 600 մետրից վերցրինք Ջանփոլադի մարմինը և հանձնեցինք շտապ բուժ. օգնությանը, իսկ ինքներս վերադարձանք մարդկանց օգնելու: Բանդիտներին հաջողվել էր 60 մարդ ոչնչացնել, իսկ 120-ին մենք փրկեցինք» [Ա-30, 32–33]: Այս պատմության հարցականները կարելի է էլի ավելացնել, եթե առնվազն մի դրվագ ակնհայտ սուտ չլիներ: Իրականում Ջանփոլադ Ռզաևի տանկը «կրակի հեղեղի տակ բուքսիրով չի տարվել», այլ ռազմավար է մնացել հայերին: Նրանք մինչև հիմա հիշում են այդ տանկը: Այն առանձնանում էր նրանով, որ փողին մեծ տառերով գրված է եղել «Ջանփոլադ»: «Շտապ օգնության» մեքենայի առկայությունը հուշում է, որ դեպքը տեղի է ունեցել ավելի շուտ ադրբեջանական Աղդամի, քան՝ հայկական Ասկերանի մոտ, բայց ակնհայտորեն Աղդամ-Ասկերան ճանապարհին: Աղդամ–Ասկերան

ճանապարհին, Աղդամի մոտակայքում, Խոջալուի 60 զոհված մարդ չի եղել: Չեն եղել նաև հակառակորդի՝ տվյալ դեպքում հայերի դիակներ, որոնք պիտի «մանևրելով և հակառակորդին ոչնչացնելով»-ի դեպքում լինեին: Որքան ինձ է հաջողվել ճշտել՝ հայերից եղել է մեկ զոհ: Բայց համարենք, որ պատմությունը մասնակիցներին հերոսացնելու միտում ունի, և թվերին չանդրադառնանք: Հայերից մեկ զոհը Խոջալուի Ղարաղշլաղ թաղամասում ապրող Արմեն Ավագիմյանի որդի Սամվելն էր: Նա զոհվել է Լաչինղույի բարձունքի տակ՝ Աղդամի ճանապարհին, և հնարավոր է՝ նրա զոհվելու պատմությունը աղերս ունի Ջանփոլադի ընկերների պատմության հետ: Անդրադառնանք Արմեն Ավագիմյանի պատմությանը. «Իմ որդին իր ընկերների հետ Լաչինղույի մոտ, Աղդամի ճանապարհին, կանգնած են եղել, որ կանանց, երեխաներին, տարեցներին բաց թողնեն, տղամարդիկ մնան պոչում: Ժողովուրդը Խոջալուից փախչելիս իմ որդու դասընկերը կնոջ հագուստով է եղել: Նա ուզեցել է կանանց հետ առաջ անցնել, բայց որդիս նկատել է, որ տղամարդ է և կանգնեցրել է: Այս տղան ավտոմատը շորի տակից հանել է և կրակել որդուս վրա: Սամվելս ծանր վիրավորվել է: Մեր հայերը դրան շրջապատել են, ավտոմատը ձեռքից խլել: Սա, դեյրան հագին, ասել է, որ «ինձ մի սպանեք, տարեք Թոսուլի մոտ»: Թոսուլը ես եմ, էլի, իմ մականունն է: Այդ տղան ասել է. «Թոսուլը իմ ազգական է, իմ մայրը հայ է, ինձ տարեք տվեք Թոսուլին»: Մայրն էլ կողքին կանգնած է եղել: Էս մեր տղաներն էլ ասել են. «Ասում ես հայ եմ, մայրդ հայ է, Թուսուլին էլ ազգական ես, բայց գիտե՞ս, որ Թոսուլի տղա Սամվելին ես սպանել»: Էդ տղան մնացել ա սառած: Չի իմացել ում վրա ա կրակում: Դե դու իրեն ես սպանել, մենք էլ քեզ պիտի սպանենք: Այ, այդպես է եղել: Հետո մնացած ժողովրդին թողել են, որ անցնեն գնան»[53]: Հնարավոր է՝ Ջանփոլադի ընկերները «շրջափակված 180 մարդ» ասելիս նկատի են ունեցել այն խումբը, որի Ասկերանից Աղդամ անցումը փորձել են կարգավորել հայերը, նախ՝ կանայք, հետո՝ տղամարդիկ: Պատմողը չի ասում, բայց մեծ հավանականությամբ տղամարդկանցից պահանջել են նաև զինաթափվել: Ըստ երևույթին այդ ընթացքում վեճեր են եղել, որը կարող էր կողքից «շրջափակում» երևալ: Եթե իսկապես Ջանփոլադի ընկերոջ պատմությունը այս դեպքի մասին է, ապա պարզվում է, որ այստեղ փոխհրաձգություն եղել է Աղդամից եկածների և հայկական ջոկատի միջև, որից տուժել են նաև Խոջալուի բնակիչները:

Չի բացառվում, որ հենց այս միջադեպին է վերաբերում նաև Ասկերանում ապրող, Ասկերանի ինքնապաշտպանական ջոկատի զինվոր Կ-ի պատմությունը. «Մեր վաշտը հսկում էր Ասկերան–Աղդամ ճանապարհը: Այդ ճանապարհով փետրվարի 26-ի ցերեկը Աղդամից փոքր խմբերով թուրքեր էին գալիս, տեղտեղ հայկական դիրքերի մոտ ընդհարումներ էին լինում, փոքր լոկալ կռիվներ: Մենք մեքենայով անընդհատ այդ ճանապարհով գնում-գալիս էինք, որ օգնու-

[53] Հատված Հ.Խառատյանի գրանցած պատմությունից:

թյան անհրաժեշտության դեպքում պահենք ճանապարհը: Տեսանք, որ Շելլիի կողմից փախստականների մի խումբ հետ է գալիս: Զարմացանք, թե ինչո՞ւ են թուրքերը թուրքերի կողմից հետ գալիս: Սպասեցինք: Եկան հասան մեզ՝ կին, երեխա, վախեցած: Ասեցին, որ իրենց վրա Լաչինղույից՝ էդ թումբի վրայից վրա են տվել, նույնիսկ գնդացիրից են կրակել: Գնացել հասել են Լաչինղույ, այնտեղից ետ են փախել դեպի Ասկերան: Մի քսան – երեսուն մարդ էին: Բան չհասկացանք, բայց դրանց բերեցինք Ասկերան: Վախեցանք այդտեղ թողնել, որ այդ մարդկանց մի բան չպատահի: Դե ճանապարհին տեղ-տեղ կռիվներ էին, կարող էր մի բան պատահել: Այդ խումբը բերելիս, դրանց մեջ մի փոքրիկ երեխա կար, ոտաբոբիկ, դրան ես գրկած եմ բերել մինչև Ասկերան: Ողջ խումբը բերել հանձնել ենք Ասկերանի միլիցիային: Հետո մի քանի օր անընդհատ խումբ-խումբ տանում էինք մինչև մեր 4-րդ դիրքը և հանձնում Աղդամից իրանց հետևից եկողներին: Մեր հանդիպումները Աղդամից բանակցության համար եկողների հետ առհասարակ 4-րդ դիրքի մոտ էին տեղի ունենում»[54]:

«Լաչինղույից՝ էդ թումբի վրայից»-ը հենց Բաղիրով/Օրուջևի կողմից գիշերը գրավված Ղարաղայան է: Ստացվում է, որ նրանք բարձունքի երկու կողմում էլ՝ թե՛ Նախիջևանիկի ճանապարհով, թե՛ Ասկերանի ճանապարհով նույն օրը, շատ մեղմ ասած, խանգարել են Աղդամ գնացող խոջալուցիներին: Այդ «հերոսները» հետագայում իրենց գործողությունները ներկայացրել են որպես Խոջալուի փախստականներին գերությունից փրկելու գործողություններ: Հարցը՝ թե ինչո՞ւ էին կարծում, որ նրանց գերի են վերցնում, եթե միջանցք էր տրամադրված Աղդամ գնալու, ուշացած է: Գրավված տարածքի բնակչությանը գերի վերցնելու և հետո հակառակորդի մոտ գտնվող պատանդների հետ փոխանակելու կամ ուղղակի վաճառելու երևույթն այդ ժամանակաշրջանում Ադրբեջանում շատ տարածված էր, հերոսական էր գնահատվում և հնարավոր է՝ գործել է այդ տրամաբանությունը:

«Խոջալուի գերիներին» օգնելու նպատակով Ասկերանի տարածք ներթափանցող ԱԺՃ-ի զինված կազմավորումները գործում էին ինքնագլուխ, ինչպես գործել էին Շելլի գյուղի մոտ Լաչինղույ/Ղարաղայա բարձունքում Աղդամից հայտնված Ալլահվերդի Բաղիրովի «կոալիցիոն» մարդիկ: Գործընթացի որևէ կենտրոնացված կառավարում ակնհայտորեն չկար: Արդյունքում Խոջալուից դուրս եկած բնակչությունը երբեմն հայտնվել է հայկական դիրքերի մոտ հասած Աղդամի ադրբեջանական ռազմական կազմավորումների և հայ դիրքապահների միջև և փոխհրաձգությունների դեպքում նոր զոհեր տվել: Եթե սրան գումարենք նաև նույն գիշեր Ալլահվերդի Բաղիրովի խմբի կողմից Խրամորթում գտնվող ադրբեջանական խմբին Ասկերանի դեմ կրակոցներ կազմակերպելու,

---

[54] Կ-ի հետ զրուցել է Հ. Խառատյանը:

իսկ 19-րդ դիրքի խմբին՝ Ասկերանի դեմ հարձակում իմիտացնելու արկածը, պատկերը կամբողջանա: Հիրավի, Խոջալուի փախստական խաղաղ, անզեն, խեղճ բնակչությունը դարձել է Ադրբեջանի Ժողովրդական Ճակատի և օմօնականների արկածախնդրության զոհը:

Ինչպես ասվեց, Ասկերանի վաշտը չէր մասնակցել Խոջալուի գրավմանը: Գիշերը նրանց խնդիրն էլ անհրաժեշտության դեպքում թույլ չտալ, որ Աղդամից սպասվող ադրբեջանական զորքը Խոջալու հասնի: Գիշերն այդպիսի փորձ չէր եղել: Փետրվարի 26-ի վաղ առավոտից նրանք հսկում էին Ասկերանից Աղդամ ճանապարհով խոջալուցիների անցումը: Նրանց կարգադրված էր մի կողմից պահանջել զինաթափվել խաղաղ բնակչության հետ գնացող զինվածներին, մյուս կողմից կանխել Աղդամից ադրբեջանցիների ներթափանցումները: Ճանապարհը հսկող վաշտի ղեկավար Ա.Հ-ն պատմում է. «Մենք գիշերը Խոջալուն գրավելուն չենք մասնակցել, ճանապարհն էինք հսկում: Մեր կռիվը հենց ամսի 26-ին է եղել: Որովհետև ճեղքողները Աղդամի կողմից գալիս էին, դիրքերի մեր տղաները դիմադրում էին, բայց մեր դիրքերի դիմաց էլ թուրքերի դիրքերն էին, և լոկալ կռիվները մեծանում էին: Մի կողմից էլ էդ ճանապարհով փախստականները գնում ընկնում էին այդ կռվողների արանքը: Կամ մեր դիրքերն էին ընկնում դրանց արանքը: Որովհետև Աղդամից թուրքը գալիս է, էստեղից էլ փախստական թուրքերն են գնում, ու մեր դիրքերը մնում են դեմ դիմաց եկող թուրքերի արանքում: Մեզ հրահանգ տվեցին փախստականներին կանգնեցնել և տանել Ասկերան: Դե որովհետև նրանց մեջ գտնվող կանայք ու երեխաները ընկնում էին կռվողների մեջ, իրենք էլ էին զոհվում: Օրինակ, առավոտյան տեսա Աղդամի կողմից զինված մի խումբ է գալիս: Էդ ընթացքում էլ տեսա Ասկերանի կողմից փախստականների մի հատ կալոնա է գալիս: Փախստականներին կանգնեցրինք, որպեսզի իջեցնենք ճանապարհ ու տանենք արդեն հանձնենք Ասկերան: Որպեսզի չգնան մարտական գործողությունների շրջան հասնեն: Ու հիշում եմ, մի կին, սենց ոտաբոբիկ, էդ կալոնայի մեջից, երեխան իրա գրկին: Վերցրի երեխան իրա գրկից, երեխան էլ, իրան էլ դրինք ԲՏՐ-ի վրա, որովհետև ոտաբոբիկ էր: Հետո ուզում էինք շարժվեինք, էդ կալոնան արդեն զենքերը տղամարդիկ թողել էին: Էդ կինը միանգամից սկսեց, բա թե՝ «ամուսինս, ամուսինս վախենում ա, ամուսնուս էլ բերեք էլի»: Բա, ասի, «ռուր ա ամուսինդ», բա՝ «էն ա քոլերում (թփուտներում) ա, վախենում ա դուրս գա»: Ասում եմ՝ «ասեք թող գա, ձեն տվեք թող գա, թե չէ մնալու ա ստեղ, արդեն չգիտենք ճակատագիրը ոնց ա լինելու»: Ու ամուսինը որ դուրս ա գալիս, սենց կոլոտ-մոլոտ մի փոքր մարդ էր, դա հենց մոտիկանում ա, էս կինը ցատկում ա էդ ԲՏՐ-ից, անմիջապես ոտերը խստում, բա՝ «ինչ անենք»: Վախենում էր, որ սպանելու ենք: Ասում եմ՝ «մի վախեցեք, էն ա՝ սաղ ստեղ են, իրար հետ»: Տարանք հանձնեցինք Ասկերանի միլիցիայի բաժին: Բայց զենքերն արդեն լրիվ հանձնել էին: Իրանք էլ գիտեին՝ կամ պիտի կռվեին, կոտորվեին, կամ պիտի հանձնեին զենքերը ու գնան:

Բոլորն էլ գիտեին, որ Աղդամ ենք ուղարկելու, ուղղակի այդ պահին իրանց էինք փրկում, որ կռիվների մեջ չընկնեն: Հետո արդեն երկրորդ խումբն էր գալիս: Դրանց հետ էլ մի պատմություն եղավ: Երկրորդ խմբի մեջ, պարզվեց, մի հայ հարս կար՝ մեր Ասկերանից Ջուլյան: Մեր տղաներից մեկի հորքուրն էր, թե մորքուրը: Մորքուրը, հա: Դրա ամուսինն էլ Ռասուլն ա, ադրբեջանցի, Խոջալուից էր: Հիմա էդ Ջուլյան ինձ տեսավ, ճանաչեց, մոտեցավ, ասում ա բա՝ «Ռասուլը լիա էն ա ընդե, վախում ա, խխոցը նհետ ա»: Ռասուլն էլ էլի եկավ, էլի էդ կալոնան բերինք, հիմա մոստը վեր բարձրանում ենք, ընդե Ջուլյայի քրոջ տղեն կանգնած էր: Կանչեցի ասեցի «մորքուրիդ վերցրու տար ձեր տուն»: Ջուլյան գնաց, մնացածին էլի տարանք ոստիկանություն: Էդ մեր բերած բոլոր մարդկանց հաջորդ օրերին խմբերով տարել ենք մեր 4-րդ դիրք, Աղդամից գալիս էին տանում»[55]:

Ցավոք, տեղական նշանակության այս «մանր» արկածախնդրությունները շատ թանկ են նստել Խոջալուի խաղաղ բնակչության վրա և հետագայում բոլորովին «թաքնվել» լռության քողի տակ: ԱԺՃ-ականները չէին խոսում իրենց մարտիկների անխոհեմության մասին կամ հերոսացնում էին նրանց, դեպքերի ականատես, մասնակից և վկա իրական զոհերը՝ փախստական խոջալուցիները, լռում էին կամ, գուցե, նրանց լռեցնում էին: «Խոջալուի զոհերի» մասին հանրայնացվող տեքստը պիտի բացառապես հակահայկական լիներ:

Բարեբախտաբար ծանր միջադեպեր՝ բախումներ չեն եղել Խոջալուի արևմտյան և հյուսիսային հայկական գյուղերով սփռված խոջալուցիների հետ: Այդ տարածքում Աղդամից «փախստականներին պաշտպանող» ադրբեջանական խմբեր չէին կարող հայտնվել (տե՛ս քարտեզ 7, էջ 216):

[55] Ա.Հ-ի հետ զրուցել է Հ.Խառատյանը:

■
ԽՈՋԱԼՈՒԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅՆԱՑՈՒՄԸ

Վերն ասվեց, որ 1992թ. մարտի 2-ին ադրբեջանցիներն Աղդամից լրագրողների մի խումբ տարան «խոջալուցիների կոտորածի վայրը», հայտնելով, որ դա «հայկական Նախիջևանիկ գյուղի մոտ է», և մարդիկ տեսան երեխաների, աղջիկների, կանանց, տարեցների պղծված դիակներ՝ պոկված եղունգներ, գանգամաշկված և ջարդված գլուխներ, մարմնի կտրտված անդամներ, աչքերի խոռոչներ... Դիակների մեջ զինվածների մարմիններ արդեն չկային: Լրագրողների հետ էր նաև Չինգիզ Մուստաֆաևը, որը տեսավ, որ դա հենց նույն վայրն է, որտեղ ինքը փետրվարի 29-ին տեսել էր դիակները և նրանց մեջ շրջող ադրբեջանական զինվորներին: Փետրվարի 29-ին այնտեղ պղծված դիակներ չկային:

Մարտի 2-ից սկսվեց «Խոջալուի ողբերգության» ադրբեջանա-թրքական հանրայնացումը՝ «հայերի կազմակերպած ցեղասպանության» փաթեթավորմամբ: Մարտի 3-ին հայտարարվեց, որ «Թուրքիան վճռականորեն դատապարտում է ցեղասպանությունը»: Նույն օրը «Бакинский рабочий» թերթը գրեց «Խոջալու. Ո՞վ է պատասխանելու ցեղասպանության համար» հոդվածը: Ներքին լսարանի համար հիմնական տեղեկատվությունը «հազարավոր անզեն խոջալուցիների՝ կանանց ու երեխաների կոտորածը» և «Խոջալուի հերոսական պաշտպանների» կերպարների սրբագործված խմբագրումն էր: Հերոսների մեջ արդեն քանիցս հիշատակված Ալիֆ Հաջիևի կերպարն էր. «Ուխտադրուժ հարձակման ողբերգական գիշերը Ալիֆը քաջաբար կռվել է դաշնակցական ավազակների դեմ, ջանալով պաշտպանել և փրկել խաղաղ, անզեն բնակչությանը, և անհավասար մարտում ընկել է հերոսական մահով» [Ա-16, 62]: Բառերի այս կույտը ցայտուն իմաստային միտվածություն ուներ: «Ուխտադրուժ հարձակում» բառերը, որ սովորաբար նշանակում են նախապես ուխտ կնքած, բայց այն ստորաբար խախտած, հանրային ընկալման համար պիտի նշանակեին հայերի կողմից «անակնկալ», «անսպասելի հարձակում անզեն խաղաղ բնակչության դեմ», ինչը պարզ, բայց ազդեցիկ սուտ էր: «Դաշնակցական ավազակ» բառերը պիտի ազդեին պատմական անցյալի ադրբեջանական սովորական քարոզչությամբ «ցեղասպանություն» բառի հետ կապվող տեղական ընկալումների վրա: Գրելով, որ Ալիֆ Հաջիևը «քաջաբար կռվել է դաշնակցական ավազակների դեմ՝ ջանալով պաշտպանել և փրկել խաղաղ, անզեն բնակչությունը» և խնամքով շրջանցելով խաղաղ բնակչությանը խաբեությամբ վտանգի տանելու, հայկական խաղաղ գյուղի ինքնապաշտպաններին փոխհրաձգություն հարկադրելու և

հենց այդտեղ զոհվելու փաստերը սղալելով՝ տպավորություն է ստեղծվում, որ այդ «հերոսը» կռվել և զոհվել է հենց Խոջալուում:

Ալիֆ Հաջիևը Ադրբեջանի իշխանությունների խնդրանք-միջնորդությամբ 1990թ. Նիժնի Տագիլի բանտից ազատված սովորական կաշառակեր միլիցիոներ, քրեական հանցագործ էր, որի միջոցով Ադրբեջանի իշխանությունը կապում էր Խոջալուից շրջակա հայկական բնակավայրերի հանդեպ իրականացվող ամենօրյա ահաբեկչության և հայերի համար օդանավակայանի անմատչելիությունը ապահովելու ծրագիրը: Ինչը նա իրականացրել էր և վաստակել Ադրբեջանի ազգային հերոսի կոչումը: Հիմա ժամանակն էր, որ նրա քրեական անցյալը սրբագրվեր: Նրա քրեական անցյալը սրբագրող առասպելները հետո պիտի ծնվեին, պիտի տեքստավորվեր-քաղաքականացվեր քրեականի «ազգին նվիրվածության» նկարագիրը: Նրա կենսագրականում գրում են. «Ալիֆը դուրս էր եկել «Կռունկ»[56] կազմակերպության հետքի վրա, որը դեռ այն ժամանակ (**այն ժամանակ**՝ այսինքն Ալիֆ Հաջիևի ձերբակալությունից առաջ, 1985–86թթ.–Հ.Խ.) ծրագրավորում էր ղարաբաղյան մեծ պատերազմը: Նրան 10 տարով փակեցին բանտում: ...Հինգ տարի անց, երբ պատերազմն սկսվեց, ակնհայտ դարձավ, որ Ալիֆի դեմ առաջադրված մեղադրանքները կեղծ էին, և դատավճիռը փոխվեց» [Բ-71]: Իրականում մեղադրանքը մնացել է նույնը՝ կաշառակերություն, ազատազրկման ժամկետը կրճատվել է Ադրբեջանի իշխանու-

---

56 «Կռունկ» կազմակերպությունը՝ կոմիտեն, ձևավորվել է 1988թ. Ստեփանակերտում փետրվարի 20-ի հանրահավաքի ժամանակ: Մարտի 1-ին պաշտոնապես գրանցվել է որպես հասարակական-քաղաքական կազմակերպություն: Նախագահ է ընտրվել Արկադի Մանուչարովը՝ ամենաավագը (ծնվել է 1931թ.): «Կռունկ» անունը ստացել է քանդակագործ Արմեն Հակոբյանի առաջարկությամբ, միաժամանակ օգտագործելով երկու խորհրդանիշ, թե՛ հայկական կարոտի խորհրդանիշ «Կռունկ» երգը, թե՛ որպես «Լեռնային Ղարաբաղի Հեղափոխական Կառավարման Կոմիտե» բառերի ռուսերեն «Комитет революционного управления Нагорного Карабаха» բառերի հապավում: «Կռունկ» կոմիտեն գործել է ընդամենը մինչ մարտի 24-ը, երբ Ադրբեջանի Գերագույն Խորհուրդը «Կռունկը» լուծարելու որոշում է ընդունել՝ մեղադրելով այն զանգվածային անկարգություն հրահրելու մեջ: Նույն տարվա նոյեմբերի 28-ին Արկադի Մանուչարովը ձերբակալվել է, տարվել նախ Աղդամի բանտ, ապա՝ Շուշիի բանտ, այնուհետև փոխադրվել է Մոսկվայի Բուտիրկա կալանավայրը, որտեղ նա պահվել է մինչև 1990թ. մայիսի 29-ը: «Բուտիրկա» կալանավայրում գտնվելու ընթացքում երկու անգամ ընտրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ժողովրդական պատգամավոր, ինչն աննախադեպ էր համաշխարհային պրակտիկայում: 1990 թվականին Եվրախորհրդարանը ընդունել է բանաձև՝ պահանջելով Մանուչարովին ազատ արձակել, իսկ «Ամնեսթի Ինթերնեշնլ» իրավապաշտպան կազմակերպությունը նրան շնորհել է ԽՍՀՄ վերջին քաղբանտարկյալ կոչումը: «Մանուչարովի գործը,-գրում է ռուս վերլուծաբան Կոնստանտին Վոյեվոդսկին,- պատմության մեջ կմտնի նույնիսկ խորհրդային արդարադատության համար ֆանտաստիկ անօրինությունների պատճառով: Մանուչարովին չազատեցին ոչ միայն նրան Հայաստանի Գերագույն Խորհրդի անդամ ընտրելուց հետո, այլև նույնիսկ դատարանի կողմից ազատելու որոշումից հետո: Մանուչարովին անազատության մեջ պահելու նպատակով նույնիսկ խորհրդային օրենսդրությունում փոփոխություններ են արել» [Բ-78]: Ենթադրում եմ, որ Ալիֆ Հաջիևի կենսագիրները նրա չեղած քաղաքական այլախոհությունը կապել են «Կռունկ» կազմակերպության հետ, որովհետև քրեական Ալիֆ Հաջիևին Ադրբեջանի խնդրանքով Ռուսաստանի բանտից ժամկետից շուտ ազատել էին՝ հավանաբար որպես փոխհատուցում քաղաքական կալանավոր Արկադի Մանուչարովի ազատման:

թյունների խնդրանքով: Գործը սկսվել էր իր հարազատ Ջամիլլու գյուղի ադրբեջանցիների բողոքով: Բայց հայերի դեմ պատերազմ վարելու համար հենց Ալիֆի նման ահաբեկիչներ էին պետք, և ապագա «հերոսը» վերադարձավ կրակի մեջ հայտնված Ղարաբաղ, որտեղ 1990 թ. դեկտեմբերից շարունակեց միլիցիոների ծառայությունը և ղեկավարում էր մարզի միակ և <Խոջալու> քաղաքի ամենակարևոր օբյեկտի՝ օդանավակայանի ռազմական պարետի պարտականությունները: Այլ կերպ ասած՝ տխրահռչակ օմօնական էր: 1990 թ. դեկտեմբերի 28-ին հենց Ալիֆ Հաջիևի կողմից էր կազմակերպվել Ղարաբաղի օդանավակայանում ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Բորիս Դադամյանի առևանգումը և Աղդամ տարվելը: Այսօր այդ հերոսի ձերբակալությունը մատուցվում է որպես «հայ ազգայնականների դավադրանք»: Նրա կենսագրությունը ետահայաց դարձել է քաղաքական-այլախոհական. «Լեռնային Ղարաբաղի հայկական ազգայնական կենտրոնը փորձել է վարկաբեկել Ալիֆ Հաջիևին: Հայ ազգայնականները նրա դեմ կեղծ մեղադրանք առաջադրելով 1987 թ. դատապարտել են 10 տարվա ազատազրկման... Ազատվել է... վերադարձել և վերսկսել իր պայքարը ազգայնականների դեմ: Ասպետ Ալիֆ Հաջիևի վաճռականության արդյունքում Խոջալուի օդանավակայանը ամբողջովին դուրս էր մնացել հայ ազգայնականների վերահսկողությունից... Դրա դիմաց թշնամին վճռական գործողություն սկսեց Խոջալուի դեմ...» [Ա-4, 54–55]: Ոչ ավել, ոչ պակաս՝ ղարաբաղյան շարժումն էլ է սկսվել «Ալիֆ Հաջիևի դեմ»: Չնայած այստեղ գուցե և մեծ ճշմարտություն կար: Վերջ ի վերջո Ղարաբաղի հայերի՝ Ադրբեջանի կազմից դուրս գալու որոշումը նաև ադրբեջանական «ալիֆհաջիևականությունից» ազատվելու ցանկություն էր: Այսպես քրեական ալիֆհաջիևները դառնում են ադրբեջանական ազգային ինքնահաստատման հերոսական խորհրդանիշներ:

Խոջալուի ողբերգության հանրայնացումն ընթանում էր և շարունակում է ընթանալ ամենակոպիտ և գռեհիկ շահարկումներով, «բանավոր պատմությունների» անվան տակ սովորեցված-պատվիրված-հորինված տեքստեր են հրապարակվում, աշխարհի տարբեր ծայրերի և տարբեր ժամանակների ողբերգություններից լուսանկարներ են հրատարակվում որպես Խոջալուի բարբարոսության զոհերի պատկերներ: Որպես «Խոջալուի ցեղասպանության» զոհերի՝ աշխարհի տարբեր վայրերում ներկայացնում են 1983 թ. Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժի զոհ քրդերի, 1978 թ. թուրքական ահաբեկչությունից զոհված ալևիների, Աֆղանստանի փախստականների, Կոսովոյի և բալկանյան այլ կոիվների զոհերի պատկերները [Բ-92]: Հայերի մերկացումներից հետո դրանք սովորաբար անհետանում են կայքերից, բայց փոխարինվում են նորերով, կարճաժամկետ ծառայում հերթական քարոզչությանը, կրկին անհետանում և այսպես շարունակ:

«Խոջալուի» ադրբեջանական հանրայնացման գործում առանձին թեմա է Խոջալուի գրավմանը ռուսական 366-րդ գնդի մասնակցությունը: Սկզբում, երբ

Ադրբեջանը ուզում էր Խոջալուի գրավումը ներկայացնել որպես Ստեփանակերտում դեռևս գտնվող նախկին խորհրդային 366-րդ գնդի գործ, մեծ թվով «վկաներ» պատմում էին Խոջալուում տեսած ռուսների մասին: Այսպես, քննչական նյութերով «Խոջալու քաղաքի բնակիչ Ա.Ն.Ահմեդովը, քննվելով որպես վկա, բացատրեց, որ 1992թ. փետրվարի 25-ին, ժամը 23-ին Խոջալուի բոլոր կողմերից անսպասելի սկսվեց Խոջալուի զանգվածային գնդակոծություն տարբեր զինատեսակներից: Նա և նրա ընկերները տեսել են, որ մարդիկ բոլոր կողմերով խուճապահար փախչում են, և տները այրվում են: Քաղաքի սահմաններում 20–30 տանկերից տների և մարդկանց վրա երկար կրակահերթերով կրակում էին: Տանկերից բացի կային նաև ԲՄՊ և ԲՏՐ, որոնցից նույնպես կրակում էին: Տեխնիկայի հետևից գնում էր հետևակը: Վառվող տների լույսի տակ նա տեսել է, որ զրահամեքենաների և հետևակի մեջ ռուսներ էին, իսկ հրամանները տրվում էին ռուսերեն լեզվով: **Հարձակվողների մեջ կային նաև հայեր** (ընդծումը իմն է–Հ.Խ.): Հարձակվողները հետապնդում էին խուճապահար փախչող մարդկանց և կրակում նրանց վրա» [Ա-30, 45]: **«20–30 տանկը», դրան գումարած «ԲՄՊ և ԲՏՐ»-ները** առասպել են, որոնք կոչված են միայն 366-րդ գնդի ներգրավվածությունը «ապացուցելու»: Բոլորին հայտնի էր, որ այդ շրջանում հայերը ծանր տեխնիկա գործնականում չունեին: Այս առասպելը Խոջալուի բնակիչ Բայրամ Մամեդ օղլը Կասումովի բերանով հասել է այլ չափազանցության՝ «բոլոր կողմերից Խոջալու է մտել ավելի քան 100 տանկ, ԲՏՐ և ԲՄՊ» [Ա-30, 31]: Մյուս կողմից հայտնի է, որ ծանր տեխնիկա Խոջալու մտել է միայն բնակավայրը գրավելուց և բնակչության դուրս գալուց հետո: Խոջալու բնակավայրում փախչող բնակիչների հետևից որևէ հետապնդում և կրակոցներ չեն եղել, և դա հաստատված է թեկուզ և բնակավայրի ներսում եղած զոհերի թվով (տե՛ս ստորև): Բայց տվյալ դեպքում կարևորն այն է, որ ըստ վկայի ցուցմունքի գրոհողները ռուսներն էին, «որոնց մեջ հայեր նույնպես կային», և ուրեմն այս վկայի ցուցմունքով հայերը միայն մասնակցել են ռուսական գործողություններին: Որևէ չեզոք փորձաքննություն, իհարկե, այս կարգի վկայություններին լուրջ չի վերաբերվել, և հենց իրենք՝ ադրբեջանցիներն էլ շուտով դադարել են այս մասին խոսել:

«Խոջալու քաղաքի բնակչուհի Տ.Մ.Ջաֆարովան քննության ժամանակ բացատրեց, որ քաղաքի վրա հարձակվելու ժամանակ ինքը չորրորդ հարկից դիտել է տեղի ունեցողը և տեսել է, որ հարձակվողների մեջ կային պաշտպանական գույնի զինվորական հագուստով ռուս սպաներ և զինվորներ, իսկ հայերը բազմագույն հագուստով էին: Նրանք բոլորը կրակում էին: Նա տեսել է, որ հայերն ու ռուս զինվորականները տներից իրեր էին հանում և բարձում մեքենաները» [Ա-30, 45]: Քննիչի կողմից ոչ մի հարց՝ որտե՞ղ էր գտնվում վկայի տունը, ո՞ր ժամին է նա չորրորդ հարկում գտնվող իր բնակարանից հետևել դեպքերի զարգացումներին, ե՞րբ է ինքը՝ վկան լքել բնակավայրը, ինչպե՞ս է, որ «հայ և

ռուս» զինվորները բնակավայրի գրավումը չավարտած սկսել են քաղաքի թալանը և այլն: Այս «ցուցմունքի» գլխավոր աղը բնակավայրի գրավմանը «ռուս սպաների և զինվորների մասնակցությունը» վկայելն է:

«Վկա Ա. Ալիևը ցուցմունք է տվել, որ քաղաքի վրա հարձակման ժամանակ նա ինքնապաշտպանության նպատակով թաքնվել է էքսկավատորի տակ, քանդել է նրա կարբյուրատորը, որ չկարողանան մոտոռն աշխատեցնել: Երեք օր նստել է այնտեղ, հետևել է իրադարձություններին և տեսել է, թե ինչպես են **հայերը, ռուսներն ու նեգրերը թալանում քաղաքը** և այրում տները» [Ա-30, 45–46]: Սա քաղվածք է Ադրբեջանի Գերագույն գլխավոր դատախազ Վ. Նազարովի կազմած քննչական տեքստից: Այս «վկայությունը» փչացնում է 1992 թ. ին Ղարաբաղում «նեգրերի» հիշատակությունը: Ինչ նեգրեր Ղարաբաղում 1992 թ. փետրվարին, որտեղից:

Խոջալուի բնակիչ Ջամիլ Մամեդով. «Քաղաք մտնելով, տանկերը և զրահամեքենաները ավերում էին տներն ու ճզմում էին մարդկանց: Ռուս զինվորականների հետևից գնում էին հայ զինյալները» [Բ-79]: Կրկին՝ բնակավայրի ներսում «տանկերով ճզմված» մարդիկ չեն հայտնաբերվել: Այս վկան նույնպես խնդիրն այնպես է ներկայացնում, որ գրոհողները գլխավորապես ռուսներն էին, իսկ «հայ զինյալները գնում էին ռուս զինվորների հետևից»:

Ինչպես վերն ասվեց, բոլոր հայերի պատմություններում Խոջալուի գրավմանը մասնակցել են բացառապես հայերը: «Խոջալուի գրոհի ժամանակ ես 366-րդ մոտոհրաձգային գնդի զինվորներ չեմ տեսել», — գրել է Խոջալուի գրավման մարտական գործողություններին որպես լրագրող հետևած Վիկտորյա Իվլևան [Ա-13]: Աղդամում գտնվող ռուսական սակրավորների գումարտակի մայոր Յու. Գիրչենկոյի ասելով՝ 366-րդ գնդի հայազգի սպաների և զինվորների մի խումբ մասնակցել է Խոջալուի գրավման գործողություններին, բայց նրանք Խոջալու բնակավայր չեն մտել: Ինչպես որոշ ադրբեջանցիներ մասնակցել են Խոջալուի պաշտպանության փորձին Աղդամի ռուսական սակրավորական գնդից:

Խոջալուի ռազմական գործողությունների ընթացքը կառավարող հայ սպաները խոսել և հրամանները տվել են այն տարիների ռազմական լեզու հանդիսացող ռուսերենով, ինչը դա լսած խոջալուցիները, հավանաբար, ընկալել են որպես ռուսների ներգրավվածություն: Բոլոր դեպքերում Ադրբեջանում Խոջալուի գրավմանը ԽՍՀՄ կամ արդեն ԱՊՀ, իրականում ռուսական 366-րդ մոտոհրաձգային գնդի մասնակցության ավելի շուտ քաղաքական, քան գործնական թեման և դրա ծամծմումը շուտ սպառվեց: Այն անկարևոր դաձավ ռուսամետ համարվող Այազ Մութալիբովի գլխավորած իշխանության փոփոխությունից հետո և արագորեն ծածկվեց Ադրբեջանի Ազգային Ժողովրդական Ճակատի կողմից առաջ մղվող «հայերի կողմից իրականացված ցեղասպանության» օրեցօր թափ հավաքող թեմայով: Այլևս նպատակահարմար չէր ռուսներին մասնակից դարձնել «հայերի կողմից իրականացված ցեղասպանությանը»: Ադրբեջանի

Ժողովրդական Ճակատն ինքը յուրացնում էր Ադրբեջանի տարածքում գտնվող նախկին ԽՍՀՄ ռազմական գույքը՝ զենքը, զինամթերքը, պահեստները: Հենց մարտի սկզբին նրանք գրավել էին նաև Աղդամի սակրավորների ողջ պահեստային ռազմամթերքը, և սակրավորների գումարտակի սպայական կազմին ու զինվորներին փաստացի ստիպել փախչել Կիրովաբադ/Գյանջա: Եվ վերջապես մարտի սկզբին 366-րդ մոտո-հրաձգային գունդը Ստեփանակերտից նույնպես տեղափոխվել էր Գյանջա վերանվանված Կիրովաբադ և այնտեղ միացել Ադրբեջանի Ժողովրդական Ճակատի զենքի սնուցման աղբյուրներին: Խոջալուի գրավմանը ռուսական գնդի «մասնակցության» թեմայի շահարկումը դառնում էր աննպատակահարմար:

Խոջալուի հանրայնացման գործում իր կարևորությամբ առաջին տեղում էր և շարունակում է այդպիսին մնալ «հայերի կողմից ադրբեջանական ցեղասպանության» և Խոջալուի բնակչության զոհերի՝ «կոտորածների» թեման: Որպես «ցեղասպանության ապացույց»՝ անզեն մարդկանց ոչնչացումը և դիակների պղծումը: «Անզեն մարդկանց» և «դիակների պղծման» խնդրին վերն անդրադարձանք:

■
ՈՐՔԱ՞Ն ՄԱՐԴ Է «ԿՈՏՈՐՎԵԼ» ԽՈՋԱԼՈՒՈՒՄ ԵՎ «ԽՈՋԱԼՈՒԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ»

«Խոջալուի զոհեր» ասելով միշտ նկատի են ունեցել բացառապես ադրբեջանցիներին: Երբեք և ոչ մի տեղ չի խոսվել այն մասին, որ զոհեր են եղել նաև հայերից, այդ թվում կռիվներին չմասնակցած հայկական խաղաղ բնակչությունից՝ Նորագյուղում, Նախիջևանիկում, Ասկերանում, թե՛ բուն կռվի ընթացքում, թե՛ հաջորդող օրերին Աղդամից այդ բնակավայրերի գնդակոծության ժամանակ: Եվ ոչ ոք երբեք չի անդրադարձել, չի հիշատակել կարևոր մի երևույթ՝ փետրվարի 26-ին, որպես Խոջալուի գրավման վրեժ, Մարտակերտի շրջանի տեղական ՕՄՕՆ-ի կողմից բռնությունների հետևանքով փախել է երեք հայկական գյուղերի՝ Սեյսյուլանի, Յարմջայի, Մարգուշավանի բնակչությունը: Այս գյուղերը սահմանակից էին Ադրբեջանի Միր Բաշիրի շրջանին, շրջապատված էին ադրբեջանաբնակ գյուղերով, որևէ վտանգ չէին ներկայացնում Խոջալուին, և արագ վրեժ լուծելու հարմար թիրախ էին: Սեյսյուլանի և Յարմջայի բնակչությունը փախել է անվերադարձ, Մարգուշավանի և հարակից գյուղերի բնակչությունը՝ այդ անգամ կարճաժամկետ, մինչև 45 օր հետո չգործադրվեց «Խոջալուի վրեժի» հիմնական գործողությունը՝ Մարաղայի և Մարգուշավանի բնակչության ջարդը [Ա-40; Human Rights Watch. Bloodshed in the Caucasus. P.29]:

«Փետրվարի 26-ին, էս Խոջալուի յրա որ հարձակվել են, տրա պատասխանը մունք ենք եղել, որ հարձակվել են մեր յրա: Առավոտը ժամը 6-ին, հլա 5-ին, սկսեց կրակոցները, մինչև իրիկունը ժամը 6-ը: Վերջը ամսի 26-ին արդեն վերջնական հարձակվալ են, արդեն եկալ ժամը 6-ը, իրիկուն ա դեմը, 6-ից հետո հանգիստացավ, էլ չկրակեցին: Դե հետո <տղամարդիկ> պոստից եկան, թա էլ տուս ըք կյամ, վերջնական տուս ըք կյամ: Դե լույս չկա, Ղափանից (Միր Բաշիրի շրջանի ադրբեջանական գյուղ–Հ.Խ.) լույսը կտրած, լամպի լուսավ ընք ապրում: Էն ֆանար կա, երկաթի բանով սենց, դե ասում ընք հինչ անեք, էնա որ վերջնական որոշված ա: Վեր ենք կանում, մի քանի պեն… էլ արդեն լրիվ տյուս ըն եկալ: Ձենք չունենք: Քիշերը եկանք Կարմիրեվան, մի քիչ հանգստացանք Կարմիրեվան, հետո էլ շարունակեցինք, քշերը եկանք Մարտակերտ»[57]:

«Խոջալուի դեպքը որ կատարվեց, ժողովուրդը դուրս եկան, էդ նույն գիշերը: Ժողովուրդը որ դուրս ա եկել, արդեն մեր գյուղից ծուխ էր հելնում՝ տները

---

[57] Սեյսյուլանցի Լյուդվիգ Ստեփանյանի հետ զրուցել է Հ.Խառատյանը:

վառում էին: եթե էդ օրը դուրս չգային, սաղ մարդ չէր մնա, որովհետև շրջափակման մեջ ա, զենք չկա, էրկու գյուղում (պատմողը նկատի ունի մեկուսի ընկած և միմյանց հարևան Սեյսյուլան և Յարմջա գյուղերը – Հ.Խ.) ընդամենը հինգ թե վեց ավտամատ ա եղել, մի հատ գրանատամյոտ՝ սամաձելնի, զենք չի լել: Ասենք ժողովուրդի 75, 80 տոկոսը փետով են կաղնած, դիմադրելու հնարավորություն չկար: ...էսօր Խոջալուն ա իլալ, լույս ցերեկվա էդ գիշերը ժողովուրդը տուս են եկել»[58]:

«Խոջալուի տեղահանումը եղել ա 92 թվի փետրվարի, չգիտեմ, 25-ն էր, 26-ն էր, վոբշեմ, 92 թվի փետրվարի 26-ին մեզ սկսել են ռմբակոծիլը: Վար Խոջալուն սկսել ա տեղահանվիլը, մեզ վրա սկսել են ռմբակոծելը՝ տանկով, պուշկայով, «Գրադով», մենք փետրվարի 26-ին, կարելի ա ասած, գյուղի ութսուն տոկոսը տարահանվել ա: Փետրվարի 26-ին, որ նհանք սկսել են, ահռելի սնարյադ ա կյալիս, ժողովուրդը ամեքը իրան մտածմունքով լրիվ տուս ենք եկել, լրիվ գյուղարանքը՝ Գյուլասազ, Մաղավուզ, Մեծ Շեն, հինգիդամ, էդ տարածքը, լոխ ամաքը ուրան: Ախըրը երեխա ա, կին ա, մեծահասակ ա, լրիվ հանել ենք ըտեղ, մին քանի օր, մի էրկու – իրեք օր, արդեն հանդարտվել ա, նորից ետ տեղափոխվել ենք»[59]:

Թողնենք բնակավայրը լքած այս գյուղերի բնակչության հետագա թափառումների, փնտրտուքի, կորուստների թեման: Ըստ էության Խոջալուի գրավման վրեժը հանվեց 45 օր հետո, Մարաղա գյուղում իսկապես անզեն խաղաղ բնակչության նկատմամբ ադրբեջանական բանակի կազմակերպած վայրագ ջարդով: Բայց թողնենք Խոջալուին փոխկապակցված հայկական կողմի զոհերի և կորուստների չքննարկված թեման, անդրադառնանք ադրբեջանական կողմի լայնորեն «քննարկված» զոհերի խնդրին:

Սովորաբար չի խոսվում Խոջալուի բուն բնակավայրի ներսի զոհերի քանակի մասին: Ադրբեջանում գերադասում են սահմանափակվել վախեցած բնակիչների սարսափազդու նկարագրություններով: Խոջալուի քաղաքագլուխն ասել է. «*...երբ գործի անցան հայ հեղևակները, Խոջալուում ամեն ինչ ավերված էր,* ***նրա շատ բնակիչներ զոհվեցին****: Մենք խրամատներում պաշտպանվում էինք մինչև գիշերվա ժամը 2-ը*» [Բ-102]: Ինչ է նշանակում տվյալ դեպքում «**շատ բնակիչներ**»-ը, քաղաքում գտնվողներից քանակապես շատը, թե՞ «շատ»-ը տվյալ դեպքում պատկերավոր հուզական գնահատական է:

Այնուամենայնիվ այս քաղաքագլուխը հավանաբար ինչ-որ թվեր ասել է: Համենայն դեպս Ադրբեջանի մամլո ծառայության ղեկավար Ռասիմ Աղաևը մարտի 2-ին հայտնել է, որ, ըստ Խոջալուի քաղաքագլուխ Էլման Մամեդովի, հայերի գրոհի հետևանքով Խոջալուում զոհվել են **հազարավոր խաղաղ բնակիչներ** (ընդգծումը իմն է – Հ.Խ.), մի քանի հազարը վիրավորվել է, անհետ կորել

---

58 Յարմջեցի Ռուդիկ Այարյանի հետ զրուցել է Գոհար Ստեփանյանը:

59 Մարգուշավանցի Սլավիկ Գրիգորյանի հետ զրուցել է Գոհար Ստեփանյանը:

են՝ 1500-ը [Բ-49]: Տարօրինակ թվեր են: Եթե նույնիսկ ընդունենք առավելագույնը՝ որ Խաջալուում փետրվարի 26-ին 4 հազար բնակիչ է եղել, զոհվածների, վիրավորների և անհետ կորածների թվերը անհամեմատ գերազանցում են բնակչությանը: Նույն մարտի 2-ին ադրբեջանական «Асса Ираде» գործակալությունը հաղորդում է «գտնված **1234 մարդու դիակների մասին**»: Այս տեղեկությունն անմիջապես տարածվում է թուրքական ԶԼՄ-ների կողմից [Բ-63]:

«Հանուն Ադրբեջանում ժողովրդավարական բարեփոխումների և մարդու իրավունքների» (За демократические реформы и права человека в Азербайджане) միջազգային կազմակերպությունը տարածել է «Աշխարհի ժողովուրդներին» ուղղված հայտարարություն, որը մարտի 4-ին Մոսկվայում հանձնվել է արտասահմանյան երկրների դիվանագիտական կառույցներին: Այդ տեքստում ասվում է, որ 1992 թ. փետրվարի 26-ի գիշերը հայկական ազգային բանակի կողմից, ԱՊՀ 366-րդ գնդի մասնակցությամբ, երկրի երեսից ջնջվել է Խոջալու քաղաքը: **Այդ գիշեր սպանվել են 1234 ադրբեջանցիներ** [Բ-50]:

Խոջալու բնակավայրի զոհերի մասին խոսելիս, սակայն, հասկանալով թվերի խոցելիությունը, ադրբեջանական աղբյուրները ավելի հաճախ գերադասում էին օգտագործել վերացական «հազարավոր մարդիկ», «մեծ մասը» արտահայտությունները: Ադրբեջանական պաշտոնական լրատվությունը, ինչպես, օրինակ, «Սեհերը», որին հղում էին անում արտասահմանյան լրագրողները, գրել է. «**Խոջալուի պաշտպանների մեծ մասը ընկել է մարտի դաշտում** (ընդգծումը իմն է – Հ.Խ.), իսկ կենդանի մնացածները հուսահատ փորձ են արել կրակը և թակարդը հաղթահարելով հասնել Աղդամ»: Տարբեր հայտարարություններում «մեծ մասը» բառերը կրկնվում են մինչև այսօր: Սակայն բուն «մարտի դաշտի», այսինքն Խոջալու բնակավայրում զոհվածների կոնկրետ քանակի մասին ոչինչ չեն գրում: Իսկապես, ինչքա՞ն մարդ է զոհվել կոնկրետ Խոջալու բնակավայրում:

Չինգիզ Մուստաֆաևին փետրվարի 28-ին Աղդամում ասել են, որ ողբերգությունը նկարահանելու համար լավ կլինի գնալ «մարտի դաշտ»՝ Խոջալու, և նա կարծեք թե ադրբեջանցիներից առաջինն է, որ բնակավայրը գրավվելուց հետո մտել է քաղաք: Ցավոք, նա բնակավայրից կադրեր չի ցուցադրել, բայց ապրիլ ամսին Ադրբեջանի արդեն նախկին նախագահ Այազ Մութալիբովին ասել է, որ Խոջալուում դիակներ չի նկարահանել, որովհետև դրանք պարզապես չեն եղել [Ա-24, 253]:

Ռուս լրագրող Վիկտորյա Իվլևան եզակի չեզոք լրագրողներից է, որը «մարտի դաշտում» հայտնվել է հենց մարտի օրը: Մարտի 15-ին նա պատմել է իր տեսածի մասին. «*Ես նկարահանումների համար Ստեփանակերտ եկա ամսի 25-ին: Ինչպես պարզվեց՝ հենց դեպքերին: Այդ գիշեր հայկական ջոկատները գրոհում էին Խոջալու գյուղը, որտեղից ադրբեջանական ուժերը կրակի տակ էին պահում Ստեփանակերտը, և որտեղ գտնվում էր Լեռնային Ղարաբաղի միակ օդանավակայանը: Բժիշկների հետ միասին ես գնում էի գրոհողների*

երկրորդ էշելոնում... Առավոտյան ես հայտնվեցի Խոջալուում: Գյուղն այրվում էր: Փողոցներում դիակներ կային: Ես հաշվեցի յոթ սպանվածների, մեկը՝ միլիցիոների հագուստով: Հետո մենք ինքներս ընկանք ավտոմատի կրակահերթի տակ: Տներից մեկից կրակում էին ադրբեջանական օմոնականները: Այդ տան մոտ կռիվը տևեց մինչև երեկո և հայերի վրա արժեցավ երկու սպանված և մի քանի վիրավոր: Ինչ եղավ օմոնականների հետ՝ զոհվեցին, թե մթան հետ կարողացան գնալ՝ ես չգիտեմ» [Ա-10]:

Խոջալուից մեկ կմ հեռավորությամբ գտնվող նորագյուղցի երիտասարդի օրագրում փետրվարի 25-ի լույս 26-ի՝ Խոջալուի գրոհի գիշերվա զոհերի մասին փետրվարի 26-ի գրառման մեջ ասվում է, որ զոհվել են 15–20 ադրբեջանցիներ և 5 հայ:

Խոջալուի գրավումը գլխավորած Արկադի Տեր-Թադևոսյանը գրել է, որ Խոջալուի գործողության ժամանակ «մենք կորցրինք 8 մարդ, հակառակորդը՝ 23»:

1991–1992 թթ. Ղարաբաղի Գերագույն Խորհրդի պատգամավոր Լևոն Մելիք-Շահնազարյանը գրել է. «Խոջալուն վերցնելուց հետո մեր զորքերն այնտեղ խաղաղ բնակչությունից հայտնաբերել են 9 դիակ: Դա՝ զինվորական համազգեստով զինված ջոկատների ներկայացուցիչներին չհաշված... Բնութագրական վերքերով դատելով նրանք զոհվել են նախնական հրետակոծության ժամանակ» [Բ-89]:

Խոջալուի Ղարաղշլաղ թաղամասում ապրող Արմեն Ավագիմյանի հաշվարկով՝ Խոջալուն գրավելիս հայերից 19 զոհ է եղել, այդ թվում՝ Ասկերան–Աղդամ ճանապարհի բախումների զոհերը:

Հիրավի, բուն Խոջալու բնակավայրում փողոցային կռիվներ չեն եղել: Խոջալուի ներսի զոհերը հիմնականում գիշերվա 11–02-ի միջակայքում տեղի ունեցած հրետակոծության հետևանք էին: Հրետակոծության նպատակը քաղաքի պաշտպաններին և բնակչությանը քաղաքը լքել հարկադրելն էր: Քանի որ Խոջալուի պաշտպաններն իրենց ծանր տեխնիկան տեղադրել էին ոչ թե բնակավայրի շուրջ, այլ ցավոք հենց բնակավայրի ներսում՝ բնակելի տների հարևանությամբ, այդ հրթիռանետ տեխնիկան լռեցնելու համար հայկական գնդակոծումը ավերել է նաև խաղաղ բնակչության բնակելի տներ, և եղել են մարդկային զոհեր: Ինչպես վերն ասվեց, Մոսկվայի «Մեմորիալ» իրավապաշտպան կազմակերպության տվյալներով «Խոջալուն գրավելու պահին ադրբեջանական ուժերի տնօրինության տակ կար 2 ռազմական բազմակի հրթիռանետ БМ-21 «Град», 4 մոդիֆիկացված հրթիռային «Ալազան» սարքավորում, 1 հարյուր միլիմետրանոց տրամաչափի թնդանոթ, 3 միավոր զրահատեխնիկա: Ողջ տեխնիկան տեղակայված էր Խոջալուի բնակելի թաղամասերում, որտեղից ավերիչ գնդակոծություններ էին անում հայկական բնակավայրերի վրա» [Բ-88]:

Խոջալուի հրետակոծող տեխնիկան լռեցնելուց հետո բնակավայր մտած հայկական ջոկատները, իրենց պատմելով, կրակել են տների տանիքներին՝

փորձելով նվազեցնել խաղաղ բնակչության զոհերը, բայց հարկադրել մարդկանց, որ բնակավայրը լքեն: Տեսնելով, որ մարդիկ դանդաղում են՝ հայերը օդանավակայանի կողմից հրդեհել են մի քանի շենքեր, նպատակ ունենալով հոգեբանորեն ազդել և բնակիչներին հարկադրել դուրս գալ նկուղներից և լքել բնակավայրը: Այդ են վկայում նաև քաղաքը լքողների պատմությունները, որոնք, սակայն, զուգակցված են զգայացունց պատումներով՝ իբր հայերը փողոցներում տանկերով հետապնդում և ճզմում էին մարդկանց, ավտոմատներից կրակում էին խուճապահար փախչող կանանց ու երեխաների վրա: Այդպիսի բան լինելու դեպքում բնակավայրի ներսում զոհերի թիվն, իհարկե, անհամեմատ մեծ կլիներ, և սպանվածներն էլ միայն կրակոցներից չէին լինի: Իրականում հայերը այնքան քիչ տեխնիկա ունեին, որ նույնիսկ ցանկության դեպքում չէին կարող այն օգտագործել մարդկանց հետապնդելու և սպանելու նպատակով: Հայկական բոլոր աղբյուրներում (Սամվել Բաբայան, Արկադի Տեր-Թադևոսյան, գրավմանը մասնակից ջոկատների մարտիկներ) հիշատակված հայկական ողջ ծանր զինտեխնիկան Խոջալուն գրավելիս իրենից ներկայացնում էր երկու միավոր ԲՐԴՄ (հետախուզական-պարեկային զրահապատ մեքենա), երկու տանկ, երկու հրթիռային «Ալազան», որոնցից մեկը գրավվել էր հենց Խոջալուում, մեկ 100 միլիմետրանոց հակատանկային «Ռապիրա» թնդանոթ և մերձակա բարձունքներում նախապես տեղադրված ծանր տրամաչափի երկու թնդանոթ: Անշուշտ, սրանց առաջացրած սարսռեցուցիչ աղմուկը շատ է վախեցրել բնակչությանը և, հավանաբար, մարդկանց իսկապես թվացել է, որ բնակավայր են մտել, ինչպես ոմանք ասում են, 20–30 տանկ: Սարսափի աչքերը մեծ են, բայց մշուշապատ: Խուճապահար, անկազմակերպ նահանջող/փախչող խաղաղ բնակչությունը դուրս է փախել բնակավայրից՝ հաճախ նույնիսկ չիմանալով, թե ուր պիտի գնա, որովհետև քաղաքի պաշտպանությունն իրականացնողները նրանց այդպես էլ չէին տեղեկացրել մարդասիրական միջանցքի մասին: Մեծ մասն իհարկե գնացել է հենց միջանցքով, մի մասը հետևել է Նախիջևանիկ տանող ճանապարհն ընտրած զինված օմոնականներին և ինքնապաշտպանության մարտիկներին, մի մասն էլ, ինչպես վերն ասվեց, գնացել է արևմտյան ուղղությամբ, ով ինչպես կարողացել է:

Բնակչության հիմնական մասի դուրս գալուց հետո որոշ թվով մարդիկ մնացել են տների նկուղներում: «Մեմորիալ» իրավապաշտպան կազմակերպության զեկուցագրով փետրվարի 25-լույս 26-ի գիշերը բնակավայրը լքած բնակիչներից հետո Խոջալուի տների նկուղներում թաքնված մոտ 200–300 մարդ էր մնացել, որոնց հաջորդ օրը հայերը տարել են Ստեփանակերտ, ապահովել սննդով, դեղորայքով և հայտարարել, որ պատրաստ են նրանց փոխանակել հայ պատանդների հետ [Բ-52; Բ-53]: Այս տեղեկությունը մի փոքր այլ կերպ է ներկայացված «Кавказский узел» կայքում. «Հայկական զինված կազմավորումների կողմից քաղաքը գրավելուց հետո նրանում մնացել էին մոտ 300 խաղաղ

բնակիչներ, այդ թվում՝ 86 թուրք մեսխեթցիներ: Բնակիչների, գրոհի մասնակիցների, ԼՂՀ-ի պաշտոնական մարմինների և զանգվածային լրատվամիջոցների ցուցմունքներով, մնացած բոլորը գերի են վերցվել և տարվել Ստեփանակերտի ժամանակավոր պահման մեկուսարան և ավտոշարասյան փակ կառույց, Կարմիր գյուղի նախնական ազատազրկման խուց և Ասկերան քաղաքի մեկուսարան: ԼՂՀ-ի ղեկավարության թույլտվությամբ ոմանք վերցվել են հայերի ընտանիքների մասնավոր տներ, որոնց հարազատները բանտարկված էին Ադրբեջանի տարածքում» [Բ-96]:

Ուշագրավ է, որ անընդհատ խոսելով Խոջալուում «հազարավոր բնակիչներ զոհվեցին»-ի մասին, Խոջալուից դուրս եկած բնակիչները չեն հիշատակում կոնկրետ Խոջալուում զոհված ազգականի, բարեկամի, հարևանի, ծանոթի մասին: Բոլոր հիշատակված զոհերը Խոջալուից դուրս գալուց հետո անտառներում մահացածները և ճանապարհի ընդհարումներից զոհվածներն են: Բայց դա, իհարկե, չի խանգարել 1993 թ. հրատարակելու և մինչև այսօր տիրաժավորելու լրագրող Չինգիզ Սուլթանսոյի տարածած «տեղեկությունը», թե իբր «Խոջալուում և շրջակայքում հազար չափահասներից զատ սպանվել են հարյուրավոր անչափահասներ և երեխաներ» [Ա-30, 21]: Այս անորոշ ձևակերպումների պատճառով է, որ օրինակ «The Washington Times»-ը 1992 թ. մարտի 2-ի համարում «Հայերի հարձակումների հետևանքով զոհվում և փախստական են դառնում ադրբեջանցիներ» վերնագրով հոդվածում գրում է, որ հայկական բանակի գրոհի ժամանակ «երեքշաբթի երեկոյան **10 հազար բնակչությամբ Խոջալու քաղաքում սպանվել է մոտ հազար մարդ**: Ադրբեջանական հեռուստատեսությունը ցույց է տվել բեռնատար մեքենաներով Խոջալուի տարածքի դիակների էվակուցիան» [Բ-59][60]: Նույնը կրկնում են «The New York Times», «Tuesday», «3 March 1992» և այլ լրատվամիջոցներ: Այստեղ գրոհի պահին 3–3.5 հազար բնակչությամբ Խոջալուն դարձել է 10.000 բնակչությամբ քաղաք, զոհերի թիվը՝ ավանդականացող 1000 մարդ կամ հազարավոր մարդիկ: Իսկ 1992 թ. հունիսի 12-ին անգլիական «The Independent» թերթը «Ցավոտ որոնում» (PAINFUL SEARCH) հոդվածում իրեն թույլ է տվել գրելու, որ կոնկրետ Խոջալու բնակավայրում զոհերի թիվը կազմել 470–500 մարդ [Բ-62]: Սա Խոջալուում փետրվարի 25-ին առկա բնակչության, որոշ տեղեկություններով՝ 2500, այլ տեղեկություններով՝ 3000 կամ 3500 մարդ, 15 տոկոսից ավելին է: Սա գրվել է Խոջալուի գրավումից 4 ամիս հետո և, իհարկե, մեծ ստերից մեկն է, երբ արդեն հայտնի էին զոհերի իրական կամ, համենայն դեպս, պաշտոնական թվերը:

Ադրբեջանի խորհրդարանի հետաքննությունը Խոջալուի գործողության ժամանակ ադրբեջանական կողմի մարտիկների և խաղաղ բնակչության բոլոր

---

[60] *ARMENIAN RAID LEAVES AZERIS DEAD OR FLEEING* About 1,000 of Khojaly's 10,000 people were massacred by the Armenian Army in Tuesday's attack. Azerbaijani television showed truckloads of corpses being evacuated from the Khojaly area.

սպանվածների և անտառներում կամ ճանապարհին ցրտից մահացածների մասին հայտարարել է 485 թիվը: 1992-ի նոյեմբերի 12-ին Ադրբեջանի խորհրդարանի՝ Միլլի Մեջլիսի պատգամավորական քննչական հանձնաժողովը հայտարարել է, որ «ողբերգության ժամանակ Խոջալուում եղել է շուրջ 4000 բնակիչ: Հանձնաժողովի տվյալներով այդ իրադարձությունների ընթացքում զոհվել է 450, վիրավորվել՝ 400 հոգի, անհետ կորել է մոտ 80-ը, իսկ 20-ը գերի է ընկել» [Բ-42]: Հասկանալի է՝ նոյեմբերին դեռ որոշված չի եղել գերի համարել այն բազմաթիվ խոջալուցիներին, որոնց անվտանգությունն ապահովելու նպատակով մի քանի օր պահել են Ասկերանի միլիցիայի բաժնում կամ Ստեփանակերտում և առանց որևէ նախապայմանի անմիջապես հանձնել ադրբեջանական կողմին: Նույն կերպ հայկական գյուղերի բնակչությունն է անտառներից իրենց գյուղերը հասածներին օգնել Աղդամ հասնելու: Հետագայում է, որ Խոջալուի «գերիների» թիվը պետք է ակտիվանար՝ նրանց նկատմամբ «հայկական բարբարոսությունները» ներկայացնելու նպատակով, և 5–6 օր հայկական կողմում մնացած բոլոր խոջալուցիներին պետք է «պատանդ» կամ «գերի» ներկայացնեին:

Ավելի ուշ Ադրբեջանի կողմից զոհերի պաշտոնական համարված ընդհանուր թիվը ներկայացնում է հետևյալ պատկերը՝

- 613 սպանվածներ և զոհվածներ, այդ թվում 106 կին, 63 երեխա, 70 տարեցներ,
- 487 վիրավորներ, այդ թվում 76-ը՝ երեխաներ,
- 1275 մարդ՝ պատանդներ,
- 150 մարդ՝ անհետ կորածներ [Ա-16, 20]:

Սպանվածների, ճանապարհին կամ գերության մեջ, ինչպես նաև Աղդամ հասնելուց հետո մահացածների անուն ազգանուններով ճշտված և ցանկով անվանապես հրատարակված թիվը կազմում է 509 [Ա-16, 39–45]: Սա չի նշանակում, որ այս ցանկում միայն զոհված խոջալուցիների անուններն են: Այս ցանկում է, օրինակ, նաև Ջանփոլադ Յաղուբ օղլը Ռզաևի անունը, որը, ինչպես վերը տեսանք, Խոջալուի բնակիչ չէր, Աղդամից Ալլահվերդի Բաղիրովի հետ տանկով գնացել էր Շելլի գյուղի մոտ՝ հայկական Նախիջևանիկ գյուղը գրավելու մտադրությամբ: Հայկական կողմին մնացած արխիվի անձնագրային տվյալների ստուգումով, ինչպես նաև 2014 թ. Ադրբեջանի կողմից հրապարակված զինապարտների ծառայության և զոհվելու վայրերի ցուցակով պարզվել է նաև, որ Խոջալուի զոհերի ցանկում առկա 44 մարդ Խոջալուի գրավման պահին զորակոչված է եղել բանակ և զոհվել է Ղարաբաղի բոլորովին այլ հատվածներում: Կան նաև Խոջալուի գրավումից ավելի վաղ մահացածների անուններ (թվարկված են անունները և մահվան տվյալները) [Բ-55; Բ–72]:

Աղբյուրներին մոտ կանգնած մարդկանց կողմից ավելի մանրամասն վեր-

լուծությունը թերևս թույլ կտա դատել, թե բախումների հիմնական երեք վայրերում՝ Ասկերանի կամրջի մոտ, հայկական 5-րդ դիրքում և Աղդամի մատույցներում՝ Շելլիի մոտ զոհված խոջալուցիների կոնկրետ թիվն իրականում որքան է:

Քանի որ սպանվածների և զոհվածների հայտարարված 613-ից անվանական ցուցակով ներկայացված է 509 մարդու անուն, այսինքն 104-ի անունները հայտնի չեն, թերևս կարելի է ենթադրել, որ մնացած 104-ը կարող են լինել նաև «անհետ կորած» 150-ի մեջ: Մյուս կողմից, ներկայացված թվերով 613-ը սպանվածներ և զոհվածներ էին, 487-ը՝ վիրավորներ, 1275 մարդ՝ պատանդներ, 150 մարդ՝ անհետ կորածներ: Ոչ մի տեղ չի ասվում, որ վիրավորների և զոհվածների թվերը ներկայացնում են նաև «պատանդության/գերության ժամանակ» զոհված կամ վիրավորված մարդկանց: Մինչդեռ եթե հավատանք «բանավոր պատմություններին» (տե՛ս ստորև), «պատանդությունից» կամ «գերությունից» ազատված/վերադարձած մարդիկ պատմել են անհավատալի կտտանքների և սպանությունների՝ գնդակահարությունների, գլուխ կտրելու կամ սպանության այլ ձևերի մասին: Տեղեկություններից մեկի համաձայն միայն մեկ օրում՝ մարտի 3-ին, իբր թե «պատանդներից 60-ին գնդակահարել են» [Բ-51]: Այս կարգի բազմաթիվ պատմություններ են հրատարակված, և եթե դրանց հավատանք, պատանդության/գերության ընթացքում զոհված/մահացածների հանրագումարային թիվը հասնում է հարյուրների: Լավ կլիներ հնարավորություն գտնել հասկանալու, որ եթե 613 թիվը ներկայացնում է մահվան ելքով բոլոր զոհերի թիվը, ապա առնվազն «պատանդների» թվաքանակից այդ թիվը պետք է հանել: Պատանդներն այստեղ չակերտներով է, որովհետև ստորև կտեսնենք, որ «պատանդների»/«գերիների» բացարձակ մեծամասնությունը իրականում պատանդներ/գերիներ չէին: Նրանց զգալի մասին հայկական կողմը մի քանի օր պահել է ճանապարհի վտանգներից պաշտպանելու նպատակով և մինչև մարտի սկիզբ առաջին հնարավորության դեպքում արագ հանձնել է ադրբեջանական կողմին:

Բայց թողնենք նաև այս խնդիրը և առաջնորդվենք ներկայացված թվերով: Կոպիտ հաշվարկով երևում է, որ սպանված և ճանապարհին զոհված 613 մարդկանց մեջ կանայք, երեխաներն ու տարեցները 239 են, հետևաբար զինված կամ զենք կրելու ընդունակ տղամարդիկ 474-ն են: Հաշվարկի համար առաջնորդվում եմ մահացածների թվով, քանի որ մնացած խմբերի սեռա-տարիքային կազմի քանակները տրված չեն: Կրկնելու համար ներողություն խնդրելով՝ առաջարկում եմ համաձայնել, որ այս մարդիկ հիմնականում զոհվել են ճանապարհի բախումների երեք դրվագներում՝ Ասկերանի կամրջի մոտ, Աղդամի մատույցներում և Նախիջևանիկ գյուղի ճանապարհի հայկական 5-րդ դիրքի մոտ: Քանի որ երեք վայրերից էլ դիակները հավաքել են ադրբեջանցիները, պետք է ենթադրել, որ Ադրբեջանում ինչ-որ տեղ պիտի հաշվարկված լինի բախումների վայրերի զանգվածային զոհերի քանակը, այդ թվում նաև, թե կոնկրետ այս վայրերում զոհվածներից քանիսն էին խաղաղ բնակչությունից, քանիսը՝ ինք-

նապաշտպանության զինված մարտիկներից, միլիցիոներներից և օմօնականներից: Այդպիսի կոնկրետ տեղեկություն հայտնի չէ թերևս նաև այն պատճառով, որ առնվազն Աղդամի մատույցների դիակների միջից նախապես հավաքել են զոհված և վիրավորված զինյալներին և ցուցադրել հիմնականում զոհված խաղաղ բնակչության մարմինները: Զոհերի դասակարգումը և թվաքանակով ներկայացնելն անցանկալի է համարվել, քանի որ առնվազն ճանապարհի բախումների վայրերում խաղաղ բնակչությունը զոհվել է զինված խոջալուցիների կամ Աղդամից ներթափանցած զինված խմբերի՝ ճանապարհը հսկող հայերին փախհրաձգության սադրելու հետևանքով, որոնց ընթացքում ադրբեջանական մարտիկները կամ ժամանակ չեն ունեցել հեռացնելու իրենց հետ գնացող խաղաղ բնակչությանը, կամ, ինչպես փոխհրաձգության հայկական կողմն է ասում՝ նրանց օգտագործել են որպես վահան: Այլ կերպ ասած՝ անցանկալի է համարվել ճանապահի զանգվածային զոհերը ներկայացնել որպես զինված երկու խմբերի բախման հետևանք՝ ստեղծելու համար «հայերը կոտորել են անզեն խաղաղ բնակչությանը» պատրանքը: Բայց նույնիսկ այս պարագայում խոսուն է այն փաստը, որ սպանված և ճանապարհներին զոհված 613 մարդկանց մեջ կանայք, երեխաներն ու տարեցները 239 են, զինված կամ զենք կրելու ընդունակ տղամարդիկ՝ 474: Ինքնին սա թույլ է տալիս ենթադրելու երեք վարկած՝ ա/ փետրվարի 26-ի գիշերը Խոջալուում մնացած բնակչության մեջ տղամարդիկ կանանցից, տարեցներից և երեխաներից կրկնակի ավել էին (նրանց մեծ մասին հավանաբար ավելի վաղ էին տեղափոխել), բ/ Խոջալուն փետրվարի 26-ի գիշերը լքելու պահին տղամարդկանց մի մասը շտապել է դուրս գալ՝ թողնելով խուճապահար կանանց, տարեցներին և երեխաներին իրենց «գլխի ճարը տեսնել», և վերջիններս եթե ինքնուրույն անմիջապես Աղդամ չեն հասել, ապա ցրտի և սովի պատճառով մտել են հայկական գյուղեր, որտեղից, ինչպես նյութերը ցույց են տալիս, նրանց ավելի անվտանգ ճանապարհով կամ ուղարկել են Աղդամ, կամ հանձնել Ասկերանի և Ստեփանակերտի շտաբ, գ/ ճանապարհին զինված ընդհարումների երեք վայրերում էլ հարկադրված փոխհրաձգության դեպքերում հայերը փորձել են թիրախավորել գլխավորապես զինված տղամարդկանց կամ ուղղակի տղամարդկանց: Բոլոր դեպքերում Ասկերանի և Նախիջևանիկի ճանապարհի հայկական 5-րդ դիրքի մոտի զոհերի մեծ մասը գլխավորապես զինված օմօնականներ կամ քաղաքի ինքնապաշտպանական ջոկատի մարտիկներ էին: Սրան պետք է ավելացնել նաև այն փաստը, որ Խոջալուից արևմտյան կողմի հայկական բնակավայրերի ուղղությամբ ցրված խաղաղ բնակչության մեջ զոհեր չեն եղել: Այս կողմ գնացածների մեջ հիմնականում զինյալ տղամարդիկ չեն եղել, և բոլոր դեպքերում զինված ընդհարումներ չեն եղել:

Դատելով ադրբեջանական քարոզչական ոչ պաշտոնական «տեղեկատվությունից», եթե իհարկե դրանց հավատանք, ճանապարհի ընդհարումների ժամանակ զոհեր եղել են նաև հայկական բնակավայրերի խաղաղ բնակիչնե-

րից: Օրինակ՝ ադրբեջանուհի Հավվա Մամեդովայի ներկայացմամբ, «ոչ միայն Խոջալուում, այլև ողջ Ղարաբաղում հայտնի մտավորական Բեքիր Մամեդովի» պատմությամբ նրա եղբայր Օկտայը «իր ընտանիքը պաշտպանելով, միափող հրացանով կռվել է մինչև վերջին փամփուշտը: Ոչնչացրել է հարձակվող մի քանի հայերի: Բայց թշնամիներին հաջողվել է նրան գերի վերցնել: Հայուհին, ում որդիներին նա այն աշխարհ է ուղարկել, Օկտայի վրա կրակել է ավտոմատից: Այդ մասին ինձ (Օկտայի եղբայր Բեքիր Մամեդովին – Հ.Խ) պատմել են Խանքենդիում (Ստեփանակերտ – Հ.Խ.) գերի մնացած խոջալուցիները» [Ա-16, 85]: Եթե համարենք, որ այս պատմությունը ոչ թե հնարվել է Բեքիր Մամեդովի կողմից միափող հրացանով «մի քանի հայերի ոչնչացրած, հայուհու որդիներին այն աշխարհ ուղարկած» եղբորը հերոսացնելու նպատակով, այլ ինչ-որ օբյեկտիվ հիմք ունի, ապա հարց է առաջանում, թե որտե՞ղ է դեպքը տեղի ունեցել, կոնկրետ ի՞նչ էր սպառնում Օկտայի ընտանիքին, ո՞ւմ կողմից էր սպառնալիքը և փրկե՞լ է արդյոք նա իր ընտանիքի անդամներին: Հազիվ թե դեպքը Խոջալուում եղած լինի, որովհետև Խոջալուի ներսում պարզապես չկար և չէր կարող լինել Օկտայի կողմից «այն աշխարհն ուղարկված»՝ սպանված որդիների համար ավտոմատով կրակող հայուհի»: Ուրեմն եթե այս դեպքն իսկապես եղել է, ապա այն եղել է ճանապարհին, որտեղ Օկտայի ընտանիքին ինչ-որ գյուղի մոտ վտանգ է սպառնացել, և որտեղ Օկտային հաջողվել է «մի քանի հայերի ոչնչացնել» և ինչ-որ հայուհու որդիների «այն աշխարհ ուղարկել»: Հետևաբար այսպես «ոչնչացված» հայերը նույնպես Խոջալուի զոհեր են: Բայց ճիշտ կլինի այս կարգի պատմություններին ուղղակի կասկածել: Մնացած ամեն ինչից բացի, Խոջալուի շուրջ հրատարակված բանավոր պատմությունների մեծ մասը հեռու է «վկայաբանական աղբյուր» ներկայացնելուն առաջադրված նվազագույն պահանջներից, և մոտ է երևակայությամբ հնարված պատկերների: Առաջին իսկ համեմատական դիտարկումներից դրանց տակի հողը սահում է:

Այս կարգի տխուր նմուշ է, օրինակ, Խոջալուի բնակիչ Ջամիլ Մամեդովի «պատմությունը». «Քաղաք մտնելով, տանկերն ու զրահատեխնիկան ավերում էին տներն ու ճզմում մարդկանց: Ռուս զինվորների հետևից գնում էին հայ զինյալները: Վերցնելով 5-ամյա թոռանս և 14 հազար ռուբլի, ես վազեցի անտառի կողմը: Որպեսզի երեխան գիշերը չսառի, ես իմ հագուստը հանեցի և նրան փաթաթեցի: Բայց դա չօգնեց: Հարկադրված էի երեխայի հետ միասին թաղվել ձյան մեջ: Առավոտյան, հասկանալով, որ երեխան չի դիմանա, ես ուղղվեցի դեպի մոտակա հայկական Նախիջևանիկ գյուղ, որտեղ մեզ դիմավորեցին զինված հայեր: Ես նրանց աղաչում էի փող վերցնել և հանուն երեխայի թույլ տալ մեզ Աղդամ գնալ: Ի պատասխան ինձ ծեծեցին, կողոպտեցին և տարան գյուղի պարետի մոտ: Նա հրամայեց մեզ փակել գոմում, որտեղ արդեն ադրբեջանցի կանայք ու երեխաներ կային: Գոմում մեզ պահեցին 4 օր, ոչ հաց տվեցին, ոչ

ջուր: Բայց չարիքը սահման չունի: Չորս օր հետո, երբ ինձ թոռանս հետ Ասկերանի շրջան տարան, այնտեղ այնպիսի բան սկսվեց, որ Նախիջևանիկի գոմը դրախտ էր հիշեցնում: Արտասահմանյան վարձկանները (ես հայերեն գիտեմ և տարբերում եմ տեղացի հային եկվորից) պոկեցին իմ ոտքերի եղունգները: Իսկ հայերի մեջ գտնվող նեգրերը բարձր թոչկոտելով ոտքերով խփում էին իմ դեմքին: Մի քանի ժամ տևած կտտանքներից հետո ինձ փոխանակեցին ձերբակալված հայի հետ: Իսկ թոռանս խլեցին: Ոչինչ չգիտեմ կնոջս և դստերս ճակատագրի մասին» [Բ-79]:

«Բանավոր պատմության» կամ «վկայության» այս հորինվածքը տխուր տարակուսանք է առաջացնում: Չխոսենք «քաղաք մտած և մարդկանց ճզմող զրահատեխնիկայի» մասին: Ոչ մի այդպիսի փաստ չկա: Այս պատմությունը ներկայացնող «վկան» կարծեք թե անտառ է փախել մյուս խոջալուցիներից անտեղյակ, միայնակ՝ 5-ամյա թոռան հետ: Մենակ է անցել ճանապարհը մինչև Նախիջևանիկ: Այդ ընթացքում կարծեք թե ուրիշ խոջալուցիների չի հանդիպել, ինչը շատ դժվար էր՝ դատելով այդ ճանապարհն անցած մարդկանց քանակից և գիշերը չդադարած հոսքից: Հասնելով Նախիջևանիկ գյուղ՝ «նրան դիմավորել են զինված հայեր», այն դեպքում, երբ Նախիջևանիկ գյուղում պարզապես զինված մարդ չկար, նրանք բոլորը գյուղից 3.5 կիլոմետր հեռու գտնվող 5-րդ դիրքում էին: Նախիջևանիկում նրան «կողոպտել և բանտարկել են գոմում, որտեղ արդեն խոջալուցի կանայք ու երեխաներ կային»: Իրականում Նախիջևանիկ գյուղում ոչ մի փախստական խոջալուցի չի եղել: Գյուղը հրետակոծվում էր Աղդամից, և բնակիչները փախել էին հարևան հայկական գյուղեր: Բայց մարդն այլ խոջալուցիների հետ իբր չորս օր Նախիջևանիկի մի գոմում մնալով, «չի լսել» նաև, թե ինչպես էր Նախիջևանիկ գյուղն օրեր շարունակ գնդակոծվում, մարդիկ էին զոհվում, իսկ գյուղի կանայք ու երեխաները խուճապով ու աղմուկով փախչում էին: Չի լսել՝ ուրեմն չի լսել: Բայց պատմության ավարտն արտառոց է՝ նրան տարել են Ասկերան, որտեղ «արտասահմանյան վարձկանները պոկել են նրա ոտքերի եղունգները, իսկ հայերի մեջ գտնվող նեգրերը բարձր թոչկոտելով ոտքերով խփել են նրա դեմքին»: Ի՞նչ վարձկաններ, ի՞նչ «նեգրեր» Ասկերանում, երբ ողջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում «անձնագրային ռեժիմի ստուգման» անվան տակ տնօրինում էին ադրբեջանական օմօնականները: Նրանց հենակետն Ստեփանակերտում էր, և նույնիսկ 1992 թ. հունվարին, Շուշիից Ստեփանակերտը գնդակոծելու ամենաթեժ շրջանում, օմօնականները «հայկական Ստեփանակերտից մեկնում էին հայկական գյուղերը, կրակում, հետո վերադառնում Ստեփանակերտի իրենց հենակետը՝ հանգստանալու» [Բ-84, 5]: Միայն հունվարի 21-լույս 22-ի գիշերը հայերը կարողացան Ստեփանակերտում վերացնել ՕՄՕՆ-ի բազան, և քաղաքի օմօնականները կոիվներով փախան Աղդամ: Բայց Ղարաբաղի շրջաններում, հատկապես անզեն գյուղերում և միջգյուղական ճանապարհներին օմօնականները շարունակում էին տնօրի-

նել իրավիճակը, հսկում էին ճանապարհներով անցնող հայերի տեղաշարժերը, շարունակում անձնագրային ստուգումները, պաշտպանում ադրբեջանական բնակչությանը և կատարում բոլորին շատ լավ հայտնի իրենց հիմնական առաքելությունը՝ օգնում ադրբեջանական զինված խմբավորումներին տեղահանելու հայկական գյուղերի բնակիչներին:

Բայց սա էլ թողնենք: Իմ փորձերը՝ գտնելու Ջամիլ Մամեդովին գոմում տանջած հայերին՝ մասնակի հաջողություն ունեցավ Նախիջևանիկի հարևան Փիրջամալ գյուղում: Այստեղ ես կոնկրետ նրա մասին տեղեկություններ չէի փնտրում, բայց զրուցում էի անտառներից գյուղեր մտած խոջալուցիների հետագա ճակատագրի մասին: Փիրջամալցի Ֆ.Բ-ն, ինձ համոզելու համար, որ իրենք մարդավարի են վերաբերվել իրենց գյուղում 3–4 օր ապաստանած 70–80 խոջալուցիներին, ասաց. «Կարո՞ղ եք, գնացեք գտեք Ջամիլ Մամեդովին: Այդ խեղճ մարդն իր հինգ տարեկան թոռան հետ հասել էր մեր գյուղ: Պատմում էր, որ իր ընտանիքի բոլոր անդամները զոհվել են Խոջալուում, միայն ինքն ու թոռն էին մնացել: Այնքան էինք խղճում այդ մարդուն (պատմում է իրենց մարդասիրական վերաբերմունքի դրսևորումների մասին–Հ.Խ.), որ երբ տանում էինք մյուսների հետ Ասկերան, մարդն ասում էր, որ երկինք-գետին մեզ շնորհակալ է և երբեք չի մոռանա մեր վերաբերմունքը: Գնացեք գտեք, ինքը ձեզ կպատմի»: Ես Ֆ.Բ-ին ոչինչ չասացի, որ Ադրբեջանում հրատարակված նրա պատմության մեջ ոչինչ չի ասվում իր զոհված ընտանիքի մասին, փոխարենը պատմել է, որ ինքը չորս օր գերության մեջ է եղել Նախիջևանիկ գյուղում, որտեղ իրեն հաց ու ջուր չեն տվել, ծեծել և կողոպտել են: Չասացի այն պատճառով, որ համարյա վստահ եմ՝ Ջամիլ Մամեդովի փոխարեն նրա հակասական «պատմությունը» դեպքերին վատ տեղյակ մեկն է գրել:

Այս կարգի «վկայաբանական» պատմությունները շատ հարցականներ են առաջացնում: Ակնհայտ է, որ կոնկրետ այս պատմությունը դեպքերը չիմացած մարդու «Խոջալուի բնակչի» անվան տակ ներկայացված անհաջող հնարանք է: «Պատմությունները» հնարողի/հնարողների համար շատ գայթակղիչ էր արդեն հանրայնացված «Նախիջևանիկ» գյուղի անվան հիշատակությունը: Նախիջևանիկցիներն ասում են, որ իրենց գյուղ նույնիսկ մոլորվածներ չեն մտել՝ գյուղը հրետակոծվելու պատճառով: Իրենք իսկ իրենց գյուղում չեն եղել: Ի տարբերություն հարևան Փրջամալ/Վարդաձոր գյուղի, որտեղ երկու-երեք օր անտառներում մոլորվածներին և ցրտին ու սովին չդիմանալով գյուղ մտածներին հավաքել են գյուղի ակումբում և հարակից ավտոտնակներում, կերակրել, ոմանց տաք հագուստ տվել, ոմանց թույլ են տվել ինքնուրույն գնալ Աղդամ, իսկ ով ինքնուրույն չէր կարող շարունակել ճանապարհը՝ տարել են Ասկերանի շտաբ: Բայց, իհարկե, միշտ հնարավոր է, որ բռնությունների մասին մեզ չեն պատմել: Մյուս կողմից արդեն իսկ ամեն ինչ կորցրած դժբախտ մարդկանց համար թշնամի համարվող հայերի ցուրտ ավտոտնակներում փակի տակ 3–4 օր մնալն ինքնին բռնություն է:

Բանավոր պատմությունների հիշյալ երկու օրինակները բնութագրական են հրատարակված շատ պատմությունների համար: Մի կողմից իրական և իսկապես ողբերգական պատմությունները ջանասիրաբար լրացվել և հրատարակվել են երևույթներն ու դեպքերը չիմացող քարոզիչների կողմից և թուլացրել դրանց ոչ միայն օբյեկտիվությունը, այլ նաև քարոզչական ազդեցությունը, մյուս կողմից պարզապես հորինվել են: Այդպիսիներից է գիշերն անտառով անցնելու պատմությունների մի մասը: Բավական չէ, որ ձմեռվա կեսին ցուրտ ու մութ, անծանոթ անտառով երեխաները ձեռքներին անցնելը, հաճախ թեթև հագնված, տուն-տեղ կորցրած, վախեցած մարդկանց համար իսկապես սարսափելի, երբեմն էլ անհաղթահարելի էր, դրա մասին պատմություններում հորինովի, երբեմն միմյանց հակասող լրացումներ կան «զինված հայերի» կողմից հետապնդումների մասին: Օրինակ՝ «...Խոջալուի բնակիչ Ա.Հ.Ահմեդովը որպես վկա քննվելիս <պատմեց>, որ անտառում ինքը միացավ փախստականների ամբոխին, բայց ճանապարհին հայ զինյալները փակեցին իրենց ճանապարհը և ավտոմատներով, **ԲՏՐ և ԲՄՊ-ներով սպանեցին բազմաթիվ կանանց ու երեխաների** (ընդգծումը իմն է՝ Հ.Խ.), այդ թվում իր մերձավորներին» [Ա-29, 45]: Անհայտ թողնելով, թե ինչպես էին անտառում հայտնվել հայերի չեղած ԲՏՐ-ներն ու ԲՄՊ-ները, այս պատմության հեղինակը չի նշում որևէ կոնկրետ վայր, որտեղ պետք է հրազենով «բազմաթիվ սպանված կանանց և երեխաների» դիակներ լինեին: Քննիչին սա չի էլ հետաքրքրել: Որևէ անտառում կամ անտառի որևէ հատվածում «բազմաթիվ սպանված կանանց և երեխաների» կոնկրետ վայր չի հայտնաբերվել: Անտառներից հավաքված դիակները ցրված էին, մարդիկ մոլորվել և մահացել են կամ ցրտահարության հետևանքով, կամ անտառ են մտել վիրավորված վիճակում և չեն դիմացել գիշերվա անտառային մթության, ձյան, ցրտի հարուցած դժվարություններին:

Մուստաֆաևա Բանովշայի պատմությունից. «…մենք երեխաներին վերցրինք և վազեցինք անտառ... խառնվեցինք մարդկանց հոսքին, անցանք Գարգար գետը... հասանք անտառեզրի «Կետիկ» (Քյաթու՞կ–Հ.Խ.) բացատին: ...**Տղամարդիկ առաջ էին գնում կրակոցներին պատասխանելով** (ընդգծումը իմն է՝ Հ.Խ.): ...Անցանք շատ մեծ տարածություն, մնացել էինք 250–300 մարդ: Անտառում գերի ընկանք: **Հայերն առանձնացրին ազգային բանակի զինվորներին, տարան բարձր լեռան վրա և բոլորի աչքի առաջ գնդակահարեցին**... (ընդգծումը իմն է՝ Հ.Խ.): Այդ պահին դահիճների վրա գնդակներ թռան: Վրիժառուն Արազ Սելիմովն էր: ...Դրանից հետո **հայերը փախստականներին հավաքեցին մի տեղ և նրանց խիտ կենտրոնի մեջ նոնակ նետեցին**...» (ընդգծումը իմն է՝ Հ.Խ.) [Ա-16, 84]: Այս պատմության մեջ որոշ տեղորոշում կա՝ «Կետիկ» բացատ, բարձր լեռ... Պետք է որ դիակներ հավաքելիս որևէ մեկը նկատած լիներ, կամ առնվազն այդ դժոխքում կենդանի մնացած տիկին Բանովշայի օգնությամբ գտած լիներ բարձր լեռան վրա «ազգային բանակի զինվորների» գնդա-

կահարության վայրը՝ այսինքն նույն վայրում առնվազն 10–15 գնդակահարված տղամարդկանց դիակներ և դրանից ոչ հեռու որոշ թվով նոնակից զոհված կամ վիրավորված ինչ-որ թվով մարդկանց, քանի որ, ըստ պատմողի, տղամարդկանց գնդակահարելուց անմիջապես հետո «բոլոր փախստականներին», ուրեմն 250–300-ից առնվազն 100–150 մարդու հավաքել են մի վայրում և նրանց կենտրոնի խիտ մաս նոնակ նետել: Որքան ինձ է հայտնի՝ այդպիսի կոնկրետ վայր չի հայտնաբերվել:

Հավանաբար այս նույն դեպքի մասին է մեկ այլ տիկնոջ՝ Կյուբրա Փաշաևայի պատմությունը: Համենայն դեպս նա նույնպես պատմում է անտառեզրի «Կետիկ» բացատում տեղի ունեցած զինվորների սպանության մասին, բայց նա մի փոքր այլ կերպ է հիշում՝ զինվորներին ոչ թե գնդակահարել են, այլ գլուխներն են կտրել՝ «**մինչև հիմա իմ աչքերի առաջ են գերի ընկած մեր ազգային բանակի քառասուն զինվորների կտրված գլուխները**» [Ա-16, 82] (ընդգծումը իմն է՝ Հ.Խ.): Տիկին Կյուբրա Փաշաևան չի խոսում նոնակով սպանված փախստականների խմբի մասին: Թվում է՝ ավելորդ է կրկին ասել, որ «քառասուն կտրված գլուխներով զինվորների» դիակներ ոչ մի տեղ չի հայտնաբերվել, չնայած տիկին Կյուբրան կարող էր այդ վայրը ցույց տալ փնտրողներին: Այդպիսի վայր այս կամ այլ կերպ հայտնաբերվելու դեպքում բնականաբար անմիջապես մեծ աղմուկ կբարձրանար:

Այս նյութերը հրատարակության պատրաստած Հավվա Մամեդովան, հենց ինքը ներկայացնելով սպանված և մահացած զոհերի թիվը՝ 613 մարդ, հավանաբար չի նկատել, որ նույն գրքում զետեղված պատմությունները պատմողները զոհվածների թվեր են ասում, որոնց հանրագումարային թիվն անցնում 300-ը: Ընդ որում, այստեղ չկան զանգվածային զոհերի հիմնական վայրերի՝ Խոջալուի, Ասկերանի, Նախիջևանիկի ճանապարհի 5-րդ դիրքի և Աղդամի մատույցներում զոհվածները: Եվ դեռ այլոց պատմությունները կան, որոնք զետեղված չեն Հավվա Մամեդովայի կազմած գրքում, բայց իրենց հերթին «լրացնում են» սպանվածների թվերը: Օրինակ՝ Ջանփոլադ Ռզաևի խմբի տղաները խոսում են Ասկերանն անցած, Աղդամին մոտեցած և «շրջափակված» փախստականների մի խմբի մասին, որոնցից 60-ին իբրև թե սպանել են հայերը, իսկ իրենք 120-ին փրկել են [Ա-30, 32–33]: Կրկին՝ այդ ճանապարհին մեկ կոնկրետ վայրում սպանված 60 մարդու մասին որևէ տեղեկություն չկա: Կամ՝ Ջաբար Օրուջևը պատմում է, որ իր հետ եղած խումբը փետրվարի 26-ին Լաչինղոյի մոտից 100 սպանվածների դիակներ է ուղարկել Աղդամ: Բայց Լաչինղոյի մոտի սպանվածների դիակները հավաքվել են մարտի 2-ից հետո: Ուրեմն սրանք տարբեր սպանվածների դիակներ են եղել, ինչի մասին այլ տեղեկություններ չկան: Կասկածը, թե արժե՞ արդյոք խեղաթյուրումներով, միջամտություններով, կեղծ պատմություններով նվազեցնել «վկայաբանական պատմությունների» արժեքը, կամ հրատարակել ակնհայտ կասկածելի նյութեր՝ մեծանում է:

«Անտառային հետապնդումների» մասին պատմություններն առհասարակ խնդրահարույց են: Որոշ մարդիկ ասում են, որ գիշերն անտառով գնալիս կրակոցներ, նաև կրակահերթեր են լսել, բայց ոչ մի պատմությունում **անտառներում կրակողներին չեն տեսել**: Այնուամենայնիվ համոզված են, որ դրանք հայեր էին: Օրինակ, Մյուշկյունազ Ահմեդովայի պատմածով մինչ իրենք խարխափում էին անտառում, «վախենում էին ձայն հանել: Բայց ինչպե՞ս կտրել կրծքի երեխաների լացը: **Երեխայի լացի ձայն լսելիս հայերն անմիջապես այդ կողմը հեղեղում էին գնդակներով** (ընդգծումը իմն է՝ Հ.Խ.): Մարդիկ արյունահոսելով մնում էին ձյան վրա: Մեզ հետ կային տարեցներ, երեխաներ, ինքնապաշտպանության գնդի մարտիկներ: Գիշերային մթության մեջ, խիտ անտառում մենք նույնիսկ չգիտեինք ուր ենք գնում: Սոված փոքրիկների սրտաճմլիկ լացի ձայնը լսելով **հայերը դիպուկահար հրացաններով կրակում էին**» [Ա-16, 85]: Հարց է, թե եթե հայերն անտառում իսկապես հետապնդում էին մարդկանց, ինչպե՞ս էր նրանց հաջողվում մթության մեջ դիպուկ կրակել և վիրավորել կամ սպանել: Եվ առհասարակ հարց է՝ եթե հայեր կային, որ անտառում խմբերով գնացող խոջալուցիներին հետապնդում էին ոչնչացնելու նպատակով, դիպուկահարի ի՞նչ կարիք ունեին: Խոջալուի բնակչուհի Սուսաննա Ջաֆարովա. «...**Երկար թաքնվում էինք բոլոր կողմերից հայ զինյալների շրջապատած** (ընդգծումը իմն է՝ Հ.Խ.) ձյունապատ անտառում: Մի կնոջ ձեռքին 9 ամսական երեխա կար: Նա բարձր լալիս էր: Դրա պատճառով մեզ բոլորիս կարող էին հայտնաբերել: Մայրը վախից սեղմել էր նրա բերանը: Երբ Աղդամ հասանք՝ փոքրիկը համարյա չէր շնչում...» [Բ-79]: Խոջալուի բնակչուհի Մինեշ Ալիևի պատմությունը. «...Մենք խոր ձյուների մեջ թաղվելով թափառում էինք անտառում: Ճանապարհն անցնելիս ինձ գնդակ կպավ: Ես ընկա և չկարողացա բարձրանալ: **Անտառի ինչ որ թաքստոցից կրակահերթ էր** <**լսվում**> (ընդգծումը իմն է՝ Հ.Խ.): Ալիֆն ինձ դուրս հանեց ճանապարհի եզրը: Հետո նա պառկեց թփերի մեջ և **կրակահերթ բացեց մեզ կրակող զինյալների կողմը** (ընդգծումը իմն է՝ Հ.Խ.): Կրակոցներն անտառից որոշ ժամանակ դադարեցին: ...Նա պարբերաբար կրակում էր, և ամեն անգամ զինյալները դադարեցնում էին <կրակոցները>...» [Բ-79]: Անտառով անցնող Նարխանում Գարաևան առհասարակ կարծել է, որ հայերը նախապես խոջալուցիներին հայտնաբերող հատուկ շներ էին վարժեցրել. «Մենք ուրիշ մարդկանց հետևից անտառ գնացինք: Անտառում Տենդերե կոչված վայրի մոտ մեր վրա սկսեցին կրակել: Հայերի մոտ Սետտեր անունով մի տղամարդ գերի կար, և <հայերը> նրան **ստիպում էին մեզ անուններով կանչել** (ընդգծումը իմն է՝ Հ.Խ.): Մենք հասկացանք, որ այնտեղ մեզ հայեր են սպասում, և ուրիշ կողմ փախանք, իսկ նրանք կրակում էին մեր հետևից: Մենք կանգ առանք խնձորի այգում, մեր շուրջը ավչարկա (շան տեսակ – Հ.Խ.) էր պտտվում: Նրա հաչոցից մենք հասկացանք, որ նա վարժեցված է **և հատուկ հայերին ուղղորդում է մեր**

դեմ կրակելու (ընդգծումը իմն է՝ Հ.Խ.): ...Արդեն չգիտեմ որ ամսվա, որ օրվա գիշերվա կեսն էր, մենք թաքնվեցինք անտառի խորքում» [Ա-31, 178–179]:

Մի կողմից հասկանալի է, որ փախչողները տագնապած էին հայերի հետապնդումներից և բոլոր վտանգները հայերից էին սպասում: Վախի աչքերն այնքան մեծ են, որ նույնիսկ անծանոթ մարդկանց վրա շան հաչոցը նրանք կարող էին ընկալել իրենց սպանելու վարժեցրած ուղղորդում: Նրանք, հավանաբար, չէին սպասում և չէին պատկերացնում, որ հայերն իրենց չեն հետապնդում: Հազիվ թե նրանք իմանային, որ իրականում հայերը ոչ բավականաչափ զենք, ոչ բավականաչափ մարտիկներ ունեին փախչողներին հետապնդելու, բայց գլխավորը՝ որ հայերը նպատակ չունեի՛ն նրանց հետապնդելու և չեն հետապնդել: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի նախկին խորհրդական, պաշտոնաթող գնդապետ Ի.Ղ.Ղուկասովը 24.02.2014-ին գրում է, որ Խոջալուն գրավելուց հետո «դիմադրության առանձին օջախներ մնացել էին, և մենք ջոկատներ չունեինք քաղաքից դուրս գործողությունների համար: Խոջալուից դուրս եկած խաղաղ բնակիչներին և նրանց ուղեկցող մարտիկներին մեր ջոկատները չեն հետապնդել, քանի որ մարդ չկար, որ հետապնդեր, և դա պլանավորված էլ չէր» [Բ-68]: Կասկածի տակ չդնելով գիշերն անտառում հայտնված դժբախտ մարդկանց լսած կրակոցների իսկությունը, ենթադրելի է, որ գիշերվա մթության մեջ անտառով գնացող փախստականների միջի զինվածները կրակել են իրենց կասկածելի թվացող ձայների ուղղությամբ և դրանով լրացուցիչ տագնապների առիթ տվել նույն անտառով գնացող, բայց իրենց չտեսնող փախստական այլ խմբերի: Բոլոր դեպքերում անտառում նրանց հետապնդող հայեր չեն եղել, հայերի նրանք չեն հանդիպել, չեն տեսել, ոչ մի պատմությունում այդպիսի վկայություն չկա: Հայ/հայեր նրանք տեսել են անտառից դուրս գալուց հետո՝ հայկական գյուղերի մոտ:

Այս պատմությունները, սակայն, հաստատում են այն, ինչ Նախիջևանիկի ճանապարհի հայկական 5-րդ դիրքի և Ասկերանի բախումները նկարագրելիս տեսանք՝ նահանջող խաղաղ բնակչության մեջ զգալի թիվ էին կազմում զինված մարտիկները, զինվորականները, օմօնականները, միլիցիոներները, այլ կերպ ասած, կռվող մարդիկ: Նրանք կասկածելի ձայներ լսելիս կամ կասկածելի մարդ տեսնելիս զենք են օգտագործել և վտանգ ստեղծել ինչպես իրենց ճանապարհի հայկական գյուղերի բնակչության, այնպես էլ փախստականների համար: Խոջալուի միլիցիայի կապիտան Սեդիկ Մամեդովը «AZERBAYCAN» թերթի 1997 թ. փետրվարի 26-ի համարում հաստատում է այս երևույթը. «...Բնակչությանը տարանք Նախչավանիկի ուղղությամբ, այսպես կոչված «միջանցքով» (իրականում դա հատկացված միջանցքի ճանապարհը չէր–Հ.Խ.): Ճանապարհ ընկավ 40–50 մարդ: **Խոջալուում բոլոր նրանք, ովքեր զենք ունեին՝ միլիցիոներները, զինծառայողները, գնում էին առջևից, բոլորը թշնամու դեմ կռվում**

էին հարձակումը խափանելու համար» (ընդգծումը իմն է՝ Հ.Խ.)։ Ո՞ւմ դեմ էին «կռվում հարձակումը խափանելու համար»՝ պարզ է, ճանապահին իրենց հանդիպած հայերի։ Նախապես «կռվում էին», որ հանկարծ չհարձակվեն։ Արդյունքում հենց «կռվում էին», այսինքն՝ դիմահար կրակ էին բացում, պատասխան էին ստանում, որից զոհվում էր նաև իրենց հետ գնացող խաղաղ բնակչությունը։ Սա, կարծեք թե, խաղաղ բնակչությանը պաշտպանելու լավագույն միջոցը չէր։

■
ԽՈՋԱԼՈՒԻ ԳԵՐԻՆԵՐԸ, «ԳԵՐԻՆԵՐԸ», «ՊԱՏԱՆԴՆԵՐԸ»

Վերն ասվել է, բայց տվյալ դեպքում որպես հաստատում կրկնենք, որ Ասկերանի բնակիչ Ս.Առուշանյանի և Նորագյուղի եղբայրների պատմածներով Խոջալուից դուրս եկած բնակչությունը հատկացված միջանցքով գնալուց զատ անկազմակերպ ցրվել/փախել է տարբեր ուղղություններով. «Հիմա տես քանի ուղղություն է եղել փախստականների գնալը՝ մեկը՝ Սարդարաշենի ուղղությամբ, մեկը՝ Նորագյուղի ուղղությամբ, նույն գծով՝ Հովսեփավան, մի մասը գնացել է Լուսաձոր՝ նախկինում Մեհտիշեն էր կոչվում, դեպի հյուսիս՝ Խանաբադի կողմը, մեկը գնացել են Դարեհազի ուղղությամբ, մեկը՝ Նախիջևանիկի և Քյաթուկի ուղղությամբ, մյուսները՝ Ասկերանով Աղդամի ուղղությամբ: Անկազմակերպ բոլոր ուղղություններով գնացել են»[61]:

Թվարկված բոլոր գյուղերի բնակիչները, Նախիջևանիկ գյուղից զատ, հաստատում են, որ փախստականներն իրենց գյուղ գնացել են: Թվարկվածներից զատ փախստականներն ապաստանել են նաև Նախիջևանիկ գյուղին մոտ գտնվող Փրջամալ գյուղում: Նախիջևանիկում չեն եղել, որովհետև գյուղն այդ ժամանակ հրետակոծվում էր, և գյուղացիներն իրենք էին ժամանակավորապես ապաստանել հարևան գյուղերում: Բայց նրանք ճանապարհից մոլորվածների հանդիպել են, ինչպես, օրինակ, Նախիջևանիկի բուժքրոջ հայրը. «Իմ պապաս ասում ա էս մեր դաշտերովը իջնելուց տեսել ա մի կնիկ վիրավորված անցնում է: Ասում ա պենջակս ճղալ ամ, փթաթալ ամ: Խոխա ա իլյալ, մի փոքր էրեխա շալակած, մինն էլ փեշքից բռնած քինում ա»[62]:

Ըստ որոշ գյուղերի բնակիչների՝ իրենց գյուղ հասածներին կերակրել են, որոշ գյուղերում տաք հագուստ են տվել և մի մասին, որոնք կարող էին ինքնուրույն շարունակել ճանապարհը դեպի Աղդամ, տարել և թողել են Աղդամի ճանապարհին, մյուսներին տարել հանձնել են Ասկերանի շտաբ: Ըստ էության հիմնականում հենց այս մոլորված, ճանապարհներից շեղված մարդկանցից է ձևավորվել այն խումբը, որին ասվում է «գերիներ» կամ «պատանդներ»: Այս խումբը համալրվել է նաև փետրվարի 26-ին Խոջալու բնակավայրում մնացած

---

61 Սլավիկ Առուշանյանի և Պետրոսյան եղբայրների հետ զրուցել են Հ.Խառատյանը և Գ.Մխիթարյանը:

62 Նախիջևանիկ գյուղում ապրող, 1971 թ. ծնված Սիլվա Խաչատրյանի հետ զրուցել է Նելլի Մանուչարյանը:

մարդկանցով և Ասկերան–Աղդամ ճանապարհին տեղի ունեցող փոխհրաձգության պատճառով վտանգված խոջալուցիներով, որոնց հոսքը դադարեցվել է նրանց վտանգի չենթարկելու նպատակով: Չնայած ուղիղ տեղեկություն չկա, բայց պետք է ենթադրել, որ «գերի»/«պատանդ» են դարձել նաև Ասկերանի մոտի փոխհրաձգության հետևանքով զինաթափված տղամարդիկ: Ասկերանից, ըստ ադրբեջանական աղբյուրների, երրորդ օրը Ասկերանի գնդի հրամանատար Վիտալի Բալասանյանը առանց նախապայմանների Աղդամից Ասկերան գնացած Ալլահվերդի Բաղիրովին է հանձնել 1.003 խոջալուցիների [Բ-106]: Նյութերը, սակայն, վկայում են, որ հայկական կողմում մնացած խոջալուցիների հանձնումը ադրբեջանական կողմին ոչ թե «երրորդ օրը» տեղի ունեցած միակտ գործողություն է եղել, այլ շաբաթներ տևած գործընթաց: Ռուսական «Մեմորիալ» իրավապաշտպան կազմակերպության փորձագիտական եզրակացությունը հետևյալն է. «Ըստ ԼՂՀ-ի պաշտոնական անձանց հայտարարության, բոլոր կանայք և երեխաները մեկ շաբաթվա ընթացքում անհատույց հանձնվել են ադրբեջանական կողմին: Երկու կողմերից ստացված տեղեկություններով մինչև 1992 թ. մարտի 28-ը ադրբեջանական կողմին է փոխանցվել Խոջալուի բնակիչներից քաղաքից և ճանապարհներից վերցված ավելի քան 700 գերի: Նրանց հիմնական մասը կանայք և երեխաներ էին» [Բ-88]: Սա կարող է նշանակել, որ առաջին շաբաթվա ընթացքում կանանց և երեխաներին Աղդամին հանձնելուց հետո հայկական կողմում մնացել են 700 խոջալուցիներ, որոնք աստիճանաբար Աղդամ են տարվել մինչև մարտի 28-ը: Ինքը՝ Վիտալի Բալասանյանը, մի հարցազրույցում ասել է, որ «Խոջալուում մենք կրակել ենք ադրբեջանական կրակի օջախները վերացնելու և մեր ժողովրդին փրկելու համար: Մենք նրանց մարդկանց էլ ենք փրկել: Միայն ես Խոջալուից նրանց եմ հանձնել 1250 մարդ: Մինչև հանձնելը մենք նրանց ջուր և ուտելիք ենք տվել և ապահովել ենք անվտանգությունը» [Բ-77]: Նա չի խոսում այն մասին, թե որքան ժամանակի ընթացքում է Ադրբեջանին հանձնել 1250 խոջալուցիներին՝ միանգամի՞ց, թե՞ մաս-մաս: Բայց եթե իսկապես 1250 խոջալուցիներ մնացել էին հայկական կողմում, ապա կարելի է ենթադրել, որ նրանցից 520-ը՝ կանայք ու երեխաներ, հանձնվել են առաջին շաբաթվա ընթացքում և առանց նախապայմանների, իսկ մնացած 700-ը հանձնվել է մինչև մարտի 28-ը: Վերջիններիս հավանաբար արդեն կարելի է «պատանդ» անվանել, քանի որ նրանց մաս-մաս հանձնումը հաճախ ուղեկցվել է փոխանակության բանակցություններով: Հայերի մոտ մնացած խոջալուցիներին ադրբեջանական կողմին հանձնելը սովորաբար իրականացնում էր Վիտալի Բալասանյանը՝ Աղդամից հայկական 4-րդ դիրքի մոտ եկող Ալլահվերդի Բաղիրովի հետ բանակցություններով: Երկուսն էլ հանդիպման գնում էին իրենց զինվորների ուղեկցությամբ: Վ. Բալասանյանին այդ բանակցությունների ժամանակ ուղեկցած զինվորներից երեքի հետ ես զրուցել եմ: Նրանք միաժամանակ այն մարդիկ են, որոնց Վ. Բալասանյանը ուղարկում էր դիակները

հավաքող ադրբեջանական խմբերին ուղեկցելու: Նրանցից Ստեփանակերտում ապրող 50-ամյա մի տղամարդու պատմածով կոնկրետ ինքը Վ. Բալասանյանին բանակցությունների վայր ուղեկցել է մոտ 9–10 անգամ. «Ես մարդկանց թիվ չեմ հիշում, բայց ամեն անգամ հանձնում էինք 40–50 մարդ: Իմ տեսածը բոլորը տղամարդիկ էին, ես կին-երեխա չեմ հիշում: Դրա դիմաց միշտ չէ, որ մենք մերոնց (հայերի–Հ.Խ.) ստանում էինք: Մերոնցից այդ ժամանակ իրանց մոտ այդքան մարդ չկար: Մենք 40–50 մարդ տալիս էինք, փոխարենն ստանում էինք երբեմն 1 մարդ, երբեմն՝ 3–4 մարդ: Լինում էր նաև, որ փոխանակվող չէր լինում, ուղղակի հանձնում էինք: Մենք խոջալուցիներին մեքենայով տանում էինք մինչև մեր 4-րդ դիրքը, իրենք էլ Աղդամից էին գալիս մեր 4-րդ դիրքը, մեր բերած մարդկանց վերցնում էին ու գնում: Եթե իրենք հայեր բերած էին լինում՝ մենք էլ մերոնց էինք բերում»:

Իրականում հարց է՝ ինչպե՞ս անվանել այն մարդկանց, որոնք Խոջալուից դուրս գալուց հետո 2–3–4 օր, մեկ շաբաթ մնացել են հայկական կողմում և հենց առաջին հնարավորության դեպքում ուղարկվել են Աղդամ՝ ադրբեջանական կողմին, գերի՞, պատա՞նդ: Կարծեք թե ոչ այս են, ոչ այն: Նրանց մեծ մասը երեխաների, տարեցների, հիվանդների, երբեմն՝ վիրավորների հետ միասին մոլորված, վախեցած մարդիկ էին, որոնցից հայերն ուզում էին օր առաջ ազատվել: Նրանց, կամ համենայն դեպս նրանց մեծ մասին ուժով չեն պահել: Այդքան մարդ Ասկերանում կամ Ստեփանակերտում պահելը ամիսներ շարունակ հոսանքազուրկ, պարենի մատակարարումից և պահուստներից զրկված, հրետակոծությունների պատճառով նկուղներում ապրող, թեյ եփելու ջրի համար հերթերում կանգնած հայերի համար պարզապես անհնար էր: Գուցե նաև այդ պատճառով հայկական կողմն անմիջապես «ազատվել է» նրանցից շատերից՝ ուղղակի առանց նախապայմանների հանձնել են Աղդամ: Խոջալուցիներից «գերի» կամ «պատանդ» թերևս կարելի է համարել նրանց, ում հայկական կողմը ուժով պահել է որոշ նպատակով, տվյալ դեպքում՝ փոխանակության: Հնարավոր է առանձին դեպքերում՝ նաև կոնկրետ մարդկանց հանցագործ համարելով, չնայած այդպիսի տեղեկություն չկա: Բոլոր դեպքերում Խոջալուի բնակիչներից «գերի» կամ «պատանդ» հայկական կողմում եղել են մինչև 1992 թ. ապրիլը: Առանձին դեպքերում գուցե ավելի երկար, որովհետև «Մեմորիալի» տեղեկություններով որոշ խոջալուցիներ ԼՂՀ-ի ղեկավարության թույլտվությամբ տրվել են այն հայ ընտանիքներին, որոնց ազգականները Ադրբեջանում բանտարկված էին [Բ-88]:

Ադրբեջանական կողմը գերիների նկատմամբ հայերի վերաբերմունքի մասին գերությունից ազատվածների պատմություններով հրատարակել է միայն սարսափելի դաժանությունների, կտտանքների նկարագրություններ: «Մեմորիալի» դիտորդները գրանցել են ինչպես գերիների պահման վայրերի պրոբլեմներ, այնպես էլ որոշ բռնություններ. ««Մեմորիալի» դիտորդների դիտարկում-

ներով Ստեփանակերտ քաղաքի Ժամանակավոր պահման մեկուսարանում (այսուհետ՝ ԺՊՄ–Հ.Խ.), որտեղ պահվում են Խուջալուի գերի բնակչությունը և ադրբեջանական զինված կազմավորումների գերիները (նրանց բոլորին կոնֆլիկտի գոտում անվանում են «պատանդներ») ի հայտ է եկել, որ նրանց պահման պայմանները խիստ անբավարար են: ԺՊՄ-ում պահվողների արտաքին տեսքը վկայում է, որ նրանք խիստ աղքատիկ սնունդ են ստանում, կան հյուծման ակնհայտ նշաններ: Բանավոր տեղեկություն է ստացվել, որ ազատազրկվածներին ծեծում են: Հարկ է նշել նաև, որ դիտորդներին թույլ են տվել տեսնել ազատազրկվածների միայն մի մասին: Խոջալուի գերի ընկած և հետո փոխանակված բնակիչների և պաշտպանների ցուցմունքներով, տղամարդկանց ծեծել են: Ցուցմունքների մեծ մասի համաձայն, ի տարբերություն տղամարդկանց կանանց ու երեխաներին չեն ծեծել: Սակայն Բաքվի և Աղդամի բժիշկների կողմից հաստատված որոշ ցուցմունքներով եղել են բռնաբարության դեպքեր, այդ թվում անչափահասների <նկատմամբ>»:

Դիտորդական առաքելություն իրականացրած «Մեմորիալը» իր զեկույցի եզրակացություններում գրում է. «Հայկական ջոկատների կողմից Խոջալուն գրավելուց հետո քաղաքում մնացած **խաղաղ բնակչությունը դեպորտացվել է** (ընդգծումը իմն է–Հ.Խ.): Դա տեղի է ունեցել կազմակերպված, դեպորտացվածներից շատերը պահվել են Ստեփանակերտում, ինչն ակնհայտ ցույց է տալիս դրանում ԼՂՀ իշխանությունների համապատասխան կարգադրությունը»: Այս գնահատականը «Մեմորիալը» տալիս է միայն Խոջալուում մնացած մոտ 300 մարդու մասին: «Մեմորիալը» Խուջալուում մնացած մարդկանց թվերում որոշ տարընթերցումներ ունի: Օրինակ, «Գրոհի ընթացքը» բաժնում գրում է, որ «Խոջալուն լքել է խաղաղ բնակչության մեծ մասը, իսկ **մոտ 200–300 մարդ** (ընդգծումը իմն է՝ Հ.Խ.) մնացել է Խոջալուում՝ թաքնվելով իրենց տներում և նկուղներում», իսկ ահա «Քաղաքում մնացած բնակիչների ճակատագիրը» բաժնում գրում է քաղաքում մնացած 300 խաղաղ բնակիչների մասին:

Հարցերը՝ թե ուրիշ ի՞նչ կարող էին անել Լեռնային Ղարաբաղի պաշտոնատարները Խոջալուում մնացած բնակչության հետ, ո՞ւր պիտի ուղարկեին կամ տանեին նրանց՝ մինչև Աղդամի ադրբեջանական պաշտոնատարների հետ կապվեին կամ սպասեին նրանց կապվելուն և համաձայնեցնեին գործողությունները, «Մեմորիալը» չի ձևակերպում և չի պատասխանում: Որևէ ակնարկ չկա նաև «Խոջալուի պատանդներին» կամ «դեպորտացվածներին» ադրբեջանական կողմին հանձնելու դժվարությունների կամ մերժման մասին: Նույն կերպ «Մեմորիալը» չի ձևակերպում նաև հարցադրում՝ արդյո՞ք պետք է այդ մարդկանց ուղղակի հենց Խոջալուից ազատեին՝ թողնելով գնալու թե ադրբեջանցիների, թե հայերի կողմից դեռևս անապահով ճանապարհով դեպի Աղդամ, ի՞նչ կարող էր պատահել այդ մարդկանց հետ ճանապարհին: Գուցե հենց հայե՞րը պետք է նրանց զինված խմբի վերահսկողությամբ տանեին Աղդամ: Բայց որ-

տեղի՞ց նրանց երաշխիք, որ ճանապարհին ադրբեջանական զինված կազմավորումները չէին հարձակվելու և հերթական չծրագրավորված փոխհրաձգություն չէր հրահրվելու, որի հետևանքով հենց խոջալուցիների կյանքը վտանգի տակ կդրվեր: Այս հարցերը և դրանց պատասխանները օդի մեջ թողնելով՝ «Մեմորիալը» Խոջալուում մնացած 300 անձին Ստեփանակերտ տեղափոխության հայկական գործողությունը ձևակերպում է «դեպորտացիա», չնայած հենց նույն պարբերության մեջ գրում է, որ Ղարաբաղի պաշտոնատարների ասելով «մեկ շաբաթվա ընթացքում բոլոր կանայք և երեխաները փոխանցվել են ադրբեջանական կողմին»: Ադրբեջանական կողմը չի հերքել այդ տեղեկությունը: Շատ տարօրինակ «դեպորտացիա» է: ԽՍՀՄ դեպորտացիաների գործերի վերլուծություններում հմտացած «Մեմորիալի» համար սա, մեղմ ասած, անհասկանալի գնահատական է:

Չքննարկելով գերիների սննդի և պահման ֆիզիկական պայմանների հարցը (գնդակոծվող Ստեփանակերտում և Ասկերանում, որտեղ նրանք պահվում էին, ամիսներ շարունակ ողջ բնակչությունն ապրում էր չտաքացվող, սառը և ցուրտ նկուղներում, առանց հոսանքի, անջուր, կիսասոված և հյուծված: Միաժամանակ ոչ ոք չի խոսում կամ գրում այն մասին, որ հատկապես Ստեփանակերտում կուտակվել էին հայկական գյուղերից տեղահանված հազարավոր փախստականներ, այդ թվում հենց Խոջալուի «վրեժի» կապակցությամբ «գերի» խոջալուցիների հետ միասին Ստեփանակերտում հայտնված Մարտակերտի շրջանի հայկական գյուղերից: Նրանք, ճիշտ է, մեկուսարաններում չէին, բայց կուտակված էին մանկապարտեզների, դպրոցների շենքերում և նույնպես սննդի, տաք հագուստի, կյանքի համար անհրաժեշտ այլ պայմանների կարիք ունեին, ինչը Ստեփանակերտում բացակայում էր: Չվիճարկելով, որ «գերի» կամ «պատանդ» խոջալուցիների մի մասն իսկապես ենթարկվել է բռնությունների, կարծում եմ իմաստ ունի նաև փորձել իմանալ, թե ինչ գիտեն Ստեփանակերտի և Ասկերանի բնակիչները գերի/պատանդների մասին: Այս մասին չափազանց քիչ բան է հայտնի: Նյութեր չեն հավաքվել, չի քննարկվել, չի վերլուծվել: Կան շատ պատահական հիշատակումներ, ինչպես, օրինակ, Վիկտորյա Իվլևան է գրել «...Երկու օր հետո թուրքերին բաց թողեցին: Տարան մինչև Ասկերանի շրջանի ճակատային գիծ և – դե ահա, քայլեք: ...Նրանց հսկող զինվորները թուրքերին մարդավարի էին վերաբերվում: Ղարաբաղյան շարժման ղեկավարներից մեկը՝ Ժաննա Գալստյանը, երեխաների համար իրեր բերեց: Միգուցե ղարաբաղցի հայերը զգո՞ւմ են, թե ինչքան նման է մեսխեթցի թուրքերի ճակատագիրը իրենց սեփական դրությանը» [Виктория Ивлева, Степанакерт-Ходжалу, 25-26 февраля, 1992г., Московский Комсомолец», март, 1992]: 19 տարի անց, 2011թ., մասնակցելով Խոջալուի պարտության Բաքվում նշվող հերթական տարելիցին, նա պատմել է իր տեսածը ադրբեջանցի լրագրող Ռիզվան Հուսեյինովին. «Այնտեղ, Ղարաբաղում... կար Ադրբեջանում շատ

չսիրված Ժաննա Գալստյան, որը, երբ Մեհրիբանը և ուրիշներն արդեն գերության մեջ նստած էին, երեխաների համար ինչ-որ հագուստ, ծածկոցներ բերեց, իսկ Մեհրիբանի համար՝ երկարաճիտ կոշիկներ: Եվ ես դա հիշում եմ: Եվ այնտեղ կային նաև զինվորներ, ովքեր երբ Մեհրիբանին տանում էին փոխանակելու, իրենց ձեռքի վրա մինչև ճակատային գիծ տարան Մեհրիբանի երեխաներին: Դուք հիանալի հասկանում եք, որ նրանց ոչ ոք դա չէր կարող ստիպել, ավելի շուտ հակառակը <պիտի լիներ>» [Բ-76]:

Ստեփանակերտում ապրող դերասանուհի Ժաննա Գալստյանի անունը Լեռնային Ղարաբաղի մարզի ինքնորոշման շարժման շրջանից Ադրբեջանում շատ հայտնի, խորհրդանշական անուն է: Նրա գործողություններին հեշտ է հղում անել: Բայց Ղարաբաղում Խոջալուի գերիների ճակատագրի համար Ժաննա Գալստյանը բնականաբար միակ ցավողը չէր: Այդպիսիք կային թե զինվորների մեջ, թե հատկապես շատ էին խաղաղ բնակչության, մասնավորապես կանանց մեջ: Խոջալուի գրավմանը մասնակցած «Արաբո» ջոկատի հրամանատար Մանվել Եղիազարյանը, լրագրողի հարցին պատասխանելով, ասել է. «Ինչ վերաբերում է խաղաղ բնակչությանը, ապա միայն մեր ջոկատի կողմից մոտ 40 գերի է վերցվել՝ հիմնականում կանայք և երեխաներ: Նրանց մենք տեղափոխեցինք Ստեփանակերտ, որտեղ նրանք տեղավորվեցին մեզ հետ նույն շենքում: Մեր զինվորները բնակվում էին առաջին հարկում, իսկ գերիները երկրորդ և երրորդ հարկերում: Ես նույնիսկ ժամապահ էի նշանակել, որ նրանց որևէ մեկը չանհանգստացնի»: Նա հիշում է, թե ինչպես է «Գթություն» բարեգործական հիմնադրամից ստացած դեղորայքը տվել ադրբեջանցի փոքրիկ տղային՝ տեսնելով, որ նա հազում է: «Սկզբում ես մի փոքր խմեցի, որ այդ մանկիկի մայրը համոզվի, որ անվնաս է, հետո նոր տվեցի մորը, որ խմացնի հազող երեխային»: Կոնկրետ այս խումբ «գերիները» 4–5 օր Ստեփանակերտում անցկացնելուց հետո հանձնվել են ադրբեջանական կողմին [Բ-29]:

Ստեփանակերտի բնակչության հուշերով Խոջալուից դուրս եկած խաղաղ բնակչության մի խումբ մոտ մեկ ամիս ապրել է Ստեփանակերտի մանկական հիվանդանոցի վերջին հարկում: Շուշիից շարունակվող ամենօրյա գնդակոծության պատճառով հիվանդներին միայն առաջին հարկում էին պահում, մյուս հարկերը դատարկ էին: Հիվանդանոցի հին աշխատողները հիշում են. «Իհարկե ցուրտ էր, հիվանդանոցը չէր տաքացվում: Մեղք էին այդ մարդիկ, առաջին շաբաթը մեջտները վիրավորներ էլ կային, երեխաներ: Շուշիից սկսվում էր «Գրադի» գնդակոծումը, մենք մտնում էինք նկուղները, իսկ այդ մարդիկ մնում էին շենքում: Ստեփանակերտում շատ կային բորբոքված, վրիժառու մարդիկ՝ երեխա էին կորցրել գնդակոծության ժամանակ, տղան էր զոհվել կռվում, կամ ամենավատը՝ հարազատին գերի էին տարել և հենց Շուշիի բանտում էին պահում: Շուշիի բանտի մասին էլ սարսափներ էին պատմում դուրս եկածները: Կար՝ որ փախել էր, կար, որ փոխանակել էին: Ով ազատվում էր՝ արդեն հաշմանդամ դար-

ձած էր լինում (պատմում են Շուշիի բանտում տեղի ունեցած դաժանությունների մասին – Հ.Խ.): Այդ մարդիկ ուզում էին գնան հիվանդանոցում պահվողներից վրեժ լուծեն: Բայց հիվանդանոցը պաշտպանվում էր միլիցիոներների և զինվորների կողմից, չէին թողնում շենքի այդ հարկերը գնացող լինի: Մենք էլ մեր կողմից երբեմն ուտելիք էինք տանում, հին հագուստ էինք տանում իրենց համար»: Հիվանդանոցի բուժքույրերից մեկը պատմում է. «Մեր հարևաններին պատմել էի դրանց մասին: Բուրդ էին հավաքել, ոմանք էլ բրդի թել էին բերել, տարանք տվեցինք դրանց կանանց, որ բրդից գուլպաներ գործեն, երեխաների համար տաք ֆուֆայկա գործեն: Դե այդ մարդիկ ինչ մեղք ունեին, որ հայերն ու թուրքերը կռվում էին: Մեկն էլ բրդից ծածկոցներ էր բերել, ասեց տար տուր այդ մարդկանց, իմ եղբայրն էլ Շուշիում է գերի, գուցե Աստված մի մարդու բարություն էլ նրան հասցնի»: Այս պատմությունները պատերազմի/պատերազմների «մյուս դեմքի» մասին են, որն ամենուր լինում է, բայց դառնում է միայն գեղարվեստական պատումների նյութ: Քիչ հավանական է, որ Աղդամ ուղարկված կամ փոխանակված Խոջալուի բնակիչները/գերիները/պատանդները այս մասին պատմած չլինեն, բայց հրատարակված ադրբեջանական նյութերում պատումները միայն ծայրահեղ բռնությունների մասին են: Հայերն էլ իրենց հերթին պատմում են միայն դրական և սրտացավ վերաբերմունքի մասին: Կողմերից յուրաքանչյուրը փորձում է շրջանցել այն, ինչ իրեն թվում է, թե կարող է քաղաքական իմաստով շահեկան լինել հակառակորդին:

■
ԱՄՓՈՓՈՒՄ ԽՈՋԱԼՈՒԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ

– 1988թ-ից ադրբեջանական իշխանությունները ԼՂԻՄ-ում ընտրեցին ադրբեջանական այն բնակավայրերը, որոնք հայերի դեմ ռազմական գործողությունների դեպքում կարող էին հենակետային լինել: Դրանցից մեկը Ասկերանի շրջանում գտնվող Խոջալու բնակավայրն էր, որը գտնվում էր ԼՂԻՄ-ի մայրաքաղաք Ստեփանակերտից 7–8 կմ հեռավորությամբ, մոտ էր ադրբեջանական Աղդամ քաղաքին, բնակավայրի մոտ էր ԼՂԻՄ-ի միակ օդանավակայանը: 1988–91թթ. ընթացքում Խոջալուն ռազմականացվում է և դառնում ՕՄՕՆ-ի և ԱԺՃ-ի հենակետերից մեկը: 1991թ-ից Խոջալուն վեր է ածվում ԼՂԻՄ-ի հյուսիսի հայ բնակչության պատուհասի՝ զբաղվում է հայեր առևանգելով, շրջակա գյուղական բնակչության ահաբեկչությամբ, կողոպուտով, հսկում է Աղդամ-Ստեփանակերտ ճանապարհը, հայերի համար անմատչելի դարձնում օդային ճանապարհը: 1991թ. ամռանը Ասկերանի շրջանի հայկական բնակավայրերն ամբողջովին կտրվում են Ստեփանակերտի հետ կապի հնարավորությունից և ստիպված են լինում Խոջալուն շրջանցող լեռնային, դժվարանցանելի ճանապարհ բացել: 1991թ. աշնանից Շուշիից և Խոջալուից պարբերաբար հրետակոծվում է Ստեփանակերտը:

– 1992թ. սկզբից Լեռնային Ղարաբաղի/Արցախի հայ բնակչության համար Խոջալուի գրավումը դառնում է կենսական հարց և ռազմական անհրաժեշտություն: Հայերի կողմից տարհանվում է Խոջալուի մերձակա ադրբեջանական գյուղերի բնակչությունը և այնտեղ գտնվող ՕՄՕՆ-ի զինամթերքը անցնում է հայերին: Խոջալուն մնում է մեկուսացման մեջ:

– 1992թ. հունվարից Խոջալուի խաղաղ բնակչությունն արտագաղթում էր: Խոջալուի 6.500 բնակչությունից տարբեր գնահատականներով փետրվարին մնացել էր 2500–3500 մարդ:

– 1992թ. փետրվարին Խոջալու բնակավայրը այդ ժամանակաշրջանի և տարածաշրջանի չափանիշներով ռազմականացված բնակավայր էր, ուներ բնակավայրը պաշտպանող զինված մարդկանց խմբեր՝ օմօնական-

ներ, միլիցիա, տղամարդկանց ինքնապաշտպանական ջոկատ, տարբեր գնահատականներով՝ 200–500 զինված մարդ:

– Խոջալու բնակավայրի ծանր ռազմական տեխնիկան գտնվում էր հենց բնակավայրի ներսում՝ բնակչության տների հարևանությամբ:

– Ադրբեջանի Հանրապետության իշխանության մարմինները և Խոջալուի ողջ բնակչությունը տեղյակ էին բնակավայրը գրավելու հայերի մտադրության և ծրագրի մասին: Հայկական կողմը խաղաղ բնակչությանն առաջարկել է հեռանալ մինչև ռազմական գործողություններն սկսելը:

– Խոջալուն գրավելու հայկական գործողություններից երկու օր առաջ՝ փետրվարի 23-ին, Բաքվից գործուղված մասնագետի հետ Աղդամի շտաբում ադրբեջանական կողմը կազմել է նախ՝ Խոջալու մտնելու և բնակավայրը պաշտպանելու ծրագիր, ապա՝ Խոջալուին օգնության ծրագիր: Այդ ծրագրի համաձայն պիտի նախապես գրավվեին Խոջալուի արևելյան և հյուսիսային ուղղության հայկական բնակավայրերը: Ծրագիրը տապալվել է: Խոջալուին օգնելու նպատակով Աղդամ ուղարկված տանկերը զավթվել են տեղի ադրբեջանական զինված կազմավորումների կողմից:

– Հայկական կողմը Խոջալուն գրավելու ռազմական գործողությունները ծրագրավորելիս նախատեսել էր Աղդամի կողմից հնարավոր հարձակումներից շրջակա հայկական գյուղերի և Խոջալու–Աղդամ ճանապարհին գտնվող Ասկերան շրջկենտրոնի պաշտպանության գործողությունները: Մասնավորապես զինված խումբ է կանգնել Ասկերանի ճանապարհին՝ թույլ չտալու Աղդամից զինված խմբերի ներթափանցումները և Խոջալուի ուղղությամբ շարժվելը: Խոջալուի արևելյան ուղղությամբ՝ Աղդամի հարևանությամբ գտնվող հայկական գյուղերի ինքնապաշտպանական խմբերին հրահանգավորվել է գիշերը կանգնել ճանապարհներին՝ Աղդամից զինված խմբերի հնարավոր հարձակումները կանխելու կամ դրանցից պաշտպանվելու համար: Այդ ուղղությամբ գտնվող հայկական գյուղերի բնակիչները չեն մասնակցել Խոջալուն գրավելու գործողությանը՝ իրենց բնակավայրերում մնալու և դրանք կանխատեսելիորեն հնարավոր հարձակումներից պաշտպանելու համար: Արևմտյան կողմի գյուղերին այդպիսի ուղղակի վտանգ չէր սպառնում, և դրանց ինքնապաշտպանական ջոկատները մասնակցել են Խոջալուն գրավելու գործողություններին:

– Փետրվարի 25-ի երեկոյան, գրավման գործողությունն սկսելուց առաջ, հայկական կողմը հայտարարել է բնակչության հեռանալու համար մարդասիրական միջանցք տրամադրելու փաստը և դրա ուղղությունը՝ դեպիս հյուսիս, Ասկերանի մոտով Աղդամ՝ Կարկար գետի ափով:

– Փետրվարի 25-ին գրավելու գործողությունն սկսվել է բնակավայրի ծանր ռազմական տեխնիկան հրետակոծելով, ինչի հետևանքով տները վնասվել են, իսկ բնակիչները խիստ վախեցել են:

– Խոջալուն գրավելու ռազմական գործողությունը տևել է երկու ժամ, ավարտվել է երկու կողմերի համար նվազագույն զոհերով:

– Փետրվարի 26-ի գիշերը Խոջալուի բնակիչները լքել են բնակավայրը շատ անկազմակերպ: Բնակչության արտահոսքը տևել է 2–3 ժամ: Մարդիկ դուրս են եկել տարբեր ուղղություններով՝ արևմտյան, հյուսիսային և արևելյան, ով ինչպես և որտեղով կարողացել է: Բնակչության միայն մի մասն է ընտրել տրամադրված միջանցով անցնելու ուղղությունը: Քաղաքի ինքնապաշտպանության ղեկավարը քաղաքագլխի և այլ զինված մարդկանց հետ խաղաղ բնակչության մի մասին առաջարկել է հետևել իրենց և գնալ արևելյան ուղղությամբ, հայտնելով, որ այդ ճանապարհի հայկական Նախիջևանիկ գյուղը ադրբեջանցիների կողմից գրավվել է, ինչը իրականությանը չէր համապատասխանում:

– Հայկական կողմը բնակավայրը լքողներից պահանջել է զենքը վայր դնել, բայց չի կարողացել կազմակերպել հարցի լուծումը: Բոլոր զինյալները դուրս են եկել խաղաղ բնակչության հետ խառը և շարժվել են իրենց նախընտրած ուղղությամբ: Զինված խմբերի հետ գնացող խաղաղ բնակչությունը անցել է հյուսիսային և արևելյան ճանապարհներով: Արևմտյան ուղղությամբ գնացել են գլխավորապես անզեն մարդիկ՝ հիմնականում տարեցներ,կանայք, երեխաներ:

– Արևմտյան ուղղությամբ գնացողները 25–40 հոգիանոց խմբերով հասել են Խոջալուի շրջակայքի հայկական Նորագյուղ, Հովսեփավան, Հասանաբադ, Մեհտիշեն, Դահրավ և դեպի հյուսիս՝ Ներքին Կըլչբաղ, Խանաբադ գյուղերը: Գյուղերի բնակիչները նրանց տարել են Ասկերանի ոստիկանատուն կամ վարչակազմի գրասենյակ՝ Աղդամ ուղարկելու նպատակով:

– Հյուսիսային ուղղությամբ՝ մարդասիրական միջանցքով գնացողների մի մասը Ասկերանից հետո հանդիպել է խոչընդոտների: Փետրվարի 26-ին Աղդամից ներթափանցած ադրբեջանական զինված կազմավորումների խմբերը տեղական փոքր կռիվներ են հրահրել ճանապարհի հայկական դիրքապահների հետ, որոշ վայրերում Խոջալուն լքած բնակիչներն ընկել են այդ կռիվների արանքը: Ադրբեջանական զինված կազմավորումներին միացել են նաև Խոջալուի խաղաղ բնակչության հետ գնացող զինված մարդիկ: Դրանց հետևանքով եղել են զոհեր, այդ թվում՝ խաղաղ

բնակչությունից: Խաղաղ բնակչությանը փրկելու նպատակով հայկական կողմն ստիպված է եղել բնակավայրը լքած բնակչության հոսքը դեպի Աղդամ ժամանակավորապես կասեցնել և զինաթափել նրանց մեջ գտնվող զինյալներին:

– Արևելյան ուղղությունն ընտրած խոջալուցիները հանդիպել են թե՛ բնական դժվարությունների, թե՛ արհեստական խոչընդոտների: Նրանք գիշերը դժվարությամբ են հաղթահարել ձյունապատ անտառի ճանապարհը, ոմանք նույնիսկ ցրտահարվել են և մահացել: Բնակչության մի մասը հայտնվել է արևելյան մասի հայկական գյուղերի մոտ, որտեղ մնացել են 2–3 օր, ապա տարվել են Ասկերան: Անտառը հաղթահարածների հետ Շելլի գյուղի ուղղությամբ Աղդամ տանող ճանապարհին հայտնված Խոջալուի օմօնականները կրակ են բացել այդ ճանապարհի սկզբնամասում կանգնած Նախիջևանիկ հայկական գյուղի ինքնապաշտպանների դեմ: Փոխհրաձգության հետևանքով զոհվել են թե զինյալներ, թե խաղաղ բնակիչներ: Կրակը դադարել է Խոջալուի զինված կազմավորման ղեկավար Ալիֆ Հաջիևի զոհվելուց հետո: Կրակը դադարեցվելուց հետո մյուսները շարունակել են ճանապարհը և 2–2,5 կմ հետո հայտնվել գիշերը Շելլի գյուղի մոտի բարձունքը գրաված ԱԶՃ-ի զինյալների կրակահերթի տակ: Կենդանի մնացածները շարունակել են ճանապարհը մինչև Աղդամ:

– Ըստ վերլուծության փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը Շելլիի մոտի բարձունքը գրավել են Աղդամի ԱԶՃ մի քանի զինված խմբերի ներկայացուցիչներ՝ ԱԶՃ խմբերից մեկի ղեկավար Ալլահվերդի Բաղիրովի գլխավորությամբ: Նպատակը եղել է գիշերը հայկական Նախիջևանիկ գյուղի գրավումը: Մեծ հավանականությամբ սա է եղել պատճառը, որ Խոջալուից դուրս եկած բնակչության մի մասին բնակավայրի ղեկավարները տարել են այս ճանապարհով՝ վստահեցնելով, որ Նախիջևանիկն արդեն գրավված է:

– Փետրվարի 27-ից մինչև մարտի երկուսը ԱԶՃ-ն ամեն գնով խանգարել և արգելել է լրագրողներին գնալ արևելյան տարածք: Փետրվարի 27-ից ադրբեջանական կողմը սկսել է արևելյան տարածքը մաքրել հանցագործության հետքերից: Հավաքել են ճանապարհներին մնացած վիրավորներին և զոհվածների դիակները: Փետրվարի 28–29-ին այդ գործողությունն արդեն շարունակվել է հայկական կողմի հետ պայմանավորված: Տարվել են նախ վիրավորները և մարտիկների, ապա՝ խաղաղ բնակչության դիակները: Աղդամ տարվող դիակները ներկայացվել են որպես Խոջալուից բերված դիակներ: Մինչև մարտի 2-ը խաղաղ բնակչության դիակներ թողնվել են միայն Աղդամի մատույցների՝ Շելլիի մոտի սպանդի վայրում:

– Ադրբեջանական կողմը միայն մարտի 2-ին է լրագրողներին թույլատրել գնալ սպանդի վայրը և նկարահանել տեղանքը: Պարզվել է, որ դիակները պղծված են: Տեղանքը ներկայացվել է որպես հայկական Նախիջևանիկ գյուղի մոտի տարածք, և սպանդն ու դիակների պղծումը վերագրվել է հայկական Նախիջևանիկ գյուղի հայերին:

– Մարտի 2-ից հետո հայտարարվել է «Խոջալուի բազմահազար բնակչության կոտորածների», «հայերի կողմից իրականացված ցեղասպանության» մասին:

■
ԽՈՋԱԼՈՒԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

Այստեղ չի վերլուծվելու այն փաստը, որ Խոջալուի ադրբեջանցի և թուրք մեսխեթցի բնակչության զոհերին ներկայացնելիս ադրբեջանական քարոզչությունը չի տարբերակում օմօնականներին, միլիցիային, քաղաքի ինքնապաշտպանության ջոկատի մարտիկներին բնակավայրի խաղաղ բնակչությունից: Չորս տարի շարունակ ռազմականացված Խոջալուն ներկայացվում է որպես անզեն, անզոր, անպաշտպան կանանց, երեխաների տարածք: Բոլոր զոհերը/սպանվածները ներկայացվում են որպես խաղաղ բնակչության ներկայացուցիչներ: Լռություն է մարդասիրական միջանքը շրջանցելու փաստի շուրջ: Ոչ մի խոսք չի ասվում բնակավայրի գրավումից հետո Աղդամից ադրբեջանական զինված խմբերի ներթափանցումների և փետրվարի 26-ի ճանապարհային բախումների մասին: Ոչ մի խոսք չի ասվում Խոջալուի խաղաղ բնակչության հետ բնակավայրից դուրս եկած զինված կազմավորումների և հայ դիրքապահների հետ նրանց ճանապարհային զինված բախումների մասին: Ոչ մի խոսք չի ասվում այն մասին, որ խաղաղ բնակչությանը այդ բախումների վտանգից ազատելու նպատակով հայկական կողմից Ասկերան-Աղդամ խոջալուցիների հոսքը փետրվարի 26-ին ընդհատել են: Երբևէ չի խոսվել այն մասին, որ Խոջալուի խաղաղ բնակիչները առանց որևէ խոչընդոտի հայտնվել են բազմաթիվ հայկական բնակավայրերում, և մարդիկ նրանց նկատմամբ որևէ բռնություն չգործադրելով օգնել են Աղդամ գնալ կամ տարել են խոջալուցիների հավաքման վայր՝ Ասկերան, Աղդամ ուղարկելու նպատակով: Երբեք որևէ անդրադարձ չի եղել հայկական բնակավայրերի խաղաղ բնակչության նկատմամբ իրականացված բռնություններին, դեպորտացիաներին: Առհասարակ որևէ հետազոտություն, որևէ վերլուծություն չի արվել, թե ինչպես և ինչու չորս տարի շարունակ ռազմականացվող Խոջալու բնակավայրն ամբողջապես լքվել է ադրբեջանցիների արտաքին պաշտպանությունից, չնայած ամսից ավելի պարզ էր, որ հայկական կողմը պատրաստվում էր այն գրավել:

Այստեղ չի վերլուծվելու նաև այն ուշագրավ երևույթը, որ «Խոջալու» անունից զատ այս հնարովի «ցեղասպանությունը» իր լեզուն չունի, բանավոր պատմությունների և դրանց մեկնաբանությունների լեզվում համակարգված օգտագործում է 1915 թ. Հայոց ցեղասպանության նկարագրությունների և տեքստերի պատրաստի լեզուն: Ջանգվածայնությունը ներկայացնելու նպատակով օգտա-

գործվում են ոչ թե փաստեր, ապացույցներ, նյութեր, այլ «հազարավոր զոհեր», «հրկիզված խոջալուցիներ», «անտառային հետապնդումներ» և նմանօրինակ ձևակերպումները: Համատարած են «կուրծքը կտրած կին», «անչափահասների բռնաբարություններ» [Ա-2, 10], «հղի կանանց ճղած փորեր» [Բ-91] բառերն ու ձևակերպումները: Հարցերի և դրանց պատասխանները փնտրելու փոխարեն օգտագործվում են տակը նյութ չունեցող ամփոփումներ, ինչպես՝ «Հարյուրավոր մարդիկ գազանաբար սպանվել են: Այդ սարսափելի գիշերը հայերը չեն խնայել ոչ երեխաներին, ոչ ծերերին, ոչ կանանց: Քաղաքն ամբողջովին հրկիզվել է: Նրանց, ում հաջողվել է **շրջափակումից դուրս պրծնել, հայերի կողմից գազանաբար ոչնչացվել են ճանապարհին** (ընդգծումը իմն է): Մնացածները զոհվել են՝ սառչելով ճանապարհներին» [Ա-2,10]: Այսպես գրողների մեջ նույնիսկ պատմական գիտությունների թեկնածուներ և դոկտորներ կան: Հասկանալի է՝ գոյություն չունի նյութի, տեղեկության «աղբյուր» հասկացություն: Գրողները երբեմն հասնում են անհեթեթությունների՝ «Ղարաբաղի քառամյա արյունոտ հորձանուտը լցնող վերջին կաթիլը եղավ քաղաք-ավան Խոջալուի **բնակչության գազանային սպանդը 1992թ. փետրվարի 25–26-ին** (ընդգծումը իմն է): Անտեղի է Խատընի և Սոնգմիի հետ որևէ համեմատություն. այնտեղ պատժողները անպաշտպան մարդկանց գանգամաշկերից, ականջների խեցիներից հավաքածու չեն հավաքել, նրանք սպանում էին առանց դես ու դենի» [Բ-93, 2]: Սրա գրողը, պետք է հուսալ, ադրբեջանական միակողմանի քարոզչության զոհ է: Նա, հավանաբար, պարզապես տեղյակ չէ, որ Խոջալու բնակավայրում շատ քիչ զոհեր են եղել, և «գազանային սպանդ» բառերը եթե հիվանդ երևակայության արդյունք չեն, ապա բոլորովին այլ իրականությունից ներմուծման միտումնավոր փորձ է:

Այստեղ միայն որոշ հարցադրումներ կարվեն Խոջալուի պարտության և այն «ցեղասպանություն» ներկայացնելու ստանդարտ քարոզչական լեզվի մասին: Հրատարակված «աշխատանքների» մեծ մասում անպայման առկա են «Խոջալու», «ցեղասպանություն», «կոտորածներ», «արյուն» բառերը՝ «Ходжалинская резня» [Խոջալուի կոտորած], «Кровавый омут Карабаха» [Ղարաբաղի արյունոտ հորձանուտը] «Ходжалы. Хроника геноцида» [Խոջալու. Ցեղասպանության ժամանակագրությունը], «Трагедия века- Ходжалинский геноцид» [Դարի ողբերգությունը. Խոջալուի ցեղասպանությունը], «Геноцид азербайджанцев в Ходжалы: глазами своих и чужих» [Ադրբեջանցիների ցեղասպանությունը Խոջալուում. սեփական և օտարների աչքերով], «Воспоминания очевидцев: Ходжалинский геноцид - горе, которое не лечит время» [Ականատեսների հիշողություններ. ողբերգություն, որը ժամանակը չի բուժում], «Карабахский геноцид: обреченный Ходжалы» [ղարաբաղյան ցեղասպանություն. դատապարտված Խոջալու] և այլն:

«Խոջալու» բառին կից համատարած օգտագործվում են «անզեն բնակչություն», «անպաշտպան բնակչություն», «կոտորած», «զանգվածային կոտո-

ռածներ», «գազանային սպանություններ», «XX-րդ դարի ամենամեծ ողբերգություն» բառերը: Հայ բառին կից՝ «մինչև ատամները զինված», «բանդիտներ», «գազազած բանդաներ», «բանդիտային կազմավորումներ», «բարբարոսներ», «մարդասպաններ», «անմարդկային», «դաժան», «նենգ թշնամի» բառերը:

1997 թ. փետրվարի 25-ին՝ Խոջալուի գրավման հինգերորդ տարին առանց որևէ քիչ թե շատ լուրջ հետազոտության, վերլուծության, փաստերի, առանց փաստացի միջուկի Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը «Խոջալուն» «փաթեթավորեց» որպես ցեղասպանություն. «Ամեն տարի փետրվարի 26-ին ժամը 17.00-ին Ադրբեջանի Հանրապետության տարածքում հայտարարել լռության րոպե որպես Խոջալուի ցեղասպանության զոհերի հիշտակի հարգանքի նշան»[63]: Սա, իհարկե, խթան էր, որպեսզի նոր «ականատեսներ» փորձեն լցոնել նախագահի «դատարկ փաթեթը»: Օրինակ՝ 1998 թ. «Խոջալուի ցեղասպանության» նորահայտ «ականատեսներից» մեկը՝ Նիզամի Բախմանովը, հայտարարեց, որ իբր Խոջալուում իր աչքով է տեսել «հղի կանանց ճղված փորերը, գանգամաշկված ծերունիներին, աչքերը հանած մանկահասակ երեխաներին» [Բ-54] այն դեպքում, երբ Խոջալուի բնակչության դուրս գալու պահից իսկ պարոն Բախմանովը, ինչպես առհասարակ ադրբեջանական կողմից որևէ մեկը, բացի Չինգիզ Մուստաֆաևից, ոտք չի դրել Խոջալու: Չինգիզ Մուստաֆաևը իր աչքով ոչ մի դիակ չի տեսել: Խոջալուի դիակներն արդեն վկաների ներկայությամբ հանձնվել էին ադրբեջանական կողմին և ոչ ոք չէր հասցրել պղծել դրանք:

«Հեյդար Ալիևի» հիմնադրամի նախագահ Հեյդար Ալիևի թոռնուհի Լեյլա Ալիևայի ստեղծած «Ռուսաստանի ադրբեջանական երիտասարդական կազմակերպությունը» «Խոջալուի ցեղասպանությունը» հանրայնացնելու և «Խոջալուի արդարությունը» ներկայացնելու իր բազմաթիվ միջոցառումների ժամանակ (միայն հինգ տարվա ընթացքում՝ 1908 – 2013 թթ. ընթացքում 70 երկրներում կազմակերպել է կոնֆերանսներ, ցուցահանդեսներ, ակցիաներ) [Ա-32, 386 – 387] օգտագործվում է հենց այս խոսքաշատ, բայց դատարկ փաթեթը:

2001 թ. Ստամբուլում թյուրքական պետությունների և կազմակերպությունների «բարեկամության, եղբայրության, համագործակցության» 9-րդ կոնգրեսն

---

63 Սրա կապակցությամբ տարիներ շարունակ ադրբեջանական իշխանությունների հետ աշխատած դիվանագետ Վլադիմիր Ստուպիշինը «Պատմական թալանչիություն» վերնագրով իր հոդվածում գրում է. «Ինքնատիպ մի բան չկարողանալով գտնել, նա կրկնեց, որ 1992թ. փետրվարին «հայերը Խոջալուի բնակչության նկատմամբ աննախադեպ սպանդ են իրականացրել», «Խոջալուն ջնջվել է երկրի երեսից», իսկ «հազարավոր ադրբեջանցիներ ոչնչացվել են կամ գերի են ընկել»: ...Իրականում Խոջալուն միայն անունով էր քաղաք, որը տրվել էր Ստեփանակերտը իր օդանավակայանից զրկելու նպատակով իշխանությունների կողմից թռիչքուղու մոտ արագ կառուցված մի քանի տներին: Այդ տները կան հիմա էլ, և ոչ ոք չի պատրաստվում դրանք ջնջել երկրի երեսից: Իսկ այդ տներն, ի դեպ, չեն կարող «հազարավոր» մարդկանց տեղավորել: Գուցե երկու հարյուր մարդ՝ մի քիչ ավել, մի քիչ պակաս, բայց ոչ «հազարավորների», որը հնարվել է դյուրահավատ արտասահմանցիներին զարմացնելու նպատակով» [Բ-31]:

էր: Ադրբեջանի Միլլի Մեջլիսի պատգամավոր Իքբալ Աղազադեի առաջարկությամբ կոնգրեսի նախագահը ստորագրել է Խոջալուի ադրբեջանցիների ցեղասպանությունը ընդունող փաստաթուղթ [Բ-64]:

Հրատարակված և հրատարակվող բազմաթիվ գրքերում ադրբեջանցի հեղինակները նույնիսկ պաշտոնական թվերը ներկայացվելուց հետո շարունակում են գրել կամ «հազարավոր», կամ «հազար» զոհերի մասին և օրինաչափություն են դարձրել այդ կեղծիքում հղում անել արևմտյան հեղինակներին. «...1992 թ. Խոջալուի ողբերգական դեպքերը, երբ հայկական զինված ուժերի կողմից հարձակման հետևանքով սպանվեցին **ավելի քան հազար խաղաղ բնակիչներ-ադրբեջանցիներ** (այստեղ արդեն բոլոր զոհերը միայն «խաղաղ բնակչությունից» են և նրանց թիվը հասցված է «ավելի քան հազար մարդու» – Հ. Խ.): Ինչպես Ս. Կոռնելն է գրում, «Խոջալուն դարձավ դաժանագույն էթնիկական մաքրման զոհը: Քաղաքի խաղաղ բնակչության նշանակալի մասը, մինչև հայկական գրոհը <լինելով> 7000 <մարդ> (իրականում 3000 – 3500 մարդ – Հ. Խ.), խեղվեց և սպանվեց, իսկ մնացած բնակչությունը ստիպված էր փախչել Աղդամ» [Ա-32, 185][64]:

Սվանտե Կոռնելը ոչ միայն այս, այլև ադրբեջանցիների հղման սիրված հեղինակն է: Հիրավի, կարելի է ասել, որ հենց Սվանտե Կոռնելն է «ձևակերպել» «Խոջալուի ցեղասպանությունը», չնայած պաշտոնական Ադրբեջանն այն հայտարարել է դեռևս 1997 թ.: Սվանտե Կոռնելը հանգիստ կեղծում է գրավելու պահին Խոջալուում 3000 – 3500 բնակչության թիվը՝ գրելով «7000 բնակչության» մասին [Ա-38, 81], 2001 թ. դեռևս խոսում է Խոջալուի զոհերի հնարավոր 1000 մարդու մասին, չնայած դեռևս 1992 թ. Ադրբեջանն արդեն հայտարարել էր պաշտոնապես ընդունված թվերը և հրատարակել զոհված/մահացած 509 մարդու անվանական ցանկ, և չնայած հենց ինքն է կոչ անում առաջնորդվել ոչ թե թվերով, այլ երևույթների որակներով [Ա-38, 173]: Դա, սակայն, հասկանալի է: Սվանտե Կոռնելի կողմից Սումգայիթի և Բաքվի բացահայտ հայկական կոտորածները որակավորված են որպես «Սումգայիթի և Բաքվի անկարգություններ», «խուլիգանություն» [Ա-38, 68 – 69, Ա-39, 54], բացարձակապես շրջանցված, փաստացի անտեսված են Ադրբեջանի հայ բնակչության, այդ թվում Խոջալուի շրջակայքի հայկական գյուղերի նկատմամբ Պոլյանիչկոյի ռեժիմի շրջանի ՕՄՕՆ-ի դեպորտացիոն գործողությունները, այսինքն՝ Ադրբեջանական իշխանության կողմից կազմակերպված հայկական էթնիկական մաքրումը: Սվանտե Կոռնելը «տեղյակ է» միայն հայերի կողմից ադրբեջանական Մալիբեյլի, Կարադաղլը և Աղդաբան գյուղերի բնակչության տարհանմանը՝ որակելով դրանք «ադրբեջանցիների էթնիկական մաքրում» կազմակերպելու գործողություններ [Ա-38, 81]: Նա հավանաբար, պետք է հուսալ, իսկապես ոչինչ չգիտի 1991 թ. հայկական Գետա-

[64] Ջաննաթխան Էյվազովը հղում է Սվանտե Կոռնելի աշխատանքի 95-րդ էջը, բայց այս շարադրանքը Սվանտե Կոռնելի աշխատանքի 81-րդ էջում է:

շեն, Մարտունաշեն, Չայքենդ, Մանաշիդ, Բուզլուխ, Էրքեջ, Կիչան և բազմաթիվ այլ հայկական գյուղերի բնակչության նկատմամբ իրականացված հարձակումների, կողոպուտների, սպանությունների, տեղահանումների մասին, Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղի բնակչության ջարդի, կողոպուտի և տարհանման, փետրվարի 26-ի Մարտակերտի շրջանի Սեյսյուլան, Յարմջա, Մարգուշավան գյուղերի բնակչության տարհանման, ապրիլ ամսին Մարաղա, Մարգուշավան գյուղերի բնակչության կոտորածների, նույն Ասկերանի շրջանի հյուսիսի հայկական գյուղերի՝ Խոջալուի մերձակայքի Նախիջևանիկի, Փիրջամալի, Արանզամինի և այլ գյուղերի բնակչության տարհանումների մասին: Նրա հիմնական աղբյուրներն ադրբեջանական են, որոնք այս երևույթները ներկայացնում են որպես բանդիտներից ազատագրում: Նրա համար Ղարաբաղի Ասկերան–Մարտակերտի շրջանների հայ բնակչության համատարած բռնությունը, ահաբեկչությունը և սրանցում Ադրբեջանի իշխանությունների, մասնավորապես նաև Խոջալուի դեր գոյություն չունի: Նա նույնիսկ Խոջալուից Ստեփանակերտը գնդակոծելու փաստերին է թերահավատ վերաբերվում, գրելով «<Խոջալուի> դեմ հարձակումն իրականացվել է քաղաքից իբր ընդամենը յոթ կիլոմետր հեռավորությամբ գտնվող **Ղարաբաղի հայկական մայրաքաղաք** Ստեփանակերտի ուղղությամբ հրետակոծությանն ի պատասխան» [Ա-38, 81]: Նա կամ իսկապես չգիտի, կամ չի ուզում գրել այն մասին, որ Խոջալուի հրետակոծությունը Շուշիից կատարվող հրետակոծության հետ միասին ոչ միայն մահացու սպառնալիք էր դարձել Ստեփանակերտի բնակիչների համար, այլև 1990 թ-ից դարձել էր Ասկերանի, մասամբ նաև Մարտակերտի հայկական գյուղերի բնակչության իրական պատուհաս, փակելով նրանց ելն ու մուտի բոլոր դռները և խեղդելով Աղդամի ու իր միջև: Նա կամ իսկապես չգիտի, կամ ուղղակի չի ուզում կարևորել Խոջալուի գրավման ընթացքը և դրան հաջորդած իրական գործողությունները: Շարունակելով պարոն Թոմաս Հոլցին և ադրբեջանական քարոզչական որակումները, հանգիստ օգտագործում է «Խոջալուի կոտորածներ» եզրը [Ա-38, 83, 96, 344, 345, Ա-39, 63, 71, 88, 310], հայերին մեղադրելով էթնիկական մաքրումների գործողություններում: Գուցե հենց դրանո՞վ է պայմանավորված, որ պարոն Կոռնելը Ստեփանակերտն անվանում է Ղարաբաղի «հայկական մայրաքաղաք», իր ընթերցողին մտածելու առիթ թողնելով Ղարաբաղում մեկ այլ՝ ոչ հայկական մայրաքաղաք փնտրելու:

Որոշ իմաստով դա հասկանալի է՝ Սվանտե Կոռնելի գրքում օգտագործված հիմնական նյութերն ուղղված են ապացուցելու այն գաղափարները, որ նախկին ԽՍՀՄ 80-ական թթ. կովկասյան կոնֆլիկտների հիմքում ընկած են ոչ թե դիսկրինիմացիան, այլ «էթնիկության քաղաքականացման գործընթացները», «ինքնության խմբային նույնականացման» միտումները, այդ թվում մասնավորապես ԽՍՀՄ-ում ճնշված մահմեդական ինքնության կրողների ինտեգրումը [Ա-38, 18, 33, 39–41, 51]: Այս կարգի տեսական ընդհանրացումների համար, ցավոք, հա-

ճախ են շրջանցվում «խանգարող» փաստացի մանրամասները: Իրականում մարդն օգտագործում է իրեն հարմար կամ նույնիսկ հարմարեցված մանրամասներ, այդ թվում այնպիսի սկանդալային լրագրողի հակասական տեղեկություններ, ինչպես Թոմաս Հոլցն է, և նաև դրա՛նց վրա կառուցում իր տեսական ընդհանրացումները: Սվանտե Կոռնելը հիանալի գիտի, որ Խոջալուի «խաղաղ բնակչության մեծ մասը քաղաքի գրոհի ժամանակ չի զոհվել, զոհվել է քաղաքից դուրս գալուց հետո» [Ա-38, 345], բայց նույն գրքում գրում է նաև, որ «քաղաքի խաղաղ բնակչության նշանակալի մասը... խեղվեց և սպանվեց» [Ա-38, 81]: Բնական է համարում, որ «դիտորդների մեծ մասը և ադրբեջանական աղբյուրները դա հայերի կողմից իրականացված կոտորած են համարել» [Ա-38, 345]: Գտնում է, որ հայերը Խոջալուի զոհերին «անճաշակորեն» համարում են ադրբեջանցիների կողմից իրականացված գործողության հետևանք, գուցե նաև չիմանալով, որ հայերը խոսել են բացառապես մի դրվագի՝ ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող Աղդամի մատույցներում տեղի ունեցած սպանությունների մասին: Հենց այն դրվագի, որի նկատմամբ լուրջ կասկածներ ունեին և շարունակում են ունենալ շատ անկախ, այդ թվում նաև Ադրբեջանի շատ փորձագետներ:

Այս ամենից հետո տարօրինակ չի թվում, որ Սվանտե Կոռնելը նաև փաստացի ստեր է տարածում: Օրինակ, խոսելով Ղարաբաղյան կոնֆլիկտի «առաջին փախստականների» մասին, նա գրում է, որ դրանք Հայաստանից էին. «1988 թ. սկզբին տասնյակ հազարավոր մարդկանցից բաղկացած առաջին փախստական ալիքները հասան Բաքու և շրջակա քաղաքներ ու գյուղեր: Փախստականների ևս երկու ալիք մինչև փետրվարի վերջ հասան Բաքու, իսկ մի քանի հազարը տեղափոխվեցին մայրաքաղաքից 30 կմ հեռավորությամբ գտնվող լքված արդյունաբերական Սումգայիթ քաղաք» [A-39, 67]: Սա մեծ ստերից է, որն Ադրբեջանական քարոզչությունն սկսեց տարածել 1994 թ. հետո, փորձելով ադրբեջանական Սումգայիթ քաղաքի 1988 թ. փետրվարի հայկական ջարդերը բացատրել Հայաստանից իբրև թե փախած ադրբեջանցիների հուզական ազդեցությամբ: Բայց նույնիսկ ադրբեջանական քարոզչությունը 1988 թ. սկզբի, մասնավորապես նաև փետրվարի մասին չի համարձակվել խոսել «Հայաստանից փախած տասնյակ հազարավոր ադրբեջանցիների» մասին: Սվանտե Կոռնելին այս սուտը հավանաբար պետք էր, որպեսզի նա կարողանա Սումգայիթում կազմակերպված հայկական ջարդերը ներկայացնել որպես ադրբեջանական ամբոխի անվերահսկելի գործողություն. «Սումգայիթ... արդյունաբերական մոայլ քաղաք, որտեղ ամեն ինչից զատ հսկայաթիվ զայրացած ու հիասթափված ադրբեջանական փախստականները հաստատվել էին մի քանի օր կամ շաբաթ առաջ [A-38, 68], «...ադրբեջանական չվերահսկվող ամբոխը կազմակերպեց կատաղած կողոպուտներ, էթնիկական հայերի փնտրտուք և սպանություններ» [A-39, 49]:

Իրականում Ղարաբաղյան կոնֆլիկտի առաջին փախստականները հայերն էին, և դա տեղի է ունեցել 1988 թ. փետրվարի 27–29-ի Սումգայիթի հայկական

ջարդերից հետո: Հայաստանից դեռևս փախստական ադրբեջանցիներ չկային, բայց Սումգայիթում հայերի ջարդը կազմակերպողները, այդ թվում քաղաքային իշխանության ներկայացուցիչը, ամբիոնից խոսել են Հայաստանից փախած ադրբեջանցիների մասին:

Սվանտե Կոռնելի Հենց այս կարգի ստերն են առիթ տվել ամերիկյան ժուռնալիստ Joshua Kucera-ին 2011թ. հունվարի 14-ին «Is War Over Karabakh Inevitable?» հոդվածում մեղմորեն գրելու. «Կոռնելն ըստ էության բավական ադրբեջանամետ է տրամադրված և իրավիճակի անխուսափելիության մասին նրա պատկերացումը կարծեք թէ Ադրբեջանին ազատում է իր գործողությունների ցանկացած պատասխանատվությունից, ինչն, կարծում եմ, վիճարկելի է» (https://eurasianet.org/is-war-over-karabakh-inevitable). Սվանտե Կոռնելի մասին մոտավորապես նույն տրամաբանությամբ է արտահայտվել Richard D. Kauzlarich-ը. «...Էթնիկական բռնությունների պայթյունից հետո Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ուշադրությունը սևեռված է ադրբեջանցիների նկատմամբ հայերի գազանությունները ներկայացնելու և նկարագրելու վրա» (Richard D. Kauzlarich /Review:"Azerbaijan since Independence". (Richard D. Kauzlarich /Review:"Azerbaijan since Independence. By Svante Cornell"/The Historian. Volume 75, Issue 2 Summer 2013 P. 369):

Կոնկրետ Խոջալուի շուրջ գործողությունների մասին Սվանտե Կոռնելի ստերից և հայերի դաժանությունների մասին հորինվածքներից է նաև այն «տեղեկությունը», որ իբրև թե «...Երբ Խոջալուի փախստական բնակիչները հասան մոտակա Նախչըվանլու գյուղին (գյուղի անունն իրականում Նախիջևանիկ է – Հ. Խ.), նրանց դիմավորեցին կրակով և կապարով: Ջոհվեցին 600-ից ավելի խաղաղ բնակիչներ, ևս մի քանի հարյուրն անհայտ կորան» [A-39, 62]. Ինչպես վերը տեսանք, իրականում Նախիջևանիկ գյուղից մոտ 3 կմ հեռավորությամբ, դաշտում 1992թ. փետրվարի 26-ին տեղի է ունեցել գյուղը պաշտպանող հայերի և Խոջալուից դուրս եկած զինված տղամարդկանց մեկ բախում, փետրվարի 26–27-ին այդ ճանապարհով առանց խոչընդոտների անցել են հարյուրավոր թե զինված, թե անզեն խոջալուցիներ, և բոլոր դեպքերում անհայտ է, թե որտեղից է հայտնվել այդ նախիջևանիկի մոտ «ավելի քան 600 խաղաղ բնակչի» մասին տեղեկությունը, եթե Խոջալու բնակավայրում և դրանից դուրս՝ տարբեր ճանապարհներին Խոջալուի բոլոր զոհերը միասին՝ զինված թե անզեն, 600 մարդու թվին չեն հասնում: Սվանտե Կոռնելն այդ տեղեկության համար հղում է տեղեկությունների աղբյուրներ չսիրող Թոմաս Գոլցին (Thomas Goltz, Azerbaijan Diary (Armonk, NY: M.E. Sharpe), 1998, p.122).

Բոլոր դեպքերում Սվանտե Կոռնելի և նման հեղինակների՝ Խոջալուի ադրբեջանական քարոզչական նյութերի վրա կառուցած արևմտյան հեղինակների գործերը որպես «անառարկելի ճշմարտություններ» դառնում են ադրբեջանական «գիտական» կոչվող քարոզչական գրականության հղման աղբյուր:

Սվանտե Կոռնելին հղում անելով և նրա անվան «պաշտպանությամբ» արդեն Ջաննաթխան Էյվազովը կարող է առանց լրացուցիչ փաստարկների գրել. «Հաշվի չառնելով որևէ միջազգային նորմ, հայ նացիոնալիստները ջանում են Լեռնային Ղարաբաղը միացնել Հայաստանին: Հանուն այդ արկածախնդրության հայերը գնում են ցանկացած ստորության և չարագործության: Այդպես տեղի ունեցավ 20-րդ դարի ողբերգությունը՝ Խոջալուի ցեղասպանությունը, դառնալով հայկական այդ հանցավոր և ագրեսիվ քաղաքականության արդյունք... Քաղաքը մնաց առանց պաշտպանության, մինչև ատամները զինված անխիղճ թշնամու հետ դեմ առ դեմ» [Ա-33, 76]:

Առնվազն մի հարցում Թոմաս Հոլցը և Սվանտե Կոռնելը մեծ հաշվով իրավացի են. «Եթե մինչև Խոջալուի կոտորածները ադրբեջանական հասարակական կարծիքը մոբիլիզացված չէր, ապա այն դրանից հետո մոբիլիզացվեց» [Ա-34, 100; Ա-38, 345]: Այստեղ ես մի փոքրիկ, բայց էական վերաձևակերպում կառաջարկեի. «Եթե մինչև Խոջալուի գրավումը ադրբեջանական հասարակական կարծիքը մոբիլիզացված չէր, ապա այդ գրավումը որպես կոտորած և ցեղասպանություն մատուցելու լայնատարած քարոզչությունը մոբիլիզացրեց այն»: Խոջալուն սկզբից ևեթ ներկայացվեց ոչ թե որպես հակամարտող կողմերի պատերազմական վիճակին մոտեցող գործողություն, այլ էթնիկական խոր թշնամանքի միակողմանի հրեշավոր դրսևորում: Դժվար է ասել, թե այս կարգի քարոզչությունը որքան ծրագրավորված էր որպես ռազմավարական քայլ, բայց երբեք չդադարող թեման ժամանակի ընթացքում այն դարձրեց հենց այդպիսին: Միաժամանակ խաղալով նաև էթնիկական ցեղասպանություններին ուղեկցող կարևոր գործիքի դեր՝ «թշնամու դեմ» մոբիլիզացնելով ադրբեջանական էթնիկական ինքնության ամրացումը և նպաստելով ադրբեջանական մահմեդական ինքնության ինտեգրմանը էթնիկականին: Մեկ այլ թեմա է՝ ադրբեջանական էթնիկական ինքնության թուրքականության նոր դրսևորումները, որոնք արդեն սնուցվում էին ադրբեջանական Ազգային Ժողովրդական Ճակատի կողմից և նոր զարգացումներ ստացան Իլհամ Ալիևի նախագահության շրջանում: Դա, սակայն, այլ թեմա է:

■
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԷԹՆՈ-ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ

«Խոջալուի դեպքերն» Ադրբեջանում ամենից ավելի հաճախ մեկնաբանվում են իբր հայերի կողմից իրականացված ցեղասպանություն: Հասկանալի է՝ խնդիրը չի քննարկվում «Ցեղասպանություն» երևույթի փաստագրական, իրավական, քաղաքական-գործնական և վերլուծական տեքստերում: Երևույթն ու հայտնի նյութն այդ հնարավորությունը չեն տալիս: Որքան էլ Ադրբեջանում ջանացին՝ չկարողացան համապատասխան նյութ ստեղծել: Իսկապես դժվար է, եթե ոչ անհնար, միայն կեղծիքի վրա կառուցել նույնիսկ արժանահավատ վարկած: Ավելին, խնդիրը չի էլ վերլուծվում, առավել ևս՝ չի քննարկվում, պարզապես տարբեր ձևերով և մակարդակներով հայտարարվում է: Սովորաբար շատ է հիշատակվում քաղաքական հայտարարություններում, հատկապես այն տեքստերում, որոնք ապացուցողական նյութ չեն պահանջում: Փոխարենը ներքին ադրբեջանական միջավայրում այն շատ հնչեղ է, զգայական, ապացույցներ չի պահանջում, ընդդիմադիրներ չունի, և թվում է՝ բոլոր իմաստներով շահեկան է: Վաղուց արդեն մոռացվել է նաև «Խոջալուի ցեղասպանության» հետազոտությունը, եթե առհասարակ երբևէ այն եղել է: «Խոջալուի ցեղասպանության» հիմնական նյութը գործնական կյանքում լիովին մոռացված խոջալուցիներից 1992թ. գրանցված և հաճախ անհաջող միջամտություններով ներկայացված «սեփական պատմություններն» են: Ուշագրավ է, որ բուն խոջալուցիներից որևէ տեքստ, շարադրանք, հիշողություն, իր/իրենց հետ պատահածի գրավոր շարադրանք, դրանց վերլուծություն պարզապես գոյություն չունեն: Խոջալուցիներն իրենք այդ «սրբազան թեմա» մուտք չունեն:

Հայոց և հրեից ցեղասպանությունների դեպքերում անընդհատ և բոլոր սերունդներում դրանք եղել են և կան: Այդ ցեղասպանություններից փրկվածները, ականատես վկաները, դեպքերի հիշողության կրողները առանց տեսությունների ու գիտական հավակնությունների, առանց աղմուկի գրանցում էին իրենց ողբերգության, փրկության ու հետագա կյանքի պատմությունները: Ոմանք հենց իրենք էին գրում, ուրիշները գրանցում էին նրանց պատմությունները: Դրանց մեծ մասը շատ կոնկրետ և առարկայական է՝ ինչ եղավ իր հետ, իր ընտանիքի անդամների հետ, իրենց գյուղի/էթնիկական համայնքի բնակչության հետ, ինչպես եղավ, որ օրը, օրվա որ ժամին, որտեղ, ում և ինչպես սպանեցին, աքսորեցին, կողոպտեցին, բռնաբարեցին, վաճառեցին, ում տարան գազախցիկ, երբեմն նաև՝ ով

սպանեց, ինչպես ամիսներով քայլեցին, թաքնվեցին, փրկվեցին…նվաստացումները, վերքերը, սպանությունները, ծարավը, սովը, աչքի առաջ ընկնող հյուծված մարդիկ, շոգից, արևի տակ ուռած դիակների պայթյունը, կացնահարումները... Առաջին սերնդի՝ ականատես-վերապրողների գրավոր գրանցումներն ուղղակի վկայություններ են՝ անձնական կյանքի հետ պատահածը օրագրի, հուշագրության ձևերով արտահայտելու, ինչպես նաև այդ վկայությունները գրանցել ցանկացողներին պատմելու ձևերով: Սրանք լավագույն վկայությունն են այն բանի, որ սխալ է ֆրանսիացի սոցիոլոգ Մորիս Հալբվախսի կարծիքը, թե քանի դեռ «դեպքը», «երևույթը» ակտիվ հիշողության մաս է, մարդիկ սովորաբար դրա մասին չեն գրում, գրելու անհրաժեշտությունն առաջանում է, երբ որոշ իրադարձությունների ընթացքը դադարում է հիշողության ակտիվ մաս լինել, դառնում է անցյալ և անհրաժեշտություն է դառնում այն գրավոր վավերացնել:

Տարօրինակ է, որ Խոջալուն վերապրածներից ոչ մի ծպտուն չկա: Հո նրանց չի՞ արգելվում Ադրբեջանում գրել: Նրանց փոխարեն տասնյակները խոսում են, հայտարարում են, բայց նրանք իրենք չեն գրել և չեն գրում ո՛չ իրենց ապրումների, ո՛չ զգացմունքների մասին, բայց որ տվյալ դեպքում ավելի կարևոր է՝ չեն գրում փաստական իրողությունների մասին: Այդ կարգի աղբյուր չկա: Նրանցից ցուցմունքներ վերցրել են, նրանց պատմել են տվել և նրանց անունից պատմություններ են հրատարակել երկրորդ, երրորդ դեմքերը, մարդիկ, որոնք զբաղվում են «Խոջալուի ցեղասպանության» հանրայնացմամբ: Սա տարօրինակ է: Հիմա, երբ ակնհայտ է, որ հասարակություններում անցյալի գնահատման նկատմամբ, անցյալի ժառանգորդման ձևերի և մեթոդների մեջ տեղի է ունենում մեծ հեղաշրջում, երբ քաղաքական պատմության գծային և նույնիսկ փաստաթղթային ապացուցողական շարադրանքի մենատիրությունը նվազում է, «Խոջալուի ցեղասպանությունը» ֆիզիկական կրող չունի: Հրապարակի վրա ոչ միայն այն ապացուցող որևէ փաստաթուղթ, որևէ վերլուծություն չկա, այլ չկա նաև կոնկրետ ականատեսը: Նրա/նրանց փոխարեն «Խոջալուի ցեղասպանությունը» ներկայացնում են պետական մեքենան և պետական քաղաքական տեքստը՝ ձևավորելով ներհասարակական կոլեկտիվ «գիտելիք» և կառավարելով հանրային հիշողության ձևավորումը: Որևէ վերլուծություն չկա նաև այդ «ցեղասպանությունը» վերապրածների հետագա կյանքի, տագնապների, սոցիալականացման, սպասումների մասին: Խոջալուի բնակչության նկատմամբ հետաքրքրությունն սպառվեց 1992–93թթ-ին: Չկա, որովհետև կեղծ տեքստը մնում է կեղծ տեքստ: Նույնիսկ տաղանդավոր մարդկանց է դժվար կեղծիքը ճշմարտության տեղ ներկայացնել: Չկա, որովհետև քիչ թե շատ իրական ինչ էլ գրվի, պիտի հերքի «Խոջալուի կոտորածների» ներկայացված ադրբեջանական գնահատականը և «ցեղասպանություն» բառի իրավունքը:

Նույն հարցադրումը կարող է արվել նաև ադրբեջանական մեկ այլ «ցեղասպանության» հետ կապված, որ նույնպես կիրառելի է ադրբեջանական ներքին

լսարանում, բայց որը նույնպես համարյա բացառապես քաղաքական միջավայրի աճպարարության հետևանք է: Խոսքը ադրբեջանական որոշ պատմագիրների կողմից շատ կարևորված 1918 թ. «մարտյան դեպքերի» մասին է:

1918 թ. ողջ Այսրկովկասն այրվում էր բոլշևիկյան հեղափոխության և 1917 թ. վերջերին սկսված թաթարա/թուրքա-հայկական ազգամիջյան հակամարտությունների հրդեհում: Բաքվում փխրուն հասարակական կարգը փաստացի պահպանվում էր ռուսական, մահմեդական, հայկական ազգային խորհուրդների, Բաքվի բազմակուսակցական Դումայի և Բաքվի խորհրդի՝ բոլշևիկյան իշխանության ներկայացուցիչների կողմից: Ստեփան Շահումյանի կողմից ղեկավարվող Բաքվի խորհուրդը 1917 թ. հոկտեմբերին ինքն իրեն հայտարարել էր Բաքվի իշխանության մարմին, որով Բաքուն 10 ամսով «դարձել էր» Կովկասի առաջին խորհրդային քաղաքը: Ճանապարհը օսմանյան զորքերի համար անարգել դարձնելու նպատակով Բաքու-Թիֆլիս և Ելիզավետպոլ երկաթգիծը վերահսկվում էր «Մուսավաթ» կուսակցության կողմից: «Մարտի 24-ի երեկոյան ես քաղաքային Դումայում նիստի էի,—գրում է կադետ Բ. Բայկովը: Ժամը 7-ի կողմերը հեռախոսով հայտնեցին, որ առափնյակում՝ Պետրովսկում, զինված բախում կա բոլշևիկ նավաստիների և կոռնետ Ալի Ասադուլաևի հրամանատարությամբ Լենքորանից եկած Վայրի Դիվիզիայի էշելոնի միջև: Դումայի նիստն ընդհատվեց, և տեղում առկա հայերի, թաթարների և որոշ ռուսների հետ կարճ խորհրդակցությունից հետո գնացինք ընդհարման վայր: Թվում էր, ամեն ինչ հանդարտվել է: Բայց դումայի շենքից դուրս գալիս ես փողոցում տեսա մինչև ատամները զինված թաթարների խիտ խմբեր, որոնք շտապում էին բախման տեղը: Քանի որ Հայկական Ազգային Կոմիտեն մի քանի օր առաջ կատեգորիկ հայտարարել էր, որ թաթարների և բոլշևիկների ընդհարման դեպքում հայերը չեզոք են մնալու, կարելի էր հուսալ, որ ամեն ինչ բարեհաջող կավարտվի» [Բ-74]: Ամեն ինչ բարեհաջող չավարտվեց: Մուսավաթականները ջանում էին վերջ տալ Բաքվի խորհրդին՝ Բաքվի բոլշևիկյան իշխանությանը: Ստեփան Շահումյանի ղեկավարած Բաքվի խորհրդին հաջողվում է իր կողմը գրավել Հայ Հեղափոխական Դաշնակցության՝ ճակատից վերադարձած և ճանապարհները փակ լինելու պատճառով Բաքվում մնացած զինվորներին: Մարտի 29-ին Բաքվի խորհուրդը փորձում է զինաթափել «Էվելինա» նավով Բաքու հասած Մուսավաթական «Վայրի դիվիզիայի» խմբին, որն իրականացնելու ընթացքում բախում և զոհեր են լինում: Մարտի 29–30-ին մուսավաթականները պահանջում են զենքն իրենց վերադարձնել, և կոչ են անում զինված մուսուլմանական կազմավորումներին դուրս գալ իրենց պաշտպանելու: Մինչ բանակցություններ էին ընթանում զենքը վերադարձնելու հարցի շուրջ, քաղաքի որոշ փողոցներում մուսուլմանները կրակում են Բաքվի սովետական զորքերի դեմ, իսկ գիշերը նավահանգստում՝ Սուրախանիում, զինաթափում են Կարմիր բանակին: Բաքվի խորհուրդն արագորեն ստեղծվում է Հեղափոխության Պաշտպանության Կո-

միտե և սկսում ծովից հրետակոծել քաղաքը: Թաթարների զենքն անմիջապես արձագանքում է քաղաքի ներսում: Փողոց են դուրս գալիս նաև հայ զինվորները, և շատ շուտով քաղաքացիական բախումը վերաճում է ազգամիջյանի՝ դառնալով Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում թափ հավաքող թաթարա-հայկական բախումների օղակներից մեկը: Հեղափոխության Պաշտպանության Կոմիտեն վերջնագիր է ներկայացնում մուսավաթականներին՝ 1. Բաքվի խորհրդի իշխանության ընդունում, 2. «Վայրի դիվիզիայի», ինչպես նաև մուսուլմանական և հայկական զինված կազմավորումների Բաքվից դուրս բերում կամ Բաքվի Խորհրդին ենթակայություն, 3. Բաքու–Թիֆլիս և Բաքու–Պետրովսկ երկաթուղային ճանապարհների անհապաղ բացում: Եթե մինչև ապրիլի 1-ի ժամը 15.00-ն «Մուսավաթն» այս պահանջները չընդունի՝ Հեղափոխության Պաշտպանության Կոմիտեն դա կհամարի մուսավաթականների սկսած ռազմական դրություն՝ դրանից բխող ողջ պատասխանատվությամբ [Ա-17, 137–157]: Բաքվում կռիվները շարունակվում են չորս օր: Բ.Բայկովը գրում է. «Մարտի 29-ին ինձ հեռախոսով տեղեկացրին, որ ռազմական գործողությունները շուտով կդադարեն, քանի որ թշնամական կողմերը համաձայնության են եկել, և իսկապես ժամը 2-ի կողմերը ամեն ինչ միանգամից լռեց: Դրա հետ միասին հայտնի դարձավ, որ քաղաքում հաստատվել է բոլշևիկյան իշխանություն Ստեփան Շահումյանի գլխավորությամբ, ում Մոսկվայից հրամանով նշանակել են Կովկասի <սովետական իշխանության> Գերագույն կոմիսար» [Բ-74]: Ըստ Բայկովի, ռազմական գործողությունների դադարեցման վրա վճռական ազդեցություն է ունեցել ռուսական երկու հետևակային գնդերի սպառնալիքն այն մասին, որ եթե բոլշևիկներն արագ չդադարեցնեն հետագա արյունահեղությունը, ապա այդ գնդերն իրենք դուրս կգան բոլշևիկների դեմ:

Բաքվում, այո, ազգամիջյան բախումը դադարեցվեց, բայց փոխարենը այն ծավալվեց Ղուբայի և Շամախու ուղղությամբ:

Իշխանության համար պայքարում բոլշևիկների վառած կրակը՝ մարտ ամսին Բաքվի ազգամիջյան բախումները, կանգնեցնելու փորձեր արվել են թե՛ թաթարական, թե՛ հայկական կողմերից: Բաքվի թաթարներից մեծահարուստ Ջ.Թաղիևը «Знамя труда» թերթի մարտի 29-ի համարում հայտարարել է, որ «Բաքվի դեպքերը» հայ-թաթարական բախումների բնույթի չեն եղել, մահմեդականները չեն վնասել իրենց հարևան հայերին, իսկ հայերը փրկել են 14.000 մահմեդականների: Հայկական Ազգային Խորհուրդն իր կողմից ապրիլի 11-ին և 12-ին թերթում «հաշվետվություն» ներկայացրեց, թե ինչ է արել նախ՝ բախումները կանխելու, ապա՝ դադարեցնելու ուղղությամբ (թվարկված են բանակցությունները), և վերջապես մահմեդականների օգնության և փրկության համար. «Մայիլովի թատրոնում տեղավորել են 3.500 մարդ, որից 700-ը՝ իրանահպատակ, 2.690 մարդ՝ «Ռեկորդ» կինոթատրոնում, 579 մարդ՝ «Ռամզեյ» թատրոնում, 800 մարդ՝ Եֆիմովի կրկեսում, 58 մարդ՝ Վակզալնիյ և Տելեֆոննիյ փողոց-

ների խաչմերուկի անկյունի տանը, 306 մարդ՝ Միրոնովի բաղնիքում, 263 մարդ՝ Մոսկովսկիյ բաղնիքում, 117 մարդ՝ 8-րդ միլիցիայի վարչական շենքում, 72 մարդ՝ 7-րդ միլիցիայի վարչական շենքում, 95 մարդ՝ Մալիյ Մոսկովսկիյ փողոցի №15 տանը, 201 մարդ՝ 3-րդ գիմնազիայում, 18 մարդ՝ Հայկական մշակութային ընկերությունում, 2.530 մարդ՝ քաղաքի տրանսպորտայինում, 200 մարդ՝ միլիցիայի 9-րդ վարչական շենքում, 79 մարդ՝ Հայկավանում: Բոլորը միասին՝ 11.726 մարդ: Դրանից բացի տարբեր հայերի տներում ապաստանել են 1.500 մահմեդականներ: Այդ բոլոր մարդիկ հնարավորության սահմաններում ստացել են բժշկական օգնություն և սնունդ»:

Կադետ Բայկովը հետագայում գրում է. «Առիթներ եմ ունեցել լսելու, որ 1918 թ. «մարտյան օրերին» հայերն անխղճաբար ոչնչացրել են թաթարներին: Հանուն արդարության պետք է ասեմ, որ դա բոլորովին ճիշտ չէ: Փողոցային մարտերի ժամանակ զոհվել են նաև ոչ քիչ հայեր, դրանց մեջ՝ լավագույն մարդիկ... Հայերի կողմից փրկված մարդկանց մեջ շատ կային թաթարական բուրժուազիայի և հասարակական գործիչների ներկայացուցիչներ, այդ թվում այնպիսի հայտնի հայատյաց, ինչպես Բեյբութ-Խան Ջեվանշիրը՝ Բաքուն թուրքերի կողմից գրավելուց հետո սեպտեմբերյան հայկական ջարդերի կազմակերպիչներից և իրականացնողներից մեկը...» [Բ-74]:

«Մարտյան դեպքերի» զոհերի թիվը 1918 թ-ին տարբեր կերպ է գնահատվել՝ «300 հայ և ռուս, 700 մահմեդական», «1.200 հայ և ռուս, 2.000 մահմեդական»: Վեց ամիս անց, 2018 թ. Բաքվում տեղի ունեցան լայնորեն հայտնի հայկական ջարդերը: Զոհերի թիվը՝ 20.000-ից ավել:

Թե՛ մարտյան, թե՛ սեպտեմբերյան դեպքերը ԽՍՀՄ շրջանում ներկայացվել են որպես բոլշևիկների կողմից մուսավաթական հակահեղափոխական խռովության ճնշում: 1978 թ. հոկտեմբերի 11-ին Հեյդար Ալիևը Բաքվում, Ստեփան Շահումյանի ծննդյան հարյուրամյակի հոբելյանական նիստում կարդացած զեկուցման ժամանակ այն գնահատել է որպես սովետական իշխանության փրկելու միջոց. «1918 թ. մարտին մուսավաթականները Բաքվում հակասովետական խռովություն բարձրացրին՝ նպատակ ունենալով խեղդելու սովետական իշխանությունը: Բոլշևիկների կողմից ձեռնարկված վճռական գործողությունների շնորհիվ խռովությունը լիկվիդացվեց» [Բ-97]: 20 տարի անց, արդեն ԽՍՀՄ փլուզումից և իր՝ Հեյդար Ալիևի կողմից կրկին իշխանության գալուց հետո, 1998 թ. մարտի 26-ին նույն Հեյդար Ալիևը պաշտոնապես մարտի 31-ը հայտարարեց ադրբեջանցիների ցեղասպանության օր: Շատ արագ հարկավոր էր հիմնավորել այդ որոշումը: Ուստի «շտապ հետազոտված նյութերով» երկու տարի անց Բաքվում գիրք հրատարակվեց «Անդրկովկասի մահմեդականների ցեղասպանության» մասին [Ա-28]: Միմյանց հաջորդեցին այլ հրապարակումներ: 2008 թ. արդեն գիտությունների երկու դոկտորներ՝ Մամմադով Իլգար Մահալ օղլին և Թոֆիկ Ֆուադ Մուսա օղլին գրեցին. «Միայն մեկ օրում՝ մարտի 31-ին հայերը

սպանել են ավելի քան 30.000 (! – Հ. Խ.) ադրբեջանցիների» [Ա-18, 27]: Ընդ որում, գիտությունների երկու դոկտորների այս «եզրակացության» միակ աղբյուրը... Ադրբեջանի ներկայիս խորհրդարանի քաղաքական հայտարարությունն է: Հեղինակները հղում են Ադրբեջանի Հանրապետության Միլլի Մեջլիսի 2001 թ. ապրիլի 4-ին «Бакинский рабочий» թերթում տպագրված հայտարարությունը:

Հրատարակությունները պետք է բացատրեին, թե ինչո՞ւ է Հ. Ալիևը 1998 թ. մարտի 31-ը «Ցեղասպանության օր» հայտարարել այն դեպքում, երբ 20 տարի առաջ հենց ինքը «մարտյան դեպքերը» համարել է բոլշևիկների կողմից մուսավաթական խռովությունը ճնշելու և սովետական իշխանությունը փրկելու քաղաքական-քաղաքացիական պայքար: Այդրն Բալանն, օրինակ, այլ լուծում չգտնելով, հայտարարում է բոլշևիկա-դաշնակցական «հակաթուրքական», «հակաադրբեջանական» ալյանսի մասին. «...1918 թ. մարտյան դեպքերը պայմանավորված էին իր բնույթով անտագոնիստական քաղաքական հակադրությամբ մի կողմից՝ ալյանսի և մյուս կողմից՝ «Մուսավաթ» կուսակցության միջև»: Պարոն Բալանը մի կողմից պնդում է, որ «ի տարբերություն «Մուսավաթի», 1918 թ. մարտյան դեպքերը դաշնակների և բոլշևիկների համար անսպասելի չէին, քանի որ հենց իրենք էին դրա կազմակերպիչներն ու նախաձեռնողները» [Ա-8, 14]: Մյուս կողմից նա տեղյակ է այն փաստին, որ իր իսկ խոսքերով «դեպքերից հինգ օր առաջ <Բաքվի> Հայկական Ազգային Խորհուրդը միջնորդել էր Բաքվից հայկական զինված խմբերը հանելու մասին»: Հենց ինքն է գրում, որ այդ նպատակով հայկական կողմը դիմել էր բոլոր կուսակցություններին և կազմակերպություններին, առաջին հերթին «Մուսվաթին», որը վերահսկում էր Ելիզավետպոլի նահանգի երկաթուղին, խնդրելով «ամենավճռական միջոցներ ձեռնարկել» վերացնելու ճակատից վերադարձած և Բաքվում «պատանդ» մնացած հայ զինվորների առաջ ճանապարհի խոչընդոտները [Ա-8, 13 – 14]: Սա այնքան հայտնի իրողություն էր, որ շրջանցել հնարավոր չէր՝ Բաքվի հայերը խնդրում էին «Մուսավաթին» Բաքվում կուտակված հայ զինվորներին թույլ տալ հայրենիք վերադառնալ: Հասկանալի է՝ Բաքվում կոիվների մտադրություն ունեցող հայերը չպիտի շտապեին Բաքվից հեռացնել հայ զինվորներին: Քանի որ գլխավոր նպատակը Հեյդար Ալիևի ուշացած հայտարարությունը հիմնավորելն է, իսկ փաստերը չեն բավարարում, պարոն Բալանը դժգոհում է, որ «ադրբեջանական պատմաբանները միայն ԽՍՀՄ փլուզումից հետո են հնարավորություն ստացել 1918 թ. արյունոտ մարտի պատճառները, բնույթն ու հետևանքները օբյեկտիվորեն հետազոտելու» (էջ 9): Հակառակն ապացուցող հսկայական քանակության ոչ քաղաքական և այլազգի նյութերի առատության դիմաց «այլ աղբյուրներով» վարկած առաջադրելու համար եղած աղբյուրն ընդամենը 1918 թ. ամռանը «մարտյան դեպքերի» քննության նպատակով ԱԴՀ-ի ստեղծած Արտակարգ քննչական հանձնաժողովի հավաքած աղքատիկ «ապացույցներն» են: 1918 թ. նոյեմբերին մարտյան դեպքերի մասին այդ հանձնաժողովի անդամ-

ներից մեկի՝ Ա. Ե. Կլուգեի զեկույցում, օրինակ, ասվում է. «Հարձակումից առաջ համարյա բոլոր հայերը քաղաքի մահմեդական մասից տեղափոխվել են հայկական մաս: Մահմեդական մասում մնացել են միայն ռուսներ, վրացիներ և այլ քրիստոնյաներ, որոնց հայերը խորհուրդ էին տալիս տեղափոխվել մահմեդական մասից: Եղել են դեպքեր, որ երբ հայերը մահմեդականներին զգուշացրել են, որ մարտին անկարգություններ են սպասվում, և խորհուրդ են տվել ընտանիքներն ամառանոց տեղափոխել»: Ընդ որում, այս «ապացուցողական» նյութերն էլ են անանուն և անհասցե՝ ովքեր են տեղափոխվել, քանի մարդ և այլն: Դեպքերից ութ ամիս անց «հայտնաբերված» այս «տեղեկություններն» են այն «փաստերը», որոնցով բոլշևիկյան արկածախնդրությունը պետք է հայտարարվեր հայերի կողմից ծրագրավորված ցեղասպանություն [Բ-82]:

Մարտյան դեպքերի մասին գրող այլ հեղինակները սովորաբար կրկնում են նախորդներին, ինչպես, օրինակ, Ջախիդա Ալիզադեն, այն տարբերությամբ, որ արդեն հետևելով Իլհամ Ալևին, այս հեղինակը Հայաստանի տարածքը համառորեն անվանում է «Արևմտյան Ադրբեջան» [Ա-7]:

Ավելի լուրջ վերլուծություն և որևէ այլ մեկնաբանություն կարծեք թե չկա: Որոշ վերապահությամբ «ադրբեջանական» կարելի է անվանել նաև ամերիկացի Մայքլ Սմիթի տեսական վերլուծությունը [Ա-23]: Այս հեղինակն արդեն գործնական դեպքերից բացարձակ կտրված է: Նրա վերլուծությունում «Մուսավաթը» ոչ թե «մարտյան դեպքերի» մասնակից կողմ է, այլ դիտորդ: Մայքլ Սմիթը վերացարկում է Բաքվի ողբերգության դերը թաթարների ինքնության կառուցման գործում՝ եզրակացնելով, որ «դրանք դարձան ադրբեջանական ողբերգական ազգային ինքնության կառուցման կարևոր տարրերից մեկը»:

Մայքլ Սմիթի հակասական դատողություններն առաջացնում են բազմաթիվ հարցականներ, նախ և առաջ «ողբերգական ազգային ինքնության» պատճառների մասին նրա մեկնաբանությունների մասով: Նա գրում է, որ «մարտյան դեպքերի համար վրեժ հանելով, թուրքական զորքերն ու ադրբեջանական ջոկատները իրենց հերթին կոտորեցին 10 հազար հայերի» (խոսքը 1918 թ. Բաքվի հայերի սեպտեմբերյան ջարդի մասին է – Հ. Խ.): Թվում է, որ վրեժը հանված ողբերգությունը չպետք է դառնա «ողբերգական ազգային ինքնության կառուցման կարևոր տարրերից մեկը»: Համենայն դեպս, Մայքլ Սմիթին ծանոթ է Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության հիմնական ազգային խորհրդանիշը՝ ազգային դրոշը. «Պետական դրոշը իր մեջ համակցում էր թյուրքական ազգային ինքնության (կապույտ), եվրոպական սոցիալ դեմոկրատական (կարմիր) և իսլամական քաղաքակրթության (կանաչ) գույները, իսկ կենտրոնում աստղ է և կիսալուսին»: Հիշյալ բոլոր խորհրդանշանները եվրոպական քաղաքակրթության նկատմամբ հավակնություն ունեցող պանթյուրքական և

պանիսլամական գաղափարները կրողների համար աշխարհաքաղաքական և հաղթական խորհրդանշաններ են: Ոչ մի տեղական էթնո-ազգային խորհրդանիշ չկա, որը կարող էր վկայել ընկալված հայրենիքի կամ էթնիկական արժեքի, կամ «սկսվող ազգային ինքնության» մասին: Հաջորդող երկու տարիների (1918–1920) կառավարման ընթացքում թաթարները օսմանյան թուրքերի հետ միասին այնքան հայեր ջարդեցին Անդրկովկասում և խորհրդային դառնալուց հետո այնքան տարածքներ յուրացրին հայերից, որ գերազանցեցին «մարտյան դեպքերի» վրեժի բոլոր հնարավոր երևակայական ծավալները: Նրանք պետք է որ բավարարված լինեին և ըստ էության էլ բավարարված էին: 2008 թ. ադրբեջանցի Ֆարիդ Ալեքպերլին պիտի «խոստովանի» այն, ինչ վաղուց բոլորին պարզ էր՝ որ 1920 թ. թուրք-ռուսական համաձայնագիրը Ադրբեջանի համար ամենևին վատ գործարք չէր. «Շնորհիվ Թուրքիայի ճնշման, և չնայած հայերի բոլոր առարկություններին, Նախիջևանը մնաց Ադրբեջանի կազմում, <…> ռուսները թուրքերին վերադարձրին այն, ինչ հայերն անվանում են Արևմտյան Հայաստան, այսինքն՝ Կարսը, Սուրմալուն, Արդահանը և Էրզրումը, իսկ կտրտված ու փոքրացված դաշնակցական Հայաստանը հանձնեցին թուրքական բանակի դատին: <…> Ըստ էության, թուրքերի և բոլշևիկների պայմանավորվածությունները շահեկան էին նախ և առաջ Թուրքիայի և Ադրբեջանի, պակաս շահեկան էին Ռուսաստանի, և բոլորովին շահեկան չէին Հայաստանի համար» [Ա-6, 398–399]: Ուրեմն ինչպե՞ս և ինչո՞ւ պիտի հաղթական ադրբեջանցիների ինքնությունը ողբերգական լիներ և «մարտյան դեպքերը» դառնային հաղթական ադրբեջանական ազգային ողբերգական ինքնության տարր: Բայց Մայքլ Սմիթը հետևողական է: Նա գտնում է, որ «ադրբեջանական թուրքերը Առաջին աշխարհամարտի ժամանակաշրջանի բոլոր զոհերի մեջ գտան իրենց սեփական առանձնահատուկ ազգային զոհաբերությունը, և ստեղծեցին իրենց ազգային պատմության ողբերգական սկզբի պատումը, որը նրանց թույլ տվեց Վերսալում Անտանտի երկրներին համոզել, որ իրենք արդեն բավականաչափ տառապել են իրենց ինքնորոշման թանկ իրավունքի համար»: Որքան էլ վերացական, բայց այստեղ թերևս կարևոր գաղափար կա: Այլ հարց է, թե այդ «ազգային տառապանքը» ինքորոշման՞ իրավունքի համար էր, թե՞ ազգային ինքնության կառուցման: Գուցե երկուսը միասին: Կասկածելի զիգզագներով ահռելի թվով հայերի կոտորածները շրջանցող Մայքլ Սմիթի միտքը թաթար/թուրք/ադրբեջանական ինքնորոշման իրավունքի և «ողբերգական ազգային ինքնության» կառուցման հիմքը տեղափոխում է հանցավոր «սկզբի» վրա, ուղղակիորեն չասելով դա: Այդպիսի հարցադրումը դաժան է, բայց ուշագրավ: Գուցե նաև դրանով է բացատրվում «մարտյան դեպքերը» և «Խոջալուի դեպքերը» ցեղասպանական որակելու ներկայիս ձգտումը: Ազգային ինքնության ընթացքը դեռ չի ավարտվել: Գուցե շարունակվում է ողբերգականությամբ խտացնել/լրացնել նախաձրագրավորված «ազգային ողբերգական ինքնությունը» այնքան

ժամանակ, մինչև որ այն վերջնականապես կայանա: «Սեփական ողբերգությունները» առանձնացնում, առանձնահատուկ են դարձնում միավորին իրեն նման ընդհանուրից, տվյալ դեպքում՝ մահմեդական ընդհանուրից, շիա ընդհանուրից, թրքախոս ընդհանուրից՝ օղակ-օղակ ավելացնելով սեփական էթնիկության շղթան: Այդ շղթայի երկարությունը նաև ժամանակից է կախված, պետք է ճկուն լինել և շարժվել ըստ իրավիճակի: ԱԴՀ-ի շրջանում «մարտյան դեպքերի» մեկնաբանությունում հակամարտող կողմերը հայերն ու թաթարներն էին, հայերից պետք էր վրեժ հանել՝ պետք էր համախմբվել և թշնամուն վերացնել: ԽՍՀՄ շրջանում «մարտյան դեպքերի» հակամարտող կողմերը մուսավաթականներն ու բոլշևիկներն էին, Բաքվի բոլշևիկյան խորհուրդը՝ ինտերնացիոնալիստական, այդ թվում ադրբեջանական բոլշևիկյան, և ուրեմն սովետական երկրում քաղաքական դիվիդենտության հնարավորություն էին: «Ազգային տառապանքը» հետաձգվում է, առաջնահերթություն է ստանում բոլշևիկյան ընտանիքում սեփական հաղթանակի ներդրման կարևորությունը: Անկախ Ադրբեջանի Հանրապետությունում Բաքվի բոլշևիկյան խորհուրդը հայկական է, «մարտյան դեպքերի» մեկնաբանությունը՝ ադրբեջանական ցեղասպանություն: Ինքնության կառուցումը զոհեր է պահանջում, ինքնության կայացումը՝ ժամանակ: Այդ օղակներից մեկն էլ կարող է դառնալ «Խոջալուի ցեղասպանությունը»՝ կրկին աշխարհին իր ողբերգական ինքնությունը ներկայացնելու, «դաժան թշնամու» նենգ մտադրությունների դեմ համախմբվելու, թշնամուն վերացնելու, ազգային/էթնիկական ինքնահաստատման իրավունքը շահելու գուցե և շատ չընկալված, բայց գործուն մեխանիզմով:

■
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթանեսյան Վահրամ: Ի վերջո ո՞վ է «ցեղասպանել» Խոջալուի խաղաղ բնակչությանը//«Ազգ» օրաթերթ, #200, 10.11.2012:
2. Йагублу Н. Ходжалинская резня. Баку, 1992.
3. «Нагорный Карабах: возвращение к спокойствию». Известия, 10.02.1989.
4. Vüqar Əsgərov. Azərbaycanın Milli Qəhrəmanları. Bakı [Ադրբեջանի ազգային հերոսները]. Respublika Xatirə Kitabı Redaksiyası, Bakı, 2005.
6. Алекперли Фарид. Тысяча и Один Секрет Востока, Т. 2. «Нурлан», Баку, 2008 [Ֆարիդ Ալեքպերլի: Արևելքի հազար ու մի գաղտնիք: Հ. 2, Բաքու, 2008] (http://www.kitabxana.net/files/books/file/1366113316.pdf; http://recept.znate.ru/docs/index-376.html): (Վերջին դիտումը 17.02.2021):
7. Ализаде Захида. Азербайджано-армянские политические отношения в 1917–1918 гг. // The Caucasus & Globalization. 2008. Т. 2. № 2. С. 151–157 (http://www.ca-c.org/c-g/2008/ journal_rus/c-g-2/14.shtml#snoska16).
8. Балаев Айдын. Февральская революция и национальные окраины. Мартовские события 1918 г. в Азербайджане: Изд. «Флинта», Москва, 2008.
9. Буниятов З. Почему Сумгаит. Изв. АН Азерб. ССР, серия истории, философии и права, № 2, 1989.
11. Гасанлы Джамиль. Мартовский погром в Баку и геноцид азербайджанцев (http://myazerbaijan.org/index.php?p=history/19)
12. Жирохов Михаил. Меч и огонь Карабаха. Хроники незнаменитой войны. 1988–1994. Москва, Центрполитграф, 1994.
13. Ивлева Виктория. Я шла вместе с ними // «Московские новости», 15.03.1992, № 11 (606).
14. Кадымбеков Заур. Трагедия Ходжалу. «Правда», 07.03.1992.
15. Кривопусков В. В.Мятежный Карабах. Из дневника офицера МВД СССР. Издание второе. Москва, «Голос-Пресс», 2007.
16. Мамедова Хавва. Ходжалы: Шехиды и шахиды. Баку, 2004.
17. Меликян Ваан. Борьба за Баку (ноябрь 1917г.-апрель 1918г.). «Зангак», Ереван, 2019.
18. Маммадов Ильгар Махал оглы, Мусаев Тофик Фуад оглы. Армяно-азербайджанский конфликт: история, право, посредничество. Баку, 2008.
19. Мелик-Шахназаров Арсен. Нагорный Карабах. Факты против лжи. М., 2009 // (https://russia-armenia.info/node/30769)
20. Мелик-Шахназарян Левон, Демоян Гайк. «Ходжалинское дело: Особая папка», Ереван, 2002 (http://www.armenianhouse.org/mshakhnazaryan/docs-ru/khojaly_f/contents.html) (դիտումը՝ 07.01.2021)
21. Мелик-Шахназарян Левон. Военные преступления Азербайджана. Изд. «Наири», Ереван, 1997 (http://armenianhouse.org/mshakhnazaryan/docs-ru/crime/chapter8_10.html)

22. Рыжков Н. Истоки разрушения. «Голос Армении», 13.01.2007; 16.01.2007.
23. Смит Майкл. Память об утратах и азербайджанское самосознание //Азербайджан и Россия: Общество и государство. Москва, 2001 (http://old.sakharov-center.ru/publications/azrus/az_004.htm)
24. Столяров К. Распад. От Нагорного Карабаха до Беловежской пущи. Москва, 2001.
25. Сумгаит... геноцид... гласность? / Составители: Г. Б. Улубабян, С. Т. Золян, А. А. Аршакян. Общество «Знание» Армянской ССР, Ереван, 1989.
26. Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев / Составитель, отв. редактор Самвел Шахмурадян. Изд. «Армянский фонд культуры», Ереван, 1989. Второе издание. – «Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев», книга первая. Обыкнавенный геноцид. Ереван, 2013, 295 с., Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев, книга вторая. Обыкнавенный геноцид. Ереван, 2015, 205 с.
27. Фатуллаев Эйнулла. Скот успели вывести, а людей нет. Газета «Реальный Азербайджан», # 3, 29 апреля 2005 г., Баку.
28. Халилов Аслан. Геноцид против мусульманского населения Закавказья в исторических источниках. Баку, 2000.
29. Харатян Г. Выселение армян «навечно» 1949 года. Анализ и архивные документы (К 70-летию этнической депортации армян). Ер.: Изд. ИАЭ, 2020.
30. Ходжалы. Хроника геноцида. сост. Эльмира Ахундова, редакторы Сабир Рустамханлы, Чингиз Алиоглы, Фуад Фараджев. Азернешр, Баку, 1993 г.
31. Чаладзе Татьяна. Карабахский геноцид: обреченный Ходжалы. Документальная хроника. Баку, 2009.
32. Чернявский С. И. Десять лет истории Азербайджана: 2003–2013 годы. Москва, ФЛИНТА, 2013.
33. Эйвазов Джаннатхан. Безопасность Кавказа и стабильность развития Азербайджанской Республики. Баку, Изд. «Нурлан», 2004.
34. Tomas Goltz, Armenian Soldiers Massacre Hundreds of Fleeng Families, «The Sunday Times», 01. 03. 1992.
35. Thomas Goltz, 'Eurasia Letter: The Hidden Russian Hand', in *Foreign Policy*, Fall 1993.
36. Thomas Goltz. Azerbaijan Diary. A Rogue Reporter's Adventures in an Oil-Rich, War-Torn, Post-Soviet Republic. New York, 1998.
37. Thomas de Vaal. Black Garden: Armenia and Azerbaijan Through Peace and War. New York University Press, 2003.
38. Cornell Svante E. Small Nations and Great Powers. A Study of Ethnopolitical Conflict in the Caucasus // Curzon Press, 2001.
39. Cornell, Svante E. Azerbaijan since independence / by Svante E. Cornell. M. E. Sharpe, Armonk, New York. London, England, 2010.
40. Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh. Institute for Religious Minorities in the Islamic World (April 1993). By Caroline Cox and John Eibner. London, 1993.

Բ. ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Արխիվային փաստաթղթեր

1. Արցախի Հանրապետության պետական արխիվ, Ֆ.1, Ց.2, պահպանման միավոր 20, Թ.4:
2. Արցախի պետական արխիվ, Ֆ.2, Ց.1, Գ.69, Թ.1:
3. Արցախի Հանրապետության պետական արխիվ, Ֆ.2, Ց.1, պահպանման միավոր

35, Թ. 9,19:

4. Արցախի Հանրապետության պետական արխիվ, Ֆոնդ 2, Ց.1, О постановлении общего собрания жителей села Ходжалы Аскеранского района: [Ասկերանի շրջանի Խոջալու գյուղի բնակչության ընդհանուր ժողովի որոշման մասին]
5. Արցախի Հանրապետության պետական արխիվ, Ֆ. 2, Ց.1, Գ. 69:
6. Արցախի Հանրապետության պետական արխիվ, Ֆ. 2, Ց.1, պահպանման միավոր 43, Թ. 14: Առկա է 150 մարդու անուն և ստորագրություն:
7. Արցախի Հանրապետության պետական արխիվ, Ֆոնդ 2, Ց.1, պահպանման միավոր 45, ԹԹ. 83–85:
8. Արցախի Հանրապետության պետական արխիվ, Ֆ. 250, Ց.10, hՉ.2, պահպանման միավոր 13, Թ. 7 (Ադրբեջանի Կուսկազմակերպության Լեռնային Ղարաբաղի մարզային նախկին Կուսարխիվ, Ֆ.1, Ց.1, Գ. 437, Տուփ 25):
9. Հայաստանի Ազգային Արխիվ, Կուսակցական արխիվ, Ֆ.113, Ց.29, Գ.179, ԹԹ. 38–40:
10. Հայաստանի Ազգային Արխիվ, Կուսակցական արխիվ, Ֆ.1, Ց.28, Գ.70, ԹԹ. 136–140:
11. Հայաստանի Ազգային Արխիվ, Կուսակցական արխիվ Ֆ.1, Ց.31, Գ.69, Թ.57; Ց.34, Գ.62, Թ.29:
12. Հայաստանի Ազգային Արխիվ, Կուսակցական արխիվ Ֆ.1, Ց.32, Գ.62, ԹԹ.29–31:
13. Հայաստանի Ազգային Արխիվ, Կուսակցական արխիվ, Ֆ.113, Ց.29, Գ.298, Թ.1:
14. Հայաստանի Ազգային Արխիվ, Կուսակցական արխիվ, Ֆ.1, Ց.32, Գ.66, Թ.386:
15. АПД УДП АР, Ф. 1, Оп. 221, Д. 78, ЛЛ. 3–5. М. Дж. Багиров - И. Сталину. 07.03.1949 г. //Гасанлы Дж. Территориальные претензии Армении к Азербайджану и Грузии. Депортация азербайджанцев из Армении (со ссылкой на М. Дж. Багиров - И. Сталину. 07.03.1949 г. (https://regnum.ru/news/polit/1433956.html, 10 августа 2011 г.).
16. ПААФ ИМЛ. Ф. 1. Оп. 74. Д. 132. Л. 169. Июль 1923 г. Протокол заседания комиссии по выработке положения Автономной области Нагорного Карабаха, установлению границ между Низменным и Нагорным Карабахом, а также между Нагорным Карабахом и Курдистаном и определению форм административного управления Низменного Карабаха и Курдистана: //К истории образования Нагорно - Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918 - 1925: Документы и материалы. Под редакцией доктора исторических наук Д. П. Гулиева. Баку, Азернешр, 1989.
17. РГАСПИ, Ф. 17, Оп. 162, Д. 40, ЛЛ. 140–141. Подлинник. Машинопись. 4 апреля 1949 г. Постановление Политбюро ЦК ВКП(б) под номером 126 (Протокол № 68) «О выселении дашнаков, проживающих в Армянской и Азербайджанской ССР» (https://www.rulit.me/books/lubyanka-stalin-i-mgb-sssr-mart-1946-mart-1953-read-508340-163.html)
18. РГАСПИ. Ф. 17. Оп. 162. Д. 40. Л. 141. Подлинник. Машинопись. 4 апреля 1949 г. Постановление Политбюро ЦК ВКП(б) под номером 127 (Протокол № 83) «О выселении турецких граждан, турок, не имеющих гражданства, и быв. турецких граждан, принятых в советское гражданство, проживающих на черноморском побережье и в Закавказье» (https://www.rulit.me/books/lubyanka-stalin-i-mgb-sssr-mart-1946-mart-1953-read-508340-163.html)
19. ЦПА ИМЛ. Ф. 85, Оп. 18, Д. 58, Л. 18. Постановление от 5 июля // Нагорный Карабах в 1918–1923 гг. Сборник документов и материалов. Изд. АН Армении, Ереван, 1992.

Տպագիր աղբյուրներ

20. Բարխուտարեանց Մակար եպս. Աղուանից երկիր և դրացիք: Արցախ: Երևան, «Գանձասար», 1999:

21. Елизаветпольская Губерния, Шушинский уезд/Свод статистических данных о населения Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г. Тифлис, 1893г.
22. Кавказский календарь, 1910, Тифлис.
23. Кавказский календарь, 1912, Тифлис.
24. Нагорный Карабах в 1918–1923 гг. Сборник документов и материалов. Изд. АН Армении, Ереван, 1992.
25. Нагорный Карабах и вокруг него… Глазами независимых нблюдателей (сборник документов и материалов). Составители С. Т. Золян, Г. К. Мирзоян. Ереван, «Луйс», 1991.
26. О территории Автономной Области Нагорного Карабаха, 26 ноября 1924 г. / Собрание узаконений и распоряжений Рабоче-Крестьянского правительства АССР за 1924 г. Баку, 1926 г. стр. 333–335; «Бакинский рабочий». 1924. 26 ноября// К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918–1925: Документы и материалы. Баку, Азернешр, 1989.
27. Собрание узаконений и распоряжений Рабоче-Крестьянского Правительства Аз. ССР за 1923 г. Баку, 1923 [Հրատարակվել է «Бакинский рабочий», №151 от 9 июля 1923 г.]
28. Письма трудящихся по вопросам совершенствования межнациональных отношений в СССР. (Обзор писем, вручённый участникам сентябрьского (1989 г.) Пленума ЦК КПСС)//Известия ЦК КПСС.–М.: Издательство ЦК КПСС «Правда», 1989, №10.

Մամուլ

29. «Հայկական Ժամանակ» օրաթերթ, 26.02.2005
30. Аргументы и факты, 1988, №16
31. Армянский вестник, 1998, №2
32. Аврора, №10, 1988 (Александр Василевский, Туча в горах)
33. Бакинский рабочий, 07.03.1992
34. Бакинский рабочий, 26.11.1924
35. Голос Армении (Коммунист), №130(17313), 26.07.1991
36. Журнал «Огонек», №14–15, 1992
37. Журнал «Родина», №4, 1994
38. «Зеркало» օրաթերթ, Баку, 23.07.2002
39. Известия, 21.09.1988
40. Известия, 10.02.1989
41. Известия, 09.06.1989
42. Известия, 14.11.1992
43. Комсомолец, 17.11. 1988
44. Коммерсантъ (Москва), 20.05.1991
45. Коммунист, 02.10.1998
46. Мегаполис-экспресс, Москва, 1992, №17
47. Московские новости, 30.10.1988
48. Московские новости, 04.12.1988
49. Независимая газета, 29.02.1992
50. Независимая газета, 04. 03. 1992
51. Независимая газета, 05. 03. 1992
52. Независимая газета, 02. 04.1992
53. Независимая газета, 18. 06. 1992
54. Независимая газета, 12.03.1998

55. Независимая газета/ Карт бланш, 07.03.2018
56. Независимая газета, 12.03.1998
57. Новое время, март, № 8, Москва, 1992
58. Советский Карабах, 23.10. 1988
59. The Washington Times 2 March 1992
60. BBC1 Morning News at 07.37, Tuesday, 3 March 1992.
61. BBC1 Morning News at 08.12, Tuesday, 3 March 1992
62. The Independent, London, 12 Kune 1992
63. Milliyet, 02. 03. 1992
64. Ени Мусафат, 23.10. 2001: Նյութը առնված է Мелик-Шахназарян Левон, Демоян Гайк. Ходжалинское дело: Особая папка. Ереван, 2002 г. / Вместо эпилога.

Էլեկտրոնային աղբյուրներ

65. Ազատամարտիկ-բժշկի հոդվածը՝ ադրբեջանցիների կողմից Գետաշենի բնակչության բռնի տեղահանության մասին, 18 հոկտեմբերի 1995 թ.// https://www.tert.am/am/news/2020/05/04/Getashen/3280069 (դիտումը՝ 17.02.2021)
66. Աբրահամյան Ասքանազ, Խոջալու. Ոչխարները թանկ էին սեփական բնակիչներից, 28.02.2013 (Ասքանազ Աբրահամյանը հղում է անում www.realazer.com, որը նայել է 27.05.2005) http://www.hayzinvor.am/19276.html (11.02.2021) (դիտումը՝ 18.02.2021)
67. Հակոբյան Թ., Խոջալուի մասին՝ կարևոր մանրամասներ// https://www.aniarc.am/2020/02/25/vitali-balasanyan-khojalu-allahverdi-baghirov/ (դիտումը՝ 15.03.2021)
68. Ղուկասով Ի. Ղ. Խոջալուից խաղաղ բնակչությանը դուրս բերելու միջանցքը. 24.02. 2014// http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12566&print=Y. Ռուսերենը տես http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=12567 (Վերջին դիտումը՝ 17.03.2021)
69. Վարազաբուն 1992 թ. մայիսի 10 | 25.11.2016// https://www.youtube.com/watch?v=miFIS73XvwA (դիտումը՝ 17.01.2021)
70. Փաստաթղթեր // https://erevangala500.com/upload/pdf/1323993970.pdf (Դիտումը՝ 12.01.2021)
71. Алиф Гаджиев - национальный герой Азербайджана,- https://vestikavkaza.ru/articles/Alif-Gadzhiev-natsionalnyy-geroy-Azerbaydzhana.html (դիտումը՝ 02.02.2021)
72. Аванесов Овик, Элибегова Анжела. Фальсификации ходжалинских событий в азербайджанской школьной литературе, 27 февраля, 2020 // https://infoteka24.ru/2020/02/27/58196/ (դիտումը՝ 10.04.2021)
73. Бабанов Игорь, Воеводин Константин. Карабахский кризис. Санкт-Петербург: [б. и.], 1992.- https://nashasreda.ru/i-babanov-k-voevodskij-karabaxskij-krizis/ (դիտումը՝ 03.03.2021)
74. Байков Б. Воспоминания о революции в Закавказье (1917–1920 гг. Архив русской революции. т. IX. Берлин, 1923) // http://www.dk1868.ru/history/ZAKAVKAZ.htm (դիտումը՝ 11.04.2021)
75. Бегларян Ашот. Ходжалу: пропогандистские игры на крови… https://nashasreda.ru/xodzhalu-propagandistskie-igry-na-krovi/ (դիտումը՝ 14.03.2021)
76. Виктория Ивлева. Я скорблю вместе со всеми о невинных жертвах Ходжалы, и же-

лаю всем мира. 03.06.2011 //
https://www.rizvanhuseynov.com/2011/03/blog-post_9726.html (դիտումը՝ 14.03.2021)

77. Вито и Аллахверды: история героев Арцаха и Азербайджана. С Виталием Баласаняном беседовала Сирануш Егиазарян,
https://mediamax.am/ru/news/special-file/23002/

78. Воеводский Константин. Перестройка в карабахском зеркале //
https://nashasreda.ru/konstantin-voevodskij-perestrojka-v-karabaxskom-zerkale/ (դիտումը՝ 17.02.2021)

79. Воспоминания очевидцев: Ходжалинский геноцид – горе, которое не лечит время //
https://ru.baku.ws/hot_news/102994/

80. Выступление Чингиза Мустафаева на заседании следственной комиссии Верховного Совета Азербайджана. Опубликовано 25 апреля 2016 года. Правда о Ходжалы –/ Truth about Khojaly - Chingiz Mustafaev
https://www.youtube.com/watch?v=Gba0aDRdG88 (դիտումը՝ 02.02.2021)

81. Газарян В. Имела ли место депортация азербайджанцев из Армении в советские годы? (հղում է՝ Госархив НКР, Ф. 250, Оп. 11, Св. 2, Ед. хр. 24, ЛЛ. 11–14).
http://www.regnum.ru/news/polit/1657402.html (դիտումը՝ 04.04.2021).

82. Гасанлы Джамиль. Мартовский погром в Баку и геноцид азербайджанцев //
http://myazerbaijan.org/index.php?p=history/19 (դիտումը՝ 21.04.2021)

83. Геноцид азербайджанцев в Ходжалы: глазами своих и чужих,
https://azerhistory.com/?p=30232

84. Гирченко Юрий Викторович. Армия государства, которого нет//
https://www.litmir.me/br/?b=10202&p=1 (դիտումը՝ 12.03.2021):

85. Гирченко Юрий. В Союзе все спокойно...//
http://samlib.ru/g/girchenko_jurij/karabah.shtml (12.03.2021)

86. Григорян Марина. Дана Мазалова: «То, что они показывают - не Ходжалу!», газета «Голос Армении», 13.03. 2010, No 25 (19958)//
https://x-lit.ru/dana-mazalova (17.01.2021);
https://www.youtube.com/watch?v=jzFRC2sB1R8 (դիտումը՝ 17.01.2021)

87. Григорян Марина. «Речь шла не об армянской стороне...» (Ходжалинские события: свидетельствуют азербайджанцы), 24.02.2000//
http://www.sumgait.info/khojaly/khojaly-witnesses/khojaly-witnesses.htm (դիտումը՝ 17.03.2021)

88. Доклад правозащитного центра «Мемориал» о массовых нарушениях прав человека, связанных с занятием населенного пункта Ходжалы в ночь с 25 на 26 февраля 1992 г. вооруженными формированиями
https://www.kavkaz-uzel.eu/articles/220626/ (դիտումը՝ 21.04.2021). Տես նաև «Независимая газета», 18. 06.1992:

89. Л. М-Ш. Ложь устами Азербайджана,–
https://maxpark.com/community/politic/content/2264934 (դիտումը՝ 04.04.2021)

90. Мелик-Шахназарян Левон, Демоян Гайк. Ходжалинское дело: Особая папка. Ереван, 2002.
http://www.armenianhouse.org/mshakhnazaryan/docs-ru/khojaly_f/contents.html (դիտումը՝ 07.01.2021)

91. Мурадов А. Д., Иманов Р. Д.. Трагедия XX века. Ходжалинский геноцид. «Азербай-

джан и Азербайджанцы», №5–6, 2002
https://1905.az/ru/трагедия-хх-века-ходжалинский-геноци/

92. Подлоги и фальсификации//
https://xocali.net/ru/falsification01.html (Դիտումը՝ 12.01.2021):

93. Помпеев Ю. Кровавый омут Карабаха. Баку: Азербайджан, 1992, էջ 2//
https://www.litmir.me/br/?b=229905&p=2 (դիտումը՝ 12.03.2021)

94. Правда о Ходжалы. 1992թ. կայացած Զինգիզ Մուստաֆաևի տեսահարցազրույցը տեղադրված էր http://xocali.net/RU/Mamedov-Mustafayev.htm հասցեով: Այն այժմ չի աշխատում: Տես Ходжалу|Азербайджанцы убивали их по приказу Гейдара Алиева https://www.fmgnews.info/70810-hodzhalu-azerbaydzhancy-ubivali-ih-po-prikazu-geydara-alieva.html (դիտումը՝ 28.12.2020)

95. Свидетельства турок-месхетинцев из Ходжали//
https://www.youtube.com/watch?v=sBM7aQg18ys (դիտումը՝ 03.03.2021)

96. Судьба жителей, оставшихся в городе // Ходжалинская трагедия, –
https://www.kavkaz-uzel.eu/articles/201859/ (դիտումը՝ 17.02.2021)

97. Тарасов Станислав. Кто и как создал «дело о бакинских комиссарах»,
http://www.regnum.ru/news/1177585.html (դիտումը՝ 03.01.2021)

98. Тер-Тадевосян Аркадий. Анализ боевых действий в Арцахе (июль 1991–июль 1992 гг. // Ռազմական պատմություն.
https://ararat-center.org/upload/files/Razm_&_Anvtang_17_ur.pdf (դիտումը՝ 11.03.2021)

99. Фатуллаев против Азербайджана (Fatullaeyev v. Azerbaijan), (Жалоба №40984/07), 22 Апреля 2010, Европесйкий суд по правам человека
https://mmdc.ru/praktika_evropejskogo_suda/praktika_po_st10_evropejskoj_konvencii/europ_practice6/ (դիտումը՝ 09.12.2020)

100. Штурм Ходжалы 25–26 февраля 1992 года//Кавказский Узел/
https://www.kavkaz-uzel.eu/articles/201859/ (Դիտումը՝ 22.01.2021)

101. Электронный бюллетень «Изменения географических названий стран СНГ» СНГ
https://wiki2.org/ru/Ходжалинский_район (Դիտումը՝ 21.01.2021)

102. Эльман Мамедов, бывший глава исполнительной власти Ходжалы//
https://azerhistory.com/?p=30232 (դիտումը՝ 12.02.2021)

103. Юнусов А. Этнический состав Азербайджана (по переписи 1999 года).
http://www.iea.ras.ru/topic/census/mon/yunus_mon2001.htm (դիտումը՝ 17.02.2021)

104. «Siyasi uzaqgörənliyin olmaması Xocalı hadisəsinə gətirib çıxırdı»
https://www.azadliq.org/a/1818751.html «Муталибов, премьер-министр и председатель КГБ приказали не выводить людей из Ходжалы: Рамиз Фаталиев»: Ադրբեջանի «Ազատություն» ռադիոյի 2009թ. սեպտեմբերի 9-ի Ռամիզ Ֆաթալիևի հարցազրույցից https://ok.ru/armeniyar/topic/151208001926603 (դիտումը 11.01.2021)

105. Hafiz Əhmədov. Atamın ölümündə qaranlıq məqamlar var. 15 Dekabr 2017 [Հորս մահվան մեջ մութ պահեր կան],
https://azvision.az/news/133314/atamin-olumunde-qaranliq-meqamlar-var-%E2%80%93-allahverdi-bagirovun-oglundan-etiraflar-musahibe+video.html
(դիտումը՝ 12.04.2021)

106. Qələndər Xaçınçaylı, Milli Qəhrəmanlarımız silsiləsindən - Allahverdi Bağirov [Քալանդար Խաչինչայլի, Մեր ազգային հերոսները շարքից՝ Ալլահվերդի Բաղիրով], Həftə içi.- 2019.- 23 aprel.–S.8,–
http://anl.az/down/meqale/hafta_ichi/2019/aprel/647777.htm
Герой войны - Аллахверди Багиров,-
https://zen.yandex.ru/media/rizvanbunturk/geroi-voiny-allahverdi-bagirov-5fb7668c6a210f1cc0308c56 (դիտումը՝ 19.01.2021)

107. Rauf KƏNGƏRLİ. Xocalı dərdini dağ da götürməz. Faciəni lentə alan Azərbaycan Ordusunun ilk hərbi operatoru belə deyir [Խոջալուի ցավին լեռն էլ չի դիմանա. Ասել է ադրբեջանական բանակի ողբերգությունը նկարահանած առաջին զինծառայողը] // Xalq qəzeti. – 2010. – 26 fevral. – S. 4. / http://anl.az/down/meqale/xalqqazeti/2010/fevral/109056.htm (դիտումը՝ 27.02.2021)

108. Səxavət Məmməd. Xocalı faciəsi, erməni vəhşiliyi və meyitləri kimlərin təhqir etməsi iddialarına [Խոջալուի ողբերգությանը, հայերի գազանությունների և դիակները պղծողների մասին: Խոջալուի ողբերգությունը, հայերի վայրենությունը և հավակնությունները]// https://olke.az/read/82160/xocali-faciesi-ermeni-vehsiliyi-ve-meyitleri-kimlerin-tehqir-etmesi-iddialarina-cavab-82160/ (դիտումը՝ 02.19.2021)

109. Xocalı faciəsində 1003 nəfəri əsirlikdən alan qəhrəmanın nağılı. Milli Qəhrəman Allahverdi Bağırovun ömrünü və ölümünü Lent.az-a yadigarları danışır [Խոջալուի ողբերգության ժամանակ 1003 մարդ փրկած հերոսի պատմությունը: Հուշեր ազգային հերոս Ալլահվերդի Բաղիրովի կյանքի և մահվան մասին]: Ədalət. – 2012. – 25 fevral. – S.9. http://www.anl.az/down/meqale/adalet/2012/fevral/235647.htm (դիտումը՝ 21.03.2021)

110. Исмет был вечным тамадой, сыплющим стихами на азербайджанском, русском, немецком языках, 18,10.2011// http://www.atc.az/forum/showthread.php?t=13139

111. Таблицы с предварительными итогами переписи населения 1939 года//РГАЭ РФ (быв. ЦГАНХ СССР), Ф. 1562, Оп. 329, Д. 279, Л. 53. http://istmat.info/files/uploads/50901/rgae_1562.329.279_l.31-54.pdf

Դաշտային նյութեր

Դաշտային նյութերը՝ Արցախի բնակչության, 1990-1992թթ. Արցախի ինքնապաշտպանական խմբերի ներկայացուցիչների, Խոջալուի գրավման մասնակիցների հետ զրուցել և նյութեր են գրանցել Հ. Խառատյանը, Գ. Ստեփանյանը, Գ. Մխիթարյանը, Ա. Հակոբյանը, Շ. Սարատիկյանը, Ջ. Համբարձումյանը, Ն. Մանուչարյանը, Հ. Ջոհրաբյանը: Բոլոր ձայնագրությունները պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում:

ՔԱՐՏԵԶՆԵՐ



Քարտեզ 1. *Փետրվարի 25-լույս 26-ի գիշերը Խոջալուն լքած բնակչության ցրվելու ուղղությունները*

Քարտեզ 2.*Քարտեզի վրա կապույտով գծվածն այն նախատեսված ճանապարհն է, որով խոջալուցիները պիտի գնային Աղդամ: Կարմիրով գծվածն այն ճանապարհն է, որով գնաց խոջալուցիների մի մասը Ալիֆ Հաջիևի հորդորով: Գետն անցան, բարձրացան լեռները և անտառներում դեգերումներից հետո հատեցին Ասկերանից Նախիջևանիկ գյուղ տանող ճանապարհը՝ դեղին գիծը, որն Ասկերան-Նախիջևանիկ ճանապարհն է: Դեղինի և կարմիրի հատման կետում Նախիջևանիկի 5-րդ դիրքն է: Այս դիրքում տեղի է ունեցել դիրքապահ հայերի և խոջալուցի մարտիկների փոխհրաձգությունը: Այդ դիրքն անցնելուց հետո խոջալուցիները ճանապարհը շարունակել են դեպի Շելլի գյուղ: Մանուշակագույնով շրջանակն այն վայրն է, որտեղ ադրբեջանական դիրքից դիմահար կրակել են խոջալուցիների վրա: Դեղինով շրջանակը Նախիջևանիկ գյուղն է: Գյուղը, ինչպես տեսնում ենք, որևէ առնչություն չի ունեցել խոջալուցիների անցած ճանապարհի հետ:*



Քարտեզ 3. *Կանաչով գծանշված է Խոջալուի բնակչության համար հատկացված միջանցքը՝ Ասկերանով Աղդամ ճանապարհը: Դեղինով գծանշված է Խոջալուից օդանավակայանի կողմից դուրս եկող, գետն անցնող և լեռների ու անտառի միջով Շելլիի ողողությամբ գնացածների ճանապարհը: Դեղինով օղակը այն վայրն է, որը հատում է Ասկերան – Նախիջևանիկ ճանապարհը: Այստեղ հայկական 5-րդ դիրքն էր, որտեղ եղել է ճանապարհային առաջին ընդհարումը: Մյուս դեղինը նույն ճանապարհը հատում է մի փոքր արևելքից: Այստեղ Նախիջևանիկին պատկանող ֆերմայի մոտի հայկական դիրքն էր, որտեղ ընդհարում չի եղել: Երկու ճանապարհները միմյանց միանում են Աղդամի Շելլի գյուղի մոտ: Երկրորդ օղակը այն վայրն է, որտեղ տեղի է ունեցել Խոջալուի խաղաղ բնակչության սպանդը:*

Քարտեզ 4. *Կարմիրով գծանշված է հայկական 4-րդ դիրքը: Դեղինով գծանշված է այն տարածքը, որտեղ ադրբեջանցիները դիրքավորվել էին գիշերը: Արանքում Ասկերան–Աղդամ ճանապարհն է ձորի մեջ: Սլավիկ Առուշանյանը իր դիրքի տղաների հետ կարմիրի բարձունքից հետևել է դիմացի՝ դեղինի բարձունքին տեղի ունեցող կրակոցներին: Դրանք ուրիշ ոչ մի տեղից չէին երևում:*

Լաչինղոյի բարձունքը հայկական 4-րդ դիրքի մոտից, որտեղից Սլավիկ Առուշանյանը հետևել է դեպքերի ընթացքին: Ձախ կողմի կարմիրի մոտ եղել է հայկական 4-րդ դիրքը, որտեղից փետրվարի 26-ի առավոտյան հետևել են Լաչինղոռի՝ կարմիր շրջանակի մեջ առնված բարձունքի մոտ տեղի ունեցող գործողություններին: Այդ երկու կարմիրները բաժանող կանաչ գիծը այն ձորն է, որով անցնում է Ասկերան–Աղդամ ճանապարհը, և որը բաժանում է երկու բարձունքները միմյանցից: Ջուգահեռ երկրորդ կանաչը Նախիջևանիկ գյուղ տանող ճանապարհն է, որը Ասկերանից 2.5 կմ հեռավորությամբ դեղինով միացված է Աղդամի ադրբեջանական Շելլի գյուղի մոտ գտնվող Լաչինղոռի բարձունքին: Ստորև նույն լուսանկարն է՝ առանց լրացուցիչ գծանշումների:



Քարտեզ 5. *Փետրվարի 27-ին և 28-ին օդաչուի երեք վայրէջքների վայրերը: Կապույտով գծանշված է Ասկերան–Նախիջևանիկ ճանապարհը: Փետրվարի 27-ի առաջին թռիչքի ժամանակ՝ «Ասկերանից 2,5 կմ հարավ» դիակներ հավաքելու համար նա եղել է Ասկերան–Նախիջևանիկ ճանապարհի հայկական 5-րդ դիրքի մոտ՝ կանաչ կետ: Այստեղ տեսել է «15–20 մարդու դիակներ»: Տարել են ութ դիակ և մեկ կենդանի կնոջ: Նույն օրվա երկրորդ թռիչքի ժամանակ՝ Աղդամի քնիչի հետ «դուրս էին հանում ֆերմայի մոտ կրակոցների տակ ընկած վիրավոր մարտիկներին»՝ մանուշակագույն կետերից որևէ մեկը: Փետրվարի 28-ի առավոտյան թռել է «Նախիջևանիկի և Ասկերանի արանքի դիակները դուրս տանելու» և վայրէջք է կատարել ֆերմայից 200 մետր հեռավորությամբ՝ կարմիր կետ:*



Քարտեզ 6. *Խոջալուցիների կոտորածի վայրը Շելլիի մոտ՝ դեղինով, Նախիջևանիկ գյուղը՝ կանաչով: Մարտի 2-ին լրագրողներին տարել էին «կոտորածի վայր» և ասել, որ դա հայկական Նախիջևանիկ գյուղի մոտ է:*

Քարտեզ 7. *Դեղին շրջանակները ներկայացնում են փետրվարի 26-ին Խոջալուից Աղդամ գնացող բնակչության ճանապարհին տեղի ունեցած բախման վայրերը:*

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԴՀ	Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ՋԼՄ	Զանգվածային լրատվական միջոցներ
ԼՂԻՄ	Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ
ԼՂՀ	Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ԽՍՀ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ԿԳԲ	Ռուսերեն КГБ – Комитет государственной безопасности – Պետական անվտանգության կոմիտե
ՆԳՄ	Ներքին գործերի մինիստրություն
ՆԶ	Ներքին զորքեր
ՕՄՕՆ	ռուսերեն՝ ОМОН – Отряд милиции особого назначения – Ոստիկանության հատուկ նշանակության ջոկատ
БМП	Боевая машина пехоты – Հետևակի մարտական մեքենա
БРДМ	Бронированная разведывательно-дозорная машина – Հետախուզական-պարեկային զրահապատ մեքենա
БТР	Бронированная транспортно-боевая машина – Զրահապատ տրանսպորտային մարտական մեքենա, օգտագործվում է որպես ռազմական ջոկատների տեղափոխման տրանսպորտային միջոց
ИВС	Изолятор временного содержания – ժամանակավոր պահման մեկուսարան
КПЗ	Камера предварительного заключения – նախնական ազատազրկման խուց
МВД	Министерство внутренних дел - Ներքին գործերի մինիստրություն
ПААФ ИМЛ	Политический архив Азербайджанского филиала Института Марксизма-Ленинизма – Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Ադրբեջանի մասնաճյուղի քաղաքական արխիվ
ППС	Патрульно-постовая служба - Պարեկապահակային ծառայություն
ЦПА ИМЛ	Центральный политический архив Института Марксизма-Ленинизм – Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Կենտրոնական քաղաքական արխիվ

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբբասով Բ. 71

Աբբասով Սուլեյման, Խոջալուի բնակիչ 92, 93, 107, 114, 116, 117

Աբդուլան Ինթիգամ 71, 111

Աթանեսյան Վահրամ 137, 201

Ալա Յաղուբ (տես նաև Ռզան Յաղուբ, Մամեդ Յաղուբ, Գաթիր Մամեդ) 108–111, 113, 117, 134, 135, 137

Ալեքպերլի Ֆ. 199, 201

Ալեքպերովա Սանուբար, Խոջալուի բնակիչ 91, 92

Ալիև Ա., Խոջալուի բնակիչ 153

Ալիև Թահիր 71, 73, 75

Ալիև Իլհամ 186, 191, 198

Ալիև Հեյդար 14, 15, 186, 196, 197

Ալիև Ֆիքրեթ 144

Ալիևա Դուրդան, Խոջալուի բնակիչ 33

Ալիևա Մալահաթ, Խոջալուի բնակիչ 91, 92

Ալիևա Մինեշ, Խոջալուի բնակիչ 91, 92, 130, 169

Ալիզադե Ջ. 198

Ահմեդով Ա.Հ., Խոջալուի բնակիչ 167

Ահմեդով Ա.Ն., Խոջալուի բնակիչ 152

Ահմեդովա Մյուշկյունազ, Խոջալուի բնակիչ 169

Աղան Ռասիմ 156

Աղազադե Իքբալ 187

Այարյան Ռուդիկ, Յարմջայի բնակիչ 156

Այվյան Իրինա 53

Առուշանյան Սլավիկ 106–108, 111, 172

Ասադուլան Ալի 194

Արշակյան Գ. 22

(Հ)Արութինով Գրիգոր 10

Բաբայան Սամվել 81, 87, 109, 143, 159

Բալան Այդըն 196

Բալասանյան Վիտալի 95, 100, 118, 119, 132, 173, 174

Բախմանով Նիզամի 186

Բաղդասարյան Նաղյա, Արանզամինի բնակիչ 140

Բաղդասարյան Փիրուզա 53

Բաղիրով Ալլահվերդի 73, 75, 95, 98, 110–113, 115–119, 122–125, 128, 131, 132, 135–137, 140, 141, 144, 146, 161, 173, 182, 208

Բաղիրով Էլշան 111

Բաղիրով Միրջաֆար 10, 11, 14

Բայկով Բ. 194–196

Բարխուդարյան Մակար 16, 45, 74

Բեգլարյան Ռ. 21

Բունիաթով Ջիյա 28

Գաթիր Մամեդ (տես նաև Ռզան Յաղուբ, Ալա Յաղուբ, Մամեդ Յաղուբ) 40, 75, 137

Գաիբով Իսմեթ 52

Գալստյան Ժ. 176, 177

Գասպարյան Դ. 21

Գարաևա Նարխանում, Խոջալուի բնակիչ 169

Գաֆուրովա Է. 34, 41

Գիրչենկո Յու. 37, 46, 50, 62, 87, 88, 134, 143, 153

Գորբաչով Մ. 28, 34, 41, 51

Գուլիև Ագիլ 128

Գրիգորյան Մարինա 131, 133

Գրիգորյան Սլավիկ, Մարգուշավանի բնակիչ 156

Դե Վաալ Թոմաս 21, 95, 96, 133, 134

Եղիազարյան Մանվել 177

Թաղիև Ջ. 195

Ժիրոխով Միխայիլ 59

Իվլևա Վ. 153, 157, 176

Խալիլովա Միրվարի, Խոջալուի բնակիչ 92

Խուդիև Խուդի 73, 137

Կասումով Բայրամ Մամեդ օղլը, Խոջալուի բնակիչ 82, 152

Կարաև Թամերլան 140

Կոռնել Սվանտե 187–191

Կրիվոպուսկով Վ. 44, 45, 63

Կրյուչկով Վ. 50, 51

Հաթամով Թելման 74

Հակոբյան Համեստ 53

Հաջիև Ալիֆ 45, 63, 87, 88, 91, 94–96, 105, 113–117, 125, 128, 130, 134–136, 141, 149, 150, 151, 182

Հաջիև Ֆահմին 109, 111, 112

Հասանլը Ջ. 11

Հոլց Թոմաս 40, 63, 125, 129, 134, 188, 189
Հուսեյինով Ռիզվան 176
Ղազիև Ռահիմ 139
Ղուկասով Ի. Ղ. 170
Մագգերամով Ասիֆ/Ֆրեդ Ասիֆ 110, 112, 131, 137
Մազալովա Դանա 131
Մամեդ Յաղուբ (տես նաև Ռզան Յաղուբ, Ալա Յաղուբ, Գաթիր Մամեդ) 109
Մամեդով Բեքիր, Խոջալուի բնակիչ 164
Մամեդով Գաթիր 75
Մամեդով Էլման, Խոջալուի քաղաքագլուխ 88, 91–94, 115, 130, 136, 139, 156
Մամեդով Ջամիլ, Խոջալուի բնակիչ 153, 164, 166
Մամեդով Սեդիկ, Խոջալուի բնակիչ 170
Մամեդովա Հավվա 164, 168
Մամեդովա Սաիդա Ջալիլ կըզը, Խոջալուի բնակիչ 103
Մամմադով Իլգար Մահալ օղլի 195
Մարտիրոսյան Ալիշ, Նորագյուղի բնակիչ 69
Մելիք-Շահնազարյան Լևոն 22, 88, 158
Մելքոնյան Նինա 53
Մելքումյան Լաուրա 140
Միրզոև Շիրին 109, 137
Միրզոյան Մաքսիմ 54
Մովսումով Սեիդաղա 95, 105, 116, 120, 123, 124, 128, 132, 136
Մութալիբով Այազ 41, 50, 64, 68, 120, 131, 138, 141, 142, 153, 157
Մուսան Շահին 112
Մուստաֆան Չինգիզ 105, 116, 117, 122–124, 128, 131, 136, 137, 139, 141, 149, 157, 186, 207
Մուստաֆաևա Բանովշա, Խոջալուի բնակիչ 167
Մուրադով Շահին, Խոջալուի բնակիչ 94, 104
Յազով Դ. 41, 42, 134
Շահնազարյան Ն. 51
Շահումյան Ս. 194–196
Շահրամանյան Հ. 20, 21
Շամիլգիլ (տես նաև Սաբիրօղլու Շամիլ) 124
Շատալին Յու. Վ. 34
Շիրինով Բ., Խոջալուի բնակիչ 23
Պետրոսյան Վալերա, Ասկերանի բնակիչ 172
Պլավսկի Ի. 52
Պոլյանիչկո Վ. 37, 40, 43–45, 187
Ջաֆարովա Սուսաննա, Խոջալուի բնակիչ 169
Ջաֆարովա Տ. Մ., Խոջալուի բնակիչ 152
Ջեվանշիր Բեյբութ-Խան 196
Ռզան Յաղուբ (տես նաև Ալա Յաղուբ, Մամեդ Յաղուբ, Գաթիր Մամեդ) 74, 108, 109, 111–114, 134, 135, 137
Ռզան Ջանսիղլադ 109, 111, 114, 144, 161, 168
Ռիժկով Ն. 28, 41
Սաբիրօղլու Շամիլ (տես նաև Շամիլգիլ) 124
Սաղըգով Էլխան 120
Սախարով Ա. 53
Սատտարով Խանլար Սաֆտար-օղլու 121
Սարգսյան Ա. 21
Սարուխանյան Գալյա, Նախիջևանիկ գյուղի բնակիչ 103
Սարուխանյան Հայկ, Նախիջևանիկ գյուղի բնակիչ 103
Սահակյան Ռուբեն 22
Սաֆոնով Վ. 34, 45
Սելիմով Արազ, Խոջալուի բնակիչ 167
Սմիթ Մայքլ 198, 199
Սուխարև Լ. Յա. 22, 23, 28
Ստալին 10, 11
Ստեփանյան Աշոտ, Նորագյուղի բնակիչ 69
Ստեփանյան Լյուդվիգ, Սեյսուլանի բնակիչ 155
Ստուպիշին Վլադիմիր 186
Վելիև Բախտիյար 144
Վոլսկի Ա. 22, 24, 27, 33, 34
Տեր-Թադևոսյան Արկադի 81, 159
Տեր-Պետրոսյան Լևոն 50, 51
Տոնյան Վ. 21
Փաշաևա Կյուբրա, Խոջալուի բնակիչ 168
Քերիմով Ազա 59
Քերիմով Ղասըմ 73, 109
Քյամալ Ալի 139
Օրուջև Ջաբար 108, 110, 112–114, 117, 144, 168
Ֆաթուլիև Էյնուլլա 107
Ֆատալիև Ռամիզ 71
Ֆուադ Թոֆիկ Մուսա օղլի 196

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ադրբեջան 6–11, 14, 15, 18, 20, 24, 27, 28, 34, 37, 40, 41, 44–52, 54, 58, 59, 62–64, 71, 73, 74, 86, 95, 98, 117, 123, 128, 129, 131, 133, 137–142, 146, 147, 150–157, 160–162, 166, 173, 174, 176, 177, 180, 186–189, 192, 193, 197–200

Ալթայի երկրամաս 14

Ալիաղալի 73

Աղբուլաղ 140

Աղդաբա 187

Աղդամ 6, 15, 22, 34, 37, 40, 43, 45, 46, 48–50, 54, 59, 62–64, 69–71, 73–76, 78,–85, 87–89, 91, 93–111, 113–125, 128–151, 153–155, 157, 158, 161–166, 168, 169, 172–175, 178–182, 184, 187, 188

Ասկերան 16, 18, 24, 25, 27, 42, 43, 45, 48, 49, 52–54, 62, 64, 69, 70, 73, 74, 77, 78, 80–84, 87–89, 91, 93, 95–103, 106–110, 112, 114, 121, 122, 124, 131, 133, 135, 140–148, 155, 160–162, 165, 166, 168, 170, 172–174, 176, 179–182, 184, 188, 203, 211, 212, 214, 215

Ավդալ Գյուլափլու 43

Արանզամին (տես նաև Վարազաբուն) 89, 140, 141, 188

Արդահան 199

Արցախ 24, 26, 32, 107, 179, 203, 204, 209

Բալուջա 16, 67, 78

Բաքու 14, 22, 24, 40–44, 50, 64, 71, 120, 121, 131, 134, 138–141, 175, 176, 180, 187, 194–198

Բերքաձոր 57

Բուզլուխ 50, 188

Գարգար (տես նաև Կարկար, Կար Կար) 16, 96, 167

Գետաբեկ 9

Գետաշեն 50, 51, 188, 204

Գերանբոյ (Շահումյան) 58

Գիշի 11

Գյանջա (տես նաև Ելիզավետպոլ, Կիրովաբադ) 51, 73, 109, 154

Գյուլասազ 156

Գյուլափլու 93

Գյունե Ճարտար 11

Դահիրազ 89, 112, 140

Դահիրավ 89, 181

Դաշբուլաղ (Աստղաշեն) 11, 16–18, 67

Դաշքեսան 9

Ելիզավետպոլ (տես նաև Գյանջա, Կիրովաբադ) 8, 195, 197

Եվլախ 73

Էրզրում 199

Էրքեջ 50, 188

Թիֆլիս 194, 195

Թուրքիա 14, 149, 151, 186, 199

Իմամկուլուլար 11

Իվանյան (Խոջալու) 6

Լաչին 9, 18

Լաչինդոյ (տես նաև Ղարաղայա) 81, 106, 110, 111, 113, 116, 135, 144–146, 168

Լեսնոյե 11, 54

ԼՂԻՄ, Լեռանային Ղարաբաղի Ինքնավար Մարզ 7–11, 15, 16, 18, 20, 22, 24, 25, 27, 28, 34, 37, 40–45, 48, 49, 52, 54, 59, 74, 179, 209

ԼՂՀ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն 37, 46, 62, 160, 165, 173–175, 209

Խանաբադ 45, 74, 75, 89, 108, 109, 111, 112, 114, 172, 181

Խանլար 9, 121

Խանլըքփեյ 11

Խանքենդի (տես նաև Ստեփանակերտ) 8, 9, 64, 74, 164

Խաչինչայ 50, 208

Խնածախ 16, 27

Խնձիրիստան 16, 43, 67, 77, 79

Խնուշինակ 11

Խոջալու 5–8, 11, 15–18, 20–25, 27, 28, 33, 34, 36, 37, 42, 43, 45, 46, 48, 52–54, 57–59, 62–64, 66, 70, 71, 73–84, 86–104, 106–109, 111–123, 125, 128–130, 133–139, 141–143, 145–170, 172–177, 179–193, 199, 200,

Խրամորթ 42, 62, 108, 114, 135, 146, 188

Կարադաղլը 49, 187

Կարկար, Կար-Կար (տես նաև Գարգար, Գար Գար) 81, 89, 141, 142, 181

Կարմիրեվան 155

Կարյագին (տես նաև Կուբաթլու) 9

Կարս 199

Կըլըչբաղ 49, 74

Կիչան 50, 188,

Կիրովաբադ (տես նաև Ելիզավետպոլ, Գյանջա) 51, 73, 109, 154

Կուբաթլու 9, 58, 73
Կրկժան 11, 18, 54, 59, 62
Հայաստան 8–11, 18, 20, 24, 41, 47, 48, 50, 51, 79, 150, 170, 189, 198, 199
Հանալը 11
Հասանաբադ 11, 16, 67, 181
Հիլիսա (Իլիս) 16, 67
Հովսեփավան 17, 57, 89, 172, 181
Ղասմլու/Կասըմլու 97
Ղարաբաղ 5, 7–9, 14, 15, 17, 18, 20, 22–24, 28, 34, 37, 40, 41, 46–48, 52, 53, 64, 73, 75, 81, 86, 109, 137, 141, 150–153, 157, 158, 161, 164, 165, 175–177, 179, 185, 188, 189
Ղարաղայա (տես նաև Լաչինղոյ) 105, 108–111, 113, 114, 116, 120, 128, 131, 132, 135, 137, 144, 146
Ղարաղշլաղ 15, 145, 158
Ղափան 155
Ղշլաղ 16, 67
Ղուբա 194
Մալիբեյլի 54, 187
Մաղավուզ 156
Մանաշիդ 50, 188
Մարաղա 155, 156, 188
Մարգուշավան 155, 156, 188
Մարտակերտ 50, 52–55, 176, 188
Մարտունաշեն 50– 52, 188
Մարտունի 11, 67
Մեծ Շեն 53, 156,
Մեհտիշեն (ներկայիս՝ Լուսաձոր) 16, 57, 77–79, 81, 89, 172, 181
Մեշալի 18
Միր Բաշիր 11, 155
Միրիքենդ 140
Մոսկվա 20–22, 28, 34, 45, 47, 63, 81, 129, 150, 157, 158, 195
Մուղանլար 140
Մուղանլու 140
Ցալոբաքենդ 11
Ցարմջա 155, 156, 188
Յուխարը-Ասկիպար 48
Նախիջևան 15, 191
Նախիջևանիկ 43, 69, 74, 75, 81, 82, 85, 86, 91–98, 100–108, 110–117, 119–122, 124, 125, 129–133, 135–138, 140–142, 146, 149, 155, 159, 161–166, 168, 170, 172, 181–183, 188
Նավթալան 141, 142
Նորագյուղ 16, 45, 57, 66, 67, 69, 70, 73, 75, 76–81, 84, 89, 155, 158, 172, 181
Շահումյան 9, 24, 50, 54, 58, 59, 62
Շամախի 194
Շամխոր 9
Շելլի 75, 82, 89, 99, 100, 102, 104, 106–111, 113, 114, 116, 117, 120–122, 124, 125, 130–132, 135–138, 144, 146, 161, 162, 182
Շուշի 8, 9, 11, 18, 21, 24, 25, 27, 34, 44, 54, 58, 59, 62, 64, 71, 78, 140, 150, 165, 177–179, 188
Ուզուն-Դարա 50
Ուղտասար 82, 99, 107, 110, 111, 113
Ումուդլը 123
Չայքենդ 49, 52, 188
Պետրովսկ 193, 194
Ջամիլլու 11, 17, 18, 62, 87, 151
Ջանհասան 78
Ջավադլար 11
Ջևանշիր 9
Ռև (Ծաղկաշատ) 16, 67
Ռյազան 140
Ռուսաստան 150, 186, 198
Սարդարաշեն (Ենգիջա) 16, 67, 73, 77, 79, 89, 172
Սեյսյուլան 53, 155, 156, 188
Սումգայիթ 21–23, 28, 41, 52, 134, 139, 187
Սուրմալու 199
Ստեփանակերտ (տես նաև Խանքենդի) 6, 9, 16–18, 20–22, 24, 25, 27, 28, 42, 45–49, 51–54, 58, 59, 62, 64, 74, 76–78, 82, 87, 88, 99, 103, 122, 150, 152, 154, 157, 159, 160, 161, 163–165, 174–177, 179, 186, 188
Վարազաբուն (տես նաև Արանզամին) 140
Վարդաձոր (տես նաև Փիրջամալ / Փրջամալ) 42, 43, 89, 103, 140, 166
Վերսալ 199
Տոմսկի մարզ 14
Փիրջամալ/Փրջամալ (տես նաև Վարդաձոր) 42, 43, 74, 84, 89, 95, 98, 100, 102, 103, 111, 112, 140, 166, 172, 188
Քայքենդ 11
Քելբաջար 9, 58
Քյաթուկ 16, 53, 74, 76, 81–83, 85, 89, 93, 110, 135, 143, 172
Քյոսալար 16
Քոլատակ 16, 67
Ֆիզուլի 9

ԷԹՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ադրբեջանցի 6, 9, 10, 11, 14, 15, 21, 24, 25, 27, 34, 37, 40, 42–44, 46, 48, 51, 59, 64, 75, 79, 81, 87, 88, 95, 98, 105, 107, 108, 112, 114–118, 120, 123–125, 129, 131–134, 136, 138, 139, 143, 147, 148, 151–153, 157, 158, 160, 162, 164, 175, 176, 181, 184, 186, 187, 189, 196, 197, 199

Ամերիկացի 21, 129, 198

Բրիտանացի 22

Թաթար 8, 16, 194, 195, 196, 199, 200

Թուրք 9, 14, 15, 20, 42, 43, 57, 76–78, 82, 83, 86, 100–103, 106–108, 112, 139, 140, 143, 145–147, 176, 178, 196, 199

Թուրք-մեսխեթցի 20, 33, 43, 63, 86, 101, 160, 176, 184

Հայ 5–7, 9, 11, 14–18, 21, 22, 24, 27, 28, 33, 34, 36, 37, 40–49, 51–54, 57, 59, 62–64, 70, 71, 74–76, 79, 81, 82, 84–88, 91, 93–98, 100–102, 104, 105, 107–109, 113–119, 121, 123–125, 128–146, 148–153, 155, 156, 158–160, 163–171, 173–176, 178–180, 183–189, 192, 194–200

Հնածիսական (մալական) 15

Շիա թաթար 8, 73, 74, 98

Ռուս 8, 14, 41, 42, 51, 59, 131, 139, 152, 153, 157, 164, 194, 196, 198, 199

■ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

Խոջալուն մինչև ղարաբաղյան կոնֆլիկտը 8

Խոջալուն ղարաբաղյան շարժման և Հատուկ կառավարման կոմիտեի շրջանում 18

Խոջալուն Հանրապետական կազմկոմիտեի/ՕՄՕՆ-ի շրջանում 37

Խոջալուն արտակարգ դրության շրջանում 45

Խոջալուի ռազմականացումը, ինքնապաշտպանության և պաշտպանության կազմակերպումը 53

Խոջալուի գրավումը հայկական կողմի կազմակերպիչների, մասնակիցների և ականատեսների պատմածով 76

Խոջալուի գրավումը և բնակչության ցրվելը 88

Ալիֆ Հաջիևին հետևած խումբն ըստ բնակավայրը լքածների պատմությունների 91

Ինչ են ասում Նախիջևանիկում 1992թ. փետրվարին ապրած և փետրվարի 26-ին դաշտի կռվի մասնակիցները 97

Ինչ է կատարվել Նախիջևանիկի ճանապարհից Շելլի-Աղդամ գնացողների հետ 106

Աղդամի զինված կազմավորումները օգնում են Խոջալուի բնակչությանը 108

Ինչ թաքցնելիք կամ «ցուցադրելիք» կար Աղդամի մատույցներում կատարված սպանությունների վայրում 120

Ինչ է պատահել Ասկերանում և Ասկերան-Աղդամ ճանապարհին 143

Խոջալուի ողբերգության հանրայնացումը 149

Որքա՞ն մարդ է «կոտորվել» Խոջալուում և «Խոջալուի կապակցությամբ» 155

Խոջալուի գերիները, «գերիները», «պատանդները» 172

Ամփոփում Խոջալուի ռազմական գործողությունների և հետևանքների շուրջ 179

Խոջալուի փաթեթավորումը որպես «ցեղասպանություն» 184

Ցեղասպանությունը որպես ադրբեջանական էթնո-քաղաքացիական ինքնության գործոն 192

Օգտագործված գրականություն և աղբյուրներ 199

Քարտեզներ 209

Հապավումներ 217

Ցանկեր 218

ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՏՅԱՆ

ԽՈՋԱԼՈՒԻ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ԴՐԱ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՈՒՄ

Ձևավորումը և էջադրումը՝
Ա. Հարությունյան

Սրբագրիչ՝
Ա. Ամիրխանյան

Տպագրությունը՝

ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ
ՏՊԱԳՐԱՏՈՒՆ - ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
www.veprint.am

Հայերը Խարտեշում

Հայկական գյուղերը դարերի խորքում

«Հայկական գյուղերի հանրագիտարան» ՀԿ նախագիծ

ISBN 978-9939-886-17-6